Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
հունվարի 14-ի N 9 - Ն որոշման

Եվրոպական ներդրումային բանկ
Վարկ No 82.634 AM

“Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք” ներդրումային ծրագիր-Ծրագիր 3
ԼԱՆՋԻԿ-ԳՅՈՒՄՐԻ (27.4 կմ)
(ԿՄ 90+200-117+670)

ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(ՀՕՏԾ)

19 Հունիսի 2015

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՏԿՆ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ 12

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 21

1. Ծրագրի պատմությունը 21
2. Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի ընդհանուր նպատակները 22
3. Կասեցման ամսաթիվը 23

Բ. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ 24

1. ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ 24
2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 24
3. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 25
   - 3.1 ԱԵՏՏ և Մարդահամար 25
   - 3.2 Ազդեցության ենթակա անձանց էթնիկ ծագումը և սեռային կազմը 29
   - 3.3 Ազդեցություն հողի վրա 30
   - 3.4 Ազդեցությունը շենքերի և շինությունների վրա 33
   - 3.5 Ազդեցությունը մշակաբույսերի և ծառերի վրա 35
   - 3.6 Ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության և զբաղվածության վրա 37
   - 3.7 Հանրային գույք և հաղորդուղիներ 38
   - 3.8 Ազդեցությունները հողի վրա առկա շարժական գույքի վրա 39
   - 3.9 Ազդեցությունը խիստ ազդեցության ենթակա ու խոցելի տնային տնտեսությունների վրա և եկամտի վերականգնում 40
2. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ և ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԻՎԸ 43
3. ԱԵՏՏ –ՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՆ ԸՍՏ ՍԵՌԻ և ՏԱՐԻՔԻ 43
4. ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ 44
5. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 46
6. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ 47
7. ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 50
8. ԱԵՏՏ-ՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ 52
9. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԸ, ՊԱՐՏՔԵՐԸ և ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 53
57. 55
10. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 55
11. ԱՂՔԱՏ ԵՎ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏ ԱԵՏՏ-ՆԵՐ 56

Դ. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ 59

1. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ 59
2. ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԲ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ (2009) ՈՉ ԿԱՄԱՎՈՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 61

3. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՈՉ ԿԱՄԱՎՈՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԲ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**Error! Bookmark not defined.**
4. ՀՕՏ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԲ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ (2009)/ ԵՆԲ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԵՏ..... 64
5. ՀՕՏ-Ի՝ ՍՈՒՅՆ ԲՖԳ-Ի ՀԱՄԱՐ ՈՐԴԵԳՐՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ և ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**Error! Bookmark not defi**

Ե. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ..... 70

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ..... 70
2. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ..... 75
3. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ և ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ..... 76
4. ՄԻԱՎՈՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ..... 81
5. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ..... 82
6. ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ..... 83

Զ. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ..... 84

1. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ..... 84
2. ՀՕՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ..... 93

Է. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ..... 95

1. ՏԿՆ/ԾԻԿ..... 95
2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ..... 96
3. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿ..... 96
4. ԱՅԼ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ96
5. ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 97
6. ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 97
7. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ..... 100

Ը. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 101

1. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ..... 102
2. ԲԼՄ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ և ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ..... 105
3. ԲԼՄ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲՅՈՒՋԵՆ..... 105

Թ. ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ..... 107

1. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ..... 107
2. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼ..... 107
3. ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ..... 108
4. ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՓՈՒԼ..... 111

5. ՓԱՍՏԱՑԻ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԵՐԻ ՑԱՆԿԻ և ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ ԲԱՑԱՌԻԿ՝ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՑԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 111
6. ԱԵԱ-ՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ և ԱՅԼ ՏԻՊԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ 113
7. ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԳԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԴԵՊՔՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ 120
8. ԳՆԱՀԱՏՈՒՄ ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ 121
9. ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ122

Ժ. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵ և ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 125

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ 125
2. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ 125
2.1 Հողի փոխհատուցում 125
2.2 Վարձակալության փոխհատուցումը 128
2.3 Շենքերի, շինությունների փոխհատուցումը 129
2.4 Մշակաբույսերի փոխհատուցումը 130
2.5 Ծառերի փոխհատուցումը 132
2.6 Փոխհատոցում ձեռնարկատիրական գործունեության և եկամտի կորստի համար 134
2.7 ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 135
2.8 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՅՈՆԵՐ և ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՂԻՆԵՐ 137
3. ԿԻՐԱՌԵԼԻ ՀԱՐԿԵՐԸ 137
4. ԱՄՓՈՓ ԲՅՈՒՋԵՆ և ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 138

Ի. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 141

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 141
2. ՆԵՐՔԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ 141
3. ԱՐՏԱՔԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ 142

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 144

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 145
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ 152
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱԵՏՏ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ 161
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 468
ՀԱՎԵԼՎԱԾ 5. «ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ» ՏՐԱՆՇ 3 ՀՕՏԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 483
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ 503
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 515
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԱՐՏԱՔԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (անգլերեն) ..... **Error! Bookmark not defined.**
ՀԱՎԵՎԱԾ 9. ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ և ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱԵՏՏ-ՆԵՐԻ ՑԱՆԿ 550
ՀԱՎԵԼՎԱԾ 10.ԱԵԱ-ՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ 488

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1: Իրավունքների մատրիցան
Աղյուսակ Բ1: Ազդեցությունների և ԱԵՏՏ-ների/ԱԵԱ-ների մարդահամարի ամփոփագիր
Աղյուսակ Բ2: ԱԵԱ-ների էթնիկ ծագումը
Աղյուսակ Բ3: Հողի կորստի աստիճանը
Աղյուսակ Բ4: Ազդեցության ենթակա մասնավոր հողակտորները ըստ տեսակի
Աղյուսակ Բ4ա: Համայնքային, պետական և ընդհանուր հողի ազդեցությունները
Աղյուսակ Բ5: Ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողակտորները
Աղյուսակ Բ6: Ազդեցության ենթակա շենքեր և շինություններ
Աղյուսակ Բ7: Վերաբնակեցվող ԱԵՏՏ-ների մանրամասները
Աղյուսակ Բ8: Հիմնական մշակաբույսերի կորուստը
Աղյուսակ Բ9: Ազդեցության ենթակա պտղատու ծառերը
Աղյուսակ Բ10: Ազդեցության ենթակա փայտանյութ տվող ծառերը
Աղյուսակ Բ11: Ազդեցության ենթակա դեկորատիվ ծառերը
Աղյուսակ Բ12: Ձեռնարկատիրական գործունեության կորստի չափը և հարկային կարգավիճակը
Աղյուսակ Բ13: Զբաղվածության կորուստները ձեռնարկատիրական գործունեությունում
Աղյուսակ Բ14: Ազդեցությունը հանրային գույքի և հաղորդուղիների վրա
Աղյուսակ Բ15: Ծրագրի արդյուքնում ազդեցության ենթակա շարժական գույքերը
Աղյուսակ Բ16: Խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ները ըստ տեսակի
Աղյուսակ Բ17: Խոցելի ԱԵՏՏ-ներ
Աղյուսակ Գ1: ՍՏՀ-ում ընդգրկված ԱԵՏՏ-ների և ՏՏ-ների ընդհանուր քանակն ըստ համայնքների
Աղյուսակ Գ2: ԱԵՏՏ-ների քանակը և ԱԵՏՏ անդամներն ըստ սեռի
Աղյուսակ Գ3: ԱԵՏՏ ղեկավարների տարիքն ըստ սեռի և տոկոսի
Աղյուսակ Գ4: ԱԵՏՏ անդամների տարիքն ըստ սեռի և տոկոսի
Աղյուսակ Գ5: ԱԵՏՏ ղեկավարների կրթությունն ըստ սեռի և տոկոսի
Աղյուսակ Գ6: ԱԵՏՏ անդամների կրթությունն ըստ սեռի և տոկոսի
Աղյուսակ Գ7: ԱԵՏՏ ղեկավարների զբաղվածության կարգավիճակն ըստ սեռի և տոկոսի
Աղյուսակ Գ8: ԱԵԱ-ների զբաղվածության կարգավիճակն ըստ սեռի և տոկոսի
Աղյուսակ Գ9: Ծառայությունների հասանելիությունը ըստ հետավորության
Աղյուսակ Գ10: ԱԵՏՏ-ների խմելու ջրի աղբյուրը ըստ տոկոսների
Աղյուսակ Գ11: ԱԵՏՏ-ների սանիտարական հարմարությունները ըստ տոկոսների
Աղյուսակ Գ12: ԱԵՏՏ-ների կախվածությունը ջեռուցման նպատակով օգտագործվող վառելիքի տեսակից՝ ըստ տոկոսների
Աղյուսակ Գ13: ՏՏ-ների գյուղատնտեսական և ոչ-գյուղատնտեսական տարեկան եկամունտների համամասնությունը
Աղյուսակ Գ14: ԱԵՏՏ-ների եկամտի աղբյուրները
Աղյուսակ Գ15: ԱԵՏՏ-ներին պատկանող գույքը
Աղյուսակ Գ16: ԱԵՏՏ -ներին պատկանող անասունները
Աղյուսակ Գ17: Ընտանիքի միջին ծախսը
Աղյուսակ Գ18: Պետական նպաստներ ստացող տնային տնտեսությունները

Աղյուսակ Գ19: Տնային տնտեսություններին վերաբերող հարցերի շուրջ որոշումների կայացման գործընթացին կանանց մասնակցությունը
Աղյուսակ Գ20: Խոցելի աղքատ ԱԵՏՏ-ները
Աղյուսակ Գ21: Խոցելի աղքատ ԱԵՏՏ-ները ըստ համայնքների
Աղյուսակ Դ1: ՀՕՏ-ի վերաբերյալ ՀՀ օրենսդրության համեմատությունը ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հետ
Աղյուսակ Ե1: Իրավունքների մատրիցան
Աղյուսակ Զ1: ՀՕՏԾ Վերջնականացման ՀԼ-ների ժամանակացույցը
Աղյուսակ Զ2: ՀԼ-ների ընթացքում քննարկված խնդիրները ազդեցության ենթակա համայնքներում
Աղյուսակ Է1: ՀՕՏԾ իրականացման գործընթացքում ներգրավված մարմինների դերը և պարտականությունները
Աղյուսակ Թ1: Ծածկագրերի անհամապատասխանությունները ցանկը
Աղյուսակ Թ2: Կառավարության որոշման ցանկից բացակայող հողերը
Աղյուսակ Թ3: Օրինականացման դեպքերի և ներգրավված ԱԵՏՏ-ները
Աղյուսակ Թ4: ՀՕՏԾ-ի իրականացման ժամանակացույց
Աղյուսակ Ժ1: Ազդեցության ենթակա հողի փոխհատուցումը ըստ տեսակների և համայնքների
Աղյուսակ Ժ2: Վարձակալված հողերի փոխհատուցումը
Աղյուսակ Ժ3: Շենքերի/ Շինությունների փոխհատուցումը
Աղյուսակ Ժ4: Մշակաբույսերի փոխհատուցումը
Աղյուսակ Ժ5:Պտղատու ծառերի փոխհատուցումը
Աղյուսակ Ժ6:Փայտանյութ տվող ծառերի փոխհատուցումը
Աղյուսակ Ժ7: Դեկորատիվ ծառերի փոխհատուցումը
Աղյուսակ Ժ8: Փոխհատուցումը ձեռնարկատիրական գործունեության դադարեցման դիմաց
Աղյուսակ Ժ9: Աշխատանքի կորստի դիմաց փոխհատուցումը
Աղյուսակ Ժ10. Խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ների փոխհատուցումը
Աղյուսակ Ժ11: Փոխհատուցումը սոցիալապես խոցելի անձանց համար
Աղյուսակ Ժ12: Տրանսպորտային ծախսերը և Կենսապահովման օժանդակությունը
Աղյուսակ Ժ13: ՀՕՏԾ իրականացման ամփոփ բյուջեն
Քարտեզ 1: Ծրագրի տեղակայվածությունը
Պատկեր Է1: ՀՕՏ ինստիտուցիոնալ կառուցվածքը և կապերը
Պատկեր Ը1: Բողոքների Լուծման Մեխանիզմի ինստիտուցիոնալ կառուցվածքը
Պատկեր Թ1. Հողերի օտարման գործընթացի տրամաբանական կառուցվածքը

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տնային տնտեսություն
ԱԵՏՏՂ	Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարներ
ԱԵԱ	Ազդեցության ենթակա անձ
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱՄ	Ազդեցության միջանցք
ԱՄԳ	Արտաքին մոնիտորինգի գործակալություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱԳԿՊԿ	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
ԱՔՀ	Անվտանգության մեխանզիմների քաղաքականության հայտարարագիր
ԲԼՄ/ԲՔԽ/ԲԱԱ	Բողոքների լուծման մեխանիզմ, Բողոքների քննման խումբ, Բողոքի առանցքային անձ
ԲՖԳ	Բազմափուլ ֆինանսավորման գործիք
ԵՆԲ	Եվրոպական Ներդրումային Բանկ
ԻԽ/ԻԹ	Իրականացնող Խորհրդատու, Իրականացնող թիմ
ԻՄ	Իրավունքների մատրիցա
ԻԳ	Իրականացնող գործակալություն
ԾԿԽ	Ծրագրի կառավարման խորհուրդ
ԾԻԿ	Ծրագրի իրականացման կազմակերպություն
ԿԻՀ	Կենսապայմանների ինտեգրված հետազոտություն
ԿԲՍՄԱՀ	Կիսամյակային Բնապահպանական և Սոցիալական մոնիթորինգի առաջընթացի հաշվետվություն
ՀԼ	Հանրային լսումներ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԴ	ՀՀ դրամ
ՀՀԿ	Հայստանի Հանրապետության կառավարություն
ՀՕՏ	Հողի օտարում և տարաբնակեցում
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՀՀՃՄՆԾ	“Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք” ներդրումային ծրագիր
ՄևԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՄՆ	Մանրամասն նախագիծ
ՄՉՀ	Մանրամասն չափագրման հետազոտություն
ՍԳՎՊ-16	Սոցիալական գիտությունների վիճակագրական փաթեթ 16
ՍՏՀ	Սոցիալ-տնտեսական հետազոտություն
ՏԲ	Տեղաբնիկներ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԾ	Տարաբնակեցման ծրագիր
ՏՀԹ	Տարաբնակեցման համակարգող թիմ
ՏԿՆ	Տրանսպորտի և կապի նախարարություն
ՏՏՂ	Տնային տնտեսության ղեկավար
Տ3/Տ2	ՀՀՃՄՆԾ-ի Տրանշ 2-ը և Տրանշ 3-ը

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ազդեցության ենթակա տնային տնտեսություն (ԱԵՏՏ)	Ազդեցության ենթակա տնային տնտեսությունը որպես ամբողջական մաս: ԱԵՏՏ-ն գործում է որպես մեկ տնտեսական և ընտանեկան միավոր և կարող է բաղկացած լինել մեկ անձից, նուկլեար ընտանիքից կամ ընդլայնված ընտանիքից: Դա փոխհատուցում ստացող/վերականգնման ենթակա կարևորագույն միավոր է:
Ազդեցության ենթակա անձ/ մարդիկ (ԱԵԱ)	Ցանկացած անձ, ով Ծրագրի իրականացման արդյունքում մշտական կամ ժամանակավոր ազդեցության է ենթարկվում իրեն պատկանող կամ իր կողմից փաստացի օգտագործվող անշարժ գույքի (հողի, տան, շենք-շինության) օտարումից, և դրա արդյունքում՝ եկամտի, փաստացի կարգավիճակի, աշխատանքի, բնակության վայրի և կենսամակարդակի մասնակի կամ ամբողջական կորստից: Սա ներառում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ տնտեսական տեղահանումը (ԱԵԱ-ի սահմանումը տարբերվում է ԱՄՔ-2009-ի սահմանումից, սակայն պրակտիկայում այն չի տարբերվում ԱՄՔ-2009-ում սահմանվող «տեղահանված անձ»-ի սահմանումից):
Փոխհատուցում	Կանխիկով, կամ այլ կերպ կատարվող վճարում՝ ակտիվների օտարման դիմաց:
Կասեցման ամսաթիվ	Սա վերաբերում է այն ամսաթվին, որից առաջ Ծրագրի ազդեցության ենթակա հատվածները զբաղեցնող կամ օգտագործող սեփականատերերին/վարձակալներին/օգտագործողներին իրավասու են ճանաչվել որպես ազդեցության ենթակա անձ/ՏՏ Ծրագրի ներքո: Փոխհատուցման իրավունքները սահմանափակվում են կասեցման ամսաթվով՝ յուրաքանչյուր ենթահատվածի համար որը օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրն է (արձանագրությունների ստորագրումը ԱԵԱ-ների և Ձեռքբերողի կողմից), որտեղ արձանագրվում են իրականացված մարդահամարի, մանրամասն չափագրման հետազոտության և ազդեցությունների գնահատման տվյալները: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրվանից հետո կատարված բարելավումների համար փոխհատուցում չի տրվում, բացառությամբ Օրենքով և ՀՕՏՇ-ով սահմանված դեպքերի: Օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում տրվում է միայն ՀՕՏՇ-ով սահմանված դեպքերում և կարգով: Մյուս բոլոր դեպքերում նշված իրավունքները դադարեցվում են՝ առանց փոխհատուցման իրավունքի:
Բացառիկ՝ գերակա հանրային շահ	Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը:
Հողի օտարում	Գործընթաց, որն ուղղված է ՀՀ կառավարության որոշմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով

	պետական գրանցում ստացած կամ հաշվառված հողի կամ դրա մի մասի (և դրան ամրակցված անշարժ գույքի, գույքային իրավունքների և այլն) օտարումը հասարակության և պետության կարիքների համար՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:
Փոխհատուցման իրավասություն	Փոխհատուցում, եկամտի վերականգնում, տեղափոխման աջակցություն, եկամտի փոխարինում և վերաբնակեցում ներառող այն միջոցառումների ամբողջությունը, որոնք պետք է տրամադրվեն ազդեցության ենթակա անձանց՝ կախված նրանց կորուստների կամ ազդեցությունների բնույթից՝ նրանց տնտեսական, սոցիալական հիմքերը և իրավունքները վերականգնելու համար:
Բարելավումներ	Հողամասերում կառուցված շենքեր, շինություններ կամ կառույցներ (ստորգետնյա և վերգետնյա), այդ թվում՝ բնակելի շինություններ՝ իր տնտեսական շինություններով կամ կառույցներով, այգետնակը/ամառանոցը՝ այգեգործական զանգվածում առանձին հողամասի վրա կառուցված իր տնտեսական շինություններով կամ կառույցներով, հասարակական և արտադրական նշանակության շինությունները, կիսակառույց շինությունները, նոր կառուցված, ձեռքբերված կամ փոփոխություններ կրած և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված անշարժ գույքը, որը դեռևս չի ստացել պետական գրանցում, ենթակառուցվածքները, ինժեներական ցանցերը և այլն, ինչպես նաև հողամասի անբաժանելի բարելավումները:
Հյուրընկալող բնակչություն	Համայնք, որը տեղակայված է այն տարածքի հարևանությամբ, որտեղ Ծրագրի շահառուները կամավոր կտարաբնակեցվեն Ծրագրի շրջանակներում:
Տեղաբնիկներ (ՏԲ)	ԱԶԲ-ի Տեղաբնիկների վերաբերյալ քաղաքականության շրջանակներում կիրառվող “Տեղաբնիկ մարդիկ” տերմինը ենթադրում է ընդհանրական մի հասկացություն, որը դյուրին չէ մեկ բառով նկարագրելը: Ազգային/էթնիկ փոքրամասնություն տերմինը մեկն է այն տերմիններից, որը վերաբերվում է ԱԶԲ քաղաքականության շրջանակներում ներկայացվող “տեղաբնիկ մարդիկ” հասկացությանը: Մյուս նմանօրինակ տերմիններն են՝ “մշակութային փոքրամասնություններ”, “տեղաբնիկ մշակութային համայնքներ”, “ցեղեր” “սոցիալապես խոցելի ցեղեր”, “բնիկներ” և “աբորիգեններ”: Ընդունված կամ նախընտրելի տերմինները կամ սահմանումները տարբեր երկրներում տարբեր են: “Տեղաբնիկներ” տերմինը օգտագործվում է ՄԱԿ-ի փաստաթղթերում և ԱԶԲ-ի կողմից կիրառվում է միայն հարմարության տեսանկյունից: Հայաստանում ավելի կիրառելի է “ազգային փոքրամասնություն” տերմինը: Այդ իմաստով ԱԶԲ քաղաքականության շրջանակներում “տեղաբնիկներ” հասկացության համապատասխանության համար “ազգային փոքրամասնությունը”-ը պետք է համարվի “*ազգաբնակչության այն մասը, որն իր սոցիալական և մշակութային ինքնությամբ տերբերվում է գերակայող, հիմնական հասարակությունից, ինչի պատճառով զարգացման ընթացքում նրանք հավակնում են լինել խոցելի*”:
Չձևակերպված օգտագործող	ԱԵԱ-ն, որն օգտագործում է ազդեցության ենթակա հողակտորը կամ ակտիվը սեփականատիրոջ հետ չձևակերպված/բանավոր

	համաձայնության հիման վրա, ինչը գրավոր հավաստվում է սեփականատիրոջ կողմից (տեղեկանքի կամ այլ ձևով):
Մարզ-Համայնք	Հայաստանը բաժանված է 10 մարզի: Մարզի գործադիր կառավարման ղեկավարը մարզպետն է, որը նշանակվում է կառավարության կողմից: Մարզերից յուրաքանչյուրը բաժանված է համայնքների, որոնք կառավարվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և կարող են բաղկացած լինել մեկ կամ մի քանի բնակավայրերից: Բնակավայրերը դասակարգվում են քաղաքների և գյուղերի: 2007 թվականի դրությամբ ՀՀ-ն ունի 915 համայնք (որից 49-ը՝ քաղաքային և 866-ը՝ գյուղական): Երևանը նախկին մարզային կարգավիճակի փոխարեն, այժմ ունի համայնքի կարգավիճակ և ընտրված քաղաքապետ:
Վերականգնում	Ոչ կամավոր տարաբնակեցման քաղաքականության շրջանակներում նախաձեռնվող փոխհատուցման միջոցառումներ, որոնք այլ են, քան օտարված ակտիվների փոխարինման արժեքի վճարումը:
Վերաբնակեցում	ԱԵԱ-ների կամ ԱԵՏՏ-ների ֆիզիկական տեղափոխում իրենց մինչ Ծրագիրն իրականացնելը բնակավայրից, որը պահանջում է կացության կամ ակտիվների վերակառուցումը այլ վայրում:
Վերաբնակեցման արժեք	Արժեք, որը պարտադիր պետք է փոխարինի ազդեցությանը ենթակա ակտիվը/առարկան նույն արժեքը և որակը ունեցող համարժեք ակտիվով առանց գործարքային և այլ ծախսերի: Վերաբնակեցման արժեքը կարող է որոշվել տարբեր եղանակներով ելնելով ազդեցությանը ենթակա առարկայի տեսակից և ծրագրում գործող պայմաններից հետևյալ կերպ. ա) հող՝ գործող շուկայական գինը, որը որոշվել է հողի հետ կապված գործարքների հետազոտության հիման վրա, կամ, եթե հողի շուկան բացակայում է, ազդեցության ենթակա հողակտորի մթերատու արժեքը/վերականգնման գինը, բ) շենքեր՝ ազդեցությանը ենթակա շենքի ամբողջական վերականգնման գինը, ներառյալ շինարարական նյութերը, բանվորական ուժը և տրանսպորտային ծախսերը առանց ամորտիզացիոն/փրկված նյութերի, գ) մշակաբույսեր՝ գործող շուկայական գինը և դ) ծառեր՝ շուկայական գործակցով եկամտի կորուստներ (բերքատու/փայտանյութ հանդիսացող ծառեր) և վերականգնման գինը (ոչ բերքատու ծառեր/նորատունկեր):
Տարաբնակեցում	Ծրագրի իրականացման արդյունքում ԱԵԱ-ների սեփականության և/կամ կենսամակարդակի վրա բացասական ազդեցությունը մեղմացնելու համար նախատեսված բոլոր միջոցառումները, ներառյալ՝ փոխհատուցում, վերաբնակեցում (անհրաժեշտության դեպքում) և հանրային գույքի վերականգնում:
Տարաբնակեցման պլան/ծրագիր	Գործողությունների ժամանակացույց՝ տարաբնակեցման ռազմավարությունը, նպատակները, իրավունքները, գործողությունները, պարտավորությունները, մոնիտորինգը և գնահատումը հստակեցնող բյուջեի բաշխմամբ:
Խոցելի ԱԵՏՏ-ներ	Խոցելի են համարվում հետևյալ ԱԵՏՏ-ները. ա) աղքատ ԱԵՏՏ-ներ, որոնց կազմում առկա ընտանիքը (ները) հաշվառված է (են) ընտանիքի անապահովության գնահատման համակարգում և ստանում են ընտանեկան

	նպաստ, բ) ԱԵՏՏ-ներ, որոնք ղեկավարվում են կնոջ կողմից՝ առանց ԱԵՏՏ այլ չափահաս աշխատունակ անդամի առկայության, գ) ԱԵՏՏ-ներ, որոնք ղեկավարվում են տարեց կենսաթոշակառուի կողմից՝ առանց ԱԵՏՏ այլ չափահաս աշխատունակ անդամի առկայության, դ) ԱԵՏՏ-ներ, որոնք ղեկավարվում են 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամների կողմից՝ առանց ԱԵՏՏ այլ չափահաս աշխատունակ անդամի առկայության:
Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ	Այն ԱԵԱ-ները, ովքեր ազդեցության ենթակա հողամասի և դրան ամրակցված այլ անշարժ գույքի նկատմամբ թեև չունեն պետական գրանցում ստացած սեփականության կամ այլ գույքային իրավունքներ, սակայն ունեն որոշակի օրինական ակնկալիքներ, որոնք ծագում են օրենքի կամ իրավական այլ ակտի ուժով, կամ վերջիններիս գույքային իրավունքների ձեռքբերման հնարավորությունները ուղղակի բխում են կամ սահմանված են ՀՀ իրավական ակտերով:
Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ	Այն ԱԵԱ-ները, ովքեր թեև փաստացի տիրապետում և օգտագործում են ազդեցության ենթակա հողը և դրան ամրակցված գույքը, սակայն չունեն օրենքով ճանաչելի հնարավորություն կամ ակնկալիք՝ ազդակիր հողամասի նկատմամբ ձեռքբերելու կամ ստանալու սեփականության կամ այլ գույքային իրավունքներ:

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Ծրագրի պատմությունը

1. Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) համաձայնվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը (ՀՀ կառավարություն) տրամադրել 60մլն եվրո արժողությամբ վարկ "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք" ներդրումային ծրագիրը (Ծրագիր) ֆինանսավորելու համար: Սույն ՀՕՏԾ-ի առարկան Լանջիկից մինչև Գյումրի 27.4 կմ (կմ 90.200- կմ 117-600) երկարությամբ ճանապարհահատվածի բարելավումն է Ծրագրի Տրանշ 3-ի ներքո: Ծրագիրն առաջացնում է էական հողի օտարման և շինությունների ապամոնտաժման ազդեցություն: Սույն ՀՕՏԾ-ն պատրաստվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (ՏԿՆ), Ծրագրի Իրականացնող գործակալության (ԻԳ) կողմից՝ պլանավորելու և իրականացնելու համար Ծրագրի ՀՕՏ-ը: Սույն ՀՕՏԾ-ն հիմնված է ՀՀ համապատասխան օրենքների ու կարգավորումների, ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի (ԱՔՀ 2009), ԵՆԲ-ի Սոցիալական ստանդարտների ու սկզբունքների հայտարարագրի և Պարտադրված Վերաբնակեցման Ուղեցույցի, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից ընդունված հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակի (ՀՕՏՇ) պահանջների վրա: ՀՕՏՇ-ն, ընդունված 2010թ., վերանայվել է 2015թ.-ին՝ Տրանշ 3-ի վերջնական ՀՕՏԾ-ի համար:
   Սույն ՀՕՏԾ-ի պատրաստման և իրականացման պատասխանատվությունը կրում է ՏԿՆ-ն: ՀՕՏԾ մշակման համար ՏԿՆ-ն կիրառել է Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի (ԱՄՔ 2009) Վերաբնակեցման քաղաքականության մոդելը: Այս ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԱԶԲ քաղաքականությունը կիրառվել է Մ1 մայրուղու այլ հատվածների վերակառուցման համար և այն նպատակով, որպեսզի մայրուղու վերակառուցման յուրաքանչյուր հատվածում պահպանվեն նմանատիպ գործառնական ստանդարտներ: Ծրագիրը դասակարգվել է որպես Ա կարգի ծրագիր ԱԶԲ-ի Գործառնական ձեռնարկի (ԳՁ 2009) համաձայն, քանի որ ավելի քան 200 անձիք կենթարկվեն էական ազդեցությունների, ներառյալ իրենց կողմից մշակվող գյուղատնտեսական հողի կամ եկամտի 10%-ից ավելի կորուստը կամ բնակելի վայրի և բիզնեսի վերաբնակեցումը:
2. Սույն վերջնական ՀՕՏԾ-ին նախորդել է 2012թ. պատրաստված նախնական ՀՕՏԾ-ն, որը ընդգրկում էր Թալինը Գյումրիին կապող 45.8 կմ ավելի երկար ճանապարհահատված, որն այդ պահին հանդիսանում էր ԱԶԲ ծրագրի շրջանակը: Հետևելով զուգահեռ համաֆինասավորման վերաբերյալ Եվրոպական ներդրումային Բանկի (ԵՆԲ) հետ 2013թ. կնքված համաձայնագրին՝ ԱԶԲ նախնական ծրագրի շրջանակը կրճատվեց մինչև 18.7 կմ Թալին-Լանջիկ հատվածը, որի համար ԱԶԲ-ն կրում է լիաժեք երաշխիքների հաշվետվողականություն, իսկ 27.4կմ Լանջիկ-Գյումրի հատվածի ՀՕՏԾ-ն գտնվում է ԵՆԲ կողմից ֆինանսավորման ներքո (ԵՆԲ հատված): Երաշխիքների համապատասխանության ստուգման հաշվետվողականությունը ԵՆԲ հատվածի ՀՕՏԾ-ի համար կրում է բացառապես ԵՆԲ-ն:
3. Ծրագիրը ներառում է գոյություն ունեցող միակողմանի 2 երթևեկելի գոտուց բաղկացած Մ1 մայրուղու վերակառուցումը միջազգային չափանիշներին համապատասխան 4 երթևեկելի գոտուց բաղկացած երկկողմ ավտոմայրուղու: Նոր ծրագիծն ընդհանուր առմամբ հետևում է գոյություն ունեցող մայրուղու առանցքին՝ նվազեցելու համար ազդեցությունները, սակայն ներառում է նաև գոյություն ունեցող համայնքային դաշտավայրերի շրջանցումներ: Ազդեցության ենթակա հողերի մեծամասնությունը վարելահողեր են կամ արոտավայրեր:
4. Սույն ՀՕՏԾ-ն գնահատում է Ծրագրի ազդեցությունները և մանրամասնում պահանջվող փոխհատուցման և վերականգնման միջոցառումները՝ հիմք ընդունելով վերջնական մանրամասն նախագիծը, ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) վերջնական մարդահամարը և յուրաքանչյուր ազդեցության ենթակա հողամասի համար իրականացված Մանրամասն չափագրման հետազոտությունը (ՄՉՀ): Ազդեցության ենթակա հողամասերի և շինությունների գնահատումը

հիմնված է փոխարինման արժեքի սակագների վրա: Ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) թիվը ստացվել է հողերի և գույքերի պաշտոնական գրանցումների հիման վրա և հաստատվել/թարմացվել է տուն-առ-տուն իրականացված մարդահամարի միջոցով: ԱԵԱ-ների սոցիալ-տնտեսական պատկերը ստացվել է տնային տնտեսությունների 30.6% ընտրանքով 2010թ. իրականացված և 2014թ. թարմացված սոցիալ-տնտեսական հետազոտության (ՍՏՀ) միջոցով:

Ծրագրի իրականացման ՀՕՏ-առնչվող պայմանները

5. Սույն ՀՕՏԾ պահանջների համաձայն՝ Ծրագրի իրականացումը հիմնված է հետևյալ պայմանների վրա.

   1)Տրանշ 3 Ծրագրի ներքո ՀՕՏ-ի հետ առնչվող առաջադրանքների իրականացումը ԱՋԲ-ի և ԵՆԲ-ի զուգահեռ ֆինանսավորման շրջանակներում պայմանավորված է հետևյալով ՝ ա) ԱՋԲ-ի ԱՄՔ-ն և ԵՆԲ-ի Սոցիալական ստանդարտների ու սկզբունքների հայտարարագրի և Պարտադրված Վերաբնակեցման Ուղեցույցը կկիրառվեն որպես Երաշխիքների քաղաքականություն տվյալ Ենթածրագրի համար; բ) ԵՆԲ-ն պատասխանատու կլինի հաստատել ՀՕՏԾ իրականացման Համապատասխանության հաշվետվությունները ԵՆԲ Ենթածրագրի համար; և գ) ԵՆԲ-ն պատասխանատու կլինի վերանայելու համար երաշխիքների պահանջները կապված միայն ԵՆԲ ենթածրագրերի համար:

   2)Շինարարական պայմանագրի իրականացման ձևաչափը պայմանավորված է հետևյալով՝ ա) ՀՕՏԾ-ի ավարտուն իրականացմանը պատրաստ փաստաթղթի վերջնականացում; բ) վերջնական ՀՕՏԾ-ի հրապարակում; և գ) մոբիլիզացմանը պատրաստ Արտաքին մոնիտորինգի գործակալության (ԱՄԳ) վարձում:

   3)Բուն շինարարական աշխատանքների մեկնարկը. պայմանավորված է համապատասխան ՀՕՏԾ-ի ամբողջական իրականացմամբ (փոխհատուցման/վերականգնման ամբողջական տրամադրում), ինչը արձանագրված կլինի ԵՆԲ-ի համար ընդունելի ԱՄԳ-ի կողմից պատրաստված Համապատասխանության հաշվետվությունում:

Ծրագրի ազդեցությունների ամփոփագիրը

6. Հիմք ընդունելով ազդեցությունների գնահատումը և ԱԵԱ-ների մարդահամարը՝ Ծրագիրը մշտական կօտարի 666 հողեր՝ ընդհանուր 1,243,054.64 քմ (124.3 հա) մակերեսով ինը համայնքներում: Դրանցից 345 հողեր 314,669.03 քմ-ով հանդիսանում են մասնավոր սեփականության հողեր (գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական, բնակելի, հասարակական և այլ հողեր)՝ կազմելով ընհանուր հողերի 25.32%-ը; 297 հողեր 893,693.85 քմ մակերեսով հանդիսանում են համայքային սեփականության հողեր՝ կազմելով ընհանուր հողերի 71.89%-ը և 24 հողեր 34,691.74 քմ մակերեսով հանդիսանում են ՀՀ պետական սեփականություն:
7. Հողի սեփականութան տեակետից, բացի 893,693.85 քմ մակերեսով 297 հողամասերից (գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական, բնակելի, հասարակական և այլ հողեր), որը պատկանում է ինը համայնքների, իսկ 24-ը՝ պետությանը, մնացած 345 հողերը (31.47 հա) հանդիսանում են մասնավոր սեփականություն՝ ազդեցության ենթարկելով 507 տնային տնտեսությունների և 2560 անձանց: Մնացած 24 տնային տնտեսությունները 94 անձանցով համայնքային և պետական հողի վարձակալներ են (18 վարձակալ ԱԵՏՏ-ներ) և չձևակերպված օգտագործողներ (6չձևակերպված օգտագործող ԱԵՏՏ-ներ): Ի լրումն, 86 տնային տնտեսություններ 352 անձանցով մասնավոր հողամասերի օգտագործողներ են: Բացի այդ, 11 անձիք հանդիսանում են ազդեցության ենթակա վարձու աշխատողներ:
8. Միջինում, յուրաքանչյուր տնային տնտեսություն կկորցի 938.04 քմ վարելահող, որը կազմում է մասնավոր հողերի սեփականատերերի կողմից տիրապետվող ընդհանուր միջին հողային

ռեսուրսների (7053.95 քմ) միջին հողային կորուատների 13.30%-ը: Համայնքային հողերի մեծամասնությունը արոտավայրեր են: Փոքր թվով վարելահողեր հանձնված են վարձակալության համայնքի 18 տնային տնտեսությունների, իսկ ևս վեց տնային տնտեսություններ առանց ձևակերպման օգտագործվում են համայնքային հողերը:

9. Ընդհանուր առմամբ, կտեղահանվեն 2496.49 քմ մակերեսով շինություններ (թվով՝ 26-ը), որը կհանգեցնի մեկ տնային տնտեսության և երեք ձեռնարկատիրական գործունեության վերաբնակեցմանը: Ընդհանուր առմամբ, վարելահողերի և բնակելի հողերի օտարման արդյունքում ազդեցության կենթարկվեն 334,151.95 քմ մշակաբույսեր: Ծրագրի տարածքի հիմնական մշակաբույսերը հանդիսանում են ցորենը, գարին, առվույտը, կորնգանը և կարտոֆիլը: Ծրագիրը ազդեցության կենթարկի նաև 83 պտղատու ծառեր, 28 փայտանյութ տվող ծառեր և 7 դեկորատիվ ծառեր:
10. 2677 ԱԵԱ-ներից բաղկացած ազդեցության ենթակա 530 տնային տնտեսություններից 93 -ը խոցելի տնային տնտեսություններ են, ներառյալ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան նպաստ ստացող ԱԵՏՏ-ը,կանանց, կենսաթոշակառուների կամ հաշմանդամների կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ները, ինչպես նաև 274-ը խիստ ազդեցության ենթակա տնային տնտեսություններ են, որոնք կորցնում են իրենց եկամուտ բերող գյուղատնտեսական հողի 10%-ից ավելին: Խոցելի և խիստ ազդեցության ենթակա տնային տնտեսությունները հանդիսանում են Ծրագրի կողմից առաջարկվող եկամտի վերականգնման և վերականգնողական օժանդակությունների համար թիրախային խմբերը:
11. Ծրագրի իրականացման արդյունքում չեն ակնկալվում ազդեցություններ տեղաբնիկ (ՏԲ) ժողովրդի վրա: Տեղաբնիկ ժողովրդի վրա ազդեցությունների գնահատումը իրականացվել է համաձայն Տեղաբնիկ ժողովուրդների վերաբերյալ ԱԶԲ ԱՔՀ 2009-ի և ԵՆԲ-ի Սոցիալական ստանդարտների ու սկզբունքների հայտարարագրի համաձայն: Ծրագիրը հիմնականում կազդի էթնիկ հայ ազգաբնակչության վրա, հետևաբար ԱԶԲ Տեղաբնիկ ժողովուրդների (ՏԲ) քաղաքականությունը չի կիրառվում:

Փոխհատուցման իրավասություններ և իրավունքներ

12. ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող Ծրագիրը համաձայնեցված կերպով ղեկավարվում է ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ԲՖԳ-ի համար պատրաստված և վերանայված ՀՕՏՇ-ով, որը հիմնված է ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի (ԱՔՀ 2009թ.) և ՀՀ օրենսդրության պահանջների վրա: Համաձայն 2015թ. վերանայված ՀՕՏՇ-ի՝ փոխհատուցման, կամ առնվազն վերականգնման իրավունք ունեցող ԱԵԱ-ները հետևյալներն են. 1) գույքային իրավունք ունեցող ԱԵԱ-ներ, օրինականացման ենթակա ԱԵԱ-ներ, կամ իրավական կարգավիճակ չունեցող ԱԵԱ-ներ; 2) գրանցված կամ չգրանցված վարձակալներ և օգտագործողներ; 3) հողին ամրակցված շինությունների, մշակաբույսերի, ցանքերի կամ այլ օբյեկտների սեփականատերեր և օգտագործողներ, և 4) ԱԵԱ-ներ, որոնք կորցնում են ձեռնարկատիրական գործունեությունը, եկամուտը և աշխատանքը: Վերանայված ՀՕՏՇ-ի փոխհատուցման իրավունքների մատրիցան ներկայացված է ստորև: Ծրագրի շրջանակներում ՀՕՏ առաջադրանքները պետք է իրականացվեն փոխհատուցում և օժանդակություն ստանալու իրավունքներին համապատասխան, որը հնարավորինս պետք է համահունչ լինի ինչպես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը (ԱՔՀ 2009թ.), այնպես էլ ԲՖԳ-ի վերանայված ՀՕՏՇ-ին: Փոխհատուցման իրավունքը սահմանափակվում է կասեցման օրով: ԵՆԲ հատվածի համար կասեցման օրը 2015թ. հունիսի 4-ն է, որը հանդիսանում է ազդեցության ենթակա գույքի նկարագրության արձանագրության կազմման օրը (ԱԵԱ-ների, ՏԿՆ և Ձեռքբերողի կողմից արձանագրությունների ստորագրումը) : Քանի որ ազդեցության ենթակա գույքի նկարագրության արձանագրության կազմման օրը տարբեր կարող է լինել յուրաքանչյուր գույքի համար, նշված ամսաթիվը հանդիսանում է ԱԵԱ-ի, ՏԿՆ-ի և Ձեռքբերողի կողմից առաջին նկարագրության

արձանագրության ստորագրման օրը, որտեղ արձանագրվում են իրականացված մարդահամարի, մանրամասն չափագրման հետազոտության և ազդեցությունների գնահատման տվյալները:

Աղյուսակ 1: Իրավունքների սխեմա

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
1. Հողի կորուստ	ԱԵԱ-ներ, որոնք կորցնում են իրենց սեփականությունը հանդիսացող հողամասը կամ դրա մի մասը՝ անկախ ազդեցության չափից	Սեփականատեր	Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով՝ գնահատված շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15%՝ կամ փոխանակում ԱԵԱ համար ընդունելի մեկ այլ համարժեք հողով:
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ	Օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ ՝ ԱԵԱ-ները կարող են ձեռքբերել սեփականության իրավունք կամ իրականացնել առկա իրավունքների պետական գրանցումը և փոխատուցվել որպես սեփականատեր:
		Վարձակալ (համայնքից, պետությունից)	Օրենսդրությամբ սահմանված դեպքերում վարձակալը կարող է ձեռքբերել սեփականության իրավունք և փոխհատուցվել որպես սեփականատեր կամ նրան՝ հողի սեփականատիրոջ (վարձատուի) համաձայնությամբ, կարող է տրվել նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա վարձակալված հողի «շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%»-ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ի չափով, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14% -ի չափով, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%- ի չափով, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%- ի չափով:
		Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողի վարձակալ Այլ գույքային իրավունք (սերվիտուտի,	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի կանխիկ փոխհատուցում

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		կառուցապատման, գրավի, հիփոթեքի, օգտագործման) ունեցողներ, բացառությամբ վարձակալների	Հողամասի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին, բացառությամբ վարձակալների, փոխհատուցումը տրվում է ազդակիր հողամասի դիմաց տրվող փոխհատուցման գումարից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
		Իրավական գրանցման կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ	Այս ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում միայն հողի վրա կատարված բարելավումների դիմաց, սույն ՀՕՏԾ-ով սահմանված կարգով:
2. Բնակելի շենքեր, շինությունների կորուստ		Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ կառույցի նկատմամբ իրավունքների առկայությունից (ներառյալ՝ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա և ոչ ենթակա ԱԵԱ)	Բնակելի շենքի, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցում փոխարինման արժեքի գումարած 15%-ի չափով, առանց ամորտիզացիոն մասնահատումների և գործարքային ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար այն դեպքում, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:
		Վերաբնակեցվող վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:
3. Ոչ բնակելի շենքերի, շինությունների կորուստ	ԱԵԱ-երին սեփականության իրավունքով պատկանող և պետական գրանցում ստացած շենք, շինություններ	Սեփականատեր	Շենք, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման տրամադրում փոխարինման արժեք գումարած 15%-ի չափով: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասհանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը, շահագործումը և օտարումը օրենսդրորեն հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:
	Ինքնակամ կառույցներ (բացառությամբ բնակելի կամ փաստացի բնակեցված շինությունների)	Ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ	Փոխհատուցումը կիրականացվի շենք, շինության սեփականատիրոջը տրամադրվող փոխհատուցման սկզբունքով՝ միայն ինքնակամ կառույցի օրինականացման և դրա նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման դեպքում:

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		Վերաբնակեցվող վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:
4. Հանրային գույքի կորուստ	Համայնքային կամ պետական գույք	Համայնք/պետություն	Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի, անշարժ գույքի փոխհատուցում կամ պետական, համայնքային ազդակիր կառույցների կամ այլ գույքիվերակառուցում և նրանց գործառույթների վերականգնում՝ համայնքի, պետության իրավասու մարմնի համաձայնությամբ:
5. Մշակաբույսի կորուստ	Ազդեցության ենթակա մշակաբույսեր	Բարելավումներ կատարած բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից	Մշակաբույսի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:
6. Ծառերի և ստացվող բերքի կորուստ	Ազդեցության ենթակա ծառեր և ստացվող բերք	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից	Դրամական փոխհատուցում՝ հաշվարկված ծառի արժեքի շուկայական գներով՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:
7. Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում	Ձեռնարկատիրական գործունեություն ազդակիր հողում	Բոլոր ԱԵԱ-ները՝ անկախ հարկային հայտարարագրի ներկայացումից	1. **Ձեռնարկատիրական գործունեության (հարկային հայտարարագրերով)՝** ա) մշտական ազդեցության դեպքում՝ միանվագ փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով, բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ զուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Պետական գրանցման կամ լիցենզիայի վճարները նույնպես կփոխհատուցվեն, եթե այդպիսիք առկա են: 2) **Ձեռնարկատիրական գործունեության (հայտարարագրի բացակայության դեպքում)՝** ա) մշտական ազդեցության դեպքում՝ վերականգնման օժանդակություն նվազագույն ամսական աշխատավարձի չափով՝ 1 տարվա համար: բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
			վերականգնման օժանդակության տրամադրում, հիմնված նվազագույն աշխատավարձի չափի վրա՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամսիների հաշվարկով մինչև առավելագույնը 1 տարի:
8. Աշխատանքի կորուստ	Աշխատանքի մշտական կորուստ կամ հարկադիր պարապուրդ (ոչ աշխատողի մեղքով)	Ազդակիր կազմակերպությունում կամ ԱՁ-ում աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք	Փոխհատուցման տրամադրում՝ ա) մշտական ազդեցության դեպքում՝ վեց ամսվա միջին աշխատավարձի չափով բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ մինչև վեց ամիս միջին աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամսիների հաշվարկով:
9. Օժանդակություն խիստ ազդեցությունների դեպքում	Գյուղատնտեսական նշանակության հողի 10 և ավելի տոկոսի կորուստ և վերաբնակեցում	Խիստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	ա) գյուղատնտեսական նշանակության հողի 10 և ավելի տոկոսի կորստի դեպքում փոխհատուցում՝ազդեցության ենթակա հատվածում առկա 1 տարվա բերքի չափով: բ) վերականգնման օժանդակություն՝ վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներին՝ վեց ամսվա նվազագույն աշխատավարձի չափով:
10. Վերաբնակեցման օժանդակություն	Օժանդակություն տեղափոխման նպատակով տրանսպորտային ծախսերը և ապրուստի միջոցները հոգալու համար	Վերաբնակեցվող բոլոր ԱԵՏՏ-ներ, ներառյալ վարձակալները	Դրամական օժանդակության տրամադրում՝ տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտային ծախսերը և մեկ ամսվա կենսապահովման ծախսերը հոգալու համար:
		Ազդեցության ենթակա հողի և շինության վրա շարժական գույք ունեցող բոլոր ԱԵԱ-ները, որոնք ենթակա են տարաբնակեցման՝ անկախ ազդակիր գույքի նկատմամբ առկա իրավունքներից	Դրամական միջոցների հատկացում՝ տրանսպորտային ծախսերը հոգալու համար:
11. Օժանդակություն խոցելի անձանց/ԱԵՏՏ -ներին		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող, կանանց, տարեց կամ	Դրամական օժանդակության տրամադրում՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով: Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնայնություն տալ:

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		հաշմանդամ անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	
12. Ժամանակավոր ազդեցություն		Ժամանակավոր ազդեցություն կրող բոլոր անձիք և տնային տնտեսութունները	Վնասների փոխհատուցում կտրամադրվի ժամանակավոր ազդեցության ենթակա դեպքերում փոխարինման արժեքով և սույն ՀՕՏԾ-ով սահմանված փոխհատուցման իրավունքներին համապատասխան:
13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն		Փոխհատուցման իրավունքներ ունեցող ԱԵԱ/ԱԵՏՏ-ներ	Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿՆ կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը կամ օժանդակության տրամադրումը, ըստ ՀՕՏԾ դրույթների:
14. Բարելավումների փոխհատուցում	Այլ բարելավումներ, որոնք ներառված չեն իրավունքների սույն աղյուսակում, սակայն առկա են ազդակիր հողամասի վրա (բացառությամբ՝ շարժական գույքի	Բարելավում կատարած ԱԵԱ-ներ	Փոխհատուցման տրամադրում՝ փոխարինման արժեքի չափով:

Բողոքների լուծում

13. Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ) կհաստատվի յուրաքանչյուր համայնքում ՀՕՏԾ իրականացումից առաջ, մասնավորապես. Բողոքի առանցքային անձը (ԲԱԱ) և համայնքի կողմից առաջադրված ներկայացուցիչը կապահովեն ԱԵԱ-ների համար ԲԼՄ-ի հասանելիությունը և կերաշխավորեն, որպեսզի ԱԵԱ-ն կարողանա բողոքարկել հողի կամ այլ գույքի փոխհատուցման արդյունքում առաջացած ցանկացած որոշում, գործունեության կամ գործողության: ԱԵԱ-ները տեղեկացված են իրենց բողոքները ԲԼՄ-ի միջոցով կամ այլ հանրային իշխանություններին ուղղելու իրավունքների և ընթացակարգերի վերաբերյալ: Բացի ԲԼՄ-ի հասանելիությունից, ԱԵԱ-ները ազատ են դիմելու երկրի իրավական համակարգին ԲԼՄ գործընթացի ցանկացած փուլում:

Հանրային լսումներ և տեղեկատվության հրապարակում

14. Բոլոր ազդեցության ենթակա համայնքներում ԱԵԱ-ների ներկայացուցիչների և տեղական իշխանութունների հետ կազմակերպվել են ոչ պաշտոնական խորհրդակցություններ 2010թ. մարտին՝ Ծրագրի տեխնիկա-տնտեսական ուսումնասիրության փուլում: Պաշտոնական խորհրդակցություններ

են անցկացվել բոլոր ազդեցության ենթակա համայնքների տեղական իշխանությունների հետ հանդիպումների միջոցով 2012թ.՝ ՀՕՏԾ նախագծի պատրաստման փուլում և 2014թ. փետրվարին, մայիսին և հոկտեմբերին՝ վերջնական ՀՕՏԾ-ի պատրաստման փուլում: Վերջնական ՀՕՏԾ-ի պատրաստման ընթացքում ԱԵԱ-ներին և տեղական իշխանություններին տրամադրվել է հայերեն լեզվով ՀՕՏ տեղեկատվական ձեռնարկը, իսկ թարմացված վերջնական հայերեն լեզվով ՀՕՏ տեղեկատվական ձեռնարկը կտրամադրվի ԱԵԱ-ներին ՀՕՏԾ իրականացման ընթացքում: Վերջնական ՀՕՏԾ-ի հայերեն լեզվով օրինակը հասանելի կլինի յուրաքանչյուր մարզում (մարզպետարանում) և ՏԿՆ-ի գրասենյակում ԵՆԲ-ի և ՀՀ կառավարության կողմից այն հաստատելուց հետո: Վերջնական ՀՕՏԾ-ի անգլերեն օրինակը կհրապարակվի ԵՆԲ-ի կայքէջում: Վերջնական ՀՕՏԾ-ի հայերեն և անգլերեն օրինակները կտեղադրվեն նաև ՏԿՆ-ի և Ծրագրի կայքէջերում:

ՀՕՏԾ-ի ծախսեր

15. ՀՕՏԾ-ի իրականացումը կտևի մոտ մեկ տարի: Տրանշ 3 Ծրագրի համար ՀՕՏ ծախսերը, ներառյալ՝ փոխհատուցումը, վերականգնման օժանդակությունները, ինչպես նաև ՀՕՏԾ-ի իրականացման վարչական և չնախատեսված ծախսերը կազմում է 875.918.889,65 ՀՀ դրամ, որը համարժեք է 1.848.086,10 ԱՄՆ դոլարին: Ի լրումն, վերջնական ՀՕՏԾ-ի արտաքին մոնիթորինգը կարժենա 48,000 ԱՄՆ դոլար (ներառյալ ԱԱՀ-ն), որը կֆինանսավորվի վարկային միջոցներից (ԱԱՀ-ն կֆինանսավորվի ՀՀ պետական բյուջեից):

Մոնիտորինգ և գնահատում

16. ՀՕՏԾ-ի իրականացումը կենթարկվի ներքին մոնիթորինգի ԾԻԿ-ի կողմից՝ արդյունքները ներկայացնելով ԵՆԲ-ին Բնապահպանության և Սոցիալական մոնիտորինգի կիսամյակային հաշվետվությունների (ԲՍՄԿՀ) և Եռամսյակային առաջընթացի հաշվետվությունների (ԵԱՀ) միջոցով: Արտաքին մոնիտորինգը կիրականացվի Արտաքին մոնիտորինգի գործակալության (ԱՄԳ) կողմից: ԱՄԳ-ն կիրականացնի ՀՕՏԾ իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ մոնիթորինգ: Կարճաժամկետ մոնիթորինգը կիրականացվի ՀՕՏԾ իրականացման գործողություններին զուգահեռ: ԱՄԳ-ն մանրամասնորեն կվերահսկի ՀՕՏԾ-ի իրականացումը և կարծանագրի բացահայտումները Համապատասխանության հաշվետվություններում՝ յուրաքանչյուր ՀՕՏԾ իրականացման ենթահատվածի համար որոնք պետք է հաստատվեն ԵՆԲ-ի կողմից՝ որպես բուն շինարարական աշխատանքները սկսելու պայման: ԱՄԳ-ն կիրականացնի նաև ՀՕՏԾ ծրագրի հետ-իրականացման գնահատում՝ ՀՕՏԾ-ի իրականացման ավարտից մեկ տարի հետո:

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ծրագրի պատմությունը

1. Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) համաձայնվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը (ՀՀ կառավարություն) տրամադրել 60մլն եվրո արժողությամբ վարկ "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք" ներդրումային ծրագիրը (Ծրագիր) ֆինանսավորելու համար: Սույն ՀՕՏԾ-ի առարկա Լանջիկից մինչև Գյումրի 27.4 կմ (կմ 90.200-կմ 117-600) երկարությամբ ճանապարհահատվածի բարելավումն է Ծրագրի Տրանշ 3-ի ներքո: Ծրագիրն առաջացնում է էական հողի օտարման և շինությունների ապամոնտաժման ազդեցություն: Սույն ՀՕՏԾ-ն պատրաստվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (ՏԿՆ), Ծրագրի Իրականացնող գործակալության (ԻԳ) կողմից՝ պլանավորելու և իրականացնելու համար Ծրագրի ՀՕՏ-ը: Սույն ՀՕՏԾ-ն հիմնված է ՀՀ համապատասխան օրենքների ու կարգավորումների, ԱԶԲ-ի Անվտանգության մեխանզիմների քաղաքականության հայտարարագրի (ԱՔՀ 2009), ԵՆԲ-ի Սոցիալական ստանդարտների ու սկզբունքների հայտարարագրի և Պարտադրված Վերաբնակեցման Ուղեցույցի, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից ընդունված հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակի (ՀՕՏՇ) պահանջների վրա:ՀՕՏՇ-ն, ընդունված 2010թ., վերանայվել է 2015թ.-ին՝ Տրանշ 3-ի վերջնական ՀՕՏԾ-ի համար:
2. Սույն ՀՕՏԾ-ի պատրաստման և իրականացման պատասխանատվությունը կրում է ՏԿՆ-ն: ՀՕՏԾ մշակման համար ՏԿՆ-ն կիրառել է Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի (ԱՄՔ 2009) Վերաբնակեցման քաղաքականության մոդելը: Այս ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԱԶԲ քաղաքականությունը կիրառվել է Մ1 մայրուղու այլ հատվածների վերակառուցման համար և այն նպատակով, որպեսզի մայրուղու վերակառուցման յուրաքանչյուր հատվածում պահպանվեն նմանատիպ գործառնական ստանդարտներ: Ծրագիրը դասակարգվել է որպես Ա կարգի ծրագիր ԱԶԲ-ի Գործառնական ձեռնարկի (ԳՁ 2009) համաձայն, քանի որ ավելի քան 200 անձիք կենթարկվեն էական ազդեցությունների, ներառյալ իրենց կողմից մշակվող գյուղատնտեսական հողի կամ եկամտի 10%-ից ավելի կորուստը կամ բնակելի վայրի և բիզնեսի վերաբնակեցումը:
3. Սույն վերջնական ՀՕՏԾ-ին նախորդել է 2012թ. պատրաստված նախնական ՀՕՏԾ-ն, որը ընդգրկում էր Թալինը Գյումրիին կապող 45.8 կմ ավելի երկար ճանապարհահատված, որն այդ պահին հանդիսանում էր ԱԶԲ ծրագրի շրջանակը: Հետևելով զուգահեռ համաֆինասավորման վերաբերյալ Եվրոպական ներդրումային Բանկի (ԵՆԲ) հետ 2013թ. կնքված համաձայնագրին՝ ԱԶԲ նախնական ծրագրի շրջանակը կրճատվեց մինչև 18.7 կմ Թալին-Լանջիկ հատվածը, որի համար ԱԶԲ-ն կրում է լիաժեք երաշխիքների հաշվետվողականություն, իսկ 27.4կմ Լանջիկ-Գյումրի հատվածի ՀՕՏԾ-ն գտնվում է ԵՆԲ կողմից ֆինանսավորման ներքո (ԵՆԲ հատված): Երաշխիքների համապատասխանության ստուգման հաշվետվողականությունը ԵՆԲ հատվածի ՀՕՏԾ-ի համար կրում է բացառապես ԵՆԲ-ն:
4. Ծրագիրը ներառում է գոյություն ունեցող միակողմանի 2 երթևեկելի գոտուց բաղկացած Մ1 մայրուղու վերակառուցումը միջազգային չափանիշներին համապատասխան 4 երթևեկելի գոտուց բաղկացած երկկողմ ավտոմայրուղու: Նոր ծրագիծն ընդհանուր առմամբ հետևում է գոյություն ունեցող մայրուղու առանցքին նվազեցելու համար ազդեցությունները, սակայն ներառում է նաև գոյություն ունեցող համայնքային դաշտավայրերի շրջանցումներ: Ազդեցության ենթակա հողերի մեծամասնությունը վարելահողեր են կամ արոտավայրեր:
5. Սույն ՀՕՏԾ-ն գնահատում է Ծրագրի ազդեցությունները և մանրամասնում պահանջվող փոխհատուցման և վերականգնման միջոցառումները՝ հիմք ընդունելով վերջնական մանրամասն նախագիծը, ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) վերջնական մարդահամարը և յուրաքանչյուր

ազդեցության ենթակա հողամասի համար իրականացված Մանրամասն չափագրման հետազոտությունը (ՄՉՀ): Ազդեցության ենթակա հողամասերի և շինությունների գնահատումը հիմնված է փոխարինման արժեքի սակագների վրա: Ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) թիվը ստացվել է հողերի և գույքերի պաշտոնական գրանցումների հիման վրա և հաստատվել/թարմացվել է տուն-առ-տուն իրականացված մարդահամարի միջոցով: ԱԵԱ-ների սոցիալ-տնտեսական պատկերը ստացվել է տնային տնտեսությունների 30.6% ընտրանքով 2010թ. իրականացված և 2014թ. թարմացված սոցիալ-տնտեսական հետազոտության (ՍՏՀ) միջոցով:

Ծրագրի իրականացման ՀՕՏ-առնչվող պայմանները


6. Սույն ՀՕՏԾ պահանջների համաձայն՝ Ծարգրի իրականացումը հիմնված է հետևյալ պայմանների վրա.

- **Տրանշ 3 Ծրագրի ներքո ՀՕՏ-ի հետ առնչվող առաջադրանքների իրականացումը ԱԶԲ-ի և ԵՆԲ-ի զուգահեռ ֆինանսավորման շրջանակներում** պայմանավորված է հետևյալով՝ ա) ԱԶԲ-ի ԱՄՔ-ն և ԵՆԲ-ի Սոցիալական ստանդարտների ու սկզբունքների հայտարարագրի և Պարտադրված Վերաբնակեցման Ուղեցույցը կկիրառվեն որպես Երաշխիքների քաղաքականություն տվյալ Ենթածրագրի համար տվյալ Ենթածրագրի համար; բ) ԵՆԲ-ն պատասխանատու կլինի հաստատել ՀՕՏԾ իրականացման Համապատասխանության հաշվետվությունները ԵՆԲ Ենթածրագրի համար; և գ) ԵՆԲ-ն պատասխանատու կլինի վերանայելու համար երաշխիքների պահանջները կապված միայն ԵՆԲ ենթածրագրերի համար:
- **Շինարարական պայմանագրի իրականացման ձևաչափը** պայմանավորված է հետևյալով՝ ա) ՀՕՏԾ-ի ավարտում իրականացմանը պատրաստ փաստաթղթի վերջնականացում; բ) վերջնական ՀՕՏԾ-ի հրապարակում; և գ) մոբիլիզացմանը պատրաստ Արտաքին մոնիտորինգի գործակալության (ԱՄԳ) վարձում:
- **Բուն շինարարական աշխատանքների մեկնարկը.** պայմանավորված է համապատասխան ՀՕՏԾ-ի ամբողջական իրականացմամբ (փոխհատուցման/վերականգնման ամբողջական տրամադրում), ինչը արձանագրված կլինի ԵՆԲ-ի համար ընդունելի ԱՄԳ-ի կողմից պատրաստված Համապատասխանության հաշվետվությունում:

2. Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի ընդհանուր նպատակները

7. ՀՕՏԾ-ի նպատակն է բացահայտել Տրանշ 3 Ծրագրի մայրուղու կառուցման հետևանքով ազդեցության ենթարկվող անձանց և գնահատել պատճառվող վնասի չափը (ինչ տեսակի կորուստ է առկա և դրա արժեքը), ինչպես են այդ անձինք փոխհատուցվելու և ինչպես են վերականգնելու իրենց եկամուտները, ապահովել այնպիսի իրավիճակ, որպեսզի այդ անձինք չհայտնվեն ավելի վատ վիճակում քան “առանց Ծրագրի իրականացման” տարբերակում: Բոլոր դեպքերում, ընդհանուր նպատակն է առնվազն վերականգնել ԱԵԱ-ների նախկին կենսամակարդակը և կյանքի որակը: ՀՕՏԾ-ի առաջնային նպատակն է փոխհատուցման, տարաբնակեցման և վերականգնման համար ներկայացնել անհրաժեշտ մանրամասները, ներառյալ՝ 1) կորստի չափերը և ծրագրի ազդեցության գնահատումը, 2) տեղեկատվության հրապարակումը, խորհրդատվությունը և մասնակցությունը, 3) փոխհատուցումների վճարման և վերականգնման քաղաքականությունը և շրջանակները, 4) խիստ ազդեցության ենթարկվող և խոցելի տնային տնտեսությունների վերականգնման ծրագիրը, 5) բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմը,) 6) տարաբնակեցման բյուջեն և ֆինանսավորման պլանը, ներառյալ՝ կորցրած ակտիվների, վերաբնակեցման և վերականգնման փոխհատուցման չափի գնահատումը, 7) ինստիտուցիոնալ շրջանակը և տարաբնակեցման ծրագրի իրականացման ժամակացույցը և 8) ՀՕՏԾ իրականացման մոնիտորինգը:

Քարտեզ 1. Ծրագրի տեղակայվածությունը



3.

Կասեցման ամսաթիվը

8. Փոխհատուցման իրավունքները սահմանափակվում են կասեցման ամսաթվով՝ տվյալ Լանջիկ-Գյումրի ենթահատվածի համար այն սահմանված է 2015թ. հունիսի 4-ը, որը օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրն է (արձանագրությունների ստորագրումը ԱԵԱ-ների, ՏԿՆ, Ձեռքբերողի կողմից), որտեղ արձանագրվում են իրականացված մարդահամարի, մանրամասն չափագրման հետազոտության և ազդեցությունների գնահատման տվյալները: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրվանից հետո կատարված բարելավումների համար փոխհատուցում չի տրվում, բացառությամբ Օրենքով և ՀՕՏԾ-ով սահմանված դեպքերի: Օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում տրվում է միայն ՀՕՏԾ-ով սահմանված դեպքերում և կարգով: Մյուս բոլոր դեպքերում նշված իրավունքները դադարեցվում են՝ առանց փոխհատուցման իրավունքի:

9. Ծրագիրը ժամանակ առ ժամանակ իրականացրել է մի շարք քայլեր ԱԵԱ-ներին կասեցման ամսաթվի վերաբերյալ տեղեկացնելու համար: 2014թ. փետրվարին իրականացված հանրային հանդիպումների ընթացքում ԱԵԱ-ները և համայնքները տեղեկացվել են մարդահամարի և ՄՉՀ-ի, ինչպես նաև կասեցման ամսաթվի կարևորության մասին: Ի լրումն, համայնքային մակարադակում տեղական իշխանությունները մասնակցել են ՄՉՀ գործընթացին՝ ապահովելու համար գործընթացի թափանցիկությունը և անկողմնակալությունը: Համայնքների միջոցով ԱԵԱ-ները նախապես տեղեկացվել են իրենց համայնքում մարդահամարի և ՄՉՀ ամսաթվերի մասին՝ ապահովելու համար նրանց մասնակցությունը և խուսափելու հետագա բողոքներից: Համայնքների մասնակցությունը հնարավորություն է տվել նաև նույնականացնել ազդեցության ենթակա հողերի սեփականատերերին, վարձակալներին և օգտագործողներին:

Բ. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

1. ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

10. Այս գլուխը ներկայացնում է Մ1 մայրուղու Լանջիկ-Գյումրի կմ 90.200- կմ 117-600 հատվածի երկայնքով ազդեցության ենթակա ինը համայնքների վրա վերջնական ազդեցությունների մանրամասն քանակական հաշվարկը: Այդ համայնքներն են՝ Լանջիկ, Սառնաղբյուր,Ձորակապ, Մարալիկ, Հայրենյաց, Հոռոմ, Լուսկերտ, Բենիամին և Ազատան, բոլորը գտնվում են Շիրակի մարզում: Նոր ծրագիծը հիմնականում հետևում է գոյութուն ունեցող մայրուղու առանցքին՝ նվազեցնելու համար ընդհանուր ազդեցությունները, սակայն ներառում է նաև գոյություն ունեցող համայնքների դաշտավայրերի շրջանցումներ: Օտարվող հողերի մեծամասնությունը վարելահողեր են կամ արոտավայրեր:
11. Ծրագրի շրջանակներում կիրառվել են տարբեր միջոցառներ և ջանքեր՝ մեղմացնելու համար Ծրագրի ազդեցությունները: Դա իրականացնելու համար ճանապարհի առաջարկվող նախագիծը հիմնականում անցնում է առկա ծրագծով, և լրացուցիչ երկու երթեկելի ուղիների կառուցումը պահպանում է հասանելի ճանապարհը: Բացի այդ, վերաբնակեցման ազդեցությունները բնակելի հատվածներում նվազեցնելու համար առաջարկվել է շրջանցող ծրագիծ: Առաջարկված շրջանցող ծրագիծը ընտրվել է զգուշորեն՝նվազեցնելու համար մասնավոր սեփականություն հանդիսացող հողամասերը օգտագործելով առավելապես համայնքային և պետական հողեր: Բացի այդ, վերջնական ՀՕՏԾ պատրաստման ընթացքում, չափագրողների, սոցիոլոգների և տեղազննողների համատեղ աշխատանքների արդյունքում մշակվեցին առաջարկներ՝ մանրամասն նախագծի ճշտումների և ազդեցությունների հնարավոր նվազեցման նպատակով: Իրականացվեցին համատեղ աշխատանքներ նախագծողների հետ, որի արդյունքում հնարավոր եղավ ազդեցության ենթարկված հողակտորների և շինությունների ցանկը կրճատել: Ընդհանուր առմամբ օտարման ենթակա գույքների ցանկից հանվել են 71 հողակտոր՝ 54.663 հա ընդհանուր մակերեսով և 15 շինություններ՝ 77.676 քմ ընդհանուր մակերեսով, որոնցից 6՝ բնակելի:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

12. Հետազոտական գործողությունները իրականացվել են երկու փուլով. ճանապարհի վերջնական նախագծի որոշումից և հաստատումից առաջ ու հետո: Առաջին հետազոտությունը նախաձեռնվել է 2012թ. նախնական ՀՕՏԾ պատրաստման ընթացքում, երբ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (ԱԳԿՊԿ) կողմից տրամադրվեցին թվային կադաստրային քարտեզները, և ճանապարհի նախնական ծրագիծը տեղադրվեց քարտեզի վրա: Այս գործողությունը թույլ տվեց նախնական նույնականացնել ազդեցության ենթակա հողերը և դրանց սահմանները/մակերեսը: Այնուհետև, հավաքվել է ազդեցության ենթակա տնային տնտեսությունների քանակի, դրանց կազմի և խոցելիության վերաբերյալ տեղեկատվությունը Տեղական ինքնակառավարման մարմիններից (ՏԻՄ), ինչպես նաև ազդեցության ենթակա հողերի սեփականատերերի մասին ԱԳԿՊԿ կողմից ստացված ցանկի հիման վրա ԱԵԱ-ների նախնական մարդահամարի իրականացման ընթացքում կատարված հարցազրույցների միջոցով: Մշակաբույսերի մասին տեղեկատվությունը հավաքվել է ՏԻՄ-երից:
13. Այս տվյալները, այնուհետև ստուգվել են դաշտում Մանրամասն չափագրման հետազոտության (ՄՉՀ) միջոցով, երբ հաստատվեց վերջնական ծրագիծը 2013թ. ապրիլին: Այս փուլում հետազոտական առաջադրանքները ներառում էին. 1) հողի հետազոտողների հմուտ խմբի կողմից օտարման ենթակա հողակտորների չափագրում, ֆիքսում, սահմանագծում և նույնի ստուգում կադաստրային քարտեզների վրա՝ հողի սեփականատիրոջ և համայնքային իշխանությունների ներկայությամբ; 2) գյուղատնտեսների և որակավորված գնահատման մասնագետների կողմից հողակտորների և մշակաբույսերի/ծառերի նկարագրություն; 3) գնահատման մասնագետների կողմից շենքերի/շինությունների, անշարժ գույքի նկարագրում; և 4) ԱԵԱ-ների մարդահամարի և սոցալ-տնտեսական հետազոտության (ՍՏՀ) իրականացում: Միաժամանակ, ԾԻԿ-ը հավաքեց տեղեկատվություն՝ ԱԵԱ-ների փաթեթները համալրելու համար: ՄՉՀ, ակտիվների նկարագրության, մարդահամարի և այլ հարակից տվյալները ամփոփվեցին նկարագրության արձանագրություններում, որոնք այնուհետև ներկայացվեցին ԱԵԱ-ների ստորագրմանը: Ընդ որում, նկարագրության արձանագրության ձևաչափը փոփոխվել է Տրանշ 3-ի համար ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1275-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ն որոշմամբ: Նկարագրության արձանագրությունը և ՍՏՀ, մարդահամարի տվյալների ստացման համար օգտագործված հարցաթերթերը ներկայացված են սույն պլանի համապատասխանաբար **հավելվածներ 1-ում և 2-ում**:

3. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1 ԱԵՏՏ և Մարդահամար

14. Հիմք ընդունելով ՄՉՀ և մարդահամարի արդյունքները, հաստատվեց, որ Ծրագրի համար առկա կլինեն մասնավոր, համայնքային և պետական սեփականության հողերի էական օտարում: Արձանագրվել է, որ Ծրագրի արդյունքում ընդհանուր առմամբ ազդեցության կենթարկվեն 26 բնակելի և ոչ-բնակելի կառույցներ: Քսանվեց կառույցներից երեքը բնակելի են, մեկը՝ ռեստորան, երկուսը կոմունալ կառույցներ են, մեկը՝ հյուրանոց, իսկ մեկը տեխսպասարկման կենտրոն: Ի լրումն, Ծրագրի արդյունքում ազդեցության են ենթարկվում նաև երեք այլ կառույցներ, ինչպիսիք են կանգառները, տեղզննման կայանը, քարե պարիսպները և այլն: Սույն գլխում քննարկվում են Ծրագրի ազդեցութունների մանամասները, իսկ ազդեցությունների ամփոփումը ներկայացված է Աղյուսակ Բ1-ում:
15. ԱԵՏՏ-ների ընդհանուր թիվը 530 է: 530 ԱԵՏՏ-ներից միայն 430 (81.13%) տնային տնտեսություններն է հնարավոր եղել ընդգրկել մարդահամարի հետազոտության մեջ: Մնացած 100 տնային տնտեսությունները հնարավոր չի եղել ընդգրկել մարդահամարի հետազոտության մեջ՝ տնային տնտեսությունների անդամների՝ արտասահմանում ապրելու, գտնվելու վայրի

անհայտության, Հայաստանի այլ մարզերում բնակվելու պատճառներով: Նշված տնային տնտեսությունների մանրամասն բացվածքը ուսումասիրված է ՀՕՏԾ իրականացման գործընթացի վերաբերյալ գլխում: Պլանի այս գլխում ներկայացված ԱԵԱ-ների թիվը էքստրապոլացվել է 430 հետազոտված տնային տնտեսությունների հիման վրա՝ ստանալու համար 530 ԱԵՏՏ-ների ԱԵԱ-ների բացարձակ թիվը: Այնուամենայնիվ, խոցելի ԱԵՏՏ-ների ներկայացված թիվը հիմնված է 430 ԱԵՏՏ-ների մարդահամարի վրա: ՄՉՀ-ն ընդգրկել է Ծրագրի արդյունքում ազդեցության ենթակա բոլոր գույքերը, և պլանի սույն գլխում ներկայացված ազդեցությունների տվյալները վերջնական են:

16. Ազդեցության ենթակա անձանց թիվը 2677 է՝ 530 ազդեցության ենթակա տնային տնտեսություններում: Մասնավոր հողերի օտարման արդյունքում ազդեցության են ենթարկվում 507 ԱԵՏՏ-ներ 2560 անձանցով: Համայնքային սեփականության հողերի օտարման արդյունքում ընդհանուր առմամբ ազդեցության են ենթարկվում 23, իսկ մեկ պետական սեփականության հողի օտարման արդյունքում մեկ տնային տնտեսություններ: Դրանցից 18 տնային տնտեսությունները համայնքային և պետական հողերի վարձակալներ են, իսկ մնացած վեցը՝ համայնքային հողերի չձևակերպված օգտագործողներ: Ինչ վերաբերում է շինություններին, ապա միայն 12 տնային տնտեսություններ են կորցնում մասնակի կամ ամբողջական շինություններ՝ կառուցված հողամասի մի հատվածի վրա: ԱԵՏՏ/ԱԵԱ տարբեր կատեգորիաների մանրամասները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ Բ1-ում: ԱԵԱ-ների ցանկը համապատասխան կորուստներով ներկայացված է **Հավելված 3-ում**:

Աղյուսակ Բ1. Ազդեցություններ և ԱԵՏՏ/ԱԵԱ մարդահամարի ամփոփում

Ազդեցության տեսակը	Ազդեցության տեսակ/ազդեցության միավորի քանակ	ԱԵՏՏ-ների քանակ առանց կրկնահաշվարկի	ԱԵԱ-ների քանակ (բացարձակ)	Մեկնաբանություն
Ա. Հող				
Ա1. Մասնավոր հող	314,669.03	507	2560	Հողերը ունեն մի քանի համասեփականատերեր, այդ պատճառով էլ ԱԵՏՏ-ների քանակը մեծ է հողերի քանակից: ՀՀ օրենսդրության համաձայն՝ գույքը կարող է ընդհանուր (համատեղ կամ բաժնային) սեփականության իրավունքով պատկանել մի քանի անձանց, որոնք ունեն հավասար (կամ ինչպես սահմանված է) իրավունքեր գույքի նկատմամբ և հետևաբար ունեն հավասար (կամ ինչպես սահմանված է)

Ազդեցության տեսակը	Ազդեցության տեսակ/ազդեցության միավորի քանակ	ԱԵՏՏ-ների քանակ առանց կրկնահաշվարկի	ԱԵԱ-ների քանակ (բացարձակ)	Մեկնաբանություն
				իրավունքեր փոխհատուցման նկատմամբ:
Ա2. Համայնքային հող	893,693.81	23	94	
Ա3. Պետական հող	34,691.76	0	0	Մեկ ՏՏ-ն պետական հողի վարձակալ է: Այս ՏՏ-ն ներառված է Ա1-ում և ցուցադրված չէ այստեղ: Մինչդեռ վարձակալների հաշվարկ դեպքում այն ներառված է Է1–ում:
Ենթաընդհանուր (Ա)	1,243,054.6	530	2677	
Բ. Շինություններ				
Բ1. Բնակելի	3	4		ներառված է Ա1 և Ա2-ում
Բ1. Ոչ բնակելի	23	8		ներառված է Ա1 և Ա2-ում
Գ. Միայմա մշակաբույսեր (մ^2)				
Ցորեն	120,958.05	152	623	ներառված է Ա1-ում
Գարի	50,545.5	73	299	
Կորնգան	32,460.49	72	295	
Առվույտ	11,307.7	14	57	
Կարտոֆիլ	117,545.1	168	688	
Խոտ	1,335.16	14	57	
Դ.Ծառեր				
Դ1. Պտղատու ծառեր	83	5	20	ներառված է Ա1 և Ա2-ում
Դ1. Փայտանյութ տվող ծառեր	28	5	20	ներառված է Ա1-ում
Դ3. Դեկորատիվ ծառեր	7	3	12	ներառված է Ա1-ում
Ե. Բիզնեսի/եկամտի կորուստ				
Ե1. Մշտական ազդեցություն հարկային հայտարարագրով	1	3		ներառված է Ա1-ում

Ազդեցության տեսակը	Ազդեցության տեսակ/ազդեցության միավորի քանակ	ԱԵՏՏ-ների քանակ առանց կրկնահաշվարկի	ԱԵԱ-ների քանակ (բացարձակ)	Մեկնաբանություն
Ե1. Մշտական ազդեցություն առանց հարկային հայտարարագրի	0	0		
Ե2. Ժամանակավոր ազդեցություն հարկային հայտարարագրով	2	0		
Ե2. Ժամանակավոր ազդեցություն առանց հարկային հայտարարագրի	0	0		
Զ.Աշխատանքի կորուստ				
Զ1. Աշխատանքի մշտական կորուստ	0	0	0	
Զ2. Աշխատանքի ժամանակավոր կորուստ	11	11	55	
Է. Վարձակալներ/ չձևակերպված օգտագործողներ				
Է1. Վարձակալություն (համայնքային, պետական հող)	15	18	74	ներառված է Ա1 և Ա2-ում
Է 2. Չձևակերպված օգտագործողներ (համայնքային հող)	7	6	25	ներառված է Ա2-ում
Է 3. Չձևակերպված փաստացի օգտագործողներ (մասնավոր հող)	86	86	352	ներառված է Ա1-ում
Ը. Խոցելի/խիստ ազդեցության ենթակա տնային տնտեսություններ				
Ը1. Խոցելի ԱԵՏՏ	111	93	381	Ներառված է Ա-ում: Խոցելի ԱԵՏՏ-ների

Ազդեցության տեսակը	Ազդեցության տեսակ/ազդեցության միավորի քանակ	ԱԵՏՏ-ների քանակ առանց կրկնահաշվարկի	ԱԵԱ-ների քանակ (բացարձակ)	Մեկնաբանություն
				տվյալները հիմնված են 430 ՏՏ-ների մարդահամարի վրա:
Ը 2. խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ	482	314	1286	ներառված է Ա-ում
Թ. Շարժական գույք/բարելավումներ				
Թ1. Ազդեցության ենթակա հողի վրա առկա շարժական գույք	17	16		Փոքր հուշաքարեր, փայտյա և մետաղական կառույցներ, մետաղական հովանոցներ, շինարարական պանելներ, որոնք կարող են տեղափոխվել առանց վնասելու:
ԱԵՏՏ = ազդեցության ենթակա տնային տնտեսություն; ԱԵԱ =ազդեցության ենթակա անձ, $մ^2$-քառ.մետր ԱԵԱ-ներ քանակը էքստրապոլացվել է՝ հիմք ընդունելով Ծրագրի 530 ԱԵՏՏ-ներից 430 ԱԵՏՏ-ների մարդահամարը:				

3.2 Ազդեցության ենթակա անձանց էթնիկ ծագումը և սեռային կազմը

17. Տեղաբնիկ ժողովուրդների (ՏԲ) խումբ, ինչպես սահմանված է ԱՋԲ ԱՔՀ Տեղաբնիկ ժողովուրդների անվտանգության մեխանիզմների քաղաքականությամբ, Ծրագրի տարածքում առկա չէ: Այնուամենայնիվ, ԱՔՀ-ն սահմանում է ՏԲ-ներին որպես ընդհանուր տերմին, որը ներառում է էթնիկ խմբերին: ԱԵԱ-ների գրեթե 100%-ը հայեր են (տե՛ս Աղյուսակ Բ2): Աննշան 0.14%-ը ռուս են: ԱԵԱ-ների 49.8%-ը տղամարդ են, իսկ 50.2%-ը՝ կին: Կանանց բարձր հարաբերակցությունը (գործակիցը) հանդիսանում է կայուն և առողջ հասարակության ցուցանիշ, այնուամենայնիվ, սեռային դրական հարաբերակցությունը կարող է նաև պայմանավորված լինել կենսապահովման միջոցների համար ընտանիքի տղամարդ անդամների ՀՀ-ից դուրս արտագաղթով:

Աղյուսակ Բ2. ԱԵԱ-ների էթնիկ ծագումը

Էթնիկ ծագումը	ԱԵԱ-ներ	Տոկոս
Հայ	2673	99.86
Եզդիներ	0	0.0
Այլ (ռուսներ,	3	0.14

մոլդովացիներ, ուկրաինացիներ)		
Ընդհանուր	2677	100.00

3.3 Ազդեցություն հողի վրա

18. Ծրագրի արդյունքում կօտարվեն 666 հողակատորներ, որոնք ընդհանուր առմամբ զբաղեցնում են 1,243,054.64 մ^2 տարածք: Քանի որ Ծրագիրը գծային ազդեցություն ունի պայմանավորված ճանապարհի լայնացման հետ, ազդեցություն են կրում ազդեցության ենթակա հողակտորների միայն փոքր մասնաբաժինները: Հողակտորի ազդեցության ենթակա մասը մասնավոր հողերի դեպքում միջինում կազմում է 620.65 մ^2 ՝ 1311.54 մ^{2}առավելագույն չափով Ազատանում և 98.48մ^2 նվազագույն չափով Սառնաղբյուրում: Կորստի աստիճանի առումով, հողերի մեծամասնությունը կորցնում են իրենց ընդհանուր հողի 50%-ից ավելին, այնուամենայնիվ այս կատեգորիայում մասնավոր հողերը կազմում են ընդամենը 18.35% (60)՝ ազդեցության ենթակա 327 ընդհանուրից: Հաջորդ առավելագույն թվով հողերը ընկնում են 10%-ից պակաս ազդեցության կատեգորիայի մեջ և մասնավոր հողերը կազմում են 83.15% (153) ՝ ազդեցության ենթակա 184 ընդհանուրից: Մասնավոր սեփականության 345 հողերի գրեթե 44.35%-ը կորցնում է ընդհանուր հողի 10%-ից պակասը՝ այսպիսով նվազեցնելով ազդեցության աստիճանը տնային տնտեսությունների մեծամասնության վրա: 10-30% և 30-50% կորցնող հողերը կազմում են ընդհանուր ազդեցության ենթակա հողերի համապատասխանաբար 16.7% և 6.6%-ը: Մանրամասների համար տե՛ս Աղյուսակ Բ3:

Աղյուսակ Բ3. Հողի կորստի աստիճանը

Հողի կորուստն ըստ աստիճանների	Ազդեցության ենթակա հողերի քանակ				Հողի % -ը
	Մասնավոր սեփականություն	Համայնքային սեփականություն	Պետական սեփականություն	Ընդհանուր	
Մինչև 10%	153	28	3	184	27.6%
10-30%	98	10	3	111	16.7%
30-50%	34	10	0	44	6.6%
Ավելի քան 50%	60	249	18	327	49.1%
Ընդհանուր	**345**	**297**	**24**	**666**	**100.0 %**

3.3.1 Ազդեցության ենթակա հողի զբաղեցման իրավական կարգավիճակը

19. Բոլոր ազդեցության ենթակա հողակտորներն օրինական են և գրանցված են ԱԳԿՊՏ-ում: Ազդեցության ենթակա օրինական հողերի տեսակներն են.

1) **Մասնավոր սեփականություն.** ընդամենը 345 հողակտորներ, որոնք զբաղեցնում են 314,669.03 մ^2 տարածք (տե՛ս Աղյուսակ Բ4):
2) **Համայնքային հողեր**. ընդամենը 297 հողակտորներ, որոնք զբաղեցնում են 893,693.85 մ^2 տարածք: Այս հողերը ենթաբաժանված են. ա) 271 հողակտորներ, որոնք անմիջապես կառավարվում են Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կողմից և օգտագործվում են որպես արոտավայրեր, հանրային հանգստի վայրեր, գյուղական ճանապարհներ կամ

հետագա օգտագործման նպատակով, բ) 14 հողակտորներ օրինականորեն վարձակալության են տրված մասնավոր ԱԵԱ-ներին և գ) 7 հողակտորներ չձևակերպված հիմունքներով օգտագործվում են մասնավոր ԱԵՏՏ-ների կողմից (համայնքային հողերի չձևակերպված օգտագործողներ):

3) **Պետական հողեր.** 24 հողակտոր՝ ընդհանուր 34,691.76 մ^2 տարածքով, օգտագործվող որպես գյուղատնտեսական, ոչ-գյուղատնտեսական և այլ հողեր, պետական հողի վրա արձանագրվել է 1 վարձակալ (տե՛ս Աղյուսակ Բ4ա):

3.3.2 Հողերի կորուստն ըստ տեսակի

20. 666 ազդեցության ենթակա հողակտորներից 306-ը (287,047.27մ^2) մասնավոր սեփականության գյուղատնտեսական նշանակության հողեր են, իսկ 39-ը (27,621.76 մ^2) մասնավոր սեփականության բնակելի, հասարակական և այլ նշանակության հողեր են: Համայնքային սեփականության հողերը 297-ն են (893,693.85 մ^2), որոնք օգտագործվում են համայնքի անդամների կողմից որպես վարելահողեր, հանրային օգտագործման, ընդհանուր օգտագործման հողեր, բնակելի, արոտավայր և այլ նպատակներով. Տե՛ս հողերի ազդեցությունները ամփոփումը ըստ հողի տեսակների Աղյուսակներ Բ4 և Բ4ա-ում: Ազդեցության ենթակա հողի ընդհանուր մակերեսը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով սեփականատիրոջ կադաստրային վկայականը, սեփականության վկայականի բացակայության դեպքում դիտարկվել է կադաստրային քարտեզում նշված ընդհանուր մակերեսը: Ազդեցությա ենթակա մասը ստացվել ՄԶՀ իրականացման արդյունքում:

. Աղյուսակ Բ4: Ազդեցության ենթակա մասնավոր հողերը ըստ տեսակի

Համայնք	Մասնավոր գյուղատնտեսական հողեր				Մասնավոր բնակելի, հասարակական և այլ հողեր				Ընդհանուր մասնավոր հողեր			
	Հող	ԱԵՏՏ	Ընդհանուր	Ազդեցության ենթակա	Հող	ԱԵՏՏ	Ընդհանուր	Ազդեցության ենթակա	Հող	ԱԵՏՏ	Ընդհանուր	Ազդեցության ենթակա
	քանակ	քանակ	մ^2	մ^2	քանակ	քանակ	մ2	մ^2	քանակ	քանակ	մ^2	մ^2
Մարալիկ	57	92	87,897.00	30,749.44	3	3	1,148.95	454.71	60	95	89,045.95	31,204.15
Ազատան	33	44	294,204.59	72,931.46	15	19	17,829.97	9,695.22	48	63	312,034.56	82,626.68
Բենիամին	21	30	69,301.73	21,739.19	1	1	6,493.84	765.77	22	31	75,795.57	22,504.96
Լանջիկ	11	16	127,325.56	10,941.98	0	0	0.00	0.00	11	16	127,325.56	10,941.98
Լուսակերտ	44	52	181,684.00	18,725.66	0	0	0.00	0.00	44	52	181,684.00	18,725.66
Հայրենյաց	18	27	342,334.64	25,811.26	0	0	0.00	0.00	18	27	342,334.64	25,811.26
Հոռոմ	55	88	680,891.02	49,745.24	1	1	1,375.03	815.79	56	89	682,266.05	50,561.03

Համայնք	Մասնավոր գյուղատնտեսական հողեր				Մասնավոր բնակելի, հասարակական և այլ հողեր				Ընդհանուր մասնավոր հողեր			
	Հող	ԱԵՏՏ	Ընդհանուր	Ազդեցության ենթակա	Հող	ԱԵՏՏ	Ընդհանուր	Ազդեցության ենթակա	Հող	ԱԵՏՏ	Ընդհանուր	Ազդեցության ենթակա
	քանակ	քանակ	մ^2	մ^2	քանակ	քանակ	մ2	մ^2	քանակ	քանակ	մ^2	մ^2
Ձորակապ	57	83	302,232.15	54,728.87	19	34	21,690.39	15,890.27	76	117	323,922.54	70,619.14
Սառնաղբյուր	10	17	61,376.59	1,674.17	0	0	0.00	0.00	10	17	61,376.59	1,674.17
Ընդհանուր	**306**	**449**	**2,147,247.28**	**287,047.27**	**39**	**58**	**48,538.18**	**27,621.76**	**345**	**507**	**2,195,785.46**	**314,669.03**

Աղյուսակ Բ4ա: Ազդեցության ենթակա համայնքային, Պպետական և ընդհանուր հողեր

Համայնքային գյուղատնտեսական հողեր			Համայքնային բնակելի և հասարարական, արտադրական և այլ հողեր			Պետական հողեր		Ընդհանուր հողեր (մասն համայնքային + պետա			
Հող	ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա	Հող	Ազդեցության ենթակա	Հող	Ազդեցության ենթակա	Հող	ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա	
անակ	քանակ	մ^2	քանակ	մ^2	քանակ	մ^2	քանակ	քանակ	մ^2	
21	2	43,316.25	24	0	25,022.80	0	0.00	105	97	
30	3	123,089.20	46	0	29,534.19	10	15,217.07	134	66	
15	4	55,501.34	15	3	24,264.75	5	2,937.62	57	38	
5	1	4,886.01	8	0	30,457.54	0	0.00	24	17	
19	6	97,230.90	3	0	6,907.38	1	46.83	67	58	
5	0	54,039.73	11	0	55,002.00	1	3,755.02	35	27	
14	0	49,658.86	14	0	18,731.64	2	5,847.28	86	89	
32	4	221,539.00	32	0	35,829.31	5	6,887.94	145	121	
0	0	0.00	3	0	18,682.95	0	0.00	13	17	
141	**20**	**649,261.29**	**156**	**3**	**244,432.56**	**24**	**34,691.76**	**666**	**530**	**1,**

3.3.3 Ազդեցությունը գյուղատնտեսական հողերի վրա

21. Ծրագրի արդյունքում ազդեցության կենթարկեն 285,164.74 մ^2 հողեր 2,144,402.00մ^2 թվով 304 մասնավոր գյուղատնտեսական հողերից: Ազդեցության ենթակա հողերի միջին չափը կազմում է 7,053,95մ^2, իսկ ազդեցության ենթակա հատվածի միջին չափը՝ 938.04 մ^2, այն է՝ 13.30%: Ամենամեծ ազդեցությունը Մարալիկում է (35%) և Բենիամինում (31.40%): Տե՛ս Աղյուսակ Բ5-ը՝ գյուղատնտեսական հողերի և դրանց հետ կապված ԱԵՏՏ-ների վերաբերյալ:

Աղյուսակ Բ5: Ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողեր

Համայնք	Մասնավոր գյուղատնտեսական հողեր			Ընդհանուր ԱԵՏՏ	Վարելահողի կորուստ ըստ ԱԵՏՏ-ի	ՏՏ միջին հողերը	Կորստի %
	Հող	Ընդհանուր	Ազդեցության ենթակա				
	քանակ	մ2	մ2	քանակ	մ2	մ2	
Մարալիկ	57	87,897.00	30,749.44	92	334.23	955.40	35.00%
Ազատան	33	294,204.59	72,931.46	44	1,657.53	6,686.47	24.80%
Բենիամին	21	69,301.73	21,739.19	30	724.64	2,310.06	31.40%
Լանջիկ	11	127,325.56	10,941.98	16	683.87	7,957.85	8.60%
Լուսակերտ	44	181,684.30	18,725.66	52	360.11	3,493.93	10.30%
Հայրենյաց	18	342,334.64	25,811.26	27	955.97	12,679.06	7.50%
Հոռոմ	55	680,891.02	49,745.24	88	565.29	7,737.40	7.30%
Ձորակապ	55	299,386.55	52,846.34	82	644.47	3,651.06	17.70%
Սառնաղբյուր	10	61,376.59	1,674.17	17	98.48	3,610.39	2.70%
Ընդհանուր	**304**	**2,144,402.00**	**285,164.74**	**448**	**636.53**	**4,786.61**	**13.30%**

3.3.4 Ազդեցությունը ոչ գյուղատնտեսական հողերի վրա

22. Ծրագրի արդյունքում ազդեցության կենթարկվեն 39 մասնավոր ոչ-գյուղատնտեսական նշանակության հողեր 27,621.76մ^2), ներառյալ 29 բնակելի նշանակության հողեր, 8 հողեր հասարակական նշանակության են և երկու այլ նշանակության հողեր:

3.4 Ազդեցությունը շենքերի և շինությունների վրա

3.4.1 Ազդեցության ենթակա հողի վրա առկաշենքերը և կառույցները

23. Ծրագրի ծրագիծը ուղղակիորեն ազդեցության կենթարկի 26 շինութուններ՝ 2496.49 մ^2 մակերեսով, ներառյալ երեք բնակելի շինություններ և երկու հասարակական կառույցներ (տե՛ս Աղյուսակ Բ6): Ի լրումն, ծրագրի արդյունքում ազդեցության են ենթակվում նաև հինգ քարե պարիսպներ, հինք կանգառներ, մեկ ռեստորան, մեկ հյուրանոց, մեկ տեխսպասարկման կենտրոն, ջրավազան շատրվանով և սանհանգույց: Ազդեցության է ենթարկվում նաև մեկ գազալցակայան, սակայն ազդեցությունը ժամանակավոր և կսահմանափակվի միայն շինարարության փուլով: Գազալցակայանի առումով ազդեցության է ենթարկվում միայն ծածկը, որը ծածկում է այն տարածքը, որտեղ իրականացվում է գազացլումը: Ծածկի փոխհատուցումը և շինարարության փուլում ազդեցությունը դիտարկվել են ՀՕՏԾ բյուջեում:

Աղյուսակ Բ6: Ազդեցության ենթակա շենքերը և շինությունները

Շինության տեսակը	Ազդեցության ենթակա	Գրանցված	Համայնքը

	Քանակ	մ^2	մ^2	
Բնակելի տուն/կառույց	3	363.88	140.42	Հոռոմ (1), Ազատան (2)
Քարե պարիսպ	5	56.26	29.33	Մարալիկ (1), Բենիամին (3), Ազատան (1)
Ավտոսպասարկման կենտրոն	1	131	146.43	Մարալիկ
Տեղզննման հարթակ	1	78.65		Մարալիկ
Օժանդակ կառույց	1	1.6	1.6	Ազատան
Ավտոբուսի կանգառ	5	555.37		Հոռոմ (3), Լուսակերտ (1), Բենիամին (1)
Սանհանգույց	1	5.74		Հոռոմ
Գազալցակայան (ձեռնարկ. գործ. ժամանակավոր դադարեցում)	1	20.61	20.61	Հոռոմ
Ռեստորան	1	645.92	645.92	Ձորակապ
Բետոնե պատ	1	20.68		Ձորակապ
Հասարակական կառույց	2	170.27	174.66	Ձորակապ (1), Մարալիկ (1)
Հյուրանոց	1	309.52	309.52	Ձորակապ
Բետոնե հարթակ (լքված)	2	134.2		Ձորակապ
Ջրավազան շատրվանով	1	2.79		Բենիամին
Ընդհանուր	**26**	**2496.49**		

3.4.2 Վերաբնակեցման պահանջները և մոտեցումը

24. Ծրագրի արդյունքում ազդեցության կենթարկվեն երեք բնակելի շինություններ: Դրանցից երկուսը Ազատան համայնքում, իսկ մեկը՝ Լուսակերտ համայնքում: Լուսակերտում գտնվող ազդեցության ենթակա բնակելի շինությունը բնակեցված չէ, իսկ Ազատան համայնքում ազդեցության ենթակա երկու բնակելի շինությունները պատկանում են մեկ տնային տնտեսության: Այսպիսով, փաստացի վերաբնեկեցման ենթակա տնային տնտեսությունը մեկն է Ազատան համայնքում: Հետևաբար, Ծրագրի ներքո միայն մեկ տնային տնտեսություն է դիտարկվել վերաբնակեցան օժանդակություն ստանալու համար՝ մշտական բնակելի տան կորստի դիմաց:
25. Սույն Ծրագրի ներքո, հիմնվելով Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակ վրա, վերաբնակեցման պլան չի մշակվի: Վերաբնակեցվողները կինքնավերաբնակեցվեն և, ի լրումն իրենց ազդեցության ենթակա գույքի լիարժեք փոխհատուցման, նրանք կստանան վերաբնակեցման հատուկ օժանդակություն կանխիկով, որը կբավարարի տրանսպորտային ծախսերի համար գումարած 1 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով գումար կենսապահովման ծախսերը հոգալու համար: Քանի որ վերաբնակեցվողը նաև խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ է, նրան կտրվի նաև կենսապահովման նպաստ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով:
26. Միաժամանակ, վերաբնակեցման են ենթակա նաև երեք ձեռնարկատիրական գործունեությունիրականացնող ԱԵՏՏ-ներ Մարալիկ, Հոռոմ և Բենիամին համայնքներում: Ի լրումն, իրենց ազդեցության ենթակա գույքի լիարժեք փոխհատուցման, նրանք կստանան նաև իրենց հողի վրա և շինություններում առկա շարժական գույքի տեղափոխման ծախսերը հոգալու համար օժանդակություն:

Աղյուսակ Բ7. Վերաբնակեցվող ԱԵՏՏ-ների մանրամասները

ԱԵՏՏ քանակը	Կորստի նկարագրությունը	Վերաբերակցում	Փոխհատուցման մանրամասները	Տրամադրվող օժանդակությունը	Վերաբնակեցման ժամկետը
3	Մշտական (1) և ժամանակավոր (2) հարկային հայտարարագրով ձեռնարկատիրական գործունեության դադարեցում	Ինքնավերաբերակցում	Փոխհատուցում ազդեցության ենթակա բոլոր ակտիվների դիմաց իրենց փոխարինման արժեքով	- վերաբնակեցման օժանդակություն հողի վրա և շինություններում առկա շարժական գույքի տեղափոխման ծախսերը հոգալու համար	Պայմանագիրը ստորագրելուց հետո 14 օրվա ընթացքում կամ ինչպես կսահմանվի օտարման պայմանագրով
1	Բնակելի տան մշտական կորուստ	Ինքնավերաբերակցում	Փոխհատուցում ազդեցության ենթակա բոլոր ակտիվների դիմաց իրենց փոխարինման արժեքով	- 1 վերականգնման օժանդակություն 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով (որպես խոցելի ԱԵՏՏ-ներ), - 1 վերականգնման օժանդակություն տրանսպորտային ծախսերի համար և կենսապահովման ծախսերը հոգալու համար գումար մեկ ամսվա նվազագույն աշխատավարձի չափով՝ որպես վերաբնակեցվող ԱԵՏՏ	Պայմանագիրը ստորագրելուց հետո 14 օրվա ընթացքում կամ ինչպես կսահմանվի օտարման պայմանագրով

3.5 Ազդեցությունը մշակաբույսերի և ծառերի վրա

3.5.1 Մշակաբույսեր

27. Ծրագրի տարածքում մշակվող հիմնական մշակաբույսերն են ցորենը, գարին, կորնգան, կարտոֆիլը և առվույտը: Փաստացի ազդեցության ենթարկվող ընդհանուր տարածքը կազմում է 334,151.96 մ^2: Մարդիկ օգտագործում են արտադրանքի որոշ մասը կենսաապահովման նպատակով (ընտանեկան սպառման), իսկ մնացած մասը վաճառում են շուկայում՝ որպես վաստակի աղբյուր: Հողի օտարմամբ պայմանավորված՝ ԱԵԱ-ները ստիպված կլինեն փոխարինել ընտանիքի սպառման համար այս սննդի աղբյուրը շուկայից գնված սննդով կամ որպես վաստակի աղբյուր վաճառել ավելի քիչ արտադրանք: Նրանք կստանան մշակաբույսի մեկ տարվա կորստի դիմաց փոխհատուցում՝ ի լրումն իրենց հողի կորստի դիմաց տրամադրվող փոխհատուցմանը:

Աղյուսակ Բ8: Հիմնական մշակաբուսերի կորուստը

Community	Ազդեցության ենթակա տարածքը (մ^2)					
	Ցորեն	Գարի	Կորնգան	Կարտոֆիլ	Առվույտ	Խոտ
Մարալիկ	12041.9	2290.35	12859.95	8958.76	0	103.04
Ազատան	26065.19	8220.57	0	44347.8	1531.86	0
Բենիամին	5139.74	0	1152.61	12281.83	3180.37	0
Լանջիկ	3183.34	6595.38	2436.32	0	0	0
Լուսակերտ	7443.1	5070.96	575.47	18974.82	0	0
Հայրենյաց	16087.0	5785.58	3732.79	0	0	205.89
Հոռոմ	26880.05	20011.86	2166.98	0	0	686.35
Ձորակապ	23872.43	1613.8	9404.38	32981.89	6595.43	0
Սառնաղբյուր	245.3	957.0	131.99	0	0	339.88
Ընդհանուր մ^2-ով	**120958.05**	**50545.5**	**32460.49**	**117545.1**	**11307.66**	**1335.16**
	Բերք (կգ/մ^2)					
Մարալիկ	0.355	0.353	0.37	2.67	0	0.361
Ազատան	0.49	0.457	0	2.75	0.335	0
Բենիամին	0.37	0	0.4	2.06	0.65	0
Լանջիկ	0.28	0.24	0.44	0	0	0
Լուսակերտ	0.25	0.22	0.4	2.5	0	0
Հայրենյաց	0.4	0.3	0.4	0	0	0.3
Հոռոմ	0.3	0.25	0.4	0	0	0.3
Ձորակապ	0.55	0.35	0.55	4	0.5	0
Սառնաղբյուր	0.4	0.35	0.4	0	0	0.4
	Ընդհանուր կորուստները (կգ)					
Մարալիկ	4274.87	808.49	4758.18	23919.89	0	37.20
Ազատան	12771.94	3756.80	0	121956.45	513.17	0
Բենիամին	1901.70	0	461.04	25300.57	206.,24	0
Լանջիկ	891.34	1582.89	1071.98	0	0	0
Լուսակերտ	1860.78	1115.61	230.19	47437.05	0	0
Հայրենյաց	6434.80	1735.67	1493.12	0	0	61.77
Հոռոմ	8064.02	5002.97	866.79	0	0	205.91
Ձորակապ	13129.84	564.83	5172.41	131927.56	3297.72	0.
Սառնաղբյուր	98.12	334.95	52.80	0	0	135.95
Ընդհանուր կգ-ով	**49427.40**	**14902.22**	**14106.51**	**350541.52**	**5878.13**	**440.82**

3.5.2 Ծառեր

28. Ծառերի վևա ազդեցությունը էական չէ, քանի որ Տրանշ 3-ի ծրագիծը զգուշորեն է նախագծվել՝ նվազեցնելու համար ծառերի վրա ազդեցությունը: Ծրագծի երկայնքով 83 պտղատու և 28 փայտանյութ տվող ծառեր կենթարկվեն ազդեցության: 83 պտղատու ծառերից 68-ը նորատունկ են, իսկ մնացած 15-ը՝ դեռ-ոչ բերքատու ծառեր:

Աղյուսակ Բ9: Ազդեցության ենթակա պտղատու ծառերը

Sl. No.	Պտղատու ծառի տեսակը	Նորատունկ	Բերքատու	Դեռ-ոչ բերքատու	Ընդհանուր ազդեցության ենթակա ծառերը
1	Բալ	0	0	12	12
2	Խնձոր	30	0	1	31
3	Կեռաս	10	0	0	10
4	Սալոր	0	0	1	1
5	Տանձ	21	0	1	22
6	Ծիրան	7	0	0	7
7	**Ընդհանուր**	**68**	**0**	**15**	**83**

29. Ինչ վերաբերում է փայտանյութ տվող ծառերին, ապա ազդեցության ենթակա 28 ծառերից 23-ը խոշոր հասուն ծառեր են, իսկ 5-ը՝ միջին, այն է՝ հացենի, ուռենի և բարդի:

Աղյուսակ Բ10: Ազդեցության ենթակա փայտանյութ տվող ծառերը

Sl. No.	Փայտանյութ տվող ծառի տեսակը	Միջին	Խոշոր	Ընդհանուր ազդեցության ենթակա ծառերը
1	Հացենի	5	19	24
2	Ուռենի	0	4	4
3	Բարդի	0	0	0
4	**Ընդհանուր**	**5**	**23**	**28**

30. Ի լրումն պտղատու և փայտանյութ տվող ծառերի, Ծրագրի ներքո ազդեցության կենթարկվեն նաև յոթ դեկորատիվ ծառեր Մարալիկ և Ազատան համայնքներում: Յոթ դեկորատիվ ծառերից վեցը եղևնիներ են, իսկ մեկը՝ թույա:

Աղյուսակ Բ11: Ազդեցության ենթակա դեկորատիվ ծառերը

Sl. No.	Դեկորատիվ ծառի տեսակը	Ընդհանուր ազդեցության ենթակա ծառերը	Համայքը
1	Եղևնի	6	Մարալիկ
2	Թույա	1	Ազատան
3	**Ընդհանուր**	**7**	

3.6 Ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության և զբաղվածության վրա

31. Ծրագրի ներքո ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունները երեքն են: Երեքից մեկը ենթարկվում է մշտական ազդեցության, իսկ երկուսը՝ ժամանակավոր:Նրանք բոլորն էլ հարկային հայտարագրեր են ներկայացնում հարկային ծառայությանը: Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունները գտնվում են Մարալիկում, Հոռոմում և Բենիամինում: Դրանք են՝ գազալցման կայան, տեխսապսարկման կենտրոն և ռեստորան: Ձեռնարկատիրական

գործունեությունների ազդեցությունը ներկայացված է Աղյուսակ Բ 12-ում:

Աղյուսակ Բ12: Ձեռնարկատիրական գործունեության կորստի չափը և հարկային կարգավիճակը

Sl. No.	Համայնքը	Ձեռնարկատիրական գործունեության տեսակը	Ազդեցության տեսակը	Հարկային կարգավիճակը	Քանակը
1	Մարալիկ	տեխսապսարկման կենտրոն	մշտական	ԱԱՀ վճարող	1
2	Հոռոմ	Գազալցման կայան	ժամանակավոր	ԱԱՀ վճարող	1
3	Բենիամին	Հյուրանոց, հանրային սնունդ (ռեստորան)	ժամանակավոր	ԱԱՀ վճարող	1
4	**Ընդհանուր**				**3**

32. Զբաղվածության (աշխատանքի) կորստի տեսակետից, 11 անձանց զբաղվածությունը (աշխատանքը) ժամանակավոր ազդեցության կենթարկվի ձեռնարկատիրական գործունեության ազդեցության արդյունքում: Զբաղվածության առավելագույն կորուստը Հոռոմում է (8), այնուհետև երեքը Բենիամինում: Մշտական ազդեցության ենթակա տեխսպասարկման կենտրոնը Մարալիկում հանդիսանում է ԱՁ և չունի վարձու ազդեցության ենթակա աշխատող: Աղյուսակ Բ13-ը ներկայացնում է զբաղվածության (աշխատանքի) կորուստները ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր ազդեցության արդյունքում:

Աղյուսակ Բ13: Զբաղվածության կորուստները ձեռնարկատիրական գործունեությունում

Sl. No.	Համայնքը	Ձեռնարկատիրական գործունեության տեսակը	Ազդեցության տեսակը	Քանակը
1	Հոռոմ	Գազալցման կայան	ժամանակավոր	8
2	Բենիամին	Հյուրանոց, հանրային սնունդ (ռեստորան)	ժամանակավոր	3
3	**Ընդհանուր**			**11**

3.7 Հանրային գույք և հաղորդուղիներ

33. Ծրագիրն, ընդհանուր առմամբ ազդեցության կենթարկի վեց հանրային գույք: Դրանցից հինգը ավտոբուսի կանգառներ են, իսկ մեկը՝ ավտոտեխզննման հարթակ: Ավտոբուսի կանգառների տեսակետից դրանցից մեկականը գտնվում են Բենիամինում և Լուսակերտում, իսկ երեքը՝ Հոռոմում: Ավտոտեխզննման հարթակը գտնվում է Մարալիկ համայնքում: Ավտոտեխզննման հարթակները կառուցվել են սովետական ժամանակահատվածում որոշակի պարբերական հեռավորություններով՝ տրանսպորտային միջոցների զննման նպատակով: Ավտոտեխզննման հարթակը և ավտոբուսի կանգառները հանդիսանում են հանրային գույք և պատկանում են պետությանը (ՏԿՆ): Հանրային գույքը, համաձայն ՀՕՏՇ դրույթների, կապամոնտաժվի և կվերականգնվի Ծրագրի ներքո, որտեղ անհրաժեշտ է: Նշված հանրային կառույցները կտեղափոխվեն Ծրագրի կողմից, դրանց վերականգնման ծախսերը կներառվեն շինարարական աշխատանքների ընդհանուր ծավալներում, եթե ՏԿՆ-ի կողմից այլ բան չնախատեսվի:

Աղյուսակ Բ14: Ազդեցությունը հանրային գույքի և հաղորդուղիների վրա

Sl. No.	Համայնքը	Հանրային գույք		
		Ավտոբուսի կանգառներ	Ավտոտեխզննման հարթակներ	Ընդհանուր
1	Մարալիկ	0	1	1
2	Բենիամին	1	0	1
3	Լուսակերտ	1	0	1
4	Հոռոմ	3	0	3
5	**Ընդհանուր**	**5**	**1**	**6**

34. Միաժամանակ, հաղորդուղիներն ամբողջությամբ կտեղափոխվեն կամ կվերականգնվեն՝ ապահովելով մինչև S3 Ծրագրի իրականացումն ունեցած աշխատանքային վիճակը: Ճանապարհը նախագծող խորհրդատուն նախագծել է նաև հաղորդուղիների տեղափոխումը/վերականգնումը: Հաղորդուղիների տեղափոխումը կիրականացվի ՀՀ ՏԿՆ-ի Տրանսպորտի ԾԻԳ-ի կողմից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաղորդուղիների տեղափոխման առաջադրանքը իրականացվելու է ՀՀ պետական բյուջեի միջոցներով և դրա հետ կապված բոլոր հարցերը, այդ թվում հողի օգտագործումը, փոխհատուցումը (եթե այդպիսին լինի), սեփականատերերի/օգտագործողների ծանուցումը և խորհրդակցությունը և այլն, կարգավորվելու են ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն (ՀՀ Սահմանադրություն, ՀՀ Քաղաքացիական օրնեսգիրք, Ավտոմոբիլային ճանապարհների մասին ՀՀ օրենք, Քաղաքաշինության մասին ՀՀ օրենք և այլն): Հաղորդուղիների տեղափոխման ծախսերը ներառված չեն սույն ՀՕՏԾ-ի բուջեյում, քանի որ այն ներառված է ՀՀ պետական բյուջեում: Հանրային գույքերի վերաբերյալ մանրամասները ներկայացված են Աղյուսակ Բ14-ում:

3.8 Ազդեցությունները հողի վրա առկա շարժական գույքի վրա

35. Ծրագրի ներքո հողերի վրա առկա 17 գույքեր ազդեցության կենթարկվեն և պահանջեն տեղափոխում: Կարևոր է, որ այդ գույքերը փաստացի շարժական են և կարող են տեղափոխվել առանց դրանց վնաս հասցնելու: Դրանց մեծամասնությունը մահացած անձանց համար ընտանիքի անդամների կողմից դրված քարե հուշարձաններ են որպես հիշատակ, դրանց հաջորդում են չորս մետաղական կառույցներ և մեկական այլ գույքերը՝ մնացած գույքերի տեսակների համար: Շարժական գույքերի բացվածքը ըստ համայնքների ներկայացված է Աղյուսակ Բ15-ում:

Աղյուսակ Բ15: Ծրագրի արդյունքում ազդեցության ենթակա շարժական գույքերը

Համայնքը	Շարժական գույքերի քանակը						
	քարե հուշարձան	փայտե կառույց	մետաղական կառույց	մետաղական հովանոց	շինարարական պանելներ	մետղական դարպաս	մետաղական կրպակ
Մարալիկ	2	-	2	-	1	-	-
Ազատան	3	-	1	-	-	-	-
Բենիամին	2	-	1	1	-	1	-
Լուսակերտ	1	-	-	-	-	-	1
Ձորակապ	-	1	-	-	-	-	-
Ընդհանուր	**8**	**1**	**4**	**1**	**1**	**1**	**1**

3.9 Ազդեցությունը խիստ ազդեցության ենթակա ու խոցելի տնային տնտեսությունների վրա և Եկամտի վերականգնում

36. ՀՕՏԾ հիմնական նպատակը մարդկանց վրա Ծրագրի բացասական ազդեցությունների և հարակից բարդությունների մեղմումն է, մասնավորապես՝ խիստ ազդեցության ենթակա և խոցելի տնային տնտեսությունների: Եկամտի վերականգնման ճկունությունը բարելավելու, ինչպես նաև այս թիրախային ԱԵՏՏ-ների կենսապահովումը վերականգնելու նպատակով ՀՕՏԾ Իրավունքների մատրիցան ներառում է դրույթներ եկամտի վերականգնման վերաբերյալ, որը ներառում է վերականգնման օժանդակությունների դրույթներ, մասնավորապես. խիստ ազդեցության օժանդակություն և խոցելի խմբերին տրվող օժանդակություն: Եկամտի վերականգնման այս ջանքերը առաջարկվում են Ծրագրի կողմից խիստ ազդեցության ենթակա և խոցելի ԱԵՏՏ-ների վրա ազդեցությունները մեղմելու համար: Ստորև ներկայացված են այն թիրախային խմբերը, որոնք իրավունակ են Ծրագրի ներքո Եկամտի վերականգնման միջոցառումների համար:

3.9.1 Խիստ ազդեցության ենթակա տնային տնտեսություններ

37. Խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ները նրանք են, որոնք կորցնում են իրենք մշակվող հողային ակտիվների ավելի քան 10%-ը: Ազդեցության ենթակա 530 ԱԵՏՏ-ներից 273-ը կորցնում են իրենք մշակվող հողային ակտիվների ավելի քան 10%-ը: Այս օժանդակության համար դիտարկվել են այն հողամասերը, որոնք մշակվելիս են եղել ՄԶՀ իրականացման պահի դրությամբ: Տարածքի 10%-ից ավել կորցնող հողամասերը, որոնք մշակվելիս չեն եղել, չեն դիտարկվել խիստ ազդեցության օժանդակության համար: Նմանապես, 1 ԱԵՏՏ կվերաբնակեցվի բնակելի շինության կորստի արդյունքում: Այսպիսով, խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ների ընդհանուր թիվը 274 է, որոնք իրավունք ունեն ստանալու խիստ ազդեցության համար տրվող օժանդակություն Ծրագրի ՀՕՏԾ-ի համաձայն:

Աղյուսակ Բ16: Խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ները ըստ տեսակի

Խիստ ազդեցության տեսակը	Ազդեցության ենթակա հողերի քանակը	ԱԵՏՏ-ների քանակը
Խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են իրենց մշակվող հողի ավելի քան 10%-ը	180	273
Խիստ ազդեցության ենթակա վերաբնակեցող ԱԵՏՏ-ներ	1	1
Ընդհանուր ԱԵՏՏ-ներ (առանց կրկնահաշվարկի)	**181**	**274**

3.9.2 Խոցելի ԱԵՏՏ-ներ

38. 51 ԱԵՏՏ-ներ դիտարկվել են որպես խոցելի և աղքատ ԱԵՏՏ-ներ, նկատի ունենալով, որ վերջիններս հաշվառված են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում (ամենախոշոր պետական սոցիալական աջակցության ծրագիրը Հայաստանում, որը գործում է 1999 թվականից): Բացի այդ, առկա են նաև 19 կանանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ներ, 19 տարեց անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ներ և 4 հաշմանդամների կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ներ, որոնք դիտարկվել են որպես խոցելի ԱԵՏՏ-ներ: Քանի որ որոշ ԱԵՏՏ-ներ նույնականացվել են մի քանի խոցելության հատկանիշներ ունենալու պատճառով, ընդհանուր խոցելի ԱԵՏՏ-ների թիվը կազմում է 93:

Աղյուսակ Բ17: Խոցելի ԱԵՏՏ-ներ

Տեսակը	Քանակը
Աղքատ (ԸՆՀ-ում գրանցված)	51
Կանաց կողմից ղեկավարվող	19
Կենսաթոշակառուների կողմից ղեկավարվող	19
Հաշմանդամների կողմից ղեկավարվող	4
Ընդհանուր խոցելի ԱԵՏՏ-ներ (առանց կրկնահաշվարկի)	**93**

Գ. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

39. Սոցիալ-տնտեսական հետազոտության (ՍՏՀ) հիմնական նպատակն է ապահովել ազդեցության ենթակա բնակչության և համայնքների սոցիալ-տնտեսական գլխավոր առանձնահատկությունների՝ կրթական մակարդակ, կենսապահովման միջոցներ, եկամտի աղբյուրներ, աղքատության/եկամտի մակարդակներ, գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, ինչպես նաև ծառայությունների հասանելիությունը/մատչելիությունը, որոնց վերաբերյալ տվյալները կօգտագործվեն որպես ելակետային տվյալներ ՀՕՏԾ-ի իրականացումը գնահատելիս, ինչպես նաև գնահատելու, թե արդյոք ԵՆԲ-ի Բնապահպանական և Սոցիալական սկզբունքներն ու նորմերը պահպանվել են: Սա կօգնի ավելի լավ հասկանալ ազդեցության ենթակա տնային տնտեսությունների վրա հողի կորստի հետևանքով առաջացող հավանական ազդեցությունները և բացահայտել վերականգնման տարբերակները:
40. Սույն վերջնական ՀՕՏԾ-ում ազդեցության ենթակա անձանց սոցիալ-տնտեսական նկարագիրը հիմնված է ԲՖԳ-ի շրջանակներում վերջնական ՀՕՏԾ-ի պատրաստման ընթացքում 2014 թ. իրականացված տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական ընտրանքային հետազոտության տվյալների վրա: Ընդհանուր առմամբ ծրագրի ԵՆԲ-ի ֆինանսավորմամբ իրականացվող հատվածում ազդեցության կենթարկվեն 530 տնային տնտեսություններ, որոնցից միայն 430 տնային տնտեսություններ են մասնակցել մարդահամարի հետազոտությանը, քանի որ մնացած 100-ը բնակվում են արտերկրում, Հայաստանի այլ մարզերում կամ դրանց գտնվելու վայրն անհայտ է: Հաշվետվության սույն բաժնում ներկայացված մարդահամարի տվյալները վերաբերում են 430 հետազոտված տնային տնտեսություններին: Սոցիալ-տնտեսական ընտրանքային հետազոտությունն ընգրկել է 430 ազդեցության ենթակա տնային տնտեսությունների 30.6%-ը, այսինքն՝ ընդամենը 131 տնային տնտեսություն: ՍՏՀ համար կիրառվեց մարդահամարի հետազոտությունում յուրաքանչյուր չորրորդ տնային տնտեսությունն ընդգրկելու նախապես սահմանված մեթոդը: Ինչպես նշվեց, ՍՏՀ տվյալները ծառայում են որպես ելակետային տվյալներ ՀՕՏԾ-ի իրականացման մոնիտորինգի համար: Մարդահամարի 100% տվյալների առկայության դեպքում այն օգտագործվել է սույն բաժնում: ՍՏՀ-ին մասնակցած տնային տնտեսությունները ներկայացված են աղյուսակ Գ1-ում: ՍՏՀ ընտրանքային տնային տնտեսությունները կազմում են ազդեցության ենթակա տնային տնտեսությունների 30.6%-ը, ինչը բարձր է նախատեսած 25%-ից: ՍՏՀ-ի համար օգտագործված հարցաթերթիկը զետեղված է սույն ՀՕՏԾ-ի **Հավելված 2-ում:**

Աղյուսակ Գ1.ՍՏՀ-ում ընդգրկված ԱԵՏՏ-ների և ՏՏ-ների ընդհանուր քանակն ըստ համայնքների

Համայնքը	ԱԵՏՏ-ների ընդհանուր քանակը	ԱԵՏՏ-ների քանակն ըստ մարդահամարի	ՍՏՀ-ում ընդգրկված ԱԵՏՏ-ների քանակն ու % -ը	
Ազատան	66	58	14	3.3%
Բենիամին	38	29	11	2.6%
Լանջիկ	17	12	16	3.7%
Լուսակերտ	58	49	14	3.3%
Հայրենյաց	27	20	6	1.4%

Հոռոմ	89	75	19	4.4%
Ձորակապ	121	92	24	5.6%
Մարալիկ	97	82	20	4.7%
Սառնաղբյուր	17	13	7	1.6%
Ընդհանուր	**530**	**430**	**131**	**30.6%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի մարդահամարի հետազոտություն, 2014 թ. նոյեմբեր

2. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ և ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԻՎԸ

41. 430 ազդեցության ենթակա տնային տնտեսություններում կան 1112 անձինք: Դրանք ներառում են 1081 արական (49.8%) և 1090 իգական (50.2%) սեռի ներկայացուցիչներ: Տնային տնտեսությունը միջինում կազմված է 5.05 անձանցից՝ 2.51 արական և 2.53 իգական սեռի ներկայացուցիչներից: Ըստ 2011 թ. մարդահամարի տվյալների՝ Հայաստանում տնային տնտեսության միջին չափը կազմել է մոտ 3.85 անձ: Հայաստանի բնակչության գրեթե կեսն ապրում է մայրաքաղաք Երևանում, և քաղաքային վայրերում տնային տնտեսության չափը փոքր է երկրի միջինից: Հետևաբար, ԱԵՏՏ-ների տնային տնտեսությունների չափը քիչ թե շատ համապատասխանում է Հայաստանի գյուղական վայրերի տնային տնտեսության միջին չափին:

Աղյուսակ Գ2.ԱԵՏՏ-ների քանակը և ԱԵՏՏ անդամներն ըստ սեռի

ԱԵՏՏ-ներ						**ԱԵՏՏ անդամներ**					
Տղամարդկանց կողմից ղեկավարվող	**%**	**Կանանց կողմից ղեկավարվող**	**%**	**Ընդհանուր ԱԵՏՏ-ները**	**%**	**Արական**	**%**	**Իգական**	**%**	**Ընդհանուր ԱԵԱ-ները**	**%**
347	80.7	83	19.3	430	100.0	1081	49.8	1090	50.2	2171	100.0

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի մարդահամարի հետազոտություն, 2014 թ. նոյեմբեր

3. ԱԵՏՏ –ՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՆ ԸՍՏ ՍԵՌԻ և ՏԱՐԻՔԻ

42. Հետազոտված բնակչության տնային տնտեսությունների ղեկավարների մեծամասնությունը՝ 347-ը (80.7%), տղամարդիկ են և մոտ 83-ը (19.3%) կանայք են: Տնային տնտեսությունների ղեկավարների նմանօրինակ գենդերային բաշխումը արտացոլում է արական սեռի կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների գերակշռությունը Հայաստանի գյուղական հասարակության մեջ: Արական սեռի կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների գերակշռությունը էականորեն բարձր է 45 տարեկանից ցածրների խմբում: 45 տարեկանից ցածրների խմբում կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները հազիվ 1% են կազմում: Միչդեռ 66 տարեկանից բարձրների խմբում տնային տնտեսության կին ղեկավարներն ավելի շատ են, քան տարիքային մյուս խմբերում: Սա պայմանավորված է արական սեռի կողակցի մահով, որից հետո տնային տնտեսությունը ղեկավարվում է կնոջ կողմից: Իրավաբանորեն ամուսնու մահից հետո կինը դառնում է գույքի սեփականատերը: Սակայն, այս դեպքում սեփականության իրավունքը հիմնականում կապված է արական սեռի կողակցի մահով: Սա կարող է հիմնավորվել Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2011 թ. հրապարակած կյանքի տևողություն վերաբերյալ տվյալներով (արական՝ 67.2, իգական՝ 75.1):

Աղյուսակ Գ3.ԱԵՏՏ ղեկավարների տարիքն ըստ սեռի և տոկոսի

Տարիքային խումբը	Արական սեռի ԱԵՏՏ ղեկավար		Իգական սեռի ԱԵՏՏ ղեկավար		Ընդամենը	
	No.	%	No.	%	No.	%
Մինչև 35 տարեկան	30	7.0%	2	0.5%	32	7.4%
36-45	50	11.6%	2	0.5%	52	12.1%
46-55	114	26.5%	14	3.3%	127	29.8%
56-65	103	24.0%	27	6.3%	130	30.2%
66+	50	11.6%	38	8.8%	88	20.5%
Ընդամենը	**347**	**80.7%**	**83**	**19.3%**	**430**	**100.0%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի մարդահամարի հետազոտություն, 2014 թ. նոյեմբեր

43. Ստորև բերված աղյուսակ Գ4-ում ներկայացված է ազդեցության ենթակա տնային տնտեսությունների անդամների (ԱԵԱ-ներ) ընդհանուր քանակը՝ ըստ տարիքային խմբի և սեռի: Սեռերի միջև բաշխվածությունը հավասար է տարիքային խմբերի մեծամասնությունում, և տարիք/սեռ բաշխվածությունը նորմալ է համեմատաբար կայուն գյուղական բնակչության համար: Թվերը արտացոլում են համեմատաբար ցածր մշտական արտագաղթը հետազոտության պահի դրությամբ: Թվերն, այնուամենայնիվ կարող են քողարկել նաև սեզոնային կամ կարճաժամկետ աշխատանքային արտագաղթը, հատկապես 16-45 տարիքային խմբում: 36-45 տարիքային խմբում կանանց և տղամարդկանց համեմատաբար ցածր թիվն ամենայն հավանականությամբ պայմանավորված է երկարաժամկետ կամ մշտական արտագաղթով:

Աղյուսակ Գ4.ԱԵՏՏ անդամների տարիքն ըստ սեռի և տոկոսի

Տարիքային խումբը	Արական		Իգական		Ընդամենը	
	No.	%	No.	%	No.	%
0-5	95	4.4%	104	4.8%	199	9.2%
6-15	153	7.0%	172	7.9%	325	14.9%
16-25	146	6.7%	149	6.9%	295	13.6%
26-35	228	10.5%	222	10.2%	450	20.7%
36-45	108	5.0%	125	5.8%	233	10.7%
46-55	151	7.0%	142	6.5%	293	13.5%
56-65	116	5.3%	109	5.0%	225	10.4%
66 +	93	4.3%	58	2.7%	151	7.0%
Ընդամենը	**1090**	**50.2%**	**1081**	**49.8%**	**2171**	**100%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի մարդահամարի հետազոտություն, 2014 թ. նոյեմբեր

4. ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

44. Ընդհանուր կրթական մակարդակը բավականին բարձր է ազդեցության ենթակա տնային տնտեսությունները ղեկավարող անձանց շրջանում: Բոլոր կանայք և տղամարդիկ կրթված և գրագետ են: ԱԵՏՏ ղեկավարների մեծամասնությունն ունի միջնակարգ կրթություն (38.14%) և միջնակարգ մասնագիտացված կրթություն (33.72%), որոնց հետևում են 21.16% կազմող բարձրագույն կրթություն ունեցող ՏՏ ղեկավարները: ՏՏ ղեկավարների շրջանում միջնակարգ կրթություն ունեցողներն ավելի շատ են տղամարդկանց (130), քան կանանց (34) մեջ: Նմանօրինակ միտում է նկատվում մասնագիտական կրթության կատեգորիայում. 121 տղամարդ

24 կնոջ համեմատությամբ: Տվյալների վերլուծությունը բացահայտում է, որ կանայք համեմատաբար ավելի շատ են (7.23% ընդհանուր ԱԵՏՏ կին ղեկավարներից) «թերի միջնակարգ կրթություն» կատեգորիայում, քան տղամարդիկ (4.03% ընդհանուր ԱԵՏՏ տղամարդ ղեկավարներից), և չնայած որ տարբերությունը թվերի մեջ մեծ չէ, այնուամենայնիվ, նախընտրելի է պահել աղջիկներին տանը կենցաղային աշխատանքների համար: Բարձրագույն կրթություն ստացած ԱԵՏՏ ղեկավարները 79-ն են (18.37%), ներառյալ մեկ անավարտ բաձրագույն կրթություն ունեցող տղամարդ՝ համեմատած 13 (3.02%) կանանց հետ: Մանրամասների համար տե՛ս Աղյուսակ Գ5-ը:

Աղյուսակ Գ5.ԱԵՏՏ ղեկավարների կրթությունն ըստ սեռի և տոկոսի

Կրթական մակարդակը	ԱԵՏՏ տղամարդ ղեկավարներ		ԱԵՏՏ կին ղեկավարներ		Ընդհանուր ԱԵՏՏ ղեկավարները	
	No.	%	No.	%	No.	%
Անուսում	0	0.00%	0	0.00%	0	0.00%
Տարրական	2	0.47%	5	1.16%	7	1.63%
Թերի միջնակարգ	14	3.26%	6	1.40%	20	4.65%
Միջնակարգ	130	30.23%	34	7.91%	164	38.14%
Միջին դպրոց	1	0.23%	1	0.23%	2	0.47%
Ավագ դպրոց	0	0.00%	0	0.00%	0	0.00%
Միջնակարգ մասնագիտական	121	28.14%	24	5.58%	145	33.72%
Թերի բարձրագույն կրթություն, ուսանող	1	0.23%	0	0.00%	1	0.23%
Բարձրագույն (բակալավր կամ մագիստրոս)	78	18.14%	13	3.02%	91	21.16%
Հետբուհական	0	0.00%	0	0.00%	0	0.00%
Կիրառելի չէ (մինչև 6 տարեկան)	0	0.00%	0	0.00%	0	0.00%
Ընդամենը	**347**	**80.70%**	**83**	**19.30%**	**430**	**100.00%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի մարդահամարի հետազոտություն, 2014 թ. նոյեմբեր

45. 2171 ԱԵՏՏ անդամներից (ԱԵԱ-ներ) 628 (28.9%)-ն ունեն միջնակարգ կրթություն, 440 (20.3%) -ը՝ լրացուցիչ մասնագիտական կրթություն և 368 (17%)-ը՝ բարձրագույն կրթություն: Միջին դպրոցի, բարձր դպրոցի և միջնակարգ մասնագիտական դպրոցի կրթական մակարդակներում ԱԵԱ-ները համապատասխանաբար կազմում են 6.4%, 5.4% և 2.2%: Այս երեք կատեգորիաներում տղամարդկանց և կանանց քանակը գրեթե նույնն է, սակայն միջնակարգ մասնագիտական կատեգորիայում կանայք ունեն ավելի լավ ցուցանիշ (255), քան տղամարդիկ (185): Դրանով արտացոլվում է կանանց անկախ մտածելակերպը աշխատանքային զբաղվածության և տնտեսական գործունեության վերաբերյալ: Տվյալները նաև ցույց են տալիս, որ հավասար թվով կանայք և տղամարդիկ ունեն բարձրագույն կրթություն: Ազդեցության ենթակա տնային տնտեսություններում վեց տարեկանից ցածր երեխաների քանակը կազմում է 288 (13.3%): Տղաների և աղջիկների քանակը գրեթե նույնն է, ինչը հետևաբար ցույց է տալիս սեռերի հավասար քանակություն վեց տարեկանից ցածր տարիքային խմբում:

Աղյուսակ Գ6.ԱԵՏՏ անդամների կրթությունն ըստ սեռի և տոկոսի

Կրթական մակարդակը	Արական	Իգական	Ընդհանուր

	No.	%	No.	%	No.	%
Անուսում	2	0.1%	5	0.2%	7	0.3%
Տարրական	80	3.7%	60	2.8%	140	6.4%
Թերի միջնակարգ	27	1.2%	31	1.4%	58	2.7%
Միջնակարգ	292	13.5%	336	15.5%	628	28.9%
Միջին դպրոց	52	2.4%	66	3.0%	118	5.4%
Ավագ դպրոց	27	1.2%	21	1.0%	48	2.2%
Միջնակարգ մասնագիտական	255	11.7%	185	8.5%	440	20.3%
Թերի բարձրագույն կրթություն, ուսանող	42	1.9%	31	1.4%	73	3.4%
Բարձրագույն (բակալավր կամ կամ մագիստրոս)	183	8.4%	185	8.5%	368	17.0%
Հետբուհական	1	0.0%	2	0.1%	3	0.1%
Կիրառելի չէ (մինչև 6 տարեկան)	129	5.9%	159	7.3%	288	13.3%
Ընդամենը	**1090**	**50.2%**	**1081**	**49.8%**	**2171**	**100%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի մարդահամարի հետազոտություն, 2014 թ. նոյեմբեր

5. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

46. 430 ԱԵՏՏ-ներից ընդհանուր առմամբ 299-ում (69.53%) տղամարդ ղեկավարների աշխատանքային զբաղվածությունն ավելի մեծ թիվ է կազմում (78.10%), քան կին ղեկավարների շրջանում (33.73%): Կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններում 26 (7.49%) տղամարդ և 29 (34.94%) կին թոշակառուներ են, և միայնակ կին ՏՏ ղեկավար լինելը հիմնականում պայմանավորված է այրի լինելու գործոնով: Սակայն տղամարդկանց շրջանում նկատվում է գյուղատնտեսությամբ կամ այլ աշխատանքով ակտիվորեն զբաղվելու միտումը, մինչդեռ կանայք դադարում են աշխատել վաղ տարիքից: Ընդհանուր առմամբ, 35 (8.14%) տնային տնտեսությունների ղեկավարներ գործազուրկ են կամ չեն աշխատում: Նրանցից միայն 15 տնային տնտեսությունների ղեկավարներ ակտիվորեն չեն փնտրում աշխատանք: Մինչդեռ հետազոտության ժամանակաշրջանում մնացած 20-ն ակտիվորեն աշխատանք էին փնտրում: Տնային տնտեսությունների 39 ղեկավարներ (9.07%) թոշակառուներ են և աշխատում են իրենց եկամուտներն ավելացնելու նպատակով (տե՛ս Աղյուսակ Գ7):

Աղյուսակ Գ7.ԱԵՏՏ ղեկավարների զբաղվածության կարգավիճակն ըստ սեռի և տոկոսի

Զբաղվածության կարգավիճակը	ԱԵՏՏ տղամարդ ղեկավարներ		ԱԵՏՏ կին ղեկավարներ		Ընդհանուրը	
	No.	%	No.	%	ԱԵՏՏ-ների քանակը	%
Զբաղված	271	78.10%	28	33.73%	299	69.53%
Կենսաթոշակառու	26	7.49%	29	34.94%	55	12.79%
Աշխատող թոշակառու	29	8.36%	10	12.05%	39	9.07%
Գործազուրկ և աշխատանք չփնտրող	7	2.02%	8	9.64%	15	3.49%

Զբաղվածության կարգավիճակը	ԱԵՏՏ տղամարդ ղեկավարներ		ԱԵՏՏ կին ղեկավարներ		Ընդհանուրը	
	No.	%	No.	%	ԱԵՏՏ-ների քանակը	%
Գործազուրկ և աշխատանք փնտրող	12	3.46%	8	9.64%	20	4.65%
Այլ դեպքեր	2	0.58%		0.00%	2	0.47%
Ընդամենը	**347**	**100.00%**	**83**	**100.00%**	**430**	**100.00%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի մարդահամարի հետազոտություն, 2014 թ. նոյեմբեր

47. Ընտանիքի այլ անդամների շրջանում աշխատանքի են ընդգրված 645 (59.67%) տղամարդիկ և 363 (33.30%), կանայք, ինչը ցույց է տալիս, որ տղամարդկանց աշխատանքային զբաղվածությունն ավելի մեծ թիվ է կազմում, քան կանանցը: 77 (7.06%) կանայք և 32 (2.96%) տղամարդիկ կենսաթոշակառուներ են: Կին թոշակառուների քանակը երկու անգամ գերազանցում է տղամարդ թոշակառուների քանակը: Բացի այս, թվով 15 տղամարդ և 39 կին թոշակառուներ ունեն աշխատանքային զբաղվածություն՝ իրենց եկամուտները բարելավելու նպատակով: Ընդհանուր առմամբ 375 տղամարդիկ և կանայք հետազոտության ժամանակ գրանցվել են որպես գործազուրկ: Նրանցից աշխատանք են փնտրում 44 տղամարդիկ և 95 կանայք: Ծրագիրը կստեղծի մի շարք աշխատատեղեր շինարարության ժամանակահատվածում և այս տղամարդկանց ու կանանց առաջնահերթություն կտրվի՝ իրենց բնակավայրում օգտվելու ծրագրի ընձեռած հնարավորությունից:

Աղյուսակ Գ8.ԱԵԱ-ների զբաղվածության կարգավիճակն ըստ սեռի և տոկոսի

Զբաղվածության կարգավիճակը	Տղամարդ		Կին		Ընդամենը	
	No.	%	No.	%	No.	%
Զբաղված (այդ թվում՝ աշակերտ, ուսանող)	645	59.67%	363	33.30%	1008	46.40%
Կենսաթոշակառու	32	2.96%	77	7.06%	109	5.00%
Աշակերտ, ուսանող, հեռակայող ուսանող	140	12.95%	150	13.76%	290	13.40%
Աշխատող կենսաթոշակառու	15	1.39%	39	3.58%	54	2.50%
Տնային տնտեսուհի	2	0.19%	5	0.46%	7	0.30%
Գործազուրկ և աշխատանք չփնտրող	12	1.11%	224	20.55%	236	10.90%
Գործազուրկ և աշխատանք փնտրող	44	4.07%	95	8.72%	139	6.40%
Չինծառայող	23	2.13%	0	0.00%	23	1.10%
Այլ դեպքեր (մինչև 6 տարեկան և այլ դեպքեր)	168	15.54%	137	12.57%	305	14.00%
Ընդամենը	**1081**	**100.00%**	**1090**	**100.00%**	**2171**	**100.00%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի մարդահամարի հետազոտություն, 2014 թ. նոյեմբեր

6. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

48. Ազդեցության ենթակա համայնքների ՍՏՀ-ն ցույց տվեց հանրային ծառայությունների առկայությունը և դրանց հեռավորությունը յուրաքանչյուր համայնքից: Ծառայություններն

ընդգրկում են կրթական հաստատությունները, հիվանդանոցները, դեղատները, փոստատունը, հասարակական տրանսպորտը, զբոսայգիները, խանութները, մշակույթի կենտրոնները և եկեղեցին: Ազատանում և Մարալիկում բոլոր ծառայությունները հասանելի են գյուղի տարածքում, բացառությամբ հիվանդանոցի՝ Ազատանում և հանրային տրանսպորտի՝ Մարալիկում, հետևաբար, այս երկու գյուղերն ապահովված են տարբեր ծառայություններով: Մյուս համայնքներում ծառայությունների մի մասը հասանելի են գյուղի ներսում, իսկ մյուսները ստիպված են ճանապարհորդել 2-5 կմ հեռավորությամբ, իսկ որոշ դեպքերում 5 կմ-ից ավել հեռավորության վրա: Գյուղի ներսում ծառայությունների հասանելիության տեսակետից, Ձորակապում հասանելի է դրանցից մի քանիսը, այնուամենայնիվ ծառայությունների մեծամասնությունը գյուղի ներսում հասանելի են 2-5 կմ հեռավորությամբ (տե՛ս Աղյուսակ Գ9-ը)

Աղյուսակ Գ9. Ծառայությունների հասանելիությունը ըստ հեռավորության

Ծառայություններ	Ազատան		Լանջիկ		Լուսակերտ			Հոռոմ		Ձորակապ			Մարալիկ		Սառնաղբյուր		
	գյուղում	5 կմ-ից ավել	գյուղում	5 կմ-ից ավել	գյուղում	2 - 5 կմ	5 կմ-ից ավել	գյուղում	5 կմ-ից ավել	գյուղում	2 - 5 կմ	5 կմ-ից ավել	գյուղում	2 - 5 կմ	գյուղում	2 - 5 կմ	5 կմ-ից ավել
Միջնակարգ դպրոց	✓		✓		✓			✓		✓			✓		✓		
Ավագ դպրոց	✓		✓		✓			✓				✓	✓		✓		
Մանկապարտեզ	✓		✓		✓			✓			✓		✓			✓	
Այլ կրթական հաստատություն	✓			✓	✓			✓			✓		✓				✓
Հիվանդանոց (բուժկետ)		✓		✓		✓			✓	✓			✓		✓		
Դեղատուն	✓			✓		✓			✓		✓		✓		✓		
Փոստատուն	✓			✓	✓			✓			✓		✓				✓
Հասարակական տրանսպորտ	✓		✓		✓			✓			✓			✓	✓		
Զբոսայգի	✓			✓			✓	✓			✓		✓				✓
Խանութ, առևտրի կենտրոն	✓		✓		✓			✓		✓			✓		✓		
Մշակութային կենտրոն	✓		✓		✓			✓			✓		✓				✓
Եկեղեցի	✓		✓		✓			✓		✓			✓		✓		

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի մարդահամարի հետազոտություն, 2014 թ. նոյեմբեր

49. Ինչ վերաբերում է տնային տնտեսությունների խմելու ջրի աղբյուրին, ապա բոլոր գյուղերում այն հիմնականում ապահովվում է ջրագծերով: Այդպիսի ջրամատակարարում ստացող տնային տնտեսություններն ունեն հետևյալ համամասնությունները՝ Ազատան՝ 82%, Բենիամին՝ 100%, Լանջիկ՝ 83.2%, Լուսակերտ՝ 57%, Հայրենյաց՝ 50%, Հոռոմ՝ 36%, Ձորակապ՝ 89%, Մարալիկ՝ 85.7% և Սառնաղբյուր՝ 62.5%: Գյուղերի շարքում Բենիամինը ունի առավելագույն (100%) և Հոռոմը՝ նվազագույն (36%) ԱԵՏՏ-ների համամասնությունը, որոնք ունեն ջրագծային ջրամատակարարում: Գետերի ջուրը երկրորդ հիմնական աղբյուրն է ԱԵՏՏ-ների համար գյուղերում, ԱԵՏՏ-ների 15%-ը կախված է դրանցից: Ջրհորներն ու գետերը տնային տնտեսությունների համար խմելու ջրի մյուս երկու աղբյուրներ են ազդեցության ենթակա

համայքներում՝ համապատասխանաբար 9% և 3% (Աղյուսակ Գ10):

Աղյուսակ Գ10.ԱԵՏՏ-ների խմելու ջրի աղբյուրն ըստ տոկոսների

Խմելու ջրի աղբյուրը	Ազատան	Բենիամին	Լանջիկ	Լուսակերտ	Հայրենյաց	Հոռոմ	Ձորակապ	Մարալիկ	Սառնաղբյուր	Ընդհանուր
Ջրագծային ջրամատակարարում	82%	100%	83.2%	57%	50%	36%	89%	85.7%	62.5%	73%
Աղբյուր	6%	0	5.6%	17%	50%	32%	7%	9.5%	37.5%	15%
Ջրհոր	12%	0	5.6%	17%	0	32%	0	0	0	9%
Գետ/այլ	0	0	5.6%	9%	0	0	4%	4.8%	0	3%
Ընդհանուր	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի Սոցիալ-տնտեսական հետազոտություն, 2014 թ.նոյեմբեր

50. Ինչ վերաբերվում է տնային տնտեսություններում սանիտարական հարմարարությունների ապահովմանը, ապա զուգարանակոնքը և դրսի զուգարանը հասանելի են սոցիալ-տնտեսական հետազոտության մասնակից տնային տնտեսությունների 99.4%-ին: Զուգարանակոնքի և դրսի զուգարանի համամասնությունը կազմում է համապատասխանաբար 50.6% և 48.8%: Հետազոտված տնային տնտեսությունների միայն 0.6%-ը չունի զուգարան: Զուգարան չունեցող տնային տնտեսությունները արձանագրվել են Ձորոկապում, որտեղ դրանք կազմում են տնային տնտեսություններ 3%-ը (տե՛ս Աղյուսակ Գ11):

Աղյուսակ Գ11.ԱԵՏՏ-ների սանիտարական հարմարությունները ըստ տոկոսների

Զուգարանի տեսակը	Ազատան	Բենիամին	Լանջիկ	Լուսակերտ	Հայրենյաց	Հոռոմ	Ձորակապ	Մարալիկ	Սառնաղբյուր	Ընդհանուր
Զուգարանակոնք	45%	56%	41.7%	33%	56%	50%	56%	73%	25%	50.6%
Դրսի զուգարան	55%	44%	58.3%	67%	44%	50%	41%	27%	75%	48.8%
Զուգարան չկա	0	0	0	0	0	0	3%	0	0	0.6%
Ընդհանուր	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի Սոցիալ-տնտեսական հետազոտություն, 2014 թ.նոյեմբեր

51. Հայաստանում վառելիքի անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված է սննդի պատրաստման և ջեռուցման նպատակներով: Ցուրտ երկիր լինելու հետևանքով ջեռուցման նպատակով վառելիքի անհրաժեշտությունը տնային տնտեսության համար հանդիսանում է հիմնական ծախսերից մեկը: Հասկանալու համար տնային տնտեսությունների կախվածությունը ջեռուցման համար անհրաժեշտ վառելիքի տեսակից, ՍՏՀ-ն դիտարկել է նաև այս հարցը: Աղյուսակ Գ12-ից կարելի է տեսնել, որ էլեկտրականությունը, փայտը, գազը և դիզել/ կերոսինը հանդիսանում են ջեռուցման համար անհրաժեշտ վառելիք հիմնական տեսակները, որոնք կազմում են համապատասխանաբար 11%, 33.3%, 30.3% և 25.4%: Այսպիսով ստացվում է, որ, որպես ջեռուցման համար անհրաժեշտ վառելիք, փայտը, գազը, դիզել/ կերոսինը և էլեկտրականությունը դասավորված են նախընտրելիության հաջորդականությամբ: Հասկանալի է, որ տնային տնտեսությունների համար փայտից կախվածությունը պայմանավորված է էլեկտրականության, գազի և նավթամթերքների գների աճով: Ինչ վերաբերում է համայնքներին, ապա Ազատանում, Բենիամինում և Սառնաղբյուրում ոչ մի տնային տնտեսություն ջեռուցման

նպատակով չի օգտագործում էլեկտրականություն: Ի լրումն, Սառնաղբյուրում տնային տնտեսությունները ջեռուցման նպատակով չեն օգտագործում նաև գազը: Համայնքների շարքում, ջեռուցման նպատակով գազ օգտագործող տնային տնտեսությունների ամենաբարձր տոկոսը կազմում է Բենիամինում: Նույնը դիզել/ կերոսինի և փայտի առումով հանդիսանում են համապատասխանաբար Սառնաղբյուրը (60%) և Հոռոմը (42.9%): Մարալիկում տնային տնտեսությունների 18.2%-ը ջեռուցման նպատակով օգտագործում է էլեկտրականությունը, որը կազմում է ամենաբարձր տոկոսը բոլոր համայնքների շարքում:

Աղյուսակ Գ12.ԱԵՏՏ-ների կախվածությունը ջեռուցման համար օգտագործվող վառելիքի տեսակից ըստ տոկոսների

Վառելիքի տեսակը	Ազատան	Բենիամին	Լանջիկ	Լուսակերտ	Հայրենյաց	Հոռոմ	Ձորակապ	Մարալիկ	Սառնաղբյուր	Ընդհանուր
Էլեկտրականություն	0	0	17%	13.8%	12.5%	9.5%	11%	18.2%	0	11.0%
Փայտ	35%	20%	33%	37.9%	37.5%	42.9%	37%	21.2%	40%	33.3%
Գազ	53%	73%	13%	20.7%	25%	23.8%	26%	42.4%	0	30.3%
Դիզել/ կերոսին/աթար	12%	7%	37%	27.6%	25%	23.8%	26%	18.2%	60%	25.4%
Ընդհանուր	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի Սոցիալ-տնտեսական հետազոտություն, 2014թ. նոյեմբեր

7. ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

52. Գյուղատնտեսությունը, այդ թվում անասնապահությունը կարևոր դեր են կատարում ԱԵՏՏ-ների կենսապահովման համար նվազեցնելով գործազրկության հետ կապված խնդիրները և ապահովելով ԱԵՏՏ անդամներին աշխատանքով: Հետեւաբար, նույնիսկ գյուղատնտեսական և անասնապահական գործունեությունից ստացվող եկամտի մի փոքր նվազումը հավանական է, որ բացասական ազդեցություն կունենա նրանց կյանքի որակի վրա: Բացի այդ, գյուղատնտեսությունը հանդիսանում է համայնքների, մասնավորապես ԱԵՏՏ-ների հենման կետը, և հողամասի չափերի կրճատումը կհանգեցնի գործազրկության աճի, ինչպես նաև եկամուտների, պարենային սպառման և անվտանգության կորուստների:
53. Համայնքներում ԱԵՏՏ-ների եկամտի գյուղատնտեսական և ոչ-գյուղատնտեսական աղբյուրների միջև տարբերությունը նշանակալի է, և կարող է մեծ չափով կապված լինել Ծրագրի ազդեցությունների հետ՝ կախված ԱԵԱ-ների եկամուտների կորստի աստիճանից: ԱԵՏՏ-ների համար գյուղատնտեսությունը հանդիսանում է եկամտի հիմնական աղբյուրը: Բոլոր համայնքներում գյուղատնտեսական և ոչ-գյուղատնտեսական եկամուտների համամասնությունը տատանվում է 1% -ից Բենիամինում մինչև 73%՝ Լուսակերտում: Պետք է նշել, որ այն համայնքներ, որոնք ունեն ոչ-գյուղատնտեսական եկամտի բարձր համամասնություն, ավելի պակաս բարեկեցիկ են (ՏՏ միջին ամսական եկամուտը Լուսակերտում, Սառնաղբյուրում և Ազատանում կազմում է համապատասխանաբար 72,437.50 ՀՀ դրամ, 49,687.50 ՀՀ դրամ և 88,866.67 ՀՀ դրամ), համեմատած գյուղատնտեսական եկամտի համեմատաբար պակաս ոչ-գյուղատնտեսական եկամտի համամասնություն ունեցող համայնքների հետ (ՏՏ միջին ամսական եկամուտը Լանջիկում, Մարալիկում, Հայրենյացում և Ձորակապում կազմում է համապատասխանաբար 259,583.33 ՀՀ դրամ, 323,134.68 ՀՀ դրամ, 273,833.33 ՀՀ դրամ և 224,536.00 ՀՀ դրամ): Հետևաբար, առկա է ուղիղ կապ ազդեցության ենթակա համայնքի բարեկեցության և գյուղատնտեսական եկամտի միջև: Այդ պատճառով, Ծրագրի ներքո

վարելահողի կորուստը անշուշտ կազդի տնային տնտեսությունների տնտեսական պայմանների վրա: Բացի այդ, համայնքներում ԱԵՏՏ-ների եկամուտների միջև անհավասարությունը էական են, քանի որ Մարալիկում ԱԵՏՏ-ների միջին ամսական եկամուտը կազմում է 323,134.68 ՀՀ դրամ, համեմատած Սառնաղբյուրի հետ, որտեղ այն կազմում է 49,687.50 ՀՀ դրամ: Եկամուտների և ազդեցությունների մասին տվյալները միասին վկայում են, որ կարևոր է Ծրագրի արդյունքում ազդեցութան ենթակա ՏՏ-ներին ապահովել փոխարինման արժեքով փոխհատուցմամբ և աջակցության մեխանիզմներով՝ վերականգնելու համար նրանց եկամուտները, հատկապես խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ներին:

Աղյուսակ Գ13. Գյուղատնտեսական և ոչ-գյուղատնտեսական տարեկան եկամուտների համամասնությունը ըստ ԱԵՏՏ-ների

Համայնքը	Ոչ-գյուղատնտեսական միջին եկամտները ըստ ԱԵՏՏ-ի (ՀՀ դրամ)	Գյուղատնտեսական միջին եկամտները ըստ ԱԵՏՏ-ի (ՀՀ դրամ)	Ընդահանուր միջին եկամտները ըստ ԱԵՏՏ-ի (ՀՀ դրամ)	Գյուղատնտեսական և ոչ-գյուղատնտեսական տարեկան եկամուտների միջև հարաբերակցության տոկոսը
Ազատան	35,733.33	116,462.50	88,866.67	31%
Բենիամին	3,965.52	390,017.86	197,062.50	1%
Լանջիկ	28,000.00	305,900.00	259,583.33	9%
Լուսակերտ	61,125.00	83,750.00	72,437.50	73%
Հայրենյաց	39,400.00	268,361.11	273,833.33	15%
Հոռոմ	29,500.00	163,700.00	169,600.00	18%
Ձորակապ	36,375.00	239,784.44	224,536.00	15%
Մարալիկ	37,222.22	365,365.09	323,134.68	10%
Սառնաղբյուր	40,400.00	65,166.67	49,687.50	62%

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի Սոցիալ-տնտեսական հետազոտություն, 2014թ. նոյեմբեր

54. Գյուղատնտեսական ենթաոլորտներից եկամուտների վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ եկամուտների մեծամասնությունը ստացվում է մշակաբույսերի մշակումից (ցորեն, գարի, առվույտ, կորնգան և կարտոֆիլ) և անասնապահությունից, հիմնականում անասուններից կաթ և միս ստանալուց: Գյուղատնտեսական աղբյուրներից ստացվող ԱԵՏՏ-ների եկամտները տատանվում են 33%-ից Լանջիկում մինչև 67%՝ Հայրենյացում: Գյուղատնտեսական աղբյուրներից ստացվող եկամուտների այսպիսի տարբերությունը հիմնականում պայմանավորված է վարելահողերի և արոտավայրերի նկատմամբ հասանելիության տարբերությամբ, որը լայնորեն տատանվում է ճանապարհի երկայնքով տեղակայված համայնքների միջև: Անանասնապահությունը և վաճառքը ապահովում են ՏՏ-ների եկամտի մոտ 23%-ը: Գյուղատնտեսությունը և անանսնապահությունը ապահովում են ՏՏ-ների եկամուտների մոտ ¾-ը բոլոր համայնքներում միասին վերցրած: Ծրագիրը կունենա բացասական ազդեցություն ՏՏ-ների եկամուտների վրա, պայմանավորված հողի օտարմամբ, այսպիսով ԱԵԱ-ները կխրախուսվեն Ծրագրից ստացված փոխհատուցման գումարով գնել վարելահող: Յուրաքանչյուր համայքնում ՏՏ-ների եկամուտները թոշակից, ընտանիքի աղքատության, հաշմանդամության, գործազրկության նպաստներից և ուսանողական թոշակից բավականին լավ տոկոս են կազմում: Այս տոկոսը տատանվում է 42%-ից Լանջիկում

մինչև 6%՝ Ազատանում: Միայն SS-ների 2%-ի մոտ է եկամտի աղբյուրը տարբերվում գյուղատնտեսականից, անասնապահությունից և պետական նպաստներից: Այս երկու տոկոսը հիմնականում ներառված են ձեռնարկատիրական գործունեության և ինքնազբաղվածության խմբերում:

Աղյուսակ Գ14. ԱԵՏՏ-ների եկամտի աղբյուրները

Եկամտի աղբյուրը	Տոկոսով									
	Ազատան	Բենիամին	Լանջիկ	Լուսակերտ	Հայրենյաց	Հոռոմ	Ձորակապ	Մարալիկ	Սառնաղբյուր	Ընդհանուր
Գյուղատնտեսություն	42%	60%	33%	59%	67%	53%	52%	39%	37.5%	50%
Անասնպահություն և վաճառք	8%	27%	17%	33%	20%	32%	26%	19%	0	23%
Թոշակ, ընտանիքի աղքատության, հաշմանդամության, գործազրկության նպաստներ	6%	13%	42%	8%	13%	14%	20%	36%	50%	17%
Այլ	0	0	0	0	0	1%	2%	6%	12.5%	2%
Եկամտի բացակայություն	44%	0	8%	0	0	0	0	0	0	8%
Ընդհանուր	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի Սոցիալ-տնտեսական հետազոտություն, 2014թ. նոյեմբեր

8. ԱԵՏՏ-ՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ

55. Գույքի տիրապետումը տնտեսական պայմանների լավ ցուցանիշ է ցանկացած տարածքում: ԱԵՏՏ-ների շրջանում գույքի տիրապետումը ներկայացված է ստորև ներկայացված աղյուսակում՝ ցույց տալու համար համընդհանուր պատկերը: Հետազոտված SS-ների 99%-ը ունի բջջային հեռախոս, որին հաջորդում են 98% SS-ները, որոնք ունեն հեռուստացույց: SS-ների 92%-ը ունեն սառնարան և լվացքի մեքենա: SS-ների մոտ 48% ունեն նաև ֆիքսված հեռախոսային կապ, և այս SS-ների մեխամասնությունը ունեն նաև բջջային հեռախոսներ: SS-ների 47%-ը ունեն ավտոմեքենա, մինչդեռ այլ SS-ների 16%-ը ունեն ավտոբուս/բեռնատար/գյուղատնտեսական տեխնիկա: SS-ների միայն 3%-ը ունեն օդորակիչ, և սա պայմանավորված է Հայաստանում կլիմայական պայմաններով, որտեղ օդորակիչը անհրաժեշտ չէ: SS-ների մոտ 60%-ը ունեն համակարգիչ իրենց տանը: ԱԵՏՏ-ները լավ հագեցած են սարքավորումներով և ժամանակակից տեխնիկայով:

Աղյուսակ Գ15. ԱԵՏՏ-ներին պատկանող գույքը

No.	Գույքերի ցանկը	Տոկոսով	
		այո	ոչ
1	Հեռուստացույց	98%	2%
2	Լվացքի մեքենա	92%	8%
3	Սառնարան	92%	8%
4	Բջջային հեռախոս	99%	1%
5	Հեռախոսակապ	48%	52%

No.	Գույքերի ցանկը	Տոկոսով	
		այո	ոչ
6	Տրանսպորտային միջոց (մեքենա)	47%	53%
7	բեռնատար/ գյուղ. տեխն.	16%	84%
8	Օդորակիչ	3%	97%
9	Համակարգիչ	60%	40%

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի Սոցիալ-տնտեսական հետազոտություն, 2014թ. նոյեմբեր

56. Ընտանի կենդանիների տիրապետումը հանդիսանում է ՏՏ-ների գույքի բազան ցանկացած երկրի գյուղատնտեսական տնտեսությունում և սա նույնն է նաև Հայաստանի համատեքստում: Ընտանի կենդանիների տնտեսական արժեքը ներառում է միսը, կաթնամթերքը, մանրաթելը, պարարտանյութը, աշխատանքը և հողային ռեսուրսների կառավարումը: Հետևաբար, ընտանի կենդանիները հսկայական արժեք ունեն գյուղական տնտեսության մեջ և նույնը տեսանելի է Ծրագրի ազդակիր ՏՏ-ների մոտ: Ընտանի կենդանիներից հետազոտված ՏՏ-ների 52%-ը ունեն կովեր: Դրանց հաջորդում են թռչունները, ոչխարները, խոզերը, գոմեշները և այծերը , որոնց տիրապետում են ՏՏ-ների համապատասխանաբար՝ 47%, 14%, 11%, 8% և 2%-ը (տե՛ս աղյուսակ Գ 16):

Աղյուսակ Գ16. ԱԵՏՏ-ներին պատկանող անասունները

No.	Անասունների ցանկը	Տոկոսով	
		այո	այո
1	Կով	52%	48%
2	Թռչուններ	8%	92%
3	Ոչխարն	14%	86%
4	Այծ	2%	98%
5	Գոմեշ	47%	53%
6	Խող	11%	89%
7	Էշ	1%	99%
8	Այլ	1%	99%

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի Սոցիալ-տնտեսական հետազոտություն, 2014թ. նոյեմբեր

9. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԸ, ՊԱՐՏՔԵՐԸ և ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

57. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ՍՏՀ-ն փորձել է պարզել ՏՏ միջին ծախսերը՝ ՏՏ տարբեր թվով անդամների դեպքում և ըստ ընդհանուր ծախսերի տոկոսի: Սա հնարավորության կտա պատկերացում կազմել տարբեր համայնքներում ծախսերի և խնայողությունների օրինաչափությունների վերաբերյալ: Աղյուսակ Գ17-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ բոլոր համայնքներում ՏՏ ծախսերի հիմնական մասը կազմում են սննդի վրա կատարված ծախսերը. Բենիմաինում այն կազմում է 26.8%, մինչդեռ Հոռոմում՝ 43%: Կենցաղային ապրանքների և հագուստի վրա կատարված ծախսերը տատանվում են 6.2%-ից Հայրենյացում մինչև 26.5%՝ Լանջիկում: Համայնքներում կոմունալ ծառայությունների համար ծախսերը կազմում են 12.1%-19.3%: Գյուղատնտեսական ծախսերը տատանվում են 5.6%-ից Սառնաղբյուր մինչև 14.4%՝ Հայրենյացում: Տրանսպորտի և կրթության վրա կատարված ծախսերը համապատասխանաբար տատանվում են ՏՏ ընդհանուր ծախսերի 5.6-14.4% և 1.7-4.5% սահմաններում: Առողջության պահպանման համար ամենաբարձր ծախսերը դիտարկվել են Սառնաղբյուր համայնքում՝ 22.2% (տե՛ս Աղյուսակ Գ17):

Աղյուսակ Գ17. Ընտանիքի միջին ծախսը

Ծախսերի տեսակները	ՏՏ-ների ամսական միջին ծախսերը ՀՀ դրամով և %-ով								
	Ազատան	Բենիամին	Լանջիկ	Լուսակերտ	Հայրենյաց	Հոռոմ	Ջորակապ	Սարալիկ	Սառնաղբյուր
Սննդամթերքի վրա կատարված ծախսերը	31.0%	26.8%	29.0%	29.0%	34.5%	43.0%	31.4%	38.0%	32.5%
Կենցաղային ապրանքների և հագուստի վրա կատարված ծախսերը	8.9%	18.3%	26.5%	19.8%	6.2%	11.5%	24.3%	16.6%	10.5%
Կոմունալ ծախսերը (ներառյալ բջջային հեռախոսները և այլն)	16.7%	14.0%	12.1%	19.3%	15.5%	16.3%	18.4%	16.6%	14.5%
Տրանսպորտային ծախսերը (ավտոբուս և այլն, ոչ գյուղատնտեսական նպատակներով)	12.9%	9.0%	8.3%	7.4%	14.4%	9.0%	9.5%	7.9%	5.6%
Վարձավճարներ (հողի, բնակարանի համար)	2.3%	1.5%	0.2%	0.3%	4.1%	2.8%	0.2%	0.3%	0.3%
Հարկեր /հողի հարկեր, գույքահարկ և այլն /	0.9%	1.1%	0.7%	0.4%	1.0%	0.8%	1.3%	0.3%	1.4%
Գյուղատնտեսության և անասնապահության ոլորտի ծախսերը, այդ թվում՝ ոռոգման ջրի, գյուղատնտեսական մեխանիզմների վարձավճարը	16.1%	20.0%	11.5%	15.8%	9.7%	5.0%	4.7%	12.8%	9.8%
Ուսման վարձը և կրթության հետ կապված այլ ծախսերը	4.5%	2.4%	2.6%	2.1%	4.1%	2.6%	1.7%	2.1%	3.2%
Առողջության պահպանման հետ կապված ծախսերը	6.7%	6.9%	9.1%	5.9%	10.5%	9.0%	8.5%	5.4%	22.2%
Ընդամենը	**100.0 %**	**100.0 %**	**100.0 %**	**100.0 %**	**100.0 %**	**100.0 %**	**100.0 %**	**100.0 %**	**100.0 %**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի Սոցիալ-տնտեսական հետազոտություն, 2014 թ.նոյեմբեր

58. ՀՀ կառավարությունն իրականացնում է սոցիալական ապահովության ոլորտի տարբեր ծրագրեր՝ զանազան սխեմաների միջոցով քաղաքացիներին աջակցելու համար: Այդ սոցիալական նպաստները տարածվում են ընտանիքների վրա՝ ըստ յուրաքանչյուր սխեմայի համար մշակված չափանիշների: Պետական նպաստները ներառում են տարիքային կենսաթոշակը, հաշմանդամության թոշակը, կերակրողին կորցնելու դեպքում նպաստը, երեխաների խնամքի,

երեխայի ծննդյան նպաստները, աղքատության նպաստը և այլն: ՍՏՀ տվյալների մի մասը ձեռք է բերվել տարբեր տեսակի պետական նպաստներից ԱԵՏՏ-ների կախվածությունը գնահատելու համար, ինչպես նաև տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակը հասկանալու համար: Տվյալները ցույց են տալիս, որ ՏՏ-ների բավականին մեծ տոկոսը ստանում է աղքատության ընտանեկան նպաստ, հաշմանդամության թոշակ և տարիքային կենսաթոշակ: Հետազոտված բոլոր տնային տնտեսությունների 30%-ը ստանում են աղքատության ընտանեկան նպաստ և այն զգալիորեն բարձր է Սառնաղբյուր համայնքում (71%), որին հետևում են հավասարապես Ձորակապը և Մարալիկը (16.7%):

Աղյուսակ Գ18.Պետական նպաստներ ստացող տնային տնտեսությունները

Պետական նպաստի տեսակը	Հետազոտված ԱԵՏՏ-ների % -ը								
	Ազատան	Բենիամին	Լանջիկ	Լուսակերտ	Հայրենյաց	Հոռոմ	Ձորակապ	Մարալիկ	Սառնաղբյուր
Տարիքային կենսաթոշակ	28.6	18.2	25.00	21.4	33.3	21.1	33.3	35.0	42.9
Հաշմանդամության թոշակ	14.3	9.1	18.75	7.1	0	15.8	41.7	20.0	42.9
Կերակրողին կորցնելու դեպքում նպաստ	0	0	6.25	0	0	0	0	0	0
Մինչև երկու տարեկան երեխաների խնամքի նպաստ	0	0	6.25	0	0	0	8.3	8.3	0
Երեխայի ծննդյան նպաստ	0	0	0	7.1	0	0	4.2	4.2	0
Աղքատության ընտանեկան նպաստ	7.1	0	37.5	14.3	0	10.5	16.7	16.7	71.4
Միանվագ նպաստ, օգնություն	0	0	6.25	14.3	0	0	0	0	0
Այլ	0	0	0	7.1	0	5.3	0	0	0

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի Սոցիալ-տնտեսական հետազոտությունը, 2014 թ.նոյեմբեր

10. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

59. Կանայք ունեն կարևոր տնտեսական դերակատարություն ծրագրային տարածքում և ներգրավված են բազմապիսի եկամտաստեղծ գործունեություններում գյուղատնտեսական և շուկայական բնագավառներում: Կանանց շրջանում գրանցվում է գյուղատնտեսական հողերի սեփականության և դրանց օգտագործման զգալիորեն ավելի բարձր մակարդակ, քան տղամարդկանց շրջանում, և նրանք ավելի խիստ կախվածություն ունեն գյուղատնտեսությունից՝ որպես եկամտի աղբյուր: Կանայք նաև կարևոր դերակատարություն ունեն Հայաստանի գյուղական վայրերի տնային տնտեսությունների առօրյա գործունեության մեջ: ՍՏՀ-ն ձեռք է բերել ընտանիքի ֆինանսական, կրթական, առողջության պահպանման, գույքի սեփականության, գույքի վաճառքի և առօրյա գործունեության մեջ կանանց մասնակցության վերաբերյալ տվյալները: Միջինում կանանց մեծամասնությունը մեծ դեր ունի ընտանեկան, երեխաների կրթության և առողջության պահպանման հարցերում (տե՛ս Աղյուսակ Գ19):
60. Ծրագիրն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում, որ կանայք ստանան իրենց համար նախատեսված փոխհատուցումները և ապահովում է, որ այն կանայք, ովքեր փաստացիորեն հանդիսանում են տնային տնտեսության ղեկավար, հստակորեն նշված են որպես փոխհատուցման և վերականգնման միջոցառումների շահառուներ՝ Ծրագրի ներքո: ՀՕՏԾ-ի մոնիտորինգի և գնահատման ընթացքում հատուկ ուշադրություն կդարձվի, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել տարաբնակեցումը կանանց և այլ խոցելի խմբերի վրա: Ավելին, կանանց, ովքեր ունեն կորցրած գույքի սեփականության վկայական կամ ճանաչվում/ընդունվում են որպես

կորցրած գույքի սեփականատերեր, կտրամադրվի փոխհատուցում և փոխարինող գույքի սեփականության վկայականը: Փոխարինող գույքի համար ամուսինների համատեղ սեփականության վկայականը, անկախ կորցրած գույքի սկզբնական սեփականատիրոջ սեռից, նույնպես խրախուսվում է:

61. Ծրագիրը դրական ազդեցություն կունենա նաև գենդերային տեսանկյունից, քանի որ շինարարական աշխատանքների պայմանագրերը կներառեն դրույթներ՝ ծրագրի իրականացման ընթացքում կանանց համար մշակույթին հարիր աշխատանքային զբաղվածությունը խրախուսելու համար: Հայաստանում կանայք ընդգրկված չեն ծանր ֆիզիկական աշխատանքներում, հետևաբար այն կարող է ներառել գրասենյակային աշխատանք, գրասենյակի օգնականի, հավաքարարության, խոհարարության, սպասարկման և այլ աշխատանքներ, որոնք չեն պահանջում ֆիզիկական ուժ: Ի լրումն, կանանց կողմից ղեկավարվող ՏՏ-ները, որոնք չունեն չափահաս աշխատունակ տղամարդ , համարվել են խոցելի և ՀՕՏԾ-ի իրավունքների սխեմայով հատուկ աջակցություն կնախատեսվի նրանց համար: Որպես ՀՕՏԾ իրականացման մաս, Ծրագիրը կմշտադիտարկի Ծրագրի շրջանակներում ստեղծվող տեղական զբաղվածությունը:

Աղյուսակ Գ19. Տնային տնտեսություններին վերաբերող հարցերի շուրջ որոշումների կայացման գործընթացին կանանց մասնակցությունը

	Հարցերի շրջանակը	**Այո**	**Ոչ**	**Երբեմն**	**Պատասխան չկա**
1	Ֆինանսական հարցեր, որոնք առնչվում են ներդրումներին/պարտավորություններին (վարկեր, փոխառություններ)	71.76%	20.61%	6.87%	0.76%
2	Երեխաների կրթությունը	86.26%	6.87%	3.82%	3.05%
3	Երեխաների առողջության պահպանումը	86.26%	6.87%	3.82%	3.05%
4	Գույքի գնում (կահույք, կենցաղային իրեր, փոխադրամիջոց, ոսկյա զարդեր)	75.57%	18.32%	5.34%	0.76%
5	Գույքի վաճառք (կահույք, կենցաղային իրեր, փոխադրամիջոց, ոսկյա զարդեր)	73.28%	21.37%	4.58%	0.76%
6	ՏՏ կենցաղային առօրյա գործունեություն /առևտուր, ամենօրյա սննունդ, հագուստ/	94.66%	3.05%	1.53%	0.76%

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի Սոցիալ-տնտեսական հետազոտություն, 2014 թ. նոյեմբեր

11. ԱՂՔԱՏ ԵՎ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏ ԱԵՏՏ-ՆԵՐ

62. Աղքատ ԱԵՏՏ-ները կազմում են ընդհանուր ԱԵՏՏ-ների շուրջ 70%-ը: Ընդ որում, համաձայն սույն ԲՖԳ-ի ՀՕՏԾ-ի Հավելված Բ-ի պարբերություն 18-ի՝ ընտանեկան անապահովության համակարգում չհաշվառվածաղքատ ԱԵՏՏ-ները կբացահայտվեն և կներկայացվեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման համար: Տվյալ ԱԵՏՏ կստանան փոխհատուցում՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու և ընտանեկան նպաստի իրավունքի ձեռքբերման դեպքում: Աղքատության գնահատումը կատարվել է ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀԱՎԾ) մեթոդաբանության: Մեթոդաբանությունը կիրառում է ամսական միջին սպառողական ցուցանիշները ՏՏ յուրաքանչյուր անդամի համար՝ հաշվարկված ըստ սննդամթերքի և ապրանքների զամբյուղի արժեքի: ՏՏ-ն համարվում է ծայրահեղ աքատ, եթե ամսական միջին սպառումը մեկ չափահաս անդամի կտրվածքով չի գերազանցում ծայրահեղ աղքատության շեմը (սննդամթերքի զամբյուղի արժեքը) և աքատ, եթե ընդհանուր միջին ծախսերը բարձր են ծայրահեղ աղքատության շեմից, սակայն ցածր են աղքատության ընդհանուր

շեմից (ապրանքների զամբյուղի արժեքը): ՀՀ ԱՎԾ-ն ծայրահեղ աղքատության (սննդամթերք) մակարդակը հաշվում է 23,885 ՀՀ դրամ, իսկ աղքատության մակարդակը՝ 37,022 ՀՀ դրամ յուրաքանչյուր տնային տնտեսության համար մեկ ամսվա կտրվածքով (մանրամասները տե՛ս Աղյուսակ Գ20-ում):

Աղյուսակ Գ20. Խոցելի աղքատ ԱԵՏՏ-ները

Կատեգորիա	Քանակը	Տոկոսը
Աղքատ	301	70,0%
o Ծայրահեղ աղքատ	*166*	
o Աղքատ	*135*	
Աղքատ չեն	*102*	23,7%
Չեն պատասխանել	27	6,3%
Ընդամենը	**430**	**100,0%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի մարդահամարի հետազոտություն, 2014 թ. նոյեմբեր

63. Աղյուսակ Գ21-ը ներկայացնում է խոցելի տնային տնտեսությունների վերլուծությունը՝ ըստ յուրաքանչյուր համայնքի: Համայնքների շարքում աղքատների և ծայրահեղ աղքատների առավելագույն տոկոսը Ձորակապում է (23%), հաջորդը՝ Մարալիկում (21%), Հոռոմում (16%), Ազատանում (13%), Լուսակերտում (12%), Բենիամինում և Հայրենյացում (յուրաքանչյուրում 4%) և Լանջիկում ու Սառնաղբյուրում (յուրաքանչյուրում 3%): Ինչ վերաբերվում է ծայրահեղ աղքատ ԱԵՏՏ-ներին, ապա ԱԵՏՏ-ների առավելագույն համամասնությունը Ձորակապում է, որին հետևում են Մարալիկը և Հոռոմը: ԱԵՏՏ-ների թիվը ծայրահեղ աղքատների խմբում 166 է համեմատած աղքատների խմբի 135 ԱԵՏՏ-ների հետ: Այդ պատճառով կարևոր է նշել, որ ՀՕՏԾ-ն իրականացվի այնպես, որպեսզի խուսափի աղքատ ԱԵՏՏ-ների՝ ծայրահետ աղքատ ԱԵՏՏ-ների խմբում հայտնվելուց: Երկու խմբերի միջև միջակայքը կազմում է 13.137 ՀՀ դրամ: Կարելի է նշել, որ ԱԵՏՏ-ների աղքատության մակարդակին առնչվող տվյալները ձեռք են բերվել մարդահամարի հետազոտության ժամանակ եկամտի վերաբերյալ ՏՏ-ների կողմից տրամադրված տեղեկություններից և ԱՎԾ-ի հաշվարկման մեթոդի կիրառման արդյունքում: Հետևաբար, պետությունից ընտանեկան աղքատության նպաստ ստացող ՏՏ-ները տարբեր են հետազոտության արդյունքում բացահայտված աղքատության նպաստ ստանալու իրավասություն ունեցող ՏՏ-ներից: Բացահայտված խոցելի ԱԵՏՏ-ները (աղքատության շեմից ցածր գտնվող և կանանց, տարեցների և հաշմանդամների կողմից ղեկավարվող ՏՏ-ները) իրավասու են ստանալ նպաստներ և նրանց նախապատվություն կտրվի ծրագրին առնչվող աշխատանքներում ընդգրկվելիս:

Աղյուսակ Գ21.Խոցելի աղքատ ԱԵՏՏ-ներն ըստ համայնքների

Համայնքը	Աղքատ		Ծայրահեղ աղքատ		Ընդամենը	
	Քանակը	Տոկոսը	Քանակը	Percent	Քանակը	Տոկոսը
Ազատան	24	18%	15	9%	39	13%
Բենիամին	*6*	4%	6	4%	12	4%
Լանջիկ	*4*	3%	6	4%	10	3%
Լուսակերտ	*17*	13%	20	12%	37	12%
Հայրենյաց	*8*	6%	3	2%	11	4%
Հոռոմ	*22*	16%	27	16%	49	16%
Ձորակապ	*25*	19%	45	27%	70	23%
Մարալիկ	*27*	20%	36	22%	63	21%

Համայնքը	Աղքատ		Ծայրահեղ աղքատ		Ընդամենը	
	Քանակը	Տոկոսը	Քանակը	Percent	Քանակը	Տոկոսը
Սառնաղբյուր	2	1%	8	5%	10	3%
Ընդհանուր	**135**	**100%**	**166**	**100%**	**301**	**100%**

Աղբյուրը՝ ՀՕՏԾ-ի մարդահամարի հետազոտություն, 2014 թ. նոյեմբեր

Դ. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

64. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 8-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սահմանադրության 31-րդ հոդվածը սահմանում է, որ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Հողի օտարման և փոխհատուցման գործընթացը և դրա հետ կապված ընդհանուր բնույթի մի շարք իրավահարաբերություններ կարգավորված են նաև ՀՀ իրավական այլ ակտերով՝

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք»
2. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
3. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք»
4. «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
5. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
6. «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգիրք»
7. «Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգիրք»:

65. ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ, 104-րդ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածները ևս ամրագրում են հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարումը՝ միայն բացառիկ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Ելնելով ՀՀ Սահմանադրության և վերոհիշյալ իրավական ակտերի պահանջներից՝ Հայաստանի Հանրապետության կողմից ընդունվել և օտարման ու փոխհատուցման գործընթացը կարգավորող հիմնական օրենք է հանդիսանում «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք), որը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահի հասկացությունը և դրա որոշման կարգը:

66. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է, որի իրականացման սահմանադրական պայմաններն են՝ ա) օտարման իրականացումը օրենքով սահմանված կարգով, և բ) օտարվող սեփականության դիմաց նախնական համարժեք փոխհատուցման տրամադրումը:

67. Վերոհիշյալ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշման սկզբունքները, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը՝ գերակա հանրային շահով հետապնդվող

հնարավոր նպատակները: Օրենքն ամրագրում է այն հիմնարար մոտեցումը, համաձայն որի՝ ա) հանրային շահը պետք է գերակա լինի օտարվող գույքի սեփականատիրոջ շահերից, բ) հանրային շահի արդյունավետ իրականացումը հնարավոր չի լինի ապահովել առանց այդ սեփականության օտարման, գ) սեփականության օտարումը չպետք է չհիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը, դ) հանրային շահը գերակա պետք է ճանաչվի կառավարության որոշմամբ, ե) բացառիկ հանրային շահի առկայության փաստը կարող է վիճարկվել դատական կարգով:

68. Օրենքը նաև կարգավորում է օտարվող սեփականության օտարման, փոխհատուցման պայմանները և այն որոշելու կարգը: Մասնավորապես, Օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ հողամասի օտարման դեպքում դրա հետ օտարման են ենթակա նաև հողամասի վրա գտնվող անշարժ գույքը (շենքեր, շինություններ, այլ ամրացված գույք և այլն), ինչպես նաև հողամասի վրա գտնվող այլ բարելավումները: Իսկ շենքի կամ շինության օտարման դեպքում, դրա հետ միասին օտարման են ենթակա նաև այդ շենքի կամ շինության սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը:
69. Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը տարածվում է միայն ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (այսուհետ՝ օտարվող սեփականություն) և կարգավորում է օտարման և փոխհատուցման հիմնական հարաբերությունները: Մասնավորապես.
    1) Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կառավարության սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմինը կազմում է օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը, որին իրավունք ունեն մասնակցելու ձեռքբերողը, սեփականատերը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները, եթե սեփականության նախնական ուսումնասիրության ժամանակ արձանագրությունը չի կազմվել: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակը, այն կազմելուց հետո ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում, պատշաճ ձևով ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց, որոնք իրավունք ունեն արձանագրությունն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, այն բողոքարկել լիազոր մարմին կամ դատարան,
    2) Օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» (Հոկտեմբեր 4, 2005թ.) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,
    3) Սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն (տես՝ հավելված 10): Այս դեպքում կողմերի համաձայնությամբ են միայն որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը,
    4) Եթե օտարման պայմանագիրը, այն ուղարկելուց հետո երեք ամսվա ընթացքում չի կնքվում, ապա ձեռքբերողը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում սեփականության օտարման դիմաց փոխհատուցման ենթակա գումարը հանձնել դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշիվ՝ այդ մասին պատշաճ ձևով տեղեկացնելով օտարվող սեփականության սեփականատիրոջը և օտարվող սեփականության նկատմամբ ձեռքբերողին հայտնի գույքային իրավունքներ

ունեցողներին: Փոխհատուցման գումարի չափի հաշվարկը պետք է կատարված լինի այն դեպոզիտ հանձնելուց ոչ շուտ, քան մեկ շաբաթ առաջվա դրությամբ,

5) Եթե փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում օտարման պայմանագիրը այնուամենայնիվ չի կնքվում՝ ապա ձեռքբերողը պարտավոր է մեկամսյա ժամկետում սեփականության օտարման հայցով դիմել դատարան: Այս դեպքում դատարանի քննարկման առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափի հարցը:

70. Օրենքը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար օտարվող սեփականության սեփականատիրոջ իրավունքները և երաշխիքները՝ ամրագրելով օտարվող սեփականության սեփականատիրոջ իրավունքը՝ մինչև դրա օտարումը կամ օտարումից ծագող իրավունքների պետական գրանցումը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու, ինչպես նաև կատարելու միայն այնպիսի բարելավումներ, որոնք ապահովում են տվյալ սեփականության օգտագործումն իր նշանակությանը համապատասխան:

71. Օրենքը որոշակի սահմանափակումներ է նախատեսում օտարվող սեփականության նկատմամբ, որը կառավարության որոշմամբ սահմանած կարգով կազմված օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը կազմելու օրն է: Նշված օրվանից հետո օտարվող սեփականության վրա նշվածից ավելի կատարված բարելավումները, ինչպես նաև օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում չի տրվում:

2. ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԲ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ (2009) ՈՉ ԿԱՄԱՎՈՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

72. Ոչ կամավոր տարաբնակեցման վերաբերյալ ԱԶԲ քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

1) Ոչ կամավոր տարաբնակեցումից պետք է հնարավորինս խուսափել կամ առնվազն այն հասցնել նվազագույնի:
2) Փոխհատուցման/ռեաբիլիտացիայի չափը պետք է ապահովի, որ ԱԵԱ-ների կենսամակարդակը բարելավվել կամ առնվազն վերականգնվել է:
3) ԱԵԱ պետք է լիարժեք տեղեկություններ և խորհրդատվություն տրամադրվի ՀՕՏ-ի փոխհատուցման տարբերակների մասին:
4) ԱԵԱ սոցիալ-մշակութային կառույցներին (ինչպիսիք են՝ գրադարանները, համայնքային կենտրոնները, մշակույթի տները) պետք է հնարավորինս աջակցություն ցուցաբերվի: Դրանք պետք է առավելագույնս ներգրավվեն:
5) Փոխհատուցումը պետք է իրականացվի կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքով:
6) Իրավական կարգավիճակի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա փոխհատուցման և ռեաբիլիտացիայի գործընթացի իրականացման համար:
7) Տեղահանված աղքատ բնակչության և այլ խոցելի խմբերի, ներառյալ կանանց, կենսամակարդակի չափանիշները պետք է բարելավվեն կամ առնվազն համապատասխանեն ազգային նվազագույն չափանիշներին:
8) ՀՕՏ-ը պետք է ընկալել և իրագործել որպես ծրագրի մաս, և փոխհատուցման ծախսերը պետք է ամբողջությամբ ներառվեն ծրագրի ֆինանսավորման և օգուտներ-ծախսեր հաշվարկներում:
9) Փոխհատուցումը ու տարաբնակեցման հատկացումները պետք է ամբողջությամբ տրամադրվեն նախքան ճանապարհի օտարման գոտու հողի հարթեցման և շինարարության իրավունքի տրամադրումը:

3.ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՈՉ ԿԱՄԱՎՈՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ **ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

73. Սոցիալական սկզբունքներ

Եվրոպական ներդրումային բանկի (այսուհետ՝ ԵՆԲ) նպատակն է իր կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերում մեծացնել սոցիալական օգուտները և նվազեցնել սոցիալական ծախսերը՝ դրանով իսկ առավելագույնի հասցնելով սոցիալական բարեկեցությունը: ԵՆԲ-ն չի ֆինանսավորի այն ծրագիրը, որի արդյունքում էական սոցիալական բեռ է առաջանում: Նշված նպատակին հասնելու համար ԵՆԲ-ն հետևում է իրավունքների վրա խարխսված մոտեցմանը, երբ ծրագրերը քննարկվում են սոցիալական տեսանկյունից: Այն արտացոլում է Եվրոպական միության (ԵՄ) Հիմնարար իրավունքների խարտիայի և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքները: ԵՄ տարածքում մարդու իրավունքները երաշխավորված են ԵՄ և ազգային օրենսդրությամբ: ԵՄ սահմաններից դուրս ԵՆԲ-ն պահանջում է, որպեսզի Աջակցողը կիրարկի ԵՆԲ սոցիալական սկզբունքները և չափանիշները ներառող ձեռնարկում տեղ գտած Սոցիալական գնահատման ուղեցույցները:

74. Մարդու իրավունքների վրա խարսխված մոտեցում

1) Ինչպես բնապահպանական չափանիշներն են միտված պաշտպանելու և բարելավելու բնական և արհեստական ստեղծված միջավայրերը, այնպես էլ սոցիալական չափանիշները միտված են պաշտպանելու ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի արդյունքում ուղղակի կամ անուղղակի կերպով ազդեցության ենթարկված մարդկանց իրավունքները և բարելավելու նրանց կենսամակարդակը: Սոցիալական չափանիշները նպատակամիտված են խթանելու արդյունքների ստացմանը՝ ի նպաստ անհատական բարեկեցության, սոցիալական ներգրավվածության և համայնքների կայունության:

2) ԵՄ տարածքում և Եվրոպայի հարևանության քաղաքականության երկրներում, ԵՆԲ-ն ընդունում է, որ ԵՄ սոցիալական պահանջները, ըստ համաձայնեցված փուլերի, ներառյալ ԵՄ-ի կողմից վավերացված մարդու իրավունքներին վերաբերող միջազգային կոնվենցիաները ճշտորեն կիրարկվում են ազգային օրենսդրությունների շրջանակներում: Այնուամենայնիվ, հակառակ ապացույցի առկայության պարագայում, ԵՆԲ-ի կողմից իրականացվում է համապատասխան սոցիալական գնահատում:

75. Ոչ կամավոր տարաբնակեցում

Ծրագրի կողմից բացասական ներգործության ենթարկված մարդկանց կենսամակարդակը պետք է բարելավվի կամ նվազագույնը վերականգնվի, և նրանք պետք է համարժեքորեն փոխհատուցվեն կրած վնասի համար: Որպես այդպիսին, այն դեպքերում, երբ ֆիզիկական կամ տնտեսական տարաբնակեցումը անխուսափելի է, ԵՆԲ-ն պահանջում է Աջակցողից մշակել տարաբնակեցման գործողության ընդունելի ծրագիր: Ծրագիրը պետք է ներառի և հետևի պատշաճ ընթացակարգին և բովանդակային ու մշակութային առումով համապատասխանի խորհրդատվության և մասնակցության պահանջներին, որոնք առնչվում են նաևհյուրընկալող համայնքներին:

Ուղեցույց 1. Ոչ կամավոր տարաբնակեցում

Գործընթացը պետք է ներառի հետևյալը՝

- Նույնականացնել հնարավոր տարաբնակեցման բնույթը և ծավալը ու Աջակցողի հետ, ըստ անհրաժեշտության, հաստատել ելակետային տվյալների և Կասեցման օրվա ժամանակը,
- Դիտարկել նախորդ տարաբնակեցման գործընթացները մինչև Բանկի ներգրավումը,
- Գնահատել բնակչության՝ տեղափոխվելու պատրաստակամությունը /մշակված խորհրդատվական գործընթացները,
- Գնահատել Աջակցողի հանձնառությունը և խնդիրներն արդարացի քննարկելու կարողությունը,
- Որոշել ցանկացած տեխնիկական աջակցության տիպը և արժեքը, որը կարող է պահանջվել,
- Գնահատել իրավասու մարմինների՝ խնդրո առարկա գործընթացներին աջակցելու կարողությունը (օր. խնդիրներ, որոնք առնչվում են հողերի ձեռքբերմանն ու պարտադիր գնմանը, վեճերի կարգավորման ընթացակարգերին, հողերի գրանցմանը և սոցիալական ապահովության ծառայությունների տրամադրմանը),
- Աջակցողի հետ ուսումնասիրել այլընտրանքային նախագծեր, որոնք կարող են նվազագույնի հասցնել տեղահանման հնարավորությունը,
- Ապահովել կենսամակարդակը վերականգնելու և նախընտրելիորեն բարելավելու նպատակով առաջարկված միջոցների իրագործելիությունը և համապատասխանությունը,
- Գնահատել համարժեք ռեսուրսների՝ ներառյալ անձնակազմի, ժամանակի և ֆինանսավորման առկայությունը տարաբնակեցումը պատշաճ կերպով իրականացնելու նպատակով,
- Միջոցներ ձեռնարկել՝ կապված աղքատացման ռիսկերի հետ (օր. այն ռիսկերը, որոնք առաջանում են հողագործության վրա հիմնված ապրուստի միջոցների հայթայթման ռազմավարություններից աշխատավարձի վրա հիմնված ռազմավարություններին անցնելիս, այլընտրանքային աշխատանքային ռազմավարությունների ապահովման դեպքում, կազմակերպությունում աշխատանքի ընդունվելու հնարավորությունների դեպքում), և
- Ապահովել ներքին և/կամ անկախ մշտադիտարկումըև գնահատումը

76. Տեղաբնիկներ և այլ խոցելի խմբեր

1) Աջակցողի կողմից մշակված և իրականացվող բոլոր ծրագրերը, գործառույթները և կիրառվող քաղաքականություններն ու գործելակերպը պետք է հատուկ ուշադրության արժանացնեն խոցելի խմբերի իրավունքներին: Նման խմբերի կազմում կարող են ընդգրկված լինել տեղաբնիկներ, էթնիկ փոքրամասնություններ, կանայք, փախստականներ, անչափահասներ և ծերեր: Խոցելի խմբերի կենսամակարդակը հատկապես զգայուն է սոցիալ-տնտեսական համատեքստում կատարվող փոփոխությունների հանդեպ և կախված է անհրաժեշտ ծառայությունների հասանելիությունից և որոշումների կայացման գործընթացին մասնակցության հնարավորությունից:
2) Երբ բնիկ ժողովուրդների՝ հողի և ռեսուրսների նկատմամբ սովորույթի ուժով ձեռք բերած իրավունքները ծրագրի կողմից ենթարկվում են ազդեցության, ԵՆԲ-ն պահանջում է, որպեսզի աջակցողը պատրաստի տեղաբնիկ ժողովուրդների զարգացման ընդունելի ծրագիր: Ծրագիրը պետք է արտացոլի «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» ՄԱԿ-ի հռչակագրի սկզբունքները՝ ներառելով ցանկացած տեսակի տեղափոխմանն առնչվող ազատ, նախնական և տեղեկացված համաձայնություն:

77. Մշակութային ժառանգություն

1) Մշակութային ժառանգության նկատմամբ ԵՆԲ-ի մոտեցումը հիմնված է ԵՄ-ի կողմից վավերացված մի շարք կոնվենցիաների վրա և արտացոլում է մշակության ժառանգության՝ որպես մարդկային զարգացման և միջմշակութային երկխոսության գործիք լինելու և հավասարակշիռ տարածական զարգացմանը հասնելուն նպաստող միավոր հանդիսանալու ընդարձակ գաղափարը:

2) ԵՆԲ-ն ընդհանուր առմամբ չի ֆինանսավորում այնպիսի ծրագրեր, որոնք սպառնում են մշակութային ժառանգության առկայությամբ պայմանավորված պաշտպանության բարձր մակարդակ ունեցող տարածքների ամբողջականությանը՝ այդ թվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչված համաշխարհային ժառանգության կոթողներ ներառող տարածքները: Շեղում կարող է թույլատրվել, եթե միայն աջակցողը կարող է ապացուցել, որ բավարարում է հետևյալ պահանջներին՝
ա. Բացակայում է որևէ հնարավոր այլընտրանք,
բ. Ծրագրից ստացվող ընդհանուր սոցիալ-տնտեսական օգուտները կարող են էականորեն գերազանցել ծախսերը,
գ.Վերականգնողական համարժեք միջոցառումները կիաստատվեն և համարժեք կերպով կֆինանսավորվեն և կիրականացվեն
դ.Շահառուներին տրվել է խորհրդատվություն, և համապատասխան իրավասու մարմինները հաստատել են:

78. Խորհրդատվություն, մասնակցություն և հանրային իրազեկում

Խորհրդատվությունը և մասնակցությունը պարտադիր են տեղական սեփականատիրության աճի միջոցով ներդրումների կայունության, և իրազեկվածություն ապահովելու միջոցով ներգրավվածների աջակցության համար: Ավելին, կառուցողական երկխոսությունը և մասնակցությունն էական նշանակություն ունեն ծրագրի ազդեցությանը ենթարկված մարդկանց իրավունքների խթանման և աջակցման համար: Նրանց թվում է վեճերի առկայության դեպքում իրավունքների պաշտպանության պատշաճ գործընթացի իրականացումն անկախ վիճարկման և դատական գործընթացների միջոցով: Որպես այդպիսին, հանրային խորհրդատվությունը ԵՆԲ-ի բնապահպանական և սոցիալան երաշխիքների ապահովման ընդհանուր պահանջն է՝ կիրառելով նաև սոցիալական այնպիսի առանձնահատուկ խնդիրների պարագայում, ինչպիսին է՝ ոչ կամավոր տարաբնակեցումը:

4. ՀՕՏ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԲ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ (2009)/ ԵՆԲ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԵՏ

79. Հայաստանի Հանրապետության օրենքների և կանոնակարգերի և ԱԶԲ-ի քաղաքականության/ԵՆԲ հայտարարագրի միջև առկա տարբերությունները ներկայացված են ստորև բերված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ Դ1: ՀՕՏ-ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համեմատությունը ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության պահանջների հետ

ՀՀ իրավական ակտերը	ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության/ ԵՆԲ հայտարարագրի պահանջները
1. Օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (օտարվող սեփականություն):	1 Հողի սեփականության վերաբերյալ իրավական կարգավիճակի բացակայությունը չպետք է խոչընդոտի փոխհատուցման և վերականգնման գործընթացի իրականացմանը: Իրավական կարգավիճակ չունեցող հողօգտագործները նույնպես պետք է ստանան փոխհատուցում: Ծրագրային տարածքում կարող են լինել երեք տեսակի տեղահանված անձիք՝ (i) ամբողջությամբ կամ մասամբ կորցրած հողի հանդեպ ֆորմալ օրինական իրավունքներ ունեցող անձիք, (ii) իրենց զբաղեցրած հողն ամբողջությամբ կամ մասամբ կորցրած անձիք, ովքեր չունեն հողի հանդեպ ֆորմալ օրինական իրավունքներ, բայց ունեն այդ հողի հանդեպ ներպետական օրենսդրությամբ ճանաչված կամ ճանաչելի հավակնություններ, (iii) իրենց զբաղեցրած հողն ամբողջությամբ կամ մասամբ կորցրած անձիք, ովքեր չունեն հողի հանդեպ ֆորմալ օրինական իրավունքներ կամ ներպետական օրենսդրությամբ ճանաչված կամ ճանաչելի հավակնություններ: Պարտադրված վերաբնակեցման պահանջները կիրառելի են տեղահանված անձանց բոլոր երեք տեսակներին:
2. Փոխհատուցում է նախատեսվում միայն իրավունքների պետական գրանցում ստացած անշարժ գույքի՝ շենքերի, շինությունների համար: Ինքնակամ կառույցների համար փոխհատուցում չի տրամադրվում:	2. Համաձայն ԱԶԲ քաղաքականության՝ գրանցում չունեցող առևտրային շինություններին տրամադրվում է փոխհատուցում՝հիմնվելով փոխարինման արժեքի վրա:
3. Բերքի կորստի դիմաց առանձին փոխհատուցում չի հաշվարկվում:	3. Բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրվում է բոլոր ԱԵԱ-ին փոխարինման արժեքով:
4. Օտարվող հողի համար տրվում է համարժեք փոխհատուցում, որը օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարն է: Շուկայական արժեքը անշարժ գույքի վաճառքի առավել հավանական գինն է, որը անշարժ գույքի	4. Հողի գնահատումը հիմնվում է փոխարինման արժեքի վրա:

ՀՀ իրավական ակտերը	ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության/ ԵՆԲ հայտարարագրի պահանջները
գնահատման օբյեկտների համար կարող է որոշվել անկախ որակավորված գնահատողի կողմից՝ անշարժ գույքի գնահատմամբ: Եթե օտարվող սեփականության համար առկա չէ համապատասխան բաց և մրցակցային շուկա, ապա սեփականության շուկայական արժեքը որոշվում է այնպիսի հաշվարկման մեթոդով, որն արդարացի կհամարի դատարանը:	
5. Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումը, օտարվող սեփականության նկարագրության արձանագրության օրինակը, սեփականության օտարման պայմանագրի նախագիծը ուղարկվում է հողի սեփականատերերին և գույքային իրավունքներ ունեցողներին: Ձեռքբերողը տեղեկություն է տրամադրում նաև փոխհատուցման գումարը դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին հանձնելու վերաբերյալ: Իսկ ձեռքբերողի կողմից օտարման ենթակա գույքի նախնական ուսումնասիրություն իրականացնելու դեպքում՝ գույքի սեփականատիրոջը, տիրապետողին, օգտագործողին լիարժեք տեղեկություններ պետք է տրամադրվեն կատարվող գործողությունների իմաստի և նշանակության, այդ գործողությունների իրավական հետևանքների մասին՝ այն սկսելուց առաջ:	5. Բովանդակալից խորհրդատվություն ծրագրի սկզբում և իրականացման ընթացքում, ներառյալ ազդեցության գնահատման/փոխհատուցման արժեքների, փոխհատուցման, իրավունքների և ԱԵԱ/ԱԵՏՏ-ներին ֆինանսական օժանդակության գումարների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում:
6. Խիստ ազդեցության ենթարկված անձանց և խոցելի խմբերի համար եկամտի կամ ապրուստի միջոցների վերականգնման միջոցառումներ, փոխհատուցման կամ տարաբնակեցման ծախսեր նախատեսված չեն:	6. ԱԶԲ-ի քաղաքականությամբ պահանջվում է եկամտի/ապրուստի միջոցների կորստի վերականգնում, տեղափոխման աջակցություն տարաբնակեցման գործընթացի ընթացքում, ինչպես նաև տեղահանված աղքատ բնակչության և այլ խոցելի խմբերի, ներառյալ կանանց, կենսամակարդակի բարելավում:

ՀՀ իրավական ակտերը	ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության/ ԵՆԲ հայտարարագրի պահանջները
7. Օտարման գործընթացի բոլոր փուլերում դիմումների, բողոքների, առարկությունների և առաջարկությունների ներկայացում ձեռքբերողին և լիազոր մարմնին, ինչպես նաև բողոքարկում դատարան: ՀՀ Սահմանադրության հոդված 18-ի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:	7. Հաստատել բողոքների լուծման մեխանիզմ՝ ազդեցության ենթակա անձանց մտահոգությունները արձանագրելու և դրանց լուծման գործընթացը դյուրին դարձնելու համար:
8. Օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին փոխհատուցումը տրվում է օտարվող սեփականության դիմաց տրվող փոխհատուցման գումարից:	8 Օտարվող բնակտարածքի, հողի և այլ ակտիվների դիմաց փոխհատուցման չափը հաշվարկվում է փոխարինման լրիվ արժեքով: Գնահատման այս մեթոդը կիրառելու ընթացքում, կառույցների և ակտիվների արժեզրկումը հաշվի չի առնվում:
9. Օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը կազմելու օրվանից հետո օտարվող սեփականության վրա (բացի տվյալ գույքի իր նշանակությանը համապատասխան օգտագործումն ապահովող բարելավումներից) նշվածից ավելի կատարված բարելավումները, ինչպես նաև օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում չի տրվում:	9. Այն ԱԵԱ, ում կարգավիճակը կարելի է օրինականացնել կամ իրավունքները վերականգնել պետք է օրինական կարգավիճակ ստանան, և նրանց կորուստները պետք է ամբողջությամբ փոխհատուցվեն:

ՀՀ իրավական ակտերը	ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության/ ԵՆԲ հայտարարագրի պահանջները
10. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում և (կամ) պաշտպանական գոտում գտնվող հաղորդակցուղիները և այլ շինություններն ու հարմարանքները ճանապարհի վերակառուցման կամ նորոգման դեպքում պետք է տեղափոխվեն կամ վերաշինվեն դրանց սեփականատիրոջ հաշվին:	10. Բոլոր այն միջոցառումները, որոնք նախատեսված են մեղմելու համար ԱԵԱ/ԱԵՏՏ-ների սեփականության և կենսամակարդակի վրա Ծրագրի թողած բացասական որևէ ազդեցություն, որը ներառում է փոխհատուցումը, օժանդակությունը, վերաբնակեցումը և վնասված, քանդված ենթակառուցվածքների, շենք, շինությունների վերականգնումը համարվում է տարաբնակեցում:

80. ՀՕՏ-ը վերաբերող ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության միջև կան որոշ սկզբունքային տարբերություններ: ՀՀ իրավական ակտերը հստակ չեն սահմանում, թե ինչպես պետք է իրականացվի ԱԵԱ-ի վերականգնումը: Մեկ այլ խնդիր է այն, որ համաձայն ԱԶԲ քաղաքականության փոխհատուցման կամ առնվազն վերականգնման իրավունք ունեն թե գրանցված իրավունքներ ունեցող և թե չունեցող անձինք, ինչպես նաև հաշվառված և չհաշվառված բնակիչները: ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության այս տարբերությունները վերացնելու նպատակով Ծրագրի համար մշակվել և հաստատվել է Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակը՝ (ՀՕՏԾ ապահովելով իրավական կարգավիճակ ունեցող բոլոր ԱԵԱ-ների ազդեցության ենթակա բոլոր անշարժ գույքի օբյեկտների համար փոխարինման արժեքին համարժեք փոխհատուցում, իսկ իրավական կարգավիճակ չունեցող ԱԵԱ-ներին, չգրանցված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների և ազդակիր անձանց համար իրավունքների վերականգնման միջոցառումների ապահովում: ՀՕՏԾ-ն նախատեսում է նաև հատուկ վերականգնման օժանդակություններ այն ԱԵԱ-ների համար, ովքեր վերաբնակեցվելու են, ինչպես նաև խոցելի և խիստ ազդեցություն կրող ԱԵԱ-ների համար:

5. ՀՕՏ-Ի՝ ՍՈՒՅՆ ԲՖԳ-Ի ՀԱՄԱՐ ՈՐԴԵԳՐՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ և ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

81. Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության (2009թ.), ինչպես նաև ԵՆԲ Բնապահպանական և Սոցիալական ստանդարտների եվ սկզբունքների հայտարարագրի հիման վրա սույն ԲՖԳ-ի համար մշակվել են ոչ կամավոր տարաբնակեցման հիմնական սկզբունքները, որոնք հետևյալն են.
    1) Հողի օտարումից և ոչ կամավոր տարաբնակեցման այլ հետևանքներից պետք է հնարավորինս խուսափել կամ դրանք հասցնել նվազագույնի՝ ուսումնասիրելով ծրագրի նախագծերի բոլոր այլընտրանքային կենսունակ տարբերակները,
    2) Եթե հնարավոր չէ խուսափել այդ հետևանքներից, ապա անհրաժեշտ է ժամանակացույց ունեցող ՀՕՏԾ, և ԱԵԱ-ին պետք է աջակցություն ցուցաբերվի, որպեսզի նրանք բարելավեն կամ առնվազն վերականգնեն ծրագրից առաջ ունեցած կենսամակարդակը,
    3) Պետք է ապահովել ԱԵԱ-ին փոխհատուցման իրավունքների վերաբերյալ խորհրդատվություն և տարաբնակեցման վերաբերյալ տեղեկությունների տրամադրում, ինչպես նաև ենթածրագրերի պլանավորմանն ու իրականացմանը նրանց մասնակցությունը,
    4) Խոցելի և խիստ ազդեցության ենթարկված անձանց պետք է ցուցաբերել հատուկ աջակցություն,

5) Օտարվող հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունք չունեցող ԱԵԱ-ները (օրինակ՝ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները, ազդեցության ենթակա գույքն ինքնակամ կամ առանց իրավաբանական ձևակերպման փաստացի օգտագործող անձինք կամ էլ այն ԱԵԱ, որոնց հաշվառման վերաբերյալ տվյալներ առկա չեն) պետք է հողի դիմաց փոխհատուցման փոխարեն ստանան օժանդակություն՝ ապրուստի միջոցները, տեղափոխման տրանսպորտային ծախսերը հոգալու համար, այսինքն՝ հողից բացի այլ կորուստների դիմաց լիարժեք փոխհատուցում և օժանդակություն, ինչպես սահմանված է ՀՕՏՇ Իրավունքների սխեմայով,

6) Այն ԱԵԱ-ները, ում կարգավիճակը կարելի է օրինականացնել կամ իրավունքները վերականգնել, պետք է օրինական կարգավիճակ ստանան, և նրանց կորուստները պետք է ամբողջությամբ փոխհատուցվեն: Պետք է տրամադրվի իրավունքը, եկամուտը, ապրուստի միջոցը օրինական կարգով վերականգնելու հնարավորություն,

7) ՀՕՏԾ-ն և դրան վերաբերող փաստաթղթերը պետք է ԱԵԱ-ին տրամադրվեն հայերեն լեզվով,

8) Փոխհատուցման վճարումը և տարաբնակեցման աջակցությունը պետք է ամբողջությամբ տրամադրվեն և վերականգնողական միջոցառումները պետք է ամբողջությամբ իրականացվեն նախքան կապալառու կողմից շինարարության համար նախատեսված հողամասերի (շինհրապարակի) մուտքի իրավունքի տրամադրումը և նախքան շինարարական աշխատանքները ֆիզիկապես սկսելը, 9)Պետք է սահմանվեն բողոքների քննարկման համապատասխան մեխանիզմներ, որոնցով կլուծվեն ԱԵԱ-ների բողոքները, եթե այդպիսիք լինեն:

Ե. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ

82. Ծրագրի շրջանակներում ՀՕՏ-ի առաջադրանքները պետք է իրականացվեն փոխհատուցում և օժանդակություն ստանալու իրավունքներին համապատասխան, որը հնարավորինս պետք է համահունչ լինի ինչպե՛ս Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այնպե՛ս էլ ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը (ԱՔՀ 2009թ.)՝ ներկայացված ՏԿՆ կողմից Ծրագրի համար մշակված ՀՕՏԾ-ում: ԲՖԳ-ի ներքո Տրանշ 3-ի համար վերջնական ՀՕՏԾ-ն պատրաստվել է 2012թ. հոկտեմբերին և վերանայվել՝ 2015թ. ապրիլին: Թարմացված ՀՕՏԾ-ն ավելի լավ է պարզաբանում իրավունակությունը և փոխհատուցում ստանալու իրավուքների դրույթները՝ միաժամանակ պահպանելով առաջնային ՀՕՏԾ-ի չափանիշները, և ընթացիկ պայմանավորվածություններին համահունչ թարմացնում է ինստիտուցիոնալ կառուցվածքն ու բողոքների լուծման մեխանիզմը: Վերանայված ՀՕՏԾ-ի Իրավունքների ամփոփ սխեմայի նկարագիրը ներկայացված է ստորև բերված Աղյուսակ Ե1-ում:

Աղյուսակ 2: Իրավունքների սխեմա

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
1. Հողի կորուստ	ԱԵԱ-ներ, որոնք կորցնում են իրենց սեփականությունը հանդիսացող հողամասը կամ դրա մի մասը՝ անկախ ազդեցության չափից	Սեփականատեր	Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով, գնահատված շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15%՝ կամ փոխանակում ԱԵԱ համար ընդունելի մեկ այլ համարժեք հողով:
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ	Օրենսդրությամբ սահմանված դեպքերում ՝ ԱԵԱ-ները կարող են ձեռքբերել սեփականության իրավունք կամ իրականացնել առկա իրավունքների պետական գրանցումը և փոխատուցվել որպես սեփականատեր:
		Վարձակալ (համայնքից, պետությունից)	Օրենսդրությամբ սահմանված դեպքերում վարձակալը կարող է ձեռքբերել սեփականության իրավունք և փոխհատուցվել որպես սեփականատեր կամ նրան, հողի սեփականատիրոջ (վարձատուի) համաձայնությամբ, կարող է տրվել նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա վարձակալված հողի «շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%»-ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ի չափով, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ի չափով, 3) մինչև 25 տարի՝ հողի

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
			արժեքի 20%-ի չափով, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%-ի չափով:
		Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողի վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի կանխիկ փոխհատուցում:
		Այլ գույքային իրավունք (սերվիտուտի, կառուցապատման, գրավի, հիփոթեքի, օգտագործման) ունեցողներ, բացառությամբ վարձակալների	Հողամասի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին, բացառությամբ վարձակալների, փոխհատուցումը տրվում է ազդակիր հողամասի դիմաց տրվող փոխհատուցման գումարից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
		Իրավական գրանցման կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ	Այս ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում միայն հողի վրա կատարված բարելավումների դիմաց, սույն ՀՕՏԾ-ով սահմանված կարգով:
2. Բնակելի շենքեր, շինություններ ի կորուստ		Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ կառույցի նկատմամբ իրավունքների առկայությունից (ներառյալ՝ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա և ոչ ենթակա ԱԵԱ)	Բնակելի շենքի, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցում փոխարինման արժեքի գումարած 15%-ի չափով, առանց ամորտիզացիոն մասհանումների և գործարքային ծախսերի նվազեցումների: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար այն դեպքում, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:
		Վերաբնակեցվող վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
3. Ոչ բնակելի շենքերի, շինությունների կորուստ	ԱԵԱ-երին սեփականության իրավունքով պատկանող և պետական գրանցում ստացած շենք, շինություններ	Սեփականատեր	Շենք, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման տրամադրում փոխարինման արժեք գումարած 15%-ի չափով: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասնահանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը, շահագործումը և օտարումը օրենսդրորեն հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:
	Ինքնակամ կառույցներ (բացառությամբ բնակելի կամ փաստացի բնակեցված շինությունների)	Ինքնակամ կառույցն իրականացրած ԱԵԱ	Փոխհատուցումը կիրականացվի շենք, շինության սեփականատիրոջը տրամադրվող փոխհատուցման սկզբունքով՝ միայն ինքնակամ կառույցի օրինականացման և դրա նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման դեպքում:
		Վերաբնակեցվող վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:
4. Հանրային գույքի կորուստ	Համայնքային կամ պետական գույք	Համայնք, պետություն	Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի, անշարժ գույքի փոխհատուցում կամ պետական, համայնքային ազդակիր կառույցների կամ այլ գույքի վերակառուցում և նրանց գործառույթների վերականգնում՝ համայնքի, պետության իրավասու մարմնի համաձայնությամբ:
5. Մշակաբույսի կորուստ	Ազդեցության ենթակա մշակաբույսեր	Բարելավումներ կատարած բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից	Մշակաբույսի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:
6. Ծառերի և ստացվող բերքի կորուստ	Ազդեցության ենթակա ծառեր և ստացվող բերք	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից	Դրամական փոխհատուցում՝ հաշվարկված ծառի արժեքի շուկայական գներով՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
7. Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում	Ձեռնարկատիրական գործունեություն ազդակիր հողում	Բոլոր ԱԵԱ-ները՝ անկախ հարկային հայտարարագրի ներկայացումից	1. Ձեռնարկատիրական գործունեության (հարկային հայտարարագրերով)՝ ա) մշտական ազդեցության դեպքում՝ միանվագ փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով, բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ զուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Պետական գրանցման կամ լիցենզիայի վճարները նույնպես կփոխհատուցվեն, եթե այդպիսիք առկա են: 2) Ձեռնարկատիրական գործունեության (հայտարարագրի բացակայության դեպքում)՝ ա) մշտական ազդեցության դեպքում՝ վերականգնման օժանդակություն նվազագույն ամսական աշխատավարձի չափով՝ 1 տարվա համար: բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ վերականգնման օժանդակության տրամադրում, հիմնված նվազագույն աշխատավարձի չափի վրա՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամսիների հաշվարկով մինչև առավելագույնը 1 տարի:
8. Աշխատանքի կորուստ	Աշխատանքի մշտական կորուստ կամ հարկադիր պարապուրդ (ոչ աշխատողի մեղքով)	Ազդակիր կազմակերպությունում կամ ԱՁ-ում աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք	Փոխհատուցման տրամադրում՝ ա) մշտական ազդեցության դեպքում՝ վեց ամսվա միջին աշխատավարձի չափով, բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ մինչև վեց ամիս միջին աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամսիների հաշվարկով:
9. Օժանդակություն խիստ ազդեցությունների դեպքում	Գյուղատնտեսական նշանակության հողի 10 և ավելի տոկոսի կորուստ և վերաբնակեցում	Խիստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	ա) գյուղատնտեսական նշանակության հողի 10 և ավելի տոկոսի կորստի դեպքում փոխհատուցում՝ ազդեցության ենթակա հատվածում առկա 1 տարվա բերքի չափով: բ) վերականգնման օժանդակություն՝ վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներին՝ վեց ամսվա նվազագույն աշխատավարձի չափով:

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
10. Վերաբնակեցման օժանդակություն	Օժանդակություն տեղափոխման նպատակով տրանսպորտային ծախսերը և ապրուստի միջոցները հոգալու համար	Վերաբնակեցվող բոլոր ԱԵՏՏ-ներ, ներառյալ վարձակալները	Դրամական օժանդակության տրամադրում՝ տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտային ծախսերը և մեկ ամսվա կենսապահովման ծախսերը հոգալու համար:
		Ազդեցության ենթակա հողի և շինության վրա շարժական գույք ունեցող բոլոր ԱԵԱ-ները, որոնք ենթակա են տարաբնակեցման՝ անկախ ազդակիր գույքի նկատմամբ առկա իրավունքներից	Դրամական օժանդակության տրամադրում ՝ տրանսպորտային ծախսերը հոգալու համար:
11. Օժանդակություն խոցելի անձանց/ԱԵՏՏ -ներին		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող, կանանց, տարեց կամ հաշմանդամ անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	Դրամական օժանդակության տրամադրում՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով: Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնայնություն տալ:
12. Ժամանակավոր ազդեցություն		Ժամանակավոր ազդեցություն կրող բոլոր անձիք և տնային տնտեսութունները	Վնասների փոխհատուցում կտրամադրվի ժամանակավոր ազդեցության ենթակա դեպքերում՝ փոխարինման արժեքով, սույն ՀՕՏԾ-ով սահմանված փոխհատուցման իրավունքներին համապատասխան:
13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն		Փոխհատուցման իրավունքներ ունեցող ԱԵԱ/ԱԵՏՏ-ներ	Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿՆ կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը կամ օժանդակության տրամադրումը, ըստ ՀՕՏԾ դրույթների:
14. Բարելավումների փոխհատուցո	Այլ բարելավումներ, որոնք ներառված չեն իրավունքների սույն	Բարելավում կատարած ԱԵԱ-ներ	Փոխհատուցման տրամադրում՝ փոխարինման

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
ում	աղյուսակում, սակայն առկա են ազդակիր հողամասի վրա (բացառությամբ՝ շարժական գույքի		արժեքի չափով:

2. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Սույն ծրագրի շրջանակներում փոխհատուցում ստանալու իրավունք և իրավունքների վերականգնման/ռեաբիլիտացիայի վերաբերյալ դրույթներից օգտվելու իրավունք ունեցող ԱԵԱ-ներն են.

1) Հողամասի սեփականատերերը, այլ գույքային իրավունքներ ունեցողները, ներառյալ հողամասի վարձակալները, հողամասի օգտագործման իրավունքը կամ օգտագործման հնարավորությունը կորցնող կամ հողամասը փաստացի տիրապետող և օգտագործող բոլոր ԱԵԱ-ները, անկախ հողի նկատմամբ գրանցված իրավունքներից,

2) Շենք, շինությունների սեփականատերերը, այլ գույքային իրավունքներ ունեցողները, ներառյալ վարձակալները, շենքը և շինությունը կառուցած, փաստացի տիրապետողները և օգտագործողները, ինքնակամ կառույց իրականացրած անձինք,

3) Ծառերի, բերքի/մշակաբույսերի կամ հողին ամրակցված այլ գույքի և բարելավումների սեփականատերերը, գույքային իրավունքներ ունեցողները, ներառյալ վարձակալները և փաստացի տիրապետողները և օգտագործողները,

4) Ձեռնարկատիրական գործունեության, եկամտի և աշխատավարձի կորուստ կրող բոլոր ԱԵԱ-ները:

2. Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրվանից հետո կատարված բարելավումների համար փոխհատուցում չի տրվում, բացառությամբ Օրենքով և ՀՕՏՇ-ով սահմանված դեպքերի:

Օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում տրվում է միայն սույն ՀՕՏՇ-ով սահմանված դեպքերում, կապված իրավական գրանցման կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ի իրավունքների ձևակերպման և պետական գրանցման (օրինականացման) հետ: Մյուս բոլոր դեպքերում նշված իրավունքները դադարեցվում են՝ առանց փոխհատուցման իրավունքի:

Սեփականության օտարման դիմաց տրվող փոխհատուցումից բացի՝ ՀՕՏՇ-ով սահմանված Ծրագրի այլ ազդեցությունների համար փոխհատուցման կամ լրացուցիչ օժանդակություն ստանալու իրավունքները ևս սահմանափակվում են վերջնաժամկետով, որը յուրաքանչյուր ենթածրագրի շրջանակներում օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրն է, որտեղ արձանագրվում են նաև իրականացված մարդահամարի և մանրամասն չափագրման հետազոտության տվյալները (այսուհետ՝ Կասեցման օր):

Այն ԱԵԱ-ները, ովքեր բնակություն են հաստատում կամ նոր բարելավումներ են կատարում ազդեցության տարածքներում Կասեցման օրվանից հետո, փոխհատուցման կամ լրացուցիչ օժանդակության համար իրավունքներ չեն ստանում: Այնուամենայնիվ, նրանց պետք է նախօրոք ծանուցում ուղարկել՝ խնդրելով նախքան ծրագրի իրականացումը ազատել տարածքները և քանդել կառույցները: Քանդված կառույցների շինանյութը չի բռնագրավվում, նրանք որևէ տուգանք չեն վճարում, և նրանց նկատմամբ պատասխանատվության որևէ միջոց չի կիրառվում:

3. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ և ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հողի, շենք, շինությունների և եկամտի կորուստ կրող ԱԵԱ-ների փոխհատուցման իրավունքները և վերականգնման լրահատկացումները պետք է ներառեն հողի, շենք- շինությունների, բերքի/մշակաբույսերի, ծառերի և բարելավումների մշտական և ժամանակավոր կորստի վերաբերյալ դրույթներ և վերաբնակեցման լրահատկացումներ, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության դադարեցման համար փոխհատուցում՝ հարկերի մասին հայտարարագրերի հիման վրա կամ միանվագ դրամական օժանդակություն վճարելու միջոցով: Այս իրավունքները հետևյալն են.

3.1 Հողի կորուստ

1) Հողի նկատմամբ ազդեցությունը կփոխհատուցվի՝ 1) փոխարինման արժեքով, որը գնահատվում է շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15%, կամ 2) ԱԵԱ կողմից ընդունելի՝ ազդակիր հողամասին համարժեք (եկամտաբերությամբ, տեղադրությամբ) հողով փոխարինելու միջոցով՝ համարժեք հողամասի առկայության և ՏԿՆ համաձայնության դեպքում:

Հողի անուղղակի ազդեցություն կրող հատվածները, որոնք Ծրագրի ազդեցությունից հետո դարձել են դժվարամատչելի կամ մշակման համար անպիտան, ևս կներառվեն հողի ազդեցության ենթակա հատվածի մեջ, եթե դրա օտարման պահանջն ԱԵԱ-ի կողմից իրականացվել և ձեռքբերողի կողմից ընդունվել է օրենքով սահմանված կարգով: Եթե ազդեցության է ենթարկվել գյուղատնտեսական նշանակության հողի ավելի քան 10%-ը, ԱԵԱ-ները (սեփականատերերը, վարձակալները, հողօգտագործողները) պետք է *խիստ ազդեցության* համար լրացուցիչ օժանդակություն ստանան, որը համարժեք է կորցրած հողից ստացված տարեկան համախառն եկամտի շուկայական արժեքին:

2) Այն ԱԵԱ-ները, որոնց իրավունքները ազդակիր հողամասի նկատմամբ ենթակա են ձևակերպման և պետական գրանցման (այսուհետ՝ օրինականացման), կարող են ձևակերպել իրենց իրավունքները, որից հետո նրանց կորուստներն ամբողջությամբ պետք է փոխհատուցվեն այնպես, ինչպես սեփականատերերինը: Այն ԱԵԱ-ները, որոնց իրավունքները չեն կարող օրինականացվել կամ այն ԱԵԱ-ները, որոնք ազդակիր հողն օգտագործում են առանց դրա նկատմամբ գրանցված իրավունքների (չձևակերպված օգտագործող) կստանան փոխհատուցում միայն հողի վրա առկա բարելավումների համար:

3) Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալները, օրենսդությամբ սահանված դեպքերում և կարգով, կարող են ձեռքբերել հողամասի նկատմամբ սեփականության իրավունք և փոխհատուցվել որպես լիարժեք սեփականատեր կամ նրանց կարող է տրվել նոր վարձակալություն՝ համարժեք հողամասի առկայության և հողամասի սեփականատիրոջ (վարձատուի) համաձայնության դեպքում: Եթե դա հնարավոր չէ, ապա վարձակալները կստանան շուկայական կամ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) գումարած 15%-ին համարժեք փոխհատուցում՝ կախված վարձակալության մնացած տարիների թվից՝ հետևյալ կարգով. ա) մինչև 1 տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 5%-ի չափով, բ) մինչև 15 տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 14%-ի չափով, գ) մինչև 25 տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 20%-ի չափով, դ) 25 և ավելի տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 25%-ի չափով:

4) Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողի վարձակալներին կտրամադրվի դրամական փոխհատուցում արդեն վճարված վարձավճարի չօգտագործված մասի և վարձատուի համաձայնությամբ կատարված անբաժանելի բարելավումների համար:

3.2 Բնակելի շենք, շինությունների կորուստ.

1) Բնակելի շենք, շինությունների համար փոխհատուցում պետք է տրամադրվի փոխարինման արժեքի գումարած 15%-ի չափով՝ անկախ շենք, շինության նկատմամբ ԱԵԱ-երի գրանցված իրավունքներից կամ գույքի իրավական կարգավիճակից: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց մաշվածության (ամորտիզացիոն) մասնահանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների՝ անկախ ազդեցության ենթարկա գույքի գրանցման կամ հաշվառման հանգամանքից: Մասնակի ազդեցություն կրելու դեպքում կամ եթե սեփականատերը չի ցանկանում օտարել շինությունն ամբողջությամբ, ազդեցությունները կընդգրկեն միայն շինության ազդեցության ենթակա մասը և այդ մասի՝ շահագործման համար պիտանիության նախկին վիճակին բերելու լիարժեք վերականգնումը, եթե դա տեխնիկապես հնարավոր է:

2) Վերաբնակեցվող վարձակալներին կտրվի դրամական փոխհատուցում արդեն վճարված վարձավճարի չօգտագործված մասի համար: Վերաբնակեցվող վարձակալներին կտրվի նաև վերաբնակեցման և խիստ ազդեցություն կրելու օժանդակություն՝ ՀՕՏԾ-ով սահմանված կարգով:

3.3 Ոչ բնակելի շենք, շինությունների կորուստ.

1) Ոչ բնակելի շենք, շինությունների (բացառությամբ ինքնակամ կառույցների) համար փոխհատուցում պետք է տրամադրվի փոխարինման արժեքի գումարած 15%-ի չափով

2) Ինքնակամ կառույցները (բացառությամբ փաստացի բնակեցված շենք, շինությունների) ենթակա կլինեն լիարժեք փոխհատուցման միայն դրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օրինականացնելուց հետո: Այդ դեպքում օրինականացրած ինքնակամ կառույցի սեփականատիրոջը կտրամադրվի փոխհատուցում՝ փոխարինման արժեքով գումարած 15%: Եթե ինքնակամ կառույցը չի օրինականացվում միչև ազդակիր հողամասի օտարումը՝ օտարման պայմանագրի կնքումը կամ դատական ակտի կայացումը, ապա նշված կառույցիհամար փոխհատուցում չի տրամադրվում:

Նշվածը չի զրկում ԱԵԱ-ներին սույն ՀՕՏԾ դրույթների համաձայն ցանկացած այլ կորստի կամ ազդեցության դիմաց փոխհատուցում կամ օժանդակություն ստանալու իրավունքից:

Ինքնակամ կառույցների օրինականացնելու համար առաջացող բոլոր ծախսերը, ներառյալ բոլոր պետական և տեղական տուրքերն ու վճարները կրում է ԱԵԱ-ն:

3) Վերաբնակեցվող վարձակալներին կտրվի դրամական փոխհատուցում արդեն վճարված վարձավճարի չօգտագործված մասի համար:

3.4 Հանրային գույքի կորուստ.

Հանրային գույքի՝ համայնքային և պետական կառույցներն ու հանրային ծառայություններն ամբողջությամբ պետք է փոխարինվեն կամ վերականգնվեն այնպես, որ կարողանան իրականացնել ծրագրից առաջ ունեցած գործառույթները:

3.5 Բերքի/մշակաբույսի կորուստ.

Բերքի/մշակաբույսի կորստի համար կտրամադրվի մեկ տարվա բերքի, մշակաբույսի շուկայական համախառն արժեքին համապատասխան փոխհատուցում այն ԱԵԱ-ներին (սեփականատեր, վարձակալ, փաստացի հողօգտագործող), ում փաստացի գործողությունների՝ հողի օգտագործման կամ մշակման արդյունքում ստացվել է փոխհատուցվող բերքը/մշակաբույսը: Ծառերից ստացված բերքը ներառված է

ծառերի և դրանցից ստացվող բերքի փոխհատուցումներում և սույն բաժնի դրույթները չեն կիրառվում նշված ազդեցության նկատմամբ:

3.6 Ծառերի և ստացվող բերքի կորուստ.

Ծառերի և ստացվող բերքի համար հողի սեփականատերերին, վարձակալներին և փաստացի օգտագործողներին պետք է տրվի փոխհատուցում շուկայական արժեքին համապատասխան՝ հիմնվելով ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության ցուցանիշների վրա, հետևյալ կարգով.

1) Համայնքային կամ պետական հողերի սեփականատերերը կստանան ծառերի համար ամբողջական փոխհատուցումը, եթե ծառի համար փոխհատուցման իրավունքը չի փոխանցվում վարձակալին, համաձայն սույն կետի բ) ենթակետի, կամ ծառատնկումը չի իրականացվել հողամասը փաստացի օգտագործողի կողմից, ինչպես սահմանված է սույն կետի գ) ենթակետով,

2) Եթե հողամասը ծանրաբեռնված է վարձակալությամբ, ապա ծառերի համար ամբողջական փոխհատուցումը կտվի վարձակալին, եթե ծառերը տնկվել են վարձակալի կողմից՝ հողամասի սեփականատիրոջ համաձայնությամբ,

3) Եթե համայնքային կամ պետական հողերը փաստացի, առանց իրավաբանական ձևակերպման, օգտագործվում են սեփականություն կամ գույքային իրավունք չունեցող անձի կողմից, ապա ծառերի համար ամբողջական փոխհատուցումը կտրամադրվի հողամասը փաստացի օգտագործողին՝ հողամասի սեփականատիրոջ համաձայնությամբ,

4) Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողերի փաստացի օգտագործողները կփոխհատուցվեն միայն ծառերից ստացվող մեկ տարվա բերքի արժեքի չափով:

3.7 Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում.

1) Ձեռնարկատիրական գործունեության մշտական և ժամանակավոր դադարեցման դեպքում տրամադրվում է փոխհատուցում՝ հարկերի մասին հայտարարագրերի հիման վրա հետևյալ կարգով՝

ա.Ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցման դեպքում կտրամադրվի փոխհատուցում մեկ տարվա եկամտի չափով՝ հարկերի մասին հայտարարագրի հիման վրա:
բ.Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման դեպքում՝ կտրամադրվի փոխհատուցում ամսական եկամտի չափով, հարկերի մասին հայտարարագրի հիման վրա՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով:
գ. Պետական գրանցման և լիցենզիայի վճարները նույնպես պետք է փոխհատուցվեն, եթե առկա են:

բ) Հարկերի մասին հայտարարագրի բացակայության դեպքում, ձեռնարկատիրական գործունեության մշտական և ժամանակավոր դադարեցման համար փոխհատուցումը կիրականացվի վերոնշյալ սկզբունքով՝ ամսական նվազագույն աշխատավարձի չափով: Պետական գրանցման և լիցենզիայի վճարները նույնպես պետք է փոխհատուցվեն, եթե առկա են:

3.8. Աշխատանքի կորուստ.

ա) Ազդեցության ենթակա կազմակերպությունում կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ աշխատող ԱԵԱ-ների աշխատանքի մշտական կորստի դեպքում տրամադրվում է դրամական փոխհատուցում՝ 6 ամսվա միջին ամսական աշխատավարձի չափով, եթե աշխատանքային պայմանագիրը դադարում է ազդակիր հողում ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցման հետևանքով: Վերոհիշյալ

փոխհատուցումը կտրամադրվի բացառապես այն աշխատողներին, որոնք Կասեցման օրվանից առնվազն երկու ամիս առաջ և մինչև ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցումը անընդմեջ աշխատում են տվյալ կազմակերպությունում կամ ԱՁ-ում:

բ) Աշխատանքի ժամանակավոր կորստի դեպքում (հարկադիր պարապուրդ) դրամական փոխհատուցում կտրվի նույն հիմունքներով՝ աշխատանքի հարկադրված դադարեցման (պարապուրդի) ամիսների համար՝ առավելագույնը 6 ամիս:

3.8 Օժանդակություն խիստ ազդեցության դեպքում.

1) Ծրագրի խիստ ազդեցության համար դրամական օժանդակություն տրամադրվում է ազդեցության ենթակա այն ԱԵՏՏ-ներին (ներառյալ՝ վարձակալներին և հողի փաստացի օգտագործողներ հանդիսացող ԱԵՏՏ-ներին), որոնց պատկանող կամ որոնց կողմից մշակվող գյուղատնտեսական նշանակության հողի ավելի քան 10%-ն ազդակիր է և տվյալ հողամասի օգտագործման արդյունքում տվյալ ԱԵՏՏ-ները ստանում են օգուտներ՝ պտուղների, բերքի, մշակաբույսի տեսքով:

Վերոհիշյալ օժանդակության հաշվարկման համար հիմք է հանդիսանում հողերի փաստացի գործառնական նշանակությունը, անկախ անշարժ գույքի կադաստրային տվյալներում, իրավունքի գրանցման վկայականներում և իրավունքը հաստատող այլ փաստաթղթերում հողամասի համար սահմանված նշանակությունից: Այն դեպքում, երբ 10 և ավելի տոկոսով ազդեցության ենթակա հողամասը թեև չի հանդիսանում գյուղատնտեսական նշանակության հողամաս, սակայն փաստացի օգտագործվում (մշակվում) է որպես գյուղատնտեսական, և որի վրա փաստացի առկա է բերք/մշակաբույս, ապա վերջինս ենթակա է փոխհատուցման՝ վերոհիշյալ սկզբունքների համաձայն՝ առանց օրինականացման պահանջի ապահովման:
2) Վերաբնակեցվող ԱԵՏՏ-ները (ներառյալ՝ վերաբնակեցվող վարձակալները) կստանան վերականգնման օժանդակություն խիստ ազդեցության համար ամսական նվազագույն աշխատավարձի 6-ապատիկի չափով:

3.10 Վերաբնակեցման օժանդակություն.

1) **Տեղափոխման և ապրուստի միջոցը հոգալու ծախսեր.** Այն ԱԵՏՏ-ները, որոնք ենթակա են վերաբնակեցման ազդակիր բնակության վայրից (ներառյալ՝ վարձակալները), պետք է ստանան մեկ ամսվա ապրուստի ծախսերի համար վերաբնակեցման օժանդակություն՝ ամսական նվազագույն աշխատավարձին համարժեք չափով, ինչպես նաև դրամական օժանդակություն՝ տեղափոխման հետ կապված տրանսպորտային ծախսերը հոգալու համար: Այն ԱԵՏՏ-ները, որոնք առնվազն երեք ամիս Կասեցման օրվանից առաջ փաստացի չեն բնակվել ազդակիր տանը կամ բնակելի շինությունում, ենթակա չեն վերաբնակեցման օժանդակության տրամադրման:

2) **Շարժական գույքի տեղափոխման ծախսեր**. Ազդակիր հողի և շինության վրա շարժական գույք ունեցող բոլոր ԱԵՏՏ-ներին, անկախ ազդակիր հողի կամ շինության նկատմամբ առկա իրավունքներից, կտրամադրվի դրամական օժանդակություն՝ տեղափոխման ենթակա շարժական գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսերը հոգալու համար:

3.11 Օժանդակություն խոցելի անձանց/ԱԵՏՏ-ներին.

Խոցելի անձանց (աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող ԱԵՏՏ, կանանց կամ տարեց մարդկանց կամ հաշմանդամների կողմից ղեկավարվող տնտեսություններ) կտրվի վերականգնման օժանդակություն ամսական նվազագույն աշխատավարձի 6-ապատիկի չափով, ինչպես նաև Ծրագրի շրջանակներում նախատեսվող աշխատատեղերում աշխատելու համար գերակայություն:

Սոցիալապես խոցելի անձինք/ԱԵՏՏ-ներն են՝

1) այն տնային տնտեսությունները, որոնցում ընդգրկված ընտանիք(ներ)ը հաշվառված է(են) ընտանիքի անապահովության գնահատման համակարգում և ստանում են ընտանեկան նպաստ.
2) միայնակ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ տարիքային կենսաթոշակառու հանդիսացող կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա:
3) տարիքային կենսաթոշակառու հանդիսացող անձանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ կենսաթոշակառու կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա:
4) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ կենսաթոշակառու կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա:

3.12 Ժամանակավոր ազդեցություններ.

Ժամանակավոր ազդեցություն կրող անձանց և տնային տնտեսություններին կտրամադրվի վնասների փոխհատուցում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ սույն ՀՕՏՇ Իրավունքների սխեմայով սահմանված փոխհատուցման իրավունքներին համապատասխան: Ժամանակավոր ազդեցություն կրող անձինք և տնային տնտեսություններին տրամադրվող փոխհատուցումը չի ներառի ՀՕՏՇ-ով սահմանված վերականգնման օժանդակությունները:

3.13 ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն.

Ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը կամ օժանդակության տրամադրումը, համաձայն սույն ՀՕՏՇ պահանջների: Չնախատեսված ազդեցությունների դեպքում կկիրառվեն բոլոր ընթացակարգերը, որոնք սահմանված են սույն ՀՕՏՇ-ում (սոցիալական ազդեցությունների գնահատում և այլ անհրաժեշտ հետազոտություններ և իրավական ընթացակարգեր, ներառյալ թարմացված ՀՕՏԾ-ի կամ ՀՕՏԾ Լրացման պատրաստումը, եթե անհրաժեշտ է):

3.14 Բարելավումների փոխհատուցում.

Այն բարելավումները, որոնք ներառված չեն Իրավունքների սխեմայում, սակայն առկա են ազդակիր հողամասի վրա (բացառությամբ՝ շարժական գույքի), կփոխհատուցվեն փոխարինման արժեքի չափով:

4. ՄԻԱՎՈՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

83. Անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման Հայաստանի ազգային ստանդարտով, ԱՋԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության (2009) և սույն ՀՕՏԾ-ի պահանջների համաձայն, որից ելնելով տարբեր ազդեցությունների՝ միավորի դիմաց փոխհատուցման արժեքի գնահատման ԱՋԲ և ՀՀ կառավարության համար փոխհամաձայնեցված մեթոդաբանությունը հետևյալն է՝

1) **Հողամասը** պետք է գնահատվի փոխարինման արժեքով, այսինքն՝ շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է) գումարած 15 տոկոս:
2) **Շենքերը և շինությունները** պետք է գնահատվեն փոխարինման արժեքով՝ շինության տեսակի, շինանյութերի արժեքի, շինարարության տեսակի, աշխատուժի, տրանսպորտի և այլ շինարարական ծախսերի հիման վրա: Մաշվածության (ամորտիզացիոն) մասհանումներ կամ գործարքի դիմաց ծախսերը չեն կիրառվում և չեն նվազեցվում:
3) **Մեկ տարվա մշակաբույսից ստացվող բերքի** փոխհատուցման արժեքը պետք է գնահատվի գյուղատնտեսական ապրանքների նախորդ 3 տարիների միջին գների և միջին բերքատվության ցուցանիշների վրա:

   Այն դեպքում, երբ ԱԵԱ-ին վճարման ենթակա է ավելի քան մեկ տարվա փոխհատուցում, առաջին տարուց հետո բերքի դիմաց փոխհատուցում պետք է տրամադրվի շուկայական համախառն արժեքին համապատասխան:
4) **Ծառերը (թփերը)** պետք է գնահատվեն տարբեր մեթոդաբանությամբ՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք կորցրած ծառը (թուփը) ոչ պտղատու ծառ (թուփ) է, թե՝ պտղատու:

   ա) Ոչ պտղատու փայտանյութ տվող և դեկորատիվ ծառերը (թփերը), պետք է գնահատվեն ըստ հետևյալ խմբերի ա) մանր ծառեր, բ) միջին ծառեր և գ) խոշոր ծառեր, հիմք ընդունելով ծառատեսակը (թփատեսակը) և գնահատման հետևյալ չափման միավորները՝ փայտանյութի (վառելափայտի կամ շինափայտի) ծավալը, ծառի (թփի) բարձրությունը, ինչպես նաև տվյալ ծառատեսակի (թփատեսակի) համար կիրառելի այլ չափման միավորներ, որոնք կսահմանվեն ՀՕՏԾ-ով:

   բ) Պտղատու ծառերը (թփերը, խաղողը) պետք է գնահատվեն այգետնկման տարիքի հիման վրա: Պտղատու ծառերի (թփերի) դիմաց փոխհատուցում պետք է տրամադրվի ներդրված արժեքի հիման վրա, և այնքան, որքան կազմում է տվյալ ծառատեսակի (թփատեսակի) մեկ տարվա բերքի փոխհատուցման շուկայական արժեքը՝ բազմապատկած տվյալ ծառի (թփի) այգետնկման օրվանից հաշված տարիների քանակով, սակայն ոչ ավելի քան այն տարիների քանակն է, որն անհրաժեշտ է տվյալ ծառատեսակին (թփատեսակին) արդյունաբերական բերքատվության տարիքի հասնելու համար

84. Միավորի դիմաց փոխհատուցման դրույքաչափերը պետք է գնահատվեն որակավորված անկախ գնահատողի կողմից՝ ԱՋԲ-ի կողմից ընդունելի հստակ և թափանցիկ մեթոդաբանության հիման վրա: Որակավորված անկախ գնահատողը գույքի բոլոր տեսակների համար կազմում է գնահատման և հաշվարկման հաշվետվություններ, որտեղ անկախ գնահատվող գույքի տեսակից, պետք է նշվեն բոլոր ելակետային տվյալների ստացման աղբյուրները և գնահատման ժամանակահատվածը: Փոխարինման արժեքների գնահատման մեթոդաբանությունը ներկայացված է **Հավելված 4-ում:**

5. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

85. Սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված որոշակի ընթացակարգերի համաձայն: Մասնավորապես, հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը կարող է օտարվել՝ *ա) պայմանագրի համաձայն, բ) փոխհատուցման ենթակա գումարը դեպոզիտ հանձնելով և գ) դատական կարգով:*
86. Սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն: Այս դեպքում կողմերի համաձայնությամբ են որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը, որոնք սակայն չպետք է հակասեն սույն ՀՕՏԾ դրույթներին կամ ԱԵԱ-ների նկատմամբ լինեն պակաս բարենպաստ, քան Ծրագրի ներքո նրանց տրված իրավունքները: Օտարման պայմանագրի կողմ պետք է հանդիսանան նաև օտարվող սեփականության նկատմամբ ձեռքբերողին հայտնի գույքային իրավունքներ ունեցողները:
87. Ծրագրի ներքո առավելությունը պետք է տրվի օտարման նշված եղանակին և ՏԿՆ պետք է իր լավագույն ջանքերը գործադրի հաջող բանակցություններ իրականացնելու միջոցով սեփականությունը օտարելու համար: Բանակցությունների ձախողման և ԱԵԱ-ների անհամաձայնություն դեպքում, եթե լրացել է պայմանագրի կնքման համար նախատեսված 3-ամսյա ժամկետը, ձեռքբերողը, Օրենքով սահմանված ժամկետներում, սեփականության օտարման դիմաց տրամադրվող փոխհատուցման գումարը հանձնում է դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին: ԱԵԱ-ներն իրավունք ունեն ստանալ փոխհատուցումը 7-օրյա ժամկետում: Տվյալ դեպքում, (ինչպես նաև մինչև դատարանի կողմից վճռի կայացումը փոխհատուցման գումարը դեպոզիտից ստանալու դեպքում) սեփականության օտարման պայմանագիրը համարվում է կնքված: Եթե ԱԵԱ-ները օրենքով սահմանված ժամկետում դեպոզիտից չեն ստանում փոխհատուցման գումարը, ապա ձեռքբերողը մեկամսյա ժամկետում դիմում է դատարան՝ սեփականության հարկադիր օտարման պահանջով:
88. Հողի ձեռքբերումը սեփականության օտարման վարույթով կապված է երկար ընթացակարգերի հետ և հաճախ կարող է դիմադրության հանդիպել: Ծրագրի շրջանակներում նման մոտեցմամբ պետք է գործել միայն ծայրահեղ դեպքերում, երբ ԱԵԱ և ձեռքբերողի և ՏԿՆ-ի միջև բանակցությունները ձախողվում են, և ենթածրագրի իրագործելու համար չկա մատչելի այլընտրանքային հող: Ձեռքբերողը չպետք է զբաղեցնի օտարվող հողամասերը մինչև՝ ա) օտարվող սեփականության նկատմամբ օրենքով սահմանաված կարգով չգրանցվի ձեռքբերողի սեփականության իրավունքը կամ բ) օրենքով սահմանված կարգով համապատասխան դատական ակտը չմտնի օրինական ուժի մեջ և օտարվող սեփականությունը չհանձնվի ձեռքբերողին:

5.1 Օտարման հետ կապված ծախսերի հատուցումը

89. Սեփականությունն օտարելու գործընթացում առաջացած ծախսերը կատարվում են հողը և այլ անշարժ գույքը ձեռքբերողի հաշվին: Օտարման գործընթացի ընթացքում առաջացող ծախսերը սահմանվում են պատրաստվող ՀՕՏԾ-ում: Սեփականության օտարման հետ կապված օտարվող սեփականության սեփականատիրոջ համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ կապակցությամբ առաջացող ֆինանսական պարտավորությունները (հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ) հատուցում է ազդակիր հողի և այլ անշարժ գույքի ձեռքբերողը:

6. ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

90. Օտարվող սեփականության իրավատեր հանդիսացող բոլոր ԱԵԱ-ները (անձ, ով ունի օտարվող սեփականության նկատմամբ իր իրավունքը հավաստող փաստաթղթեր, սակայն դեռևս չի գրանցել իր սեփականության իրավունքը) պետք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցեն իրենց սեփականության և այլ գույքային իրավունքները:
91. Այն ԱԵԱ-ները, որոնք օտարվող սեփականության նկատմամբ ունեն օրենքով ճանաչվող իրավունքներ, սակայն չեն ապահովել դրանց պատշաճ ձևակերպումը և պետական գրանցումը, օրենքով սահմանված կարգով, իրավունք ունեն մինչև օտարման պայամանգրի կնքումը կամ դատական ակտի կայացումը, օրինականացման գործընթացի արդյունքում ձեռք բերել ազդակիր գույքի նկատմամբ իրավունքներ և ստանալ փոխհատուցում՝ ձեռքբերված իրավունքներին (նոր ձևակերպված և պետական գրանցում ստացած) համապատասխան:
92. Օրինականացման գործընթացի պայմանները և ժամկետները՝ ըստ օտարվող սեփականության նկատմամբ ԱԵԱ-ների իրավունքների (սեփականության օրինական տիրապետողները, ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության փաստացի տիրապետողները, օգտագործողները, սեփական հողամասում ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ-ները և այլն), ՏԿՆ օժանդակության ձևերն ու կարգը կսահմանվեն ՀՕՏԾ-ում՝ օրինականացման պլան կազմելու և ընդունելու միջոցով: Օտարվող սեփականության նկատմամբ սեփականության կամ այլ իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք չունեցող կամ օտարվող սեփականության նկատմամբ օրենքով ճանաչվող իրավունքները իրենց հայեցողությամբ չձևակերպած և չգրանցած ԱԵԱ-ները՝ համապատասխան ազդեցությունների համար փոխհատուցումը ստանում են և ՀՕՏԾ-ով նախատեսված փոխհատուցման իրավունքներից օգտվում են որպես իրավական կարգավիճակ չունեցող ԱԵԱ-ներ:

Զ. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

93. Սույն գլուխը նկարագրում է ԱԵԱ-ների հետ հանրային լսումների (այսուհետ՝ ՀԼ) գործընթացը: Հարկ է նշել, որ մանրամասն նախագծման փուլում նախագծային փոփոխությունների հետևանքով համայնքներում ԱԵԱ-ների հետ կազմակերպվել են փուլային հանրային լսումներ.
    1)հանրային լսումների առաջին փուլը (ներառում է երկու հանդիպումներ)՝ 2010թ. մարտին ԾՆՏԱ փուլում,
    2)հանրային լսումների երկրորդ փուլը (մեկական հանդիպում յուրաքանչյուր ինը համայնքներում)՝ 2012թ. հոկտեբերին Նախնական ՀՕՏԾ պատրաստման ընթացքում,
    3)հանրային լսումների երրորդ փուլը (մեկական հանդիպում յուրաքանչյուր ինը համայնքներում)՝ 2014թ. փետրվարին, մայիսին և հոկտեմբերին Վերջնական ՀՕՏԾ պատրաստման ընթացքում:

1. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ

94. 2010թ. մարտ ամսվա ընթացքում երկու քննարկումներ են կայացել Արագածոտնի և Շիրակի մարզերի մարզպետարաններում ազդեցության ենթակա համայնքների ղեկավարների, տարածքային իշխանությունների և տարածքային կադաստրի գրասենյակների ներկայացուցիչների մասնակցությամբ:
95. Տրանշ 3 նախնական ՀՕՏԾ պատրաստման ընթացքում 2012թ. հոկտեմբերին ազդեցության ենթակա անձանց ներկայացուցիչների, տեղական իշխանությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ անցկացվենցին ոչ ֆորմալ հանդիպումներ բոլոր ինը ազդեցության ենթակա համայնքերի տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներում: Ներկացվեց և քննարկվեց Ծրագրի և ՀՕՏ- առնչվող գործողությունների վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը: Մասնավորապես, ԱԵԱ-ները տեղեկացվեցին ՀՕՏ-առնչվող հետազոտությունների, ընթացակարգերի և ժամանակացույցների վերաբերյալ, փոխհատուցման և վերականգնման միջոցառումների հիմնական սկզբունքների, հանրային լսումների ժամանակացույցի և օրակագրի վերաբերյալ: Բացի այդ, 2012թ. հոկտեմբերի 19-ին կայացավ պաշտոնական հանդիպում մարզային և տարածքային համայնքների մարմինների ներկայացուցիչների հետ, որը նախաձեռնվել էր ԾԻԿ կողմից Շիրակի մարզպետարանում: Լսարանին ներկայացվեցին Ծրագրի նպատակը, ՀՕՏ գործընթացի փուլերը, ինչպես նաև իրավունակությունը և փոխհատուցման իրավունքները:
96. ԾԻԿ նախաձեռնությամբ մեկ այլ պաշտոնական հանդիպում մարզային և տարածքային համայնքների մարմինների ներկայացուցիչների հետ կայացավ 2014թ. օգոստոսի 2-ին Շիրակի մարզպետարանում: Հադիպմանը մասնակցեցին ազդեցության ենթակա համայնքնրի ղեկավարներ, ինչպես նաև Շիրակի մարզպետարանի երկու ներկայացուցիչներ: Ներկայացվեց յուրաքանչյուր համայքի համար մանրամասն նախագիծը, և ԾԻԿ մասնագետները արձանագրեցին նախագծի վերաբերյալ առկա մտահոգությունները:
97. Այնուհետև, վերջնական ՀՕՏԾ պատրաստման ընթացքում 2014թ. Փետրվարին, մայիսին և հոկտեմբերին անցկացվեցին ֆորմալ հանրային լսումներ (ՀԼ) ազդեցության ենթակա բոլոր ինը համայնքներում: Այս գործողություններից հետո իրականացվեց ազդեցության գնահատման հետազոտությունների և ազդեցության ենթակա ակտիվների գնահատման վերջնականացումը: Լսումներից առաջ իրականացվել են մի շարք նախապատրաստական գործողություններ. (1) ՀԼ վերաբերյալ հայտարարություններ են տեղակայվել Ծրագրի վեբ-կայքում, (2) ազդեցության ենթակա բոլոր համայնքների ղեկավարները պաշտոնապես տեղեկացվել են ՀԼ-ների ամսաթվերի և օրակարգի վերաբերյալ և խնդրել, որպեսզի աջակցեն կազմակերպչական հարցերում: ԱԵԱ-ների ցանկը ՀԼ-ներից առաջ նախապես ուղարկվել է համայնքի ղեկավարներին՝ ապահովելու համար բոլոր ԱԵԱ-ների կամ նրանց ներկայացուցիչների լիարժեք մասնակցությունը: Հատուկ

ուշադրութուն է դարձվել կանանց և խոցելի ԱԵԱ-ներին՝ ապահովելու համար նրանց մասնակցությունը: Կանանց և խոցելիների մասնակցությունը խթանելու համար համայքի ղեկավարներին հատուկ պահանջվել է ապահովել նրանց ներկայությունը և մասնակցությունը լսումներին: Լսումների թիմում առկա են եղել կանայք՝ լսումների գենդերային հավասարությունը պահպանելու նպատակով, և թիմը քաջարելել է կանանց և խոցելի կողմերի մասնակցությունը՝ ՀԼ անցկացման ընթացքում հարցնելով նրանց կարծքիները և առաջարկությունները:

98. Լսումները կազմակերպվել են ԱԵԱ-ների համար հասանելի վայրերում, ինչպիսիք են ՏԻՄ գրասենյակները, մշակութային կենտրոնները և այլն: Ներկայացվել են Ծրագրի նախապատմությունը, իրավունակությունը և փոխհատուցման իրավունքները, գնահատման սկզբունքները, բողոքների լուծման մեխանիզմը և մոնիթորինգի հարցերը: ԱԵԱ-ները այնուհետև տեղեկացվեցին ներքին և արտաքին մոնիթորինգի գործընթացների վերաբերյալ, որոնք նպատակ ունեն մոնիթորինգի ենթարկելու ՀՕՏԾ իրականացման համապատասխանությունը ՀՕՏՇ-ին և վերջնական ՀՕՏԾ-ին: Նաև նշվել է, որ միայն ԱՄԳ կողմից համապատասխանության հաշվետվության պատրաստումից և ԵՆԲ/ԱԶԲ կողմից դրա հաստատումից հետո Կապալառուին կարող է տրվել շինարարական աշխատաքները սկսելու թույլատվություն: ԾԻԿ ինժեները նույնպես մասնակցել է ՀԼ-ին՝ պարզաբանելու համար յուրաքանչյուր համայնքում մանրամասն նախագծի հետ կապված հարցերը: Ի լրումն, լսումների ժամանակ պատրաստվել և ԱԵԱ-ներին է բաժանվել Ծրագրի տեղեկատվական թերթիկը: Հանդիպումների ժամանակ բարձրացված բոլոր հարցերը մանրամասն քննարկվել են: Անցկացված լսումների ժամանակացույցը ներկայացված է ստորև (Աղյուսակ Զ1):

Աղյուսակ Զ1. ՀՕՏԾ վերջնականացման ՀԼ-ների ժամանակացույց

Համայնք	Հանդիպման ամսաթիվ	ԱԵՏՏ-ների քանակը յուր. համայնքում	Հանդիպման մասնակիցների քանակ	
			տղամարդ	կին
Լանջիկ*	20.02.2014	16	29	6
Ձորակապ	20.02.2014	117	32	9
Մարալիկ	22.05.2014	95	26	8
Հայրենյաց	21.05.2014	27	10	3
Հոռոմ	21.05.2014	89	18	2
Լուսակերտ	22.05.2014	52	14	6
Բենիամին	21.05.2014	31	19	5
Ազատան	31.10.2014	63	20	2
Սառնաղբյուր*	19.02.2014	17	39	5
*Սառնաղբյուր և Լանջիկ համայնքների որոշ հողեր ներառված են ԱԶԲ հատվածում, հետևաբար ՀԼ մասնակիցների թիվը ներկայացնում է ամբողջ համայնքները:				

99. Հանդիպումների ընթացքում ԱԵԱ-ները տեղեկացվել են հասարակության կարիքների համար հողերի օտարման ընթացակարգերի վերաբերյալ: Մասնավորապես, նրանք ստացան մանրամասն տեղեկատվություն ազդեցության ենթակա գույքի և բարելավումների նկարագրության, գնահատման և փոխհատուցման տրամադրման հետ կապված ընթացակարգերի վերաբերյալ: Նրանք տեղեկացվեցին նաև իրենց իրավունքների, պատասխանատվությունների և այն փաստաթղթերի մասին, որոնց հետ իրենք կառնչվեն հողերի օտարման գործընթացքի ժամանակ: Ի լրումն, շահագրգիռ կողմերը տեղեկացվեցին նաև հնարավոր հիմնախնդիրների, որոնք կարող են առաջանալ, և դրանց լուծման մեխանզիմների վերաբերյալ: Համայնքներում անցկացված հանդիպումների ընթացքում քննարկված հիմնական հարցերը, ընդհանուր առմամբ, նույնն են կամ նմանատիպ, որոնք ներկայացվել են նախնական ՀՕՏԾ-ում (Աղյուսակ Զ2): Վերջնական ՀՕՏԾ հանդիպումների ընթացքում բարձրացված որոշ

լրացուցիչ խնդիրներ ներկայացված են ստորև ներկայացված աղյուսակում (մանրամասների համար տես **հավելված 5**):

Աղյուսակ Զ2: Ազդեցության ենթակա համայնքներում հանդիպումների ընթացքում քննարկված խնդիրները

Հարց/Մտահոգություն	Ինչպես է ծրագիրը հասցեագրում կամ կհասցեագրի մտահոգությունը
Ընդհանուր հարցեր, բարձրացված բոլոր ազդեցության համայնքների ՀԼ-ների ընթացքում	
Չափագրման աշխատանքները իրականացվել են առանց համայնքային իշխանությունների ներկայացուցիչների ներկայության:	Մանրամասն չափագրման հետազոտությունը կսկսվի 2014թ. Նոյեմբերին բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու վերաբերյալ կառավարության որոշման հաստատումից հետո, այս փուլում համայնքներում կազմակերպվել են միայն նախնական տեղազննման աշխատանքներ: ԱԵԱ-ները, ինչպես նաև համայնքի ղեկավարները կտեղեկացվեն ՄԶՀ աշխատանքների մասին նախօրոք, որպեսզի կարողանան մասնակցել գործընթացին:
Օտարման են ենթակա շատ կարևոր տարածքներ. Լավ որակի գյուղատնտեսական հողեր, համայնքային ճանապարհների հատվածներ, գազատարներ, ջրագծեր, ոռոգման ջրանցքներ եւ տնտեսական, ձեռնարկատիրական օբյեկտներ:	Բոլոր տիպի ենթակառուցվածքները պետք է տեղափոխվեն և վերականգնվեն իրենց նախածրագրային պայմաններին համապատասխան: Կկառուցվեն վերգետնյա և ստորգետնյա անցումներ տրանսպորտային միջոցների և կենդանիների համար: Լավ որակի գյուղատնտեսական հողերի կորուստը Մեղմացնելու համար, ծրագիրը նախագծվել է՝ հաշվի առնելով հողօտարման նվազագույն հնարավորությունը և նկատի ունենալով ճանապարհի երկրաչափությունը և անվտանգության գործոնը:
Արդյո՞ք հնարավոր է օտարել հողի մնացած մասը, եթե այն դառնում է անօգտագործելի:	ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, սեփականատերն իրավունք ունի պահանջելու օտարել հողամասի ազդեցության չենթարկվող հատվածը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու վերաբերյալ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում: ՀԼ-ից հետո «Հասարակության և պետության կարքիների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ և նոր պայմաններ են սահմանվել հողի ամբողջական օտարման պահանջ ներկայացնելու համար: Օրենքում կատարված փոփոխությունների և իրենց իրավունքների վերաբերյալ ԱԵԱ-ներին ուղարկվել են հատուկ տեղեկատվական թերթիկներ:
Ինչպե՞ս է հողի համար փոխհատուցումը կատարվելու:	Փոխհատուցումը իրականացվելու է շուկայական կամ կադաստրային արժեքի համապատասխան, որն ավելի բարձր է, գումարած 15%-ի չափով, պայմանավորված հողի պարտադիր օտարմամբ, ինչպես սահմանված է «Հասարակության և պետության կարքիների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով:
Արդյո՞ք համայնքային սեփականության հողամասերը փոխհատուցվելու են:	Համայնքային սեփականությա հողամասերը գնահատվելու և փոխհատուցվելու են նույն սկզբունքներով, ինչպես մասնավոր հողերը:
Ինչպիսի՞ն է վարձակալների փոխհատուցման վերաբերյալ մոտեցումը:	Վարձակալները պետք է փոխհատուցվեն հիմք ընդունելով վարձակալության մնացած տարիները և ստանան փոխհատուցում շուկայական կամ կադասրային արժեքով, որն ավելի բարձր է, գումարած 15%: Փոխհատուցումը կտարամադրվի վարձակալության մնացած տարիների երկարության

Հարց/Մտահոգություն	Ինչպես է ծրագիրը հասցեագրում կամ կհասցեագրի մտահոգությունը
	համամասնությամբ. մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%: վարձակալները պետք է փոխհատուցում ստանան նաև իրենց ծառերի և մշակաբույսերի համար: Ապօրինի օգտագործողները չեն ստանա փոխհատուցում հողի համար, բայց պետք է ստանան փոխհատուցում իրենց բարելավումների, մշակաբույսերի և ծառերի համար:
Կադաստը չի գրանցում վարձակալությունները, ինչպես նաև սեփականատերերը, որոնք ունեն սեփականաշնորհման մասին որոշում, չեն ստացել սեփականության վկայականներ:	Ցանկացած տիպի գործարք, կապված Հյուսիս-հարավ նախնական միջանցքի համայնքային հողամասերի հետ, մասնավորապես վարձակալությունը և վաճառքը, կասեցվել են ՀՀ կառավարության 2009թ. որոշման համաձայն: Կադաստրի գործողությունները եղել են իրավաչափ: Ինչ վերաբերվում է մասնավոր հողերի գրանցմանը, պարզաբանվեց, որ կադաստը պարտավոր է տրամադրել սեփականության վկայական սեփականատիրոջը՝ հիմք ընդունելով որոշումը: Շահագիգիռ կողմերին խորհուրդ տրվեց նաև դիմել կադաստր և պահանջել գրավոր պատասխան մերժումը, որում կադաստը պետք է հիմնավորի իր գործողությունների իրավական հիմքերը:
Ո՞րն է արտասահմանում ապրող ՀՀ-ից բացակայող սեփականատերերի համար հողի օտարման կանխատեսված ընթացակարգը:	Հետազոտությունների անցկացման ընթացքում հետազոտող թիմը կհավաքի այդպիսի սեփականատերերի կոնտակտային տվյալները կամ այլ հնարավոր տեղեկատվություն՝ ձեռնարկված միջոցառումների և նրանց մասնակցության անհրաժեշտության մասին համայնքից բացակայող սեփականատերերին տեղեկացնելու համար: Այն դեպքում, երբ նրան մասնակցությունը հնարավոր չէ, պետք է լիազորագիր ուղարկվ այն ներկայացուցիչի անունով, ով հանդես կգա արձանագրությունների, նախնական պայմանագրի և պայմանագրի ստորագրման ընթացքում: Համայնքի ղեկավարներին խորհուրդ է տրվել բացակա սեփականատերերին կամ նրանց ներկայացուցիչներին ապահովել ԾԻԿ-ի հեռախոսահամարով՝ քննարկելու համար լիզորագրի կառուվածքի և բովանդակության մասին հարցերը: Օտարման պայմանագրի չստորագրման դեպքում փոխհատուցման գումարը պետք է հանձնվի դատարանի դեպոզիտային հաշվին, և սեփականատերերեը կարող են ստանալ փոխհատուցման գումարը դատարան ներկայացնելով համապատասխան իրավական հիմքեր:
Ինչպե՞ս են փոխհատուցվելու շինությունները, և արդյոք ազդեցության ենթակա շինության սեփականատերը կկարողանա գնել կամ կառուցել նոր շինություն փոխհատուցման գումարով:	Համաձայն բնակելի և ոչ բնակելի շինությունների համար ՀՕՏՇ պահանջների՝ ԱԵԱ-ները կստանան կանխիկ փոխհատուցում գումարած 15% շինությունների կորստի համար ամբողջական փոխարինման արժեքով առանց մաշվածության ծախսերի և փրկված նյութերի մասհանման: Մասնակի ազդեցությունների համար կտրվի փոխհատուցում շինության ազդեցության ենթակա հատվածի համար գումարած վերանորոգումը: Ռեստորանների կամ այլ բիզնեսների դեպքում, փոխհատուցուըմ կներառի նաև եկամուտ՝ հիմք ընդունելով հարկային

Հարց/Մտահոգություն	Ինչպես է ծրագիրը հասցեագրում կամ կհասցեագրի մտահոգությունը
	հայտարարագիրը: Փոխհատուցում կտրվի նաև ձեռնարկատիրական գործունեության աշխատողներին, որոնք աշխատել են աշխատակազմում հողի օտարմամբ պայմանավորված իրենց աշխատանքի դադարեցումից երկու ամիս առաջվա դրությամբ:
Ի՞նչ պետք է արվի, եթե փոխհատուցումը ավելի քիչ է, քան օրինականացման խնդիրների (ժառանգության գրանցում, լիազորագրերի ուղարկում և այլն) լուծման համար անհրաժեշտ ծախսերը գումարը, կամ մարդիկ չունեն բավարար միջոցներ իրենց օրինականացման խնդիրների լուխման համար:	Ըստ ՀՕՏՇ-ի, ԱԵԱ-ները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է գրանցեն իրենց իրավունքները և ստանան անհրաժեշտ փաստաթղթերը (սեփականության վկայական, լիազորագիր և այլն), որպեսզի կարողանա ստորարգրել օտարման պայմանագիրը: Օրինականացումը ԱԵԱ-ների պատասխանատվությունն է: ՃԻԿ-ը կարող է օգնել, խորհրդատվություն տրամադրել ԱԵԱ-եին այս գործընթացում: Օտարման պայմանագրի չստորագրման դեպքում փոխհատուցման գումարը պետք է հանձնվի դատարանի դեպոզիտային հաշվին, և սեփականատերերը կարող են ստանալ փոխհատուցման գումարը դատարան ներկայացնելով համապատասխան իրավական հիմքեր:
ՏԻԿ ներկայացուցիչները հարցրեցին արդյոք հնարավոր է տրամադրել հողին-հող փոխհատուցում կանխիկ փոխհատուցման փոխարեն:	ՀՕՏՇ ներքո հողին-հող փոխհատուցման ընթացակարգի համար մեխանիզմներ մշակված չեն: Հողին-հող փոխհատուցման ընթացակարգը չի կիրառվելու այս Տրանշի համար ազդեցության ենթակա համայնքներում անհրաժեշտ հողային ռեսուրսների բացակայության պատճառով:
ՀԼ-ների ընթացքում բարձրացված առանձնահատուկ հարցեր ըստ համայնքների	
Սառնաղբյուր, 19.02.2014	
Ի՞նչ պետք է մենք անենք այն դեպքերում, երբ լիազորագրի ստացումը ավելի թանկ է, քան փոխհատուցման գումարը:	Այս դեպքերում, երբ սեփականատերերը չեն կարողանում ապահովել համապատասխան փաստաթղթերը և ստորագրել օտարման պայմանագիրը, ՃԻԿ-ը, համաձայն ՀՀ օրենսդրության, պետք է նախաձեռնի դատական կարգով օտարման գործընթաց: Այս դեպքում փոխհատուցման գումարը հանձնվում է դատարանի դեպոզիտային հաշվին:
Արդյո՞ք օտարման պայմանագրերը վավերացվում են նոտարի կողմից, և ո՞վ է պետք է կատարի օտարման գործընթացի հետ կապված ծախսերը:	Օտարման գործընթացի հետ կապված բոլոր ծախսերը, ներառյալ պայմանագրերի նոտարական վավերացումը և մնացած գույքի համար սեփականության նոր վկայականների ստացումը, կատարվում են Ձեռքբերողի (պետության) հաշվին:
Ի՞նչ պետք է արվի այն դեպքերում, եթե հողի օտարումից հետո մուտքը դեպի հող դառնա անհնար:	Պարզաբանվեց, որ նման հարցերը արդեն իսկ հասցեագրված պետք լինեն մանրամասն նախագծում, և եթե որոշ հողերի/գույքերի հետ կապված նման խնդիր առաջանա, ապա, ցանկալի կլինի, եթե ԱԵԱ-ն կամ տեղական համայնքի ներկայացուցիչը այցելի ՃԻԿ գրասենյակ և քննարկի այդ խնդիրներները ինժեներների հետ:
Եթե հողի մի մասը օտարվի և մնացած մասի օգտագործումը դառնա ոչ արդյունաբեր, արդյո՞ք	«Հասարակության և պետության կարքիների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի [1] համաձայն, սեփականատերը իրավունք ունի պահանջելու օտարել ամբողջ

Հարց/Մտահոգություն	Ինչպես է ծրագիրը հասցեագրում կամ կհասցեագրի մտահոգությունը
հնարավոր է օտարել նաև մնացած հողը:	հողամասը, բայց սա ունի ժամանակային սահմանափակում: Սեփականատերը կարող է իրացնել այս իրավունքը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու վերաբերյալ կառավարության որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում: Կառավարության որոշման ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան ծանուցումներ կուղարկվեն բոլոր ԱԵԱ-ներին, որտեղ կնշվի ամբողջ հողի օտարման գրավոր պահանջի ներկայացման վերջնաժամկետը և օրենքով սահմանված պայմանները:
Արդյո՞ք հողի օտարված հատվածները անհրաժեշտ են միայն ճանապարհի կառուցման համար: Արդյո՞ք հողատերերին թույլատևվում է կառուցել շինություններ հողամասերի ոչ ազդակիր հատվածների վրա:	Այո, օտարվող հողամասերը անհրաժեշտ են միայն ճանապարհի և ճանապարհի հետ կապված ենթակառուցվածքների կառուցման համար: Հողի մնացած հատվածը կմնա որպես Ձեր սեփականություն, և դուք կարող եք կատարել շինարարական աշխատանքներ օրենսդրության համաձայն:
Բավականի երկար ժամանակ է, ինչ ես մշակում եմ իմ սեփական հողի կից գտնվող համայնքային հողամասը: Արդյո՞ք դրա համար տրվելու է փոխհատուցում: Բացի այդ, արդյո՞ք ես կարող եմ սեփականաշնորհել այդ հողը և փոխհատուցվել որպես լիրաժեք սեփականատեր:	ՀՕՏԾ սկզբունքների համաձայն, համայնքային հողի օգտագործողը կստանա փոպհատուցում միայն իր կողմից կատարված բարելավումների համար, բայց ոչ հողի:Սեփականաշնորհումը կարող է իրականացվել ՀՀ օերնսդրության պահանջների և համայնքի հետ քննարկումների համաձայն: Իրավական աջակցություն և խորհրդատվություն կարող է տրամադրվել նրանց, ովքեր ցանկանում են նախաձեռնել սեփականաշնորհման/օրիականացման գործընթաց:
Արդյո՞ք ես կարող եմ վաճառել կամ նվիրաբերել իմ հողը այս ընթացքում մինչը օտարումը:	Դա հնարավոր է: Բայց այս դեպքում, ԾԻԿ-ին տրամադրված կամ ԾԻԿ-ի կողմից մշակված ամբողջ տեղեկատվությունը և պաշտոնական փաստաթղթերը պետք է թարմացվեն, իսկ Ծրագրի համար կդառնա փաստացի ԱԵԱ նոր սեփականատերը և կստանա համապատասխան փոխհատուցումը:
Լանջիկ, 20.02.2014	
Ես ժառանգել եմ հողը և դեռևս չեմ գրանցել իմ սեփականության իրավունքը դրա նկատմամբ: Ինչպես պետք է իրականացվի հողի օտարման գործընթացը, հատկապես, երբ որոշ ժառանգներ բացակայում են ՀՀ-ից:	Ցավոք, կառավարությունը չի կարող փոխհատուցեկ այն վճարները, որոնք անհրաժեշտ են ժառանգության գրանցման համար, ինչը պետք է նախօրոք իրականացված լինի:Եթե դուք ունեք ժառանգներ, որոնք բացակայում են ՀՀ-ից և նրանց ներկայությունը հնարավոր չէ, ապա պետք է լաիզորագիր ուղարկվի այն ներկայացուցչի անունով, ով հանդես կգա նրանց անունից արձանագրության, նախնական պայմանագրի և պայմանագրի ստորագրման ընթացքում: Իրավական խորհրդատվություն կտրամադրվի այն ԱԵԱ-ներին, որոնք կնախաձեռնեն օրինականացման գործընթացը ՀՕՏԾ իրականացման ընթացքում:
Եթե առկա է կտակ, և միաժամանակ, այն անձը , ով գրել է կտակը ողջ է, ապա ո՞վ պետք է ստորագրի նկարագրության	Կարևոր չէ, արդյոք կա կտակ, թե ոչ: Եթե հողի սեփականատերը ոնջ է, ապա օտարման պայմանագիրը պետք է ստորագրվի նրա կողմից:

Հարց/Մտահոգություն	Ինչպես է ծրագիրը հասցեագրում կամ կհասցեագրի մտահոգությունը
արձանագրությունը:	
Կարո՞ղ ենք արդյոք օգտագործել մեր ազդեցության ենթակա հողերը մինչև օտարման պայմանագրի կնքումը:	Ծրագիրը չի կարող սահմանափակել սեփականատիրոջ կողմից իր հողի օգտագործումը/մշակումը: Որոշումը պետք է ընդունվի սեփականատերերի կողմից: Այնուամենայնիվ, այն բարելավումները, որոնք կատարվել են հողում կասեցման օարվանից հետո (նկարագրությա արձանագրությունների կազմում և ստորագրում) ենթակա չեն փոխհատուցման: Ծրագիրը կգործադրի ցանկացած ջանք նախօրոք տեղեկացնելու ԱԵԱ-ներին՝նման իրավիչակներից խուսափելու համար:
Ես ունեմ գազալցակայան տեղակայված ազդեցությա ենթակա հողի վրա, որը չի գործում 2006 թվականից: Ինչպիսի՞ փոխհատուցում ես կարող եմ ստանալ:	Չգործող բիզնեսի համար դուք կարող եք ստանալ փոխհատուցում միայն գույքի համար (հող, շինություն, այլ բարելավումներ), քանի որ բիզնեսը, որպես այդպիսի, գոյություն չունի: Հողի վրա կամ շինությունների ներսումա ռկա շարժական գույքի տեղափոխման ծախսերը նույնպես կփոխհատուցվեն: Գրանցված անշարժ գուքի համար փոխհատուցումը կիրականցվի փոարինման արժեքով:
Մարալիկ, 22.05.2014	
Կվճարվի արդյո՞ք փոխհատուցումը մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը:	Ըստ վարկի պայմանների, շինարարությունը չի կարող սկսվել, քանի դեռ փոխհատուցման գումարները չեն վճարվել ազդեցության ենթարկված ՏՏ-ներին: Այնուամենայնիվ, այս պայմանը չի կիրառվում իրավական դեպքերի վրա: Արտաքին մոնիտորինգի գործակալություն կվարձակալվի վերահսկելու համար ՀՕՏԾ իրականացման ողջ գործընթացը, որի հետ կապված այն համապատասխան հաշվետվություն կներկայացնի ԾԻԿ-ին:
Համայնքային հողերի համար վկայականներ ունենալու անհրաժեշտություն կա՞, թե՝ ոչ:	Համայնքային կամ պետական հողերի վարձակալները պետք է օրիկանացվեն և փոխհատուցվեն որպես լիարժեք սեփականատերեր կամ նրանց կտրվեն վարձակալական նոր պայմանագրեր: Եթե դա հնարավոր չէ, ապա վարձակալները փոխհատուցումը կստանան շուկայական կամ կադասրային արժեքով (որն ավելի բարձր է), գումարած 15%: Փոխհատուցումը կտարամադրվի վարձակալության մնացած տարիների երկարության համամասնությամբ. մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%:
Եթե սեփականատերերից մեկը մահացել է, ի՞նչ պետք արվի:	Եթե սեփականատերը, կամ համասեփականատերերից մեկը կամ նրանցից մի քանիսը մահացել են, և չկա ձևակերպված ժառանգություն, ապա պայմանագրի ստորագրումը դառնում է անհնար, քանի դեռ ժառանգությունը չի ձևակերպվել: Անհրաժեշտ է նոր սեփականատերերի անուններով նոր սեփականության վկայականի առկայություն: Ժառանգության ձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը վճարվում է սեփականատիրոջ կողմից:
Ազատան, 31.10.2014	
Ինչպե՞ս է շուկայական արժեքը հաշվարկվում:	Շուկայական գինը հաշվարկելիս, օտարման ենթակա հողը համեմատվում է նախորդ 1-2 տարիներին մոտակայքում վաճառված առնվազն երեք նմանատիպ հողերի հետ: Համեմատման ժամանակ ճշտման գործակիցների հիման վրա

Հարց/Մտահոգություն	Ինչպես է ծրագիրը հասցեագրում կամ կհասցեագրի մտահոգությունը
	իրականացվում են մի շարք ճշտումներ, որոնք ազդում են շուկայական գնի վրա: Հետևյալ գործոնները ևս հաշվի կառնվեն շուկայական արժեքը հաշվարկելիս. հողի տեսակը, հարթությունը, հողի չափսերը (մակերեսը, լայնությունը, երկարությունը, կառուցվածքը, ճակատը), տեղադրությունը, դիրքը, ճանապարհային հանգույցների առկայությունը, ոռոգման առկայությունը, քարքարոտությունը, բազմամյա տնկարկների առկայությունը, կադաստրային և փաստացի նշանակությունը և այլ գործոններ, որոնք ազդում են գյուղատնտեսական հողերի արժեքի վրա:
Ե՞րբ եք պարզելու, թե մեր հողամասի որ մասն է հատկապես օտարվելու:	Երբ ստանաք արձանագրությունները, ապա դրանց կցված կլինեն քարտեզներ, որոնցում նշված կլինեն հողի օտարվող մասերը:
Պայմանագիրը կնքվում է անհատի և պետության միջև, թե՞ անհատի և կազմակերպության միջև:	Պայմանագիրը կնքվում է ՊՈԱԿ-ի անունից, որը ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության կողմից լիազորված մարմին է: Պայմանագիրը ստորագրվում է ՊՈԱԿ-ի և սեփականատիրոջ և վավերացվում է նոտարի կողմից:
Ձորակապ, 20.02.2014	
Օտարման գործընթացն ընդգրկում է հողի չափերի մեջ փոփոխություններ, ինչն էլ նոր վկայականի անհրաժեշտություն է առաջացնում: Ո՞վ է կրելու նոր վկայականի ձեռք բերման հետ կապված ծախսերը:	Օտարման գործընթացի հետ կապված բոլոր ծախսերը կրում է ծրագիրը, ներառյալ նոտարական, վկայականները ստանալու ծախսերը և այլն:
Հողը պատկանում էր իմ մահացած հորը և համապատասխան ժառանգությունը չի ձևակերպվել: Կարո՞ղ եմ պայմանագիրը ես ստորագրել:	Դուք չեք կարող ստորագրել պայմանագիրը, քանի դեռ չեք ձևակերպել ժառանգությունը: Կամ էլ հողը կարող է օտարվել իրավական կարգով, և այդ դեպքում, փոխհատուցման արժեքը ի պահ կտրվի դատարանին: Սեփականատերը կարող է դատարանից ստանալ փոխհատուցումը, եթե կատարի անհրաժեշտ փաստաթղթային պահանջները.
Կարո՞ղ եմ ես իմ հողը նվիրաբերել ԾԻԿ-ին:	Ոչ, նման մեխանիզմներ գոյություն չունեն և դուք չեք կարող ձեր հողը նվիրաբերել ԾԻԿ-ին:
Հոռոմ, 21.05.2014	
Արդյո՞ք ընտանիքի եկամուտների և նրանց անդամների հետ կապ-ված սոցիալական հարցումները կազդեն փոխհատուցման վրա:	Ընտանիքի անդամներին վերաբերվող մանրամասները կապված չեն փոխհատուցման գումարի հետ: Ձեր կողմից տրամադրվող մանրամասները կօգնեն ծրագրին բացահայտելու սոցիալապես խոցելի SS-ներին: Այն SS-ները, որոնք կհամարվեն խոցելի, ծրագրի շրջանակներում լրացուցիչ նպաստ կստանան:
Արդյո՞ք բացակա սեփականատի-րոջ կամ համասեփականատիրոջ գումարները, որոնք ի պահ են հանձնվում դատարանում, ունեն այն ստանալու ժամանակային	Ներկայումս ձեր հարցի հստակ չենք կարող պատասխանել, բայց ենթադրում ենք, որ որոշակի ժամկետ կլինի: Մենք կճշտենք այս հարցը և ավելի հստակ ձեզ կպատասխանենք:

Հարց/Մտահոգություն	Ինչպես է ծրագիրը հասցեագրում կամ կհասցեագրի մտահոգությունը
սահմանափակում:	
Արդյո՞ք կառավարությունը կրում է այս գործընթացի կադաստրային և նոտարական ծախսերը:	Այո, այդ բոլոր ծախսերը կփոխհատուցվեն, բացառությամբ այն ծախսերի, որոնք կապված են ժառանգության ձևակերպման և լիազորագրերի հետ: Ծրագիրը կարող է ձեզ միայն իրավական խորհրդատվություն և աջակցություն տրամադրել: Եթե ինչ-որ մեկը նշված դեպքերի առումով ունի նոտարի հետ կապված հարցեր կամ որոշակի ոչ ֆինանսական խնդիրներ, մեր իրավաբանները պատրաստ են օգնել ձեզ:
Բենիամին, 22.05.2014	
Ինչպե՞ս է հողի շուկայական արժեքը հաշվարկվում:	Շուկայական գինը հաշվարկելիս, օտարման ենթակա հողը համեմատվում է նախորդ 1-2 տարիներին մոտակայքում վաճառված առնվազն երեք նմանատիպ հողերի հետ: Համեմատման ժամանակ ճշտման գործակիցների հիման վրա իրականացվում են մի շարք ճշտումներ, որոնք ազդում են շուկայական գնի վրա: Հետևյալ գործոնները ևս հաշվի կառնվեն շուկայական արժեքը հաշվարկելիս. հողի տեսակը, հարթությունը, հողի չափսերը (մակերեսը, լայնությունը, երկարությունը, կառուցվածքը, ճակատը), տեղադրությունը, դիրքը, ճանապարհային հանգույցների առկայությունը, ոռոգման առկայությունը, քարքարոտությունը, բազմամյա տնկարկների առկայությունը, կադաստրային և փաստացի նշանակությունը և այլ գործոններ, որոնք ազդում են գյուղատնտեսական հողերի արժեքի վրա:
Լուսակերտ, 21.05.2014	
Վարձակալության կամ համայնքային հողերի դեպքում ո՞վ է ստանում փոխհատուցման գումարը:	Համայնքային կամ պետական հողերի վարձակալները պետք է օրիկանացվեն և փոխհատուցվեն որպես լիարժեք սեփականատերեր կամ նրանց կտրվեն վարձակալական նոր պայմանագրեր: Եթե դա հնարավոր չէ, ապա վարձակալները փոխհատուցումը կստանան շուկայական կամ կադասրային արժեքով (որն ավելի բարձր է), գումարած 15%: Փոխհատուցումը կտարամադրվի վարձակալության մնացած տարիների երկարության համամասնությամբ. մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%:
Սեփականության վկայականում նշված են մեծ թվով սեփականա-տերեր, որոնց մի մասը արտա-սահմանում է, ՌԴ-ում է կամ էլ բնակության վայրն անհայտ է: Կարո՞ղ են այն սեփականատե-րերը, որոնք գտնվում են Հայաստանում, ստանան փոխհատուցումը:	Համասեփականատերերն ունեն հավասար իրավունքներ և նրանցից յուրաքանչյուրի կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչների ներկայությունը պարտադիր է: Անհայտ բացակայող անձանց մասով պետք է լինի դատարանի վճիռ, որի դեպքում, սեփականատերերի փոխարեն նշվում է գույքի կառավարիչը, ում հետ էլ հետագա բոլոր գործարքները կատարվում են: Եթե դուք ունեք նման փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ սեփականատերերն անհայտ են և դուք կարող եք այդ փաստաթղթերը մեզ հանձնել, ապա մեր իրավաբանները կուսումնասիրեն այդ փաստաթղթերը և, ըստ այդմ էլ, կուղղորդեն

Հարց/Մտահոգություն	Ինչպես է ծրագիրը հասցեագրում կամ կհասցեագրի մտահոգությունը
	ձեր հետագա գործողությունները:
Հայրենյաց, 22.05.2014	
Ճանապարհի քարտեզն արդեն գոյությո՞ւն ունի:	Մենք թողել ենք քարտեզի պատճենը ձեր գյուղապետարանում: Ճանապարհի վերջնական նախագիծն այս պահին ճշտվում է: Երբ այն պատրաստ կլինի, մեկ օրինակ կտրամադրվի գյուղապետարանին: Հարցերի դեպքում, խնդրում ենք քննարկել այն մեր ինժեներների հետ:
Արդյո՞ք ընդհանուր վարելահողերը կամ դրանց մի մասը կարող են օգտագործվել շինարարության իրականացման գործընթացի ժամանակ:	Գերակա հանրային շահի մասին օրենքի համաձայն, դուք կարող եք օտարել ձեր գույքն ամբողջությամբ: Դրա համար անհրաժեշտ է, որ դուք 60 օրվա ընթացքում համապատասխան խնդրանքով գրավոր կերպով դիմեք ԾԻԿ-ին: Այնուամենայնիվ, եթե որևէ մեկը սկզբում որոշի, որ ուզում է ամբողջությամբ օտարել իր գույքը, այնուհետև փոխի իր մտադրությունը և ուզենա օտարել միայն ազդեցության ենթակա մասը, ապա նա կարող է օտարել միայն ազդեցության ենթակա մասը:
Հանդիպումների բոլոր մասնակիցները ստացել են տեղեկատվական թերթիկներ Ծրագրի իրականացման հիմնական փուլերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվական ձեռնարկ, որը ներկայացնում է կողմերի իրավունքներն ու պարտականությունները ՀՕՏ ընթացակարգերի իրականացման ընթացքում, ՀՕՏԾ-ին և ԱՋԲ ԵՔՓ-ին համապատասխան փոխհատուցման գնահատման սկզբունքները, ինչպես նաև ՀՕՏԾ պատրաստման և իրականացման ընթացքում կիրառվելիք բողոքների լուծման մեխանիզմը:	

100. Վերջնական ՀՕՏԾ ավարտից հետո հանրային լսումների մեկ այլ փուլ կիրականացվի բոլոր ազդեցության ենթակա համայնքներում ներկայացնելու համար Վերջնական ՀՕՏԾ-ն և ծանուցելու ԱԵԱ-ներին ՀՕՏԾ իրականացման մեկնարկի մասին: ՀՕՏԾ իրականացման փուլում, հատկապես պայմանագրի ստորագրման ընթացքում ԱԵԱ-ների հետ կանցկացվեն լրացուցիչ ոչ ֆորմալ խորհրդակցություններ:

2. ՀՕՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

101. Վերջնական ՀՕՏԾ-ն հաստատումից հետո կհրապարակբի ԵՆԲ կայքում: Այն կթարգամնվի հայերեն և կտեղադրվի ՏԿՆ և Ծրագրի կայքէջերում: Վերջնական ՀՕՏԾ-ի մեկ օրինակը հասանելի կլիի նաև մարզային և բոլոր ազդեցության ենթալա համայնքների տեղական իշխանությունների գրասենյակներում:
102. Ծրագրի իրականացման վերջնական ձեռնարկը, որը կամփոփի ազդեցությունները, իրականացման միջոցառումները, ՀՕՏԾ փոխհատուցման քաղաքականությունը և բողոքների լուծման մեխանզիմը, կտրամադրվի բոլոր ԱԵԱ-ներին ԵՆԲ և ՀՀ կառավարության կողմից վերջնական ՀՕՏԾ-ի հաստատումից հետո (տե՛ս **Հավելված 6**):
103. ՀՀ կառավարության կողմից ՀՕՏԾ հաստատումից անմիջապես հետո, ԾԻԿ-ը ԱԵԱ-ներին կուղարկի փոխհատուցման գումարների մասին պայմանագրի նախագծերը/ծանուցումները: ԱԵԱ-ները պայմանագրի նախագծում պետք է լրացնեն իրենց բանկային վավերապայմանները, ստուգեն նրանում առկա տվյալները, ինչպես նաև ներկայացնեն առաջարկություններ կամ առարկություններ պայմանագրի վերաբերյալ, համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի: Հիմք ընդունելով պայմանագրի նախագծում ԱԵԱ-ների կողմից թարմացված լրացուցիչ

տվյալները, ԾԻԿ-ը կթարմացնի և կվերջնականացնի վերջնական օտարման պայմանագրերը:

104. ԾԻԿ-ը կներկայացնի վերջնական պայմանագրերը ԱԵԱ-ներին և կստանա ԱԵԱ-ների ստորագրությունը նոտարի միջոցով փոխհատուցումը փոխանցելու համար: ԾԻԿ-ը պետք է ստորագրի վերջնական պայմանագիրը ԱԵԱ-ի հետ պայմանագրի նախագծի ծանուցումից 3 ամսվա ընթացքում, հակառակ դեպքում ԾԻԿ-ը կնախաձեռնի դատական կարգով օտարման գործընթաց:

Է. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

105. Տրանսպորտի և կապի նախարարությունը (ՏԿՆ) հանդիսանում է Գործադիր մարմին (ԳՄ), իսկ ԾԻԿ-ը հանդիսանում է Իրականացնող գործակալություն (ԻԳ) Ծրագրի համար: ԾԻԿ-ն ունի Իրավական և արտաքին ազդեցության թիմ, որը բաղկացած է հետևյալ մասնագետներից և խորհրդատուներից (այսուհետ՝ Տարաբնակեցման Համակարգող Թիմ (ՏՀԹ)).

- Իրավական և արտաքին ազդեցության ղեկավար,
- Արտաքին ազդեցության և վերաբնակեցման համակարգող,
- Սոցիալական զարգացման և վերաբնակեցման մասնագետ,
- Բնապահպանության և հնագիտության մասնագետ,
- Գլխավոր իրավախորհրդատու
- Բողոքների և վեճերի կառավարման մասնագետ,
- Ազգային դաշտային աշխատաքների համակարգող (խորհրդատու) և
- ՀՕՏ իրավական մասնագետ (խորհրդատու):

106. ՏՀԹ-ն կիրականացնի ՀՕՏԾ-ն՝ հիմնվելով ՀՕՏՇ-ում սահմանված քաղաքականության և ընթացակարգերի վրա: ՀՕՏՇ-ում նկարագրված փոխհատուցման/վերականգնման առաջադրանքները ներառում են հստակ գործընթացներ և գործողություններ, որոնց իրականացումը ենթադրում է տարբեր կառույցների ներգրավումը:
107. Մի քանի այլ պետական գործակալություններ իրենց կարևոր դերերը կունենան ՀՕՏԾ-ի իրականացման գործում: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն և իր տարածքային գրասենյակները պատասխանատու կլինեն անշարժ գույքի սեփականության կարգավիճակի և սեփականության գրանցման համար: ՀՕՏԾ սահուն իրականացման համար սերտորեն կներգրավվեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Վերոնշյալ որոշ կառույցների դերը նկարագրվում է ստորև:

1. ՏԿՆ/ԾԻԿ

108. ՏԿՆ-ն կրում է ամբողջական պատասխանատվություն Ծրագրի համար: Դա ներառում է ՀՕՏ-ի բոլոր առաջադրանքների նախապատրաստումը, իրականացումը և ֆինանսավորումը, ինչպես նաև գործակալությունների փոխհամագործակցության և փոխկապվածության համակարգումը: ՏԿՆ-ն կիրականացնի իր պարտավորությունները ԾԻԿ-ի միջոցով: ԾԻԿ-ը պատասխանատու կլինի ՀՕՏ-ի բոլոր առաջադրանքների պլանավորման և իրականացման համար (մանրամասն գործողությունների համար տես աղյուսակ Է1-ը):
109. ԾԻԿ-ի ՏՀԹ-ն ունի համապատասխան աշխատակազմ ՀՕՏԾ-ն իրականացնելու համար: ԾԻԿ-ը կներգրավի Իրականացնող Խորհրդատու (ԻԽ), որը կներառի հիմնական Իրականացնող Թիմ (ԻԹ), կազմված 12 մասնագետներից, ներառյալ՝ թիմի ղեկավար, 2 համակարգող, տվյալների բազայի իմասնագետ, 2 փաստաբան, 4 իրավաբան և 2 սոցիոլոգ/դաշտային աշխատանքներ իրականցնողներ՝ ՀՕՏԾ գործողությունների իրականացման համար: ԻԽ-ն աշխատանքի կանցնի Տրանշ 3-ի համար ՀՀ կառավարության կողմից համապատասխան որոշմամբ ՀՕՏԾ-ն հաստատվելուց և ՀՕՏ ֆինանսական միջոցների հատկացումից անմիջապես հետո: Ազգային դաշտային աշխատանքների համակարգողը կհանդիսանա ԻԹ աշխատանքների կառավարման և հաշվետըողականության առանցքային անձը, իսկ նա, իր հերթին, հաշվետու կլինի Արտաքին ազդեցության և վերաբանկեցման համակարգողին: ԻԹ հիմնական առաջադրանքները մանրամասնեցված են Աղյուսակ Է1-ում:
110. ՀՕՏԾ իրականացման ԻԽ (ԻԹ) Տեխնիկական առաջադրանքը ներկայացված է **Հավելված 7-ում:**
111. Ծրագրի կառավարման խորհուրդը (ԾԿԽ), որը կազմված է ՀՀ վարչապետի նախագահությամբ շահառու կողմ հանդիսացող նախարարությունների ներկայացուցիչներից, ստեղծվել է Ծրագիրը

վերահսկելու և բարձրաստիճան որոշումներ կայացնելու նպատակով:

2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

112. Համայնքային իշխանությունները տրամադրել են տվյալներ ԱԵԱ-ների վերաբերյալ, և Ծրագիրը կշարունակի հայցել նրանց աջակցությունը ՀՕՏԾ իրականացման ընթացքում: Համայնքային իշխանություններն աջակցում էին սոցիալական հետազոտությունների իրականացմանը, հողի չափագրումներին և հողի տեսակի որոշմանը և աջակցում էին համայնքների և ԱԵԱ-ների հետ խորհրդակցությունների կազմակերպմանը: Անհրաժեշտության դեպքում նրանք կաջակցեն նաև բողոքների և այլ խնդիրների լուծման գործում: Չնայած փոխհատուցման գումարն անմիջապես կվճարվի ԱԵԱ-ների բանկային հաշվին՝ տեղական իշխանությունների աջակցությունը կպահանջվի ԱԵԱ-ներին փոխհատուցումների մասին տեղեկացնելու համար:

3. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿ

113. ԵՆԲ-ն կվերանայի և կհաստատի վերջնական ՀՕՏԾ-ն, պարբերաբար կստուգի և մշտադիտարկի Ծրագրի և ՀՕՏԾ-ի իրականացումը և կապահովի պայմանագրի կնքման և շինարարական աշխատանքների մեկնարկի թույլատվությունը:

4. ԱՅԼ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

114. Մի քանի գերատեսչություններ արդեն մասնակցել են և կմասնակցեն ՀՕՏ առաջադրանքների պատրաստմանը և իրականացմանը: Դրանցից են.

i. **Ֆինանսների նախարարություն**. ՀՕՏԾ-ի իրականացման համար բյուջեները տրամադրվելու են ՏԿՆ-ին Ֆինանսների նախարարության կողմից վերջնական ՀՕՏԾ-ի պաշտոնական հաստատումից հետո:

ii. **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**. պատասխանատու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի մասին տեղեկությունը տրամադրելու համար, ինչպես նաև սեփականության իրավունքի պետական գրանցման համար:

iii. **Տեղական դատարաններ մարզերում.** դատական կարգով օտարման դեպքում ՏԿՆ-ն ստիպված է հենվել մարզերում տեղական դատարանների վրա, որոնք պատշաճ դատական կարգով պետք է ուսումնասիրեն դատական կարգով օտարման հետ կապված դեպքերը, իրականացնեն դատական լսումներ և որոշեն՝ արդյոք հողերը կարող են օտարվել և ինչ գնով:

iv. **Սոցիալական երաշխիքների գծով խորհրդատուներ՝ ընդգրկված ՀՕՏԾ առաջադրանքներում.**

- ԾԻԿ-ը վարձել է միջազգային և տեղական ՀՕՏ մասնագետների, որոնք կվերանայեն և կամփոփեն Տրանշ 3-ի ՀՕՏԾ-ն:
- Գույքի անկախ գնահատողը. որակավորված մասնավոր կազմակերպություն է, որը վարձվել է ԱԶԲ կողմից ազդեցության ենթարկվող գույքերը գնահատելու համար:
- Արտաքին մոնիտորինգի գործակալությունը (ԱՄԳ) կվարձվի Տրանշ 3-ի ՀՕՏԾ-ի իրականացման արտաքին մոնիտորինգը և գնահատումը կատարելու համար: ԱՄԳ-ն կհանձնի անկախ մոնիտորինգի և գնահատման հաշվետվություն ՀՕՏ իրականացման վերաբերյալ ՏԿՆ-ի ԾԻԿ-ին (ՏՀԹ) և ԵՆԲ-ին:

5. ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

115. ԾԻԿ Տարաբնակեցման համակարգող թիմը պատշաճ կերպով համալրված է մասնագիտացված անձնակազմով՝ Տրանշ 3 ՀՕՏԾ իրականացման կառավարման համար: ԾԻԿ առկա աշխատակազմը (ՏՀԹ) ՀՕՏԾ իրականացման հարուստ փորձ ունի ՀՕՏԾ իրականացման գրեթե 12 տարվա կոլեկտիվ փորձով՝ իրականացնելով Տրանշ 2 ՀՕՏԾ-ն, ինչպես նաև երկրում այլ նմանատիպ ծրագրեր: Ի լրումն, ԾԻԿ-ը կներգրավի փորձառու իրականացման թիմ՝ ՀՕՏԾ իրականացման գործողությունները կատարալու համար:

6. ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

116. ՀՕՏԾ իրականացման գործընթացում ներգրավված տարբեր կողմերի պարտականությունները ներկայացված են Աղյուսակ Է1-ում:

Աղյուսակ Է1: ՀՕՏԾ իրականցման գործընթացում ներգրավված մարմինների դերը և պարտականությունները

Պատասխանատու մարմին	Գործունեություն
ՏԿՆ	• Ամբողջական պատասխանատվություն Ծրագրի համար; • ՀՕՏ-ի բոլոր առաջադրանքների իրականացում և ֆինանսավորում; և • Գործակալությունների փոխհամագործակցության և փոխկապվածության համակարգում:
ՀՀ ֆինանսների նախարարություն	• ՀՕՏԾ-ի իրականացման համար բյուջեի տրամադրում:
ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	• Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի, ինչպես նաև ՀՕՏԾ-ով սահմանված այլ տվյալների մասին տեղեկության տրամադրում:
Տեղական մարզային դատարաններ	• Դատական կարգով օտարման դեպքերի ուսումնասիրում • Դատական լսումների անցկացում և որոշում՝ արդյոք հողերը կարող են օտարվել և ինչ գնով:
Տեղական ինքնակառավարման մարմիններ	• Աջակություն բողոքների և մասնակցություն այլ խնդիրների լուծման գործու; • Աջակցություն ԾԻԿ-ին՝ ՀՕՏԾ իրականացման ընթացակարգերի և փոխհատուցումների մասին ԱԵԱ-ներին տեղեկացնելու գործում; • ՀՕՏԾ իրականացման ընթացքում անհրաժեշտ տեղեկատվության/տեղեկանքների տրամադրում ԾԻԿ-ին և ԻԹ-ին:
ԾԻԿ-ՏՀԹ	• Կադաստրի գրասենյակի և ՏԻՄ-երի հետ աշխատանքի համակարգում; • Կադաստրային քարտեզների և հողատարածքների տվյալների ձեռքբերում; • Աջակցության խորհրդատուներին՝ քարտեզավորման, հետազոտման և ճշգրտման գործունեություններում; • Խորհրդատուների և ՏԻՄ-երի աջակցությամբ հանրային լսումների կազմակերպում և իրականացում; • ՀՕՏԾ-ի և տեղեկատվական ձեռնարկի հրապարակում; • ՀՕՏԾ իրականացման տարբեր փուլերում ԱԵԱ-ների ծանուցում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների; • ՀՕՏԾ-ի իրականացման և փոխհատուցումը բաշխելու պլանավորում և կառավարում (ներառյալ Օրինականացման պլանի իրականցումը);

Պատասխանատու մարմին	Գործունեություն
	• Դատական կարգով օտարման գործընթացների նախաձեռնում և ըստ անհրաժեշտության դատարանների հետ աշխատանքների համակարգում; • ՀՕՏԾ տեղեկատվական բազայի պահպանում; • Անհատական բողոքարկումները ԲԼՄ միջոցով կարգավորման հարցում աջակցություն; • Պատշաճ ներքին մոնիտորինգի և հաշվետվողականության ապահովում; • Արտաքին մոնիտորինգի գործակալության (ԱՄԳ) վարձում; • ՀՕՏԾ ճշգրտող միջոցառումների իրականացում,եթե այդպիսիք լինեն; • Համապատասխան պետական մարմինների հետ աշխատանքի համակարգում՝ անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրելու նպատակով; • ՀՕՏԾ բյուջեի արագ տրամադրման ապահովում; • ՀՕՏ-ին վերաբերվող բոլոր գործունեությունների համակարգման ապահովում; • Ցանկացած այլ խնդիրներ, որոնք կապված են ԱԵԱ-ների տարաբնակեցման և վերականգնման հետ:
Իրականացման Խորհրդատու	• Աջակցություն համայնքների ղեկավարներին և ազդեցության ենթակա այլ անձանց իրազեկմանը՝ ՀՕՏԾ մեկնարկի, իրականացման փուլերի և ընթացակարգերի վերաբերյալ; • Օտարման պայմանագրերի և համաձայնագրերի, ուղեկցող նամակների պատրաստում՝ համաձայն Օրենքի և ՀՀ օրենսդրության պահանջների և ժամկետների: • Օտարվող սեփականության օտարման պայմանագրերի և համաձայնագրերի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի հստակեցում և հավաքագրում՝ յուրաքանչյուր հողամասի և այլ անշարժ գույքի համար, ինչպես նաև ԱԵԱ-ների կողմից դրանց ձեռքբերման և տրամադրման գործընթացի վերաբերյալ խորհրդատվություն և աջակցություն; • Աջակցությունը ԱԵԱ-ներին՝ թերի կամ սխալ փաստաթղթերի ուղղման, վերականգնման կամ փոփոխման ուղղությամբ; • Թարմացված տեղեկատվության հիման վրա յուրաքանչյուր ԱԵԱ-ի համար առանձին փաթեթի նախապատրաստում՝ օտարմանն ուղղված կադաստրային և նոտարական համապատասխան գործողություններ իրականացնելու համար; • ՀՕՏԾ առկա բազայի թարմացում և ծրագրային զարգացում՝ ՀՕՏԾ իրականցման փուլում անհաժեշտ տեղեկատվության համար; • Դատական գործերի, դրանց ընթացքի, կասեցման, առկա խնդիրների և ավարտի վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում և թարմացում ՀՕՏԾ տվյալների բազայում, ինչպես նաև առաջընթացի հաշվետվությունների պատրաստում և ներկայացում ԾԻԿ-ին: • Մասնավոր սեփականության ընդհանուր անշարժ գույքի կազմից օտարվող մասի սահմանված կարգով բաժանման, առանձնացման և ԱԳԿ ՊԿ կողմից դրանց պետական գրանցման գործընթացի կազմակերպում; • Օժանդակություն մասնատման գործընթացից հետո կադաստրի


Պատասխանատու մարմին	Գործունեություն
	տարածքային ստորաբաժանման գրասենյակների կողմից գրանցված գույքի չօտարվող հատվածների սեփականության վկայականների հաձնմանը սեփականատերերին; • Օժանդակություն համայնքային սեփականության օտարված հողի պետական գրանցմանը՝ ապահովելով համայնքի ղեկավարների կողմից հատակագծերի հաստատումը և պետական գրանցման համար անհրաժեշտ դիմումների և այլ հիմքերի տրամադրումը; • Օտարվող սեփականության մասով տեղական և պետական բյուջեի նկատմամբ առկա ապառքների, կոմունալ և պարտադիր վճարների մասով առկա պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ԾԻԿ-ին; • ԱԵԱ-ների համար բանկային հաշվեհամարների բացման գործընթացի կազմակերպում՝ ապահովելով ԱԵԱ-ներից անհրաժեշտ տվյալների ստացումը կամ փոխանցումը; • Օտարման պայմանագրերի/համաձայնագրերի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի հանձնում համապատասխան նոտարական գրասենյակներին՝ պայմանագրերի/համաձայնագրերի վավերացման կապակցությամբ նոտարական գործողություններ իրականացնելու համար; • Օտարման պայմանագրերի/համաձայնագրերի կնքման բուն գործընթացի կազմակերպում ԱԵԱ-ների հետ նոտարական գրասենյակներում; • Վճարման հայտերի ներկայացում ԾԻԿ-ին՝ փոխհատուցման վճարումների իրականացման նպատակով: • ՀՀ անունով իրավունքի պետական գրանցման վկայականների (կից հատակագծերով) ստացում և հանձնում ՊՈԱԿ-ին՝ պատշաճ փաստաթղթավորմամբ; • Ժառանգության իրավունքի կարգավորման խնդիրներ պարունակող հողամասերի դեպքում աջակցություն ժառանգներին՝ժառանգության բացման, ժառանգության իրավունքի վկայագրերի ստացման և դրանց պետական գրանցման հարցերի իրականացման գործում; • Կապի հաստատում արտերկրում գտնվող սեփականատերերի հետ և անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում՝ կապված լիազորագրերի ստացման հետ: • Աջակցություն ԱԵԱ-ներին անձնագրերի վավերականության ժամկետների երկարացման նոր անձնագրերի ստացման հարցերում; • Օտարման պայմանգրի կնքման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների, տառասխալների ուղղման և ճշգրտման գործընթացի կազմակերպում; • Օտարման պայմանագրի կնքման առկա իրավական խոչընդոտների վերացմանն ուղղված ցանկացած օրինական գործողությունների իրականացում՝ համաձայն ՀՕՏՇ-ի և ՀՕՏԾ-ի: • Տվյալ համայնքի համապատասխան ներկայացուցչի հետ միասին ԱԵԱ-ների կողմից բողոքների գրանցման ապահովում դիմումների և բողոքների գրանցամատյանում; • Բողոքների թղթային և էլեկտրոնային տարբերակների պատշաճ փաստաթղթավորում և փոխանցում ԾԻԿ-ին՝ աջակցելով ԾԻԿ-ին

Պատասխանատու մարմին	Գործունեություն
	դրանց քննարկման և լուծման ողջ գործընթացում; • Աջակցություն ԾԻԿ-ին՝ Բողոքների քննման խմբի (ԲՔԽ) նիստերի կազմակերպման ու իրականացման գործընթացում: • Ներգրավում (ըստ անհրաժեշտության) ԲՔԽ նիստերին՝ որպես անդամ կամ մասնագետ; • Աջակցություն ԱԵԱ-ներին՝ իրենց բողոքները ՀՕՏԾ-ով սահմանված բողոքների լուծման մեխանիզմի միջոցով լուծելու գործընթացում; • ՀՕՏ բոլոր ճշգրտող միջոցառումների պլան(ներ)ի իրականացումը, որոնք կբացահայտվեն և կսահմանվեն Արտաքին մոնիթորինգի գործակալության (ԱՄԳ) ՀՕՏԾ Համապատասխանության հաշվետվություններով; • ԱԵԱ-ների հաշվեհամարներին փոխհատուցման փոխանցման ապահովում; • ԱԵԱ-ների տեղեկացում՝ իրենց հաշվեհամաներին փոխահատուցման փոխանցման վերաբերյալ; • Փոխհատուցման գումարը ԱԵԱ կողմից չստանալու կամ բողոքարկելու դեպքում յուրաքանչյուր սեփականության օտարման վերաբերյալ հայցի ներկայացում դատարան: • Որպես ԾԻԿ-ի ներկայացուցիչ մասնակցություն դատական գործերին դատական բոլոր ատյաններում; • Դատական ակտերի ստացում և դրանց հանձնում ԾԻԿ-ին; • Սեփականության օտարման հետ կապված սեփականատիրոջ համար հարկային պարտավորություններ առաջացանալու մասին տեղեկացում ԱԵԱ-ներին, և վերջիններիս կողմից հարկերի հաշվարկի կազմակերպում և տրամադրումը ԾԻԿ-ին; • Դատական գործընթացների ընթացքի, կասեցման, խնդիրների և ավարտի մասին տեղեկատվության թարմացում ՀՕՏԾ բազայում, ինչպես նաև առաջընթացի մասին հաշվետվությունների պատրաստում և հանձնում ԾԻԿ-ին: • Աջակցություն ԾԻԿ-ին՝ պատրաստելու անհրաժեշտ փաստաթղթեր, իրականացնելու չափագրում, կորուստների գնահատում՝ նախագծի փոփոխության և ՀՕՏԾ լրացման ու օտարման փոփոության դեպքերում:
Արտաքին մոնիթորինգի գործակալություն	• ՀՕՏԾ իրականացման արտաքին մոնիտորինգի և գնահատման իրականացում; • ՀՕՏԾ իրականացման Համապատասխանության հաշվետվության (ների) և մոնիտորինգի ու գնահատման հաշվետվության պատրաստում ՏԿՆ-ի ԾԻԿ-ի (ՏՀԹ) և ԵՆԲ-ի համար:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

117. Արդյունավետ կազմակերպումը կարևոր է հարկադիր տարաբնակեցումն արդյունավետորեն իրականացնելու կառավարելու համար: Անհրաժեշտ է վերոնշյալ ինստիտուցիոնալ մարմինների հատուկ մասնակցությունը: **Պատկեր Է1**-ը ստորև ներկայացնում է ՀՕՏԾ իրականացման ինստիտուցիոնալ կառուցվածքը:

Պատկեր Է1. ՀՕՏ ինստիտուցիոնալ կառուցվածքը և կապերը



Ը. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ

118. Բողոքնե[illegible]ն մեխանիզմ[illegible]նելի լինի ծրագրային մակարդակում, որպեսզի ԱԵԱ-ն[illegible] ունեն[illegible] ցանկացած անախորժ որոշում, գործելակերպ կամ[illegible]առաջանում է հողի կամ այլ ակտիվների փոխհատուցման արդյունքում: Հիմնական նպատակն է տուժող կողմի հետ խորհրդակցելով տեղում լուծել տարաբնակեցման վերաբերյալ որևէ դժգոհություն՝ ՀՕՏԾ-ի սահուն իրականացմանը նպաստելու համար: Մյուս կարևոր խնդիրն է ժողովրդավարացնել զարգացման գործընթացը տեղական մակարդակում և ապահովել հաշվետվողականությունը ազդեցության ենթակա անձանց հանդեպ:
119. Ի սկզբանե բողոքների լուծման գործընթացը սկսվեց որպես ոչ պաշտոնական գործընթաց՝ ՀՕՏԾ-ի մշակման ընթացքում: ՀՕՏԾ-ի նախագծային տարբերակի մշակման ընթացքում պաշտոնական նամակներ ուղարկվեցին ազդեցության ենթակա բոլոր համայնքներին՝ համապատասխան համայնքների վարչարարական գրասենյակներից նշանակելով պատասխանատուներ, ովքեր այս փուլում ԱԵԱ-ներից կստանան հնարավոր բողոքները կամ կբարձրացնեն ողջ համայնքի մակարդակով ՀՕՏ-ին առնչվող խնդիրները: ԾԻԿ-ը բողոքների գրանցման հետագա

հնարավորություն է ընձեռել ԱԵԱ-ներին՝ ՀՀ կառավարության բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշման վերաբերյալ ծանուցումներն ուղարկելու միջոցով: ՀՕՏԾ-ի մշակման այս փուլում ԱԵԱ-ները կարող են գրանցել իրենց բողոքները կամ հարցերը գրավոր ձևով՝ դրանք անմիջապես ուղղելով ԾԻԿ-ին: Փաստորեն, այս փուլում ԱԵԱ-ներից ստացված հարցերը միայն վերաբերում էին իրենց հողերի չօտարվող մասը օտարելու պահանջին՝ համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի:

120. ՀՕՏԾ-ի իրականացման ընթացքում և դրանից հետո ԾԻԿ-ը պաշտոնապես կհիմնի բողոքների լուծման մեխանիզմ: Բողոքների լուծման պաշտոնական մեխանիզմում ներգրավված կլինեն մի շարք շահագրգիռ կողմեր՝ ԾԻԿ-ը, Բողոքների քննման խումբը (ԲՔԽ) և պետական լիազոր մարմինը (ՏԿՆ-ն): Ջանքեր կգործադրվեն Բողոքների քննման խմբի (ԲՔԽ) աջակցությամբ և բոլոր շահառուների ներգրավմամբ բողոքները ԾԻԿ-ի մակարդակով լուծելու համար: Ազդեցության ենթակա անձանց բողոքների գրանցման և լուծման գործում ԲՔԽ-ն կապահովի արդարություն և թափանցիկություն:
121. ԲԼՄ-ի առկայության մասին ԱԵԱ-ները տեղեկացվել են ՀՕՏԾ-ի մշակման փուլում՝ հանրային լսումների ընթացքում: ՀՕՏԾ-ի հաստատումից հետո ԲԼՄ-ն ԱԵԱ-ներին կներկայացվի ՀՕՏԾ-ի տեղեկատվական ձեռնարկի միջոցով:
122. ԲԼՄ-ն կապահովի, որ տուժող կողմերի համար ողջամտության սահմանում մատչելի լինեն տեղեկատվության աղբյուրները, խորհրդատվությունն ու փորձագետները, որոնք անհրաժեշտ են բողոքների լուծման գործընթացին արդար և անաչառ պայմաններով ներգրավվելու համար: Երկու բողոքները մուտքային կետերի միջոցով ազդեցության ենթակա համայնքների ձայնը լսելի կդառնա, ինչպես նաև դրանք կապահովեն ԲԼՄ-ի հասանելիությունը ԱԵԱ-ների համար: Դրանք են՝
    - Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) գրասենյակները,
    - Բողոքի առանցքային անձը (ԲԱԱ):
123. ԲԱԱ-ն կլինի ԾԻԿ/ԻԽ-ի ներկայացուցիչը: ԲԱԱ-ի հետ հանդիպումների ժամանակացույցը կհայտարարվի ՀՕՏԾ իրականացման խմբի մոբիլիզացիայի ժամանակ: Առնվազն ամսական երկու հանդիպում կկազմակերպվի ազդեցության ենթակա յուրաքանչյուր համայնքում: Համայնքներում, որտեղ բազմաթիվ խնդիրներ են առաջանում, լրացուցիչ հանդիպումների անհրաժեշտություն կառաջանա: ԲԱԱ-ն կկազմի բողոքներն ընդունելու նպատակով համայնքներում իր ներկայության ժամանակացույցը, որի մասին ԱԵԱ-ները և ԱԵՏՏ-ները կիրազեկվեն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ինչպես նաև տեղեկատվությունը կտեղադրվի հասարակական վայրերում: Մինչև ՀՕՏԾ-ի իրականացման ավարտը յուրաքանչյուր համայնքում ԲԱԱ–ի հետ հանդիպումների ժամանակացույցը կվերանայվի համապատասխանաբար: Յուրաքանչյուր ՏԻՄ գրասենյակ պետք է նշանակի իր ներկայացուցիչը, ով պատասխանատու կլինի բողոքների/ պահանջների/ հայցերի հավաքագրման և դրանք ԲԱԱ -ին կամ անմիջապես ԾԻԿ-ին տրամադրելու համար:
124. Ե՛վ ՏԻՄ գրասենյակները, և՛ ԲԱԱ-ն պատասխանատու կլինեն բողոքները/ պահանջները/ հայցերը հավաքագրելու/հաշվառելու և պահանջվող համապատասխան փաստաթղթերի հետ միասին ԾԻԿ-ին հասցեագրելու համար՝ դրանք ստանալուց հետո առավելագույնը 5 օրվա ընթացքում: Այնուամենայնիվ, վերոնշյալ մուտքային կետերը չեն սահմանափակում քաղաքացու իրավունքը՝ իրենց բողոքները/ պահանջները/ հայցերը անմիջապես ԾԻԿ-ին և/կամ ՏԿՆ-ին ուղղելու համար: Բացի այդ, ցանկացած տուժած անձ ԲԼՄ ցանկացած փուլում իրավունք ունի գործը ներկայացնել ընդհանուր իրավասության դատարան՝ իր բողոքի լուծման նպատակով:

1. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

125. ԲԼՄ-ն սահմանում է այն հաստատությունները (կողմերին), որոնք կզբաղվեն ԱԵԱ-ների բողոքներով ու մտահոգություններով: ԲԼՄ-ի ինստիտուցիոնալ կառուցվածքն ունի տարբեր

մակարդակներ, այնպես որ բողոքարկուն կարող է հայցը տեղափոխել ավելի բարձր մակարդակներ, եթե նա բավարարված չէ ավելի ցածր մակարդակում տրված լուծումով:

1.1 ԲԼՄ 1-ին ՄԱԿԱՐԴԱԿ –իրականացնող մարմին (ԾԻԿ)

126. ԲԼՄ-ի առաջին մակարդակը ԾԻԿ-ն է: ԾԻԿ-ը ստանում և լուծում/արձագանքում է ԱԵԱ-ների բողոքներին: ԾԻԿ-ի կողմից բողոքների լուծման քայլերը հետևյալն են.

1)Բողոքների/ պահանջների/ հայցերի գրանցում. չլուծված բողոքները/ պահանջները/ հայցերը կարող են ստացվել ԲԱԱ-ից կամ անմիջապես ԱԵԱ-ից: Բողոքը/ պահանջը/ հայցը ԾԻԿ-ի ընդհանուր համակարգում գրանցվելուց բացի, գրանցվում է նաև ՀՕՏԾ-ի ընդհանուր տվյալների բազայում՝ հետագա մոնիտորինգի և հաշվետվողականության նպատակով:

2)Իրավասության ստուգում. ստանալով բողոքը, հարցը, մտահոգությունը՝ ԾԻԿ-ի առանցքային կետը որոշում է դրանց իրավասությունը: Որոշումը նշում է, թե արդյոք բողոքը կարող է արդյունավետորեն քննվել ԾԻԿ-ի կողմից, թե անհրաժեշտ է այն տեղափոխել ավելի բարձր մակարդակ: ԾԻԿ-ն իրավասու չէ զբաղվել բողոքներով, եթե

ա.բողոքը/հարցը ներկայացվել է դրանց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետի լրանալուց հետո, եթե խնդրի/հարցի բնույթը դուրս է ԲԼՄ-ի պաշտոնական մանդատի շրջանակներից (օրինակ՝վեճի առարկա հողի սեփականության հարցը),

բ.բողոքարկուն չունի բողոք ներկայացնելու իրավասություն,

գ.բողոքը/հարցը ներկայացվել է օտարվող հողի նախկին սեփականատիրոջ կողմից և առնչվում է արդեն ստորագրված և փոխհատուցված օտարման պայմանագրին, որի հիման վրա գրանցվել են ձեռք բերողի (պետության) սեփականության իրավունքները հողի նկատմամբ:

Եթե բողոքը/հարցը վերաբերում է վերոնշյալ դեպքերին, ԾԻԿ-ը ձևակերպում է պատասխանը և նամակով ուղարկում բողոքարկուին՝ բացատրելով մերժման պատճառները, հետագա հնարավոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են ԱԵԱ-ին տեղեկացնելու համար, որ նրա բողոքը փոխանցվել է ԲԼՄ-ի հաջորդ մակարդակ:

3)Բողոքը դիտարկելու նախնական ժամանակացույցի կազմում. բողոքը կկարգավորվի ԲԱԱ-ի կողմից բողոքը և առնչվող փաստաթղթերը ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում (եթե ՀՀ օրենսդրությամբ այլ ժամանակացույց սահմանված չէ): Եթե դեպքը բարդ է և պահանջում է հետազոտություն (օրինակ՝ ստուգում տեխնիկական փորձագետների կողմից կամ պետության իրավական եզրակացությունը կամ արտոնագրված մասնավոր անձանց եզրակացությունը), ապա բողոքի քննման ժամանակահատվածը կարող է երկարացվել: Նման դեպքերում բողոքարկուին կուղարկվի գրավոր ծանուցում՝ երկարաձգման պատճառների բացատրությամբ, գործընթացի նկարագրությամբ և դիտարկման արդյունքների ուղարկման նախատեսված ամսաթվի նշումով:

4)Բողոքի քննման նախաձեռնում. հավաքագրած հիմնական տեղեկատվության և պարզաբանումների հիման վրա ԾԻԿ-ը կմշակի ժամանակի վրա հիմնված գործողությունների պլան՝ բողոքը լուծելու համար: ԾԻԿ-ը (ա) անհրաժեշտության դեպքում կկազմակերպի դաշտային այցելություններ, (բ) խորհրդատուներից կպահանջի լրացուցիչ պարզաբանումներ, ըստ անհրաժեշտության՝ տեխնիկական փորձագետներ և այլ համապատասխան կողմեր, (գ) անհրաժեշտության դեպքում հանդիպումներ ԱԵԱ-ների հետ: ԾԻԿ-ը կարող է ըստ անհրաժեշտության արտոնագրված կազմակերպություններից պահանջել անկախ փորձագետներ, ինչպես օրինակ՝ չափագրման, գնահատման և այլ մասնագետներ: Դաշտային բոլոր այցելությունները, փորձագետների և ԱԵԱ-ների հետ հաղորդակցությունները պատշաճ կփաստաթղթավորվեն, այդ թվում՝ հանդիպումների արձանագրությունները, նամակները, լուսանկարները և այլն:

5)Գործողությունների պլանի իրականացման համար միջոցների հատկացում. ՀՕՏԾ-ի իրականացման բյուջեից պահանջվող միջոցները հասանելի կլինեն՝ բողոքի լուծումը ժամանակին ապահովելու համար:

6)Բողոքների փակում. բողոքը դիտարկելուց հետո և/կամ բողոքի լուծման Գործողությունների պլանը իրականացնելուց հետո ԾԻԿ-ը ԱԵԱ-ին կուղարկի արդյունքների վերաբերյալ գրավոր պատասխան: ԱԵԱ-ի հետ կարող է կազմակերպվել հանդիպում՝ հավաստիացնելու համար, որ բողոքարկուի պահանջը լուծվել է ամբողջությամբ և հետագա գործողությունների անհրաժեշտություն չկա, կամ, պահանջն ընդունելի չլինելու դեպքում, ԱԵԱ-ին բացատրել մերժման պատճառները:

7)ԾԻԿ-ը կգրանցի բոլոր դեպքերը՝ լուծված և լուծում չստացած: Բողոքարկվող դեպքերի բոլոր գրանցումները կներմուծվեն ՀՕՏԾ-ի ընդհանուր տվյալների բազա: Այս ԲԼՄ գրանցումները կդիտարկվեն մոնիտորինգի մասնագետի կողմից:

8)Եթե բողոքն ամբողջական լուծում չի ստացել կամ եթե ԱԵԱ-ն բավարարված չէ պատասխանով, նա կարող է իր բողոքը ներկայացնել Գործադիր մարմնին (ՏԿՆ):

127. Եթե ԱԵԱ-ն բավարարված չէ ԾԻԿ-ի պատասխանով, ապա ԲՔԽ-ն ԱԵԱ-ի պահանջով կարող է դիտարկել դեպքը՝ ապահովելով դեպքի համակողմանի, արդար և թափանցիկ քննարկում: ԲՔԽ քննարկում կարող է հրավիրվել նաև ԾԻԿ-ի որոշմամբ՝ ԱԵԱ-ների կողմից խմբային բողոքների դեպքում: ԱԵԱ-ի բողոքը բովանդակային առումով դիտարկելու և դատելու նպատակով ԲՔԽ-ի լեգիտիմությունն ապահովվում է ԲՔԽ-ի կազմում բալանս ստեղծելու միջոցով, որը կընդգրկի անկախ դիտորդի՝ դիտարկման գործընթացի անաչառությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով: Առաջարկվում է ԲՔԽ-ի հետևյալ կազմը.

Անդամներ	**Զբաղեցրած պաշտոնը**
ԾԻԿ-ի ներկայացուցիչ (ՏՀԽ/ԻԽ)	նախագահ
Համապատասխան դեպքում ՏԻՄ-ի ներկայացուցիչը	անդամ
Համապատասխան դեպքում հավաստագրված տեխնիկական փորձագետ	անդամ
Համապատասխան դեպքում Խորհրդատուի/Կապալառուի ներկայացուցիչը	անդամ
ԱԵԱ-ի ներկայացուցիչը	անդամ
Անկախ կողմ (օրինակ՝ ՀԿ)	դիտորդ

ԲՔԽ-ի միջոցով պարզաբանումներ ձեռք բերելու նպատակով կիրականցվեն հետևյալ քայլերը նախքան բողոքի դիտարկման գործընթացն սկսելը.

1)ԲՔԽ նիստերի հրավիրում. նախքան բողոքի դիտարկման գործընթացն սկսելը կհրավիրվի ԲՔԽ նիստ և անհրաժեշտության դեպքում կհավաքագրվի անհրաժեշտ տեղեկատվությունը: Ընդհանուր տեղեկությունները կարող են ներառել լուսանկարներ, տեսանյութ, հավաստագրեր, տեխնիկական փորձագետի եզրակացությունը և այլն, որոնք կօգնեն ԲՔԽ-ին հասկանալ բողոքների պատճառները և ժամանակագրությունը:

2)Հանդիպում բողոքարկուի հետ. ԲՔԽ անդամները կհանդիպեն բողոքարկուի հետ՝ պարզաբանումներ ձեռք բերելու համար: Յուրաքանչյուր հանդիպումից հետո կպատրաստվի արձանագրություն, որի պատճենը կտրամադրվի բողոքարկուին, ԲՔԽ անդամներին և այլ շահառուներին:

3)Այցելություն տեղամաս. անհրաժեշտության դեպքում ԲՔԽ անդամները կայցելեն տեղամաս:

128. Բողոքի քննման գործընթացին կարող են մասնակցել մի շարք մասնագետներ, ինչպես օրինակ՝ գնահատման մասնագետ, գյուղատնտես, չափագրման մասնագետ, նախագծային ինժեներ և

այլն՝ ըստ յուրաքանչյուր դեպքի անհրաժեշտության: Անկախ կողմը (օրինակ՝ՀԿ ներկայացուցիչը) կարող է հրավիրվել ԱԵԱ-ի պահանջով:

1.2 ԲԼՄ 2-րդ ՄԱԿԱՐԴԱԿԸ -Գործադիր մարմին (ՏԿՆ)

129. Եթե ԲՔԽ-ի որոշման հիման վրա ԾԻԿ-ի արձագանքը ԱԵԱ-ին չի բավարարում, ապա ԱԵԱ-ն կարող է բողոքը ներկայացնել Գործադիր մարմնին (ՏԿՆ): ՏԿՆ-ն հետևում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին՝ դեպքի գրանցման, վերանայման և լուծման համար՝ Ծրագրի փաստաթղթերի պահանջների հիման վրա: Այս մակարդակում բողոքը լուծելիս ԾԻԿ-ը կարող է միայն ընդգրկվել գործընթացին աջակցելու նպատակով, սակայն չի պատասխանի բողոքին:

1.3 Բողոքի քննումը դատարանում

130. Այն դեպքում, եթե բողոքների լուծման համակարգը չի կարողանա բավարարել ԱԵԱ-ին, վերջինս կարող է բողոքը ներկայացնել դատարան: Վերոհիշյալ մեխանիզմը չի ազդում կամ սահմանափակում ԱԵԱ-ների իրավունքը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրենց իրավունքները, ներառյալ դատական կարգով և բողոքների լուծման գործընթացի ցանկացած պահին դիմել դատարան և պետական այլ մարմիններին:

2. ԲԼՄ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ և ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ


131. ԲԼՄ-ի իրականացումը մոնիտորինգի կենթարկվի ներքին և արտաքին մոնիտորինգի միջոցով: ԲԼՄ-ի մոնիտորինգի հիմնական ցուցանիշներն են՝ բողոքների քանակը և տեսակը, լուծում ստացած դեպքերը, լուծման ժամկետները և այլն: ԾԻԿ-ի և ԱՄԳ-ի կողմից կմշակվեն լրացուցիչ ցուցանիշներ ներքին/արտաքին մոնիտորինգի համար և մոնիտորինգի արդյունքների հետ միասին կներկայացվեն Սոցիալական մոնիտորինգի կիսամյակային հաշվետվություններում (ՍՄԿՀ), Առաջընթացի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններում (ԱԵՀ) և Համապատասխանության հաշվետվություններում:


3. ԲԼՄ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲՅՈՒՋԵՆ

132. ՀՕՏԾ իրականացման բյուջեն կներառի ԲԼՄ իրականացման ծախսերը, մասնավորապես՝ մասնագիտական եզրակացություն հայտնելու համար փորձագետներ վարձելու նպատակով, դաշտային ստուգումների, հանդիպումների կազմակերպման նպատակով և այլն: ՀՕՏԾ-ի իրականացման բյուջեն կներառի նաև ՀՕՏԾ-ի հետիրականացման ժամանակաշրջանում ԲԼՄ-ի իրականացման ծախսերը:

133. ԲԼՄ-ի ինստիտուցիոնալ կառուցվածքը ներկայացված է Նկար Ը1-ում:

Գծապատկեր Ը1: Բողոքների լուծման մեխանիզմը




Չքննարկված
2-րդ մակարդակ
-ՏԿՆ 30 օրվա ընթացքում
Քննարկված և փաստագրված բողոքներ
Չքննարկված
Ընդհանուր իրավասության դատարան
Դժգոհություններին առնչվող բոլոր գործընթացների մոնիտորինգը կիրականցվի ԱՄԳ-ի և ԾԻԿ կողմից

Թ. ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

134. ՀՕՏԾ վերջնականացման և իրականացման ժամանակացույցը հիմնվել է Ծրագրի ընդհանուր իրականացման ծրագրի վրա: Հողի օտարմանը և տարաբնակեցմանը վերաբերող բոլոր միջոցառումները պլանավորվել են՝ շինարարական աշխատանքների նախաձեռնումից և տեղահանումից առաջ փոխհատուցման վճարումն ապահովելու համար: Առաջարկվող ժամանակացույցը նախնական է և ենթակա է փոփոխության՝ կախված Ծրագրի միջոցառումների առաջընթացից և որևէ խիստ անհրաժեշտությունից: ՀՕՏԾ վերջնականացումը իրականացվել է 2014թ. նոյեմբերից մինչև 2015թ. հունիս ընկած ժամանակահատվածում՝ համապատասխան ռեսուրսների փոխանցմամբ և խորհրդատուների ներգրավմամբ:
135. Ծրագրի՝ իրականացման ենթակա ՀՕՏ միջոցառումները և իրականացման ժամկետները ներկայացված են **Աղյուսակ Թ1-ում:**

1. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ

136. ԾԻԿ-ը կատարել է հետևյալ գործողությունները և նախապատրաստական առաջադրանքները ՀՕՏԾ-ի իրականացման նպատակով.
1)Ծրագրի իրականացման կազմակերպությունը (ԾԻԿ-ը) տեղում ունի Տարաբնակեցման համակարգող թիմ (ԾԻԿ աշխատակազմ և երկու խորհրդատուներ)
2)Արտաքին մոնիտորինգի գործակալության (ԱՄԳ) ընտրության մրցույթը ընթացքում է, և պլանավորվում է այն ներգրավել ՀՕՏԾ իրականացման մեկնարկից առաջ:
3)Նախագծող խորհրդատուն տրամադրել է ծրագիծը:
4)ՄՉՀ-ն, ակտիվների գույքագրումը և մանրամասն գնահատման հետազոտությունները, ինչպես նաև ՍՏՀ-ն ավարտվել են՝ հիմք ընդունելով վերջնական մանրամասն ճարտարագիտական նախագծումը:
5)Նկարագրության արձանագրությունների մեծ մասը ստորագրվել են հասանելի ԱԵԱ-ների կողմից: Արձանագրությունների չստորագրման հիմնական դեպքերը պայմանավորված են ԱԵԱ-ների անհասանելությամբ (ՀՀ-ից բացակայող ԱԵԱ-ներ, մահացած ԱԵԱ-ներ և այլն):
6Ստորագրված արձանագրությունները ծանուցվել են ԱԵԱ-ներին՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի Հոդված 7-ի համաձայն: Ծանուցված նկարագրության արձանագրությունների վերաբերյալ ԱԵԱ-ներից որևէ բողոք չի ստացվել:
7)ՀՕՏԾ-ի Իրականացման Խորհրդատուի (ԻԽ) ներգրավման մրցութային փաստաթղթերի պատրաստումը ընթացքում է:

2. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼ

137. ՀՕՏԾ-ի հաստատումից հետո կիրականացվեն փոխհատուցումների և հատկացումների ամրագրմանը վերաբերող բոլոր կարգավորումները: Դրանք ներառում են՝

1)Իրականացման Խորհրդատուի (ԻԽ) նշանակումը,
2)ՀՕՏԾ իրականացման մանրամասն պլանավորումը յուրաքանչյուր ենթահատվածի համար, (Մանրամասն Գործողությունների Պլան, ներառյալ օրիականացման պլանի իրականացումը)
3)Օտարման պայմանագրերի նախագծերի ծանուցումը,
4)Օտարման պայմանագրերի ստորագրումը, ներառյալ փոխհատուցման հատկացման վերջնական ամսաթվերի ծանուցումը,
5)Վճարումը բոլոր իրավասու ազդեցության ենթակա անձանց,

6)Դատական կարգով օտարման ընթացակարգերի նախաձեռնումը՝ անհրաժեշտության դեպքում,
7)ԱՄԳ կողմից համապատասխանության վերանայումը և հաշվետվությունների ներկայացումը,
8)Դատական կարգով օտարման ընթացակարգերի ավարտը՝ անհրաժեշտության դեպքում,
9)Շինհրապարակի նախապատրաստումը՝ հողամասը շինարարության նպատակով կապալառուներին հանձնելու համար, և
10)Վերջապես, շինարարական աշխատանքի մեկնարկը:

138. Փոխհատուցման վճարումը ՀՕՏԾ-ի իրականացման ընթացքում կարևորագույն փուլերից մեկն է: Նախատեսված քայլերն են՝
1)ՀՕՏԾ բյուջեի հատկացումը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից (ներառյալ փոխհատուցման և վարչական ծախսերի բյուջեն): Դա կտևի մոտ 15 օր՝ ՀՀ կառավարության և ԵՆԲ-ի կողմից ՀՕՏԾ-ի հաստատումից հետո:
2)ԱԵԱ-ների համար լավագույն պայմաններ ապահովող առևտրային բանկերի ընտրությունը (աշխարհագրական դիրքը և ցածր գործարքային վճարները/կամ այդպիսի վճարների բացակայությունը): ԱԵԱ-ները կարող են նաև գործել իրենց առկա բանկային հաշիվների միջոցով:
3)Փոխհատուցման և օժանդակությունների փոխանցումը ԱԵԱ-ների բանկային հաշիվներին՝ օտարման պայմանագրի ստորագրումից հետո:
4)Սեփականության տարածքի ազատումը ԱԵԱ-ների կողմից փոխհատուցման վճարման պահից 14 օրվա ընթացքում կամ պայմանագրով նախատեսված այլ ժամկետում:
5)ՏԿՆ-ի՝ հողի/կառույցի սեփականատեր դառնալը:


3. ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

139. ՀՕՏԾ-ն պետք է իրականացվի ըստ ենթահատվածների, պայմանավորված կառավարության՝ շինարարարին շինհրապարակի մուտքի թույլատվությունը հատված առ հատված տրամադրելու նախընտրությամբ: Ենթահատվածները կսահմանվեն ՀՕՏԾ իրականացման Իրականացման Խրոհրդատուի (ԻԽ) Նախնական հաշվետվությամբ: Յուրաքանչյուր ավարտված ենթահատվածի համար ԱՄԳ կողմից կպատրաստվեն Համապատասխանության հաշվետվություններ: Յուրաքանչյուր համայնքում օտարման գործընթացի բոլոր փուլերի մանրամասն նկարագրությունը կներկայացվի մշակված Մանրամասն Գործողությունների Պլանում (ՄԳՊ): Սա հնարավորություն կտա յուրաքանչյուր ԱԵԱ-ների հետ օտարման գործընթացը դիտել որպես առանձին ենթածրագիր՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ԱԵԱ-ներին բնորոշ առանձնահատկությունները:
140. Օտարման գործընթացի տրամաբանական կառուցվածքը ներկայացված է Պատկեր Թ1-ում: Այս տրամաբանությունը հաջողությամբ կիրառվել է S2 ՀՕՏԾ իրականացման ընթացքում: Ինչպես ներկայացված է Պատկեր Թ1-ում, ձախ սյունակում՝ վերևից ներքև դասավորված են օտարման գործընթացի համար անհրաժեշտ ու պարտադիր քայլերը՝ բոլոր ԱԵԱ-ների համար, անկախ առկա խնդիրներից ու պայմաններից: Աջ սյունակում ներկայացված են տարբեր փուլերում հնարավոր խնդիրները, դրանց լուծման մեխանիզմները և տրամաբանական կապերը՝ իրականացման ենթակա պարտադիր քայլերի հետ:
141. Համաձայն օտարման գործընթացի տրամաբանական կառուցվածքի, պետք է իրականացվեն հետևյալ հիմնական քայլերը.

(1) Պայմանագրի նախագծերի ծանուցում ԱԵԱ-ներին, ներառյալ ՀՕՏԾ տեղեկատվական ձեռնարկի տրամադրումը,

(2) Հանդիպումներ ԱԵԱ-ների հետ (սեփականատերեր/համասեփականատերեր, վարձակալներ, չգրանցված օգտագործողներ),
(3) ԱԵԱ-ների հիմնախնդիրների քննարկում, անհրաժեշտության դեպքում իրավական խորհրդատվության և աջակցության տրամադրում ԱԵԱ-ներին,
(4) Օտարման պայմանագրերի ստորագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ստուգում և թարմացում,
(5) Օրինականացման պլանի իրականացում,
(6) Վերջնական օտարման պայմանագրերի պատրաստման համար անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստում նոտարին (տարածքային) հանձնելու համար,
(7) ԱԵԱ-ների հետ օտարման պայմանագրերի կնքման գործընթացի կազմակերպում՝ նոտարական վավերացմամբ (կախված կազմակերպչական պահանջներից՝ այն կարող է կազմակերպվել նաև համայնքների գրասենյակներում),
(8) Ստորագրված պայմանագրերի հիման վրա պետական գրանցման դիմումի ներկայացում ԱԳԿՊԿ գրասենյակ,
(9) ՀՀ անունով գրանցված սեփականության վկայականի ստացում:

Պատկեր Թ1. Հողի օտարման գործընթացի տրամաբանական կառուցվածք



4. ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՓՈՒԼ

142. Սեփականության օտարման պայմանագիրը պայմանագրի նախագիծը ծանուցելու ամսաթվից հետո եռամսյա ժամկետում ԱԵԱ-ի (սեփականատերեր և այլ գույքային իրավունք ունեցող անձիք) կողմից որոշ պատճառներով չստորագրելու դեպքում (ԱԵԱ-ների անհամաձայնություն, չլուծված օրինականացման խնդիրներ և այլն), ԾԻԿ-ը կնախաձեռնի փոխհատուցման գումարը դեպոզիտ դնելով և դատական կարգով սեփականությունը օտարելու գործընթաց: Դատական կարգով օտարման գործընթացը կիրականացվի հետևյալ ընթացակարգով.

1)Յուրաքանչյուր ԱԵԱ-ի համար հաշվարկված փոխհատուցման գումարը կհանձնվի դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին՝ եռամսյա ժամկետի ավարտից 1 ամսվա ընթացքում: Սրա վերաբերյալ ծանուցում կուղարկվի ԱԵԱ-ներին (սեփականատերեր և այլ գույքային իրավունք ունեցող անձիք) դեպոզիտ հանձնելուց հետո եռօրյա ժամկետում:

2)Եթե օտարման պայմանագիրը չի կնքվում դոպոզիտ հանձնելուց հետո 7-օրյա ժամկետում, ապա ձեռքբերողը մեկամսյա ժամկետում դիմում է դատարան՝ սեփականության հարկադիր օտարման պահանջով:

3)Դատական կարգով օտարման դեպքում, դատարանի քննման առարկա կարող է լինել միայն փոխհատուցմա չափը: Սեփականության և այլ ակտիվների դիմաց փոխհատուցմա չափի վերաբերյալ դատարանի որոշումը հիմք է հանդիսանում հողի օտարման համար:

4)Նախկին սեփականատիրոջ իրավունքները օտարված սեփականության նկատմամբ դադարում են, և Ձեռքբերողի սեփականության իրավունքը օտարվող սեփականության նկատմամբ գրանցվում է՝ օրենքով սահմանված կարգով համապատասխան դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Դատական ակտը օրինական ուժի մեջ մտնելուց հետո, այն ենթակա է գրանցման ԱԳԿՊԿ-ում:

5. ՓԱՍՏԱՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԵՐԻ ՑԱՆԿԻ և ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ ԲԱՑԱՌԻԿ՝ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՑԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

143. Առկա են մի քանի անհամապատասխանության դեպքեր ՀՀ կառավարության որոշմամբ (06.011.2014, թիվ 1244-Ն) բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված հողերի ցանկի և փաստացի ազդեցության ենթակա հողերի ցանկի միջև, որոնք ստուգվել են ՄՉՀ արդյունքում: Փաստացի ազդեցության ենթակա հողերը ընդգրկվել են ՄՉՀ-ում և նույնությամբ ներկայացված են ՀՕՏԾ-ում: Նշված անհամապատասխանության դեպքերի ցանկը ներկայացված է Աղյուսակ Թ1-ում: Մինչ ՀՕՏԾ իրականացման մեկնակը, կնախաձեռնվի բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման փոփոխությունը՝ թարմացնելու համար ազդեցության ենթակա հողերի ցանկը: Նշված հողերի համար կիրականացվեն Օրենքով սահմանված բոլոր ընթացակարգերը:

Աղյուսակ Թ1: Ծածկագրերի անհամապատասխանությունների ցանկ

No.	Համայնք	Հողի ծածկագիրը Կառ. որոշման (ԿՈ) ցանկում	Ծածկագիրը՝ համաձայն ՄՉՀ-ի	Մեկնաբանություն
1	Մարալիկ	08-003-0664-0002		Ընթացիկ կադաստրային քարտեզը չի ներառում 08-003-0664-0002 ծածկագրով հողամաս: Հետևաբար, ԿՈ ցանկից

				ծածկագիրը պետք է հանվի:
2	Հոռոմ	08-067-0112-0008	08-067-0112-0001	08-067-0112-0008 ծածկագրով հողի տվյալները ներառված են նոր գրանցված 08-067-0112-0001 հողում: Հետևաբար, ԿՈ ցակում ծածկագիրը պետք է փոփոխվի ՄՉՀ հետազոտությամբ ճշգրտվածի հիման վրա:
3	Հոռոմ	08-067-0112-0009	08-067-0112-0001	08-067-0112-0009 ծածկագրով հողի տվյալները ներառված են նոր գրանցված 08-067-0112-0001 հողում: Հետևաբար, ԿՈ ցակում ծածկագիրը պետք է փոփոխվի ՄՉՀ հետազոտությամբ ճշգրտվածի հիման վրա:
4	Հոռոմ	08-067-0142-0022	08-067-0142-0021	08-067-0142-0022 ծածկագրով հողի տվյալները ներառված են նոր գրանցված 08-067-0142-0021 հողում: Հետևաբար, ԿՈ ցանկից ծածկագիրը պետք է հանվի:
5	Սառնաղբյուր	08-100-042	08-100-0408-0032	Սառնաղբյուր համայնքում 08-100-042 ծածկագրով հողամաս գոյություն չունի: Տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ: Իրական ծածկագիրն է 08-100-0408-0032: ԿՈ ցակում ծածկագիրը պետք է ճշգրտվի (վերաշարադրվի):

144.Ի լրումն, ՄՉՀ արդյունքում Մարալիկ համայնքում հայտնաբերվել է ծածկագրի անհամապատասխանություն սեփականության իրավունքի գրանցման վկայականում (Վկայական թիվ 961558, տրված 18.12.2002թ.), որը ներառված չէ կադաստրային քարտեզում: Այս հողին տրվել է պայմանական 08-003-0020-0000 կադաստրային ծածկագիրը, քանի որ վկայականում նշված ծածկագիրը սխալ է: Բացի այդ, երեք բացակայող ծածկագրերով հողեր պետք է ներառվեն բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման ցանկում (06.011.2014, ԿՈ թիվ 1244-Ն):

Աղյուսակ Թ2: Կառաավարության որոշման (ԿՈ) ցանկից բացակայող ծածկագրեր

No.	Համայնք	Ծածկագիրը՝ համաձայն ՄՉՀ-ի	Մեկնաբանություն
1	Ձորակապ	08-073-0046-0010	Իրականացվել է նոր հողամասի պետական գրանցում:
2	Ձորակապ	08-073-0046-0011	Իրականացվել է նոր հողամասի պետական գրանցում:
3	Հոռոմ	08-067-0112-0011	Երկու հողեր (համայնքային սեփականության հող և գազալցակայանի առկայությամբ մասնավոր սեփականության հող) գրանցվել են միևնույն ծածկագրով՝ 08-067-0112-0001: Այդ պատճառով համայնքային հողը գրանցվել է նոր ծածկագրով՝ 08-067-0112-0011: ԿՈ ցակում ծածկագիրը պետք է համապատասխանաբար փոփոխվի:

6. ԱԵԱ-ՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ և ԱՅԼ ՏԻՊԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

145. ՀՕՏՇ սկզբունքների համաձայն՝ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ները կարող են օրինականացվել և ստանալ լիարժեք փոխհատուցում, ինչպես սահմանված է ՀՕՏՇ Իրավունքների սխեմայով և փոխհատուցման իրավունքներով: ՀՕՏՇ-ով սահմանված «Օրինականացման պայմանների» համաձայն, իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ները նրանք են, ովքեր ազդեցության ենթակա հողամասի և դրան ամրացված այլ գույքի նկատմամբ թեև չունեն պետական գրանցում ստացած սեփականության կամ այլ գույքային իրավունքներ, սակայն ունեն որոշակի օրինական ակնկալիքներ, որոնք ծագում են օրենքի կամ գույքի փաստացի տիրապետման և օգտագործման ուժով, կամ վերջիններիս գույքային իրավունքների ձեռքբերման հնարավորությունները ուղղակի բխում են կամ սահմանված են ՀՀ իրավական ակտերով:
146. ՀՕՏԾ վերջնականացման ընթացքում՝ հիմք ընդունելով մարդահամարի տվյալների, ինչպես նաև տարբեր պետական մարմիններից ստացված տվյալների վերլուծությունը, բացահայտվել են որոշ օրինականացման հետ կապված խնդիրներ և այլ տիպային դեպքեր, որոնք անհրաժեշտ է հասցեագրել ՀՕՏԾ իրականացման ընթացքում: Վերջնական ՀՕՏԾ-ում այդ դեպքերը նպատակահարմար է ներառել, որպեսզի բոլոր շահագրգիռ կողմերը տեղեկացված լինեն այդ խնդիրների վերաբերյալ: Այստեղ քննարկվում են այն մոտեցումները, որոնցով առաջնորդվելու է ԾԻԿ-ը՝ այդպիսի տիպային դեպքերի համար՝ որպես ՀՕՏԾ իրականացման մի մաս: Նաև կարևոր է նշել, որ այդպիսի դեպքեր են հանդիպել նաև նախորդ տրանշում (S2), և դրանք հասցեագրվել են ԾԻԿ-ի կողմից ՀՕՏԾ իրականացման ընթացքում: Օտարման պայմանագրերի կնքումը անհնար է առանց այս խնդիրների լուծման, հակառակ դեպքում այդ դեպքերը կդիտարկվեն դատական օտարման գործընթացի ներքո: Նման տիպային դեպքերի և դրանցում ներգրավված ԱԵՏՏ-ների քանակը ներկայացված է Աղյուսակ Թ2-ում: Հիմնական տիպային խնդիրներն են.

- Խնդիրներ, կապված բացակա ԱԵԱ-ների հետ,
- Խնդիրներ, կապված անձնագրերի հետ,
- Խնդիրներ, կապված ժառանգության հետ,
- Խնդիրներ, կապված իրավունքի պետական գրանցման վկայականի հետ,
- Խնդիրներ, կապված արգելանքով ծանրաբեռնված գույքերի հետ,
- Խնդիրներ, կապված ոչ-բնակելի ինքնակամ ազդեցության ենթակա շինությունների հետ, և
- Խնդիրներ, կապված անհայտ (չնույնականացված) սեփականատերերի հետ,
- Այլ խնդիրներ

<u>ՀՀ-ից բացակա ԱԵԱ-ներ</u>

147. Առկա են 234 դեպքեր, այն է՝ 143 ԱԵԱ-ներ, որոնք բնակվում են ՀՀ-ից դուրս: 143 դեպքերից 58-ը տրամադրել են անհրաժեշտ փաստաթղթերը, այնուամենայնիվ չորս դեպքերում առկա է անհամապատասխանություն անձնագրում և սեփականության իրավունքի գրանցման փաստաթղթերում: Մնացած 82 դեպքերում, անձնագրերի պատճենները հարավոր չի եղել ստանալ, քանի որ նրանք բնակվում են երկրից դուրս: ԱԵԱ-ներից երկուսը ապրում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, իսկ մեկը կալանավայրում Ռուսաստանի Դաշնությունում և հասանելի չէ: Քանի որ անձնագիրը կարևոր փաստաթուղթ է օտարման գործընթացը նախաձեռնելու, անձի սեփականության իրավունքը ստուգելու, փոխհատուցումը վճարելու համար, ապա անհրաժեշտ է, որպեսզի բոլոր համապատասխան փաստաթղթերը հասանելի լինեն ԻԳ-ին: Բացի այդ, ԱԵԱ-ի ներկայությունն անհրաժեշտ է նրա սեփականության օտարման համար: Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությունը ապահովում է այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան օտարել գույքը այն դեպքու, երբ սեփականատերերին գտնելը հնարավոր չէ, կամ նրանց ներկայությունը հնարավոր չէ նշված նպատակի համար: Լուծելու համար այն բացակայող

հողատերերի խնդիրը, որոնք չեն կարող հասանելի լինել օտարման գործընթացում, պետք է նախաձեռնել հետևյալ ընթացակարգը.

- Համայնքային իշխանություններից, հարազատներից և ընկերներից կհավաքագրվեն բացակայող սեփականատերերի կոնտակտային տվյալները և այլ հնարավոր տեղեկատվություն,
- ԱԵԱ-ները կտեղեկացվեն/կծանուցվեն իրենց հողը/գույքը օտարելու և ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ՝ հայցելով նրանց մասնակցությունը,
- Եթե ԱԵԱ-ն շարունակի արտահայտել իր ներկայության անկարողությունը, ապա նրան խորհուրդ կտրվի ուղարկել լիազորագիր այն ներկայացուցչի անունով, ով հանդես կգա իր անունից օտարման պայմանագրի ստորագրման ժամանակ:
- Պայմանագրի չստորագրման դեպքում, Ձեռքբերողը կնախաձեռնի դատական կարգով օտարման գործընթաց, փոխհատուցման գումարը կհանձնվի դատարանի դեպոզիտային հաշվին: Սեփականատերը կարող է պահանջել փոխհատուցման գումարը դատարանից՝ ներկայացնելով համապատասխան իրավական հիմքեր:

<u>Խնդիրներ, կապված անձնագրերի հետ</u>

148. Առկա են 87 դեպքեր, այն է՝ 72 ԱԵՏՏ-ներ, երբ ԱԵԱ-ի անձնագիրը կորցրել է վավերականության ժամկետը: Քանի որ անձնագիրը առանցքային փաստաթուղթ է օտարման ողջ գործընթացում և փոխհատուցման վճարման համար, ԱԵԱ-ներից պահանջվում է թարմացնել իրենց անձնագրերը՝ դիմելով համապատասխան պետական մարմնին: Խնդիրը լուծելու նպատակով ՏՀԹ-ն ԻԹ միջոցով կձեռնարկի հետևյալ ընթացակարգը.

- Տեղեկացնել ԱԵԱ-ներին և համայնքային իշխանություններին անվավեր անձնագրերով դեպքերի վերաբերյալ՝ շեշտադրելով դրանց կարևորությունը նեյնականացման, օտարման գործընթացի և փոծհատուցման վճարման տեսակետից,
- Հետևել, որպեսզի ԱԵԱ-ները նախաձեռնեն թարմացման գործընթացը,
- Անհրաժեշտության դեպքում, ԻԹ-ն աջակցել ԱԵԱ-ներին անձնագրերի թարմացման հետ կապված հարցերում:

<u>Խնդիրներ, կապված ժառանգության հետ</u>

149. Ընդհանուր առմամբ, առկա են 125 դեպքեր, երբ մարդիկ պետք է փոխեն սեփականության իրավունքը՝ իրենց ծնողների, հարազատների մահից հետո, կամ դեպքեր, երբ հողամասը բաժանվել է եղբայրների կամ քույրերի միջև փոխադարձ համաձայնությամբ, սակայն նույնը չի գրանցվել կադաստրային գրանցումներում՝ ցույց տալու համար իրական սեփականության իրավունքը: Այս 125 դեպքերից 26-ը այնպիսի դեպքեր են, երբ մահացած սեփականատիրոջ մահվան վկայականը հասանելի չէ ժառանգներին: Օրինականացման երկու դեպքերի համար էլ ընթացակարգը կլինի նույնը, մինչդեռ մահվան վկայականի բացակայության դեպքում օրինական ժառանգները պետք է ձեռք բերեն իրենց ծնողների մահվան վկայականը համապատասխան պետական մարմնից: Օրինականացման գործընթացը ներառում է հետևյալ գործընթացները.

Քայլ 1- ՀՕՏԾ իրականացման թիմը կդիմի համապատասխան համայնք՝ օտարվող հողամասի հանգուցյալ սեփականատերերի ժառանգների կազմի, բնակության վայրի, ժառանգատուի գույքի փաստացի տիրապետող ժառանգների մասին տեղեկատվություն ստանալու համար:

Քայլ 2- Համայնքից ստացված տեղեկատվության հիման վրա՝ ժառանգության յուրաքանչյուր դեպքի համար ԻԹ-ն կպատրաստի այն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ: Ստուգման թերթիկի օգնությամբ ԻԹ-ն կապ կհաստատի բոլոր ժառանգների հետ: Օրինական ժառանգներին կխնդրեն պատրաստել ժառանգության ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Եթե տվյալ հողամասի նկատմամբ

իրավունքները գրանցում չեն ստացել 1998թ. մարտի 1-ից հետո, ապա մնացած բոլոր փաստաթղթերի հետ միասին անհրաժեշտ կլինի ներկայացնել նաև հողամասի հատակագիծը:

Քայլ 3- Երբ ժառանգության ընդունումը ավարտված է, ժառանգներին կխնդրեն դիմել ժառանգատուի բնակության վայրի նոտարին՝ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար: Եթե ժառանգներից մեկը գտնվում է Հանրապետությունից դուրս անհրաժեշտ է որպեսզի վերջինս ուղարկի նոտարական կարգով վավերացված լիազորագիր (որը պետք է թարգմանի)՝ ժառանգության իր բաժինն ընդունելու և դրանից ծագող իր իրավունքը գրանցելու համար:

150. ՀՕՏԾ իրականացման թիմը կտրամադրի անհրաժեշտ աջակություն ԱԵԱ-ների ժառանգության իրավունքի վկայագրից ծագող իրավունքների պետական գրանցում իրականացնելու հարցում:
151. Եթե ժառանգների միջև առկա է վեճ սեփականության իրավունքի վերաբերյալ կամ անցել է ժառանգության ընդունման համար նախատեսված 6-ամսյա ժամկետը և հնարավոր չէ ապահովել բոլոր ժառանգների համաձայնությունը (առկայությունը), ապա ժառանգության ընդունման հետ կապված հարցերը կարգավորվում են դատական կարգով:
152. Եթե ժառանգները, ըստ էության չեն առարկում սեփականության օտարման պայմանագրի էական պայմանների վերաբերյալ, սակայն առկա են իրավական խոչընդոտներ նոտարական կարգով ժառանգությունը ընդունելու համար, նպատակահարմար է պայմանագրի քննարկման 3-ամսյա ժամկետում պետք է զուգահեռ աջակցել ժառանգներին դատական կարգով ժառանգության ընդունումը իրականացնելու և օտարման գործընթացը ձեռնարկելու համար:

<u>Խնդիրներ, կապված իրավունքի պետական գրանցման վկայականի հետ</u>

153. Առկա են 125 դեպքեր, որտեղ խնդիրները կախված են ԱԵԱ-ների իրավունքի պետական գրանցման իրավունքների հետ: Ընդհանուր առմամբ, դեպքերը տարաբաժանված են 5 ենթախմբերի: Դրանք են.
    i. Սեփականության իրավունքի վերաբերյալ տեղեկատվության բացակայություն կադաստրային մարմնում (2 դեպքեր)
    ii. Վկայականներում և կադաստրային քարտեզներում առկա ծածկագրերի միջև անհամապատասխանություններ (2 դեպքեր)
    iii. Նոր գրանցված հողամասեր (3 դեպքեր)
    iv. Հողամասի ծածկագրերի մանրամասները ներառված են այլ ծածկագրով հողամասի տվյալներում (13 դեպքեր)
    v. Սեփականության իրավունքի վկայականի և կադաստրային քարտեզում նշված հողամասերի մակերեսների միջև տարբերություններ (20 դեպքեր)
    vi. Սեփականության իրավունքի վկայականներում և անձնագրերում սեփականատերերի անունների անհամապատասխանություններ (87 դեպքեր):
154. Վերը նշված խնդիրներն առնչվում են օտարվող սեփականության գրանցման ժամանակ թույլ տրված սխալների հետ, որոնց ուղղման գործընթացը սահմանված է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով և ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով:

Օրենքով տարանջատվում են սխալների 2 խումբ ՝

- Սխալներ, որոնց ուղղումը չի փոփոխում գույքի պատկանելությունը, դրա նկատմամբ իրավունքների բնույթը, ծավալը կամ չի հանգեցնում գույքի մակերեսի չափերի կամ կադաստրային արժեքի փոփոխություն (այսուհետ՝ տեխնիկական բնույթի սխալներ): Նման սխալները կարող են ուղղվել գրանցող մարմնի պաշտոնատար անձի (կադաստր) նախաձեռնությամբ: Այսպիսի սխալների ուղղման նպատակով նպատակահարմար է, որպեսզի ձեռքբերողը դիմի կադաստրին՝ սխալների ուղղում կատարելու միջնորդությամբ:

- Սխալներ, որոնց ուղղումը հանգեցնում է գույքի պատկանելության, դրա նկատմամբ իրավունքների բնույթի, ծավալի,գույքի մակերեսի չափերի կամ կադաստրային արժեքի փոփոխության (այսուհետ՝ ոչ տեխնիկական բնույթի սխալներ): Նման սխալները կարող են ուղղվել միայն անշարժ գույքի բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնության առկայության դեպքում: Այսպիսի սխալների ուղղումը կարող է հանգեցնել անշարժ գույքի մակերեսի, տեղադիրքի փոփոխության, ուստի անհրաժեշտ է աջակցել տվյալ գույքի սեփականատերերին համապատասխան ուղղումներ կատարելու հարցում:

155. Սխալների ուղղման երկու դեպքում էլ, եթե տվյալ գույքի պետական գրանցումը կատարվել է որևէ իրավասու մարմնի տված փաստաթղթի հիման վրա, ապա թույլ տրված սխալների ուղղումը կարող է կատարվել միայն տվյալ մարմնի կողմից համապատասխան ուղղում կատարելուց հետո, տվյալ փաստաղթերի հիման վրա:
156. Բոլոր դեպքերում, ԱԵԱ-ները պետք է նախաձեռնեն օրինականացման գործընթացն այնպես, ինչպես նկարագրված է վերևում: Որտեղ անհրաժեշտ է, ԻԹ-ն կաջակցի ԱԵԱ-ներին՝ ուղղորդելով կադաստրային մարմնին համապատասխան ներկայացնել փաստաթղթեր ներկայացնելու հարցում:

<u>Խնդիրներ, կապված արգելանքով ծանրաբեռնված գույքերի հետ</u>

157. ՀՀ օրենսդրության համաձայն՝ գույքերը կարող են գտնվել հետևյալ ծանրաբեռնվածությունների ներքո. 1) գրավ, 2) արգելանք և 3) հիպեթեք: Հիմք ընդունելով ԱԳԿՊԿ տեղեկատվությունը՝ Լանջիկ-Գյումրի հատվածում բացահայտվել են 6 դեպքեր (հողամասեր), որոնք գտնվում եմ արգելանքի տակ: Մինչ օտարման պայմանագրի կնքումը, արգելանքի տակ գտնվող գույքերը պետք է հանվեն արգելանքից, հակառակ դեպքում նման դեպքերի համար կձեռնարկվի դատական կարգով օտարման գործընթաց: Արգելանքի տակ գտնվող օտարվող սեփականությունը արգելանքից հանելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները ՝
    1. Հայտնաբերել պարտատերերին, պարզել գույքը արգելանքի տակ դնելու հիմքերը, դրանց կատարման ընթացքը (օր.՝հարցում անել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ արդարադատության նախարարության դատական կատերի հարկադիր կատարման ծառայություն):
    2. Առաջարկել պարտապան՝ օտարվող սեփականության սեփականատերերին, պարտատերի հետ բանակցել՝ գույքը արգելանքից հանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ (օր. կնքել հաշտության համաձայություն և ներկայացնել դատարանի հաստատմանն):
    3. Աջակցել պարտապան՝ հողի սեփականատերերին անհրաժեշտ փաստաթղթեր մշակելու հարցում:
    4. Պարտատիրոջ և պարտապանի միջև համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, աջակցել հողամասի սեփականատերերին (վերջիններին անհամաձայնության դեպքում՝ պարտատերերին) դիմել դատարան՝գույքը արգելանքից հանելու պահանջով:

<u>Խնդիրներ, կապված ոչ-բնակելի ինքնակամ ազդեցության ենթակա շինությունների հետ</u>

158. ՀՕՏՇ-ի համաձայն՝ ոչ-բնակելի ինքնակամ ազդեցության ենթակա շինությունները կփոխհատուցվեն միայն դրանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օրինականացումից հետո: Եթե ԱԵԱ-ն ձախողում է ինքնակամ շինության օրինականացումը մինչև ազդեցությա եթակա հողի օտարումը, ապա նա կորցնում է ինքնակամ շինության դիմաց փոխհատուցման իրավունքը: ԱԵԱ-ների կողմից օրինականացման գործընթաց նախաձեռնելու դեպքում անհրաժեշտ է հետևել ինքնակամ շինությունների օրինականացման հետևյալ ընթացակարգին.

1. *Եթե հողամասը, որի վրա գտնվում է ինքնակամ կառույցը հանդիսանում է համայնքային կամ պետական սեփականություն, ապա ինքնակամ կառույցի օրինականացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝*
   - Դիմել (ԾԻԳ-ը կամ ԱԵԱ-ն) ինքնակամ կառույցների գտնվելու վայրի համայնքի ղեկավարներին (կամ ՀՀ արտակարգ իրավիճակների և տարածքային կառավարման նախարարությանը) օտարվող սեփականության վրա առկա ինքնակամ կառուցների օրինականացման գործընթաց նախաձեռնելու միջնորդությամբ:
   - ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող ինքնակամ կառույցը համայնքի ղեկավարի որոշմամբ ճանաչվում է օրինական: Որոշումից ծագող օրինական շինության նկատմամբ համայնքի կամ պետության սեփականության իրավունքը գրանցվում է:
   - Օրինական ճանաչված կառույցի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կառույցն իրականացրած անձին (ԱԵԱ-ին) առաջարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված արժեքով սեփականության իրավունքով ձեռք բերել օրինականացված շինությունը և դրանով զբաղեցված, ինչպես նաև սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ համապատասխան հողամասը: Ընդ որում, եթե ինքնակամ շինությունների և դրանցով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ համապատասխան հողամասի՝ սեփականության իրավունքով տրամադրումը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին, համապատասխան հողամասը տրամադրվում է վարձակալության իրավունքով:
   - Ինքնակամ կառույցն իրականացրած անձը 15 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է գնման (կամ վարձակալության) նախապատվության առաջարկը (կնքվում է պայմանագիր) և 30-օրյա ժամկետում վճարում է օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գինը (վարձավճարը):
   - Ինքնակամ կառույցն իրականացրած անձը (ԱԵԱ-ն) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցում է օրինականացված շինության և դրա համար առանձնացված հողամասի նկատմամբ իր սեփականության (վարձակալության) իրավունքը:

159. Ընդ որում, վերը նշված կարգով օրինականացված կառույցների նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացվում է՝ համայնքի ղեկավարի որոշման, անշարժ գույքի օտարման պայմանագրի (սահմանված վճարների մասին նշմամբ), անշարժ գույքի հատակագծերի և սահմանված վճարների անդորրագրերի հիման վրա:

2. *Եթե հողամասը, որի վրա գտնվում է ինքնակամ կառույցը հանդիսանում է քաղաքացիների կամ իրավաբանական անձի սեփականություն, ապա ինքնակամ կառույցի օրինականացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝*

   - Հողամասի սեփականատերն ինքնակամ կառույցի օրինականացման պահանջով ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի հետ միասին դիմում է ինքնակամ կառույցի գտնվելու վայրի համայնքի ղեկավարին:
   - Համայնքի ղեկավարը դիմումը ստանալուց հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ընդունում է որոշում ինքնակամ կառույցի օրինականացման կամ դրա մերժման մասին:
   - Ինքնակամ կառույցն օրինական ճանաչվելու դեպքում հողամասի սեփականատերը համապատասխան բյուջե է վճարում ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարները և գրանցում է իր սեփականության իրավունքը:

160. Եթե կառույցների օրինականացումը հանգեցնում է դրանցով զբաղեցված հողամասի նպատակային նշանակության փոփոխության անհրաժեշտության, ապա հողամասի սեփականատերը, բացի ՀՀ օրենդրությամբ սահմանված վճարներից, պետք է վճարի նաև հողամասերի կադաստրային արժեքները՝ նպատակային նշանակության փոփոխման պահին

առկա տարբերությունը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

161. Լանջիկ-Գյումրի հատվածում առկա է միայն մեկ ինքնակամ բնակելի շինություն (չբնակեցված), որը տեղակայված է համայնքային սեփականության հողամասի վրա, 10 ինքնակամ ոչ-բնակելի շինություններ մասնավոր սեփականության հողամասի վրա և երկու ինքնակամ շինություններ մասնավոր հողի վրա տեղակայված հինք համայնքներում (տե՛ս Աղյուսակ Թ4): Նշված գույքերի համայնքային բաշխվածությունը հետևյալն է. Ձորակապ-3 (ռեստորան-1, հյուրանոց-1, հարթակ-1, բետոնե պատ-1), Մարալիկ-2 (պարիսպ-1, աստիճան-1), Լուսակերտ (բնակելի շինություն-1), Բենիամին-6 (պարիսպ-3, հարթակ1-, լողավազան-1, օժանդակ շինություն-1), Ազատան-1 (պարիսպ-1), հետևաբար այս դեպքի համար կիրառելի կլինի երկրորդ կետում ներկայացված ընթացակարգը, եթե ԱԵԱ-ն նախաձեռնի օրինականացման գործընթացը:

<u>Այլ Խնդիրներ</u>

162. Բացահայտվել են երեք առանձնահատուկ դեպքեր, երբ մեկ ԱԵԱ գտնվում է քրեակատարողական հիմնարկում, իսկ մյուսը բնակվում է ՀՀ այլ մարզում գտնվող ծերանոցում, իսկ տասը դեպքերում ԱԵԱ-ների մշտական բնակության վայրի հասցեն անհայտ է:

1-ին և 2-րդ դեպքերում՝ անհրաժեշտ է տվյալ գույքի օտարման գործընթացի հետ կապված փաստաթղթերն ուղղարկել քրեակատարողական հիմնարկում և ծերանոցում գտնվող գույքի սեփականատիրոջը և առաջարկել վերջիններիս լիազորել որևէ անձի իր անունից օտարման գործընթացին մասնակցելու համար: Տվյալ դեպքերում, լիազորագրերը վավերացվում են համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետի և ծերանոցի տնօրենի կողմից: Լիազորագիր չտրամադրելու դեպքում, անհամաձայնությունների բացակայության դեպքում օտարման պայմանագիրը կարելի է կնքել տվյալ հիմնարկներում՝ ընդ որում պայմանագրերը կվավերացվեն քրեակատարողական հիմնարկի պետի և ծերանոցի տնօրենի կողմից:

3-րդ դեպքում գույքի սեփականատիրոջը չհայտնաբերելու դեպքում, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերի առկայության պարագայում, նպատակահարմար է առաջարկել ընտանիքի անդամներին՝ նախաձեռնել տվյալ անձին անհայտ բացակայող ճանաչելու և գույքի հավատարմագրային կառավարիչ նշանակելու գործընթաց: Հակառակ դեպքում, բոլոր փաստաթղթերն օրենքի պահանջներին համապատասխան անհրաժեշտ է ուղղարկել գույքի բնակության վայրի հասցեով: Այս դեպքում, ամեն դեպքում, գույքը հնարավոր է օտարել դատական կարգով:

Բոլոր դեպքերում, ԱԵԱ-ներին կտրամադրվի համապատասխան ուղղորդում՝ վերանշյալ ընթացակարգերը նախպաձեռնելու հարցում:

Աղյուսակ Թ3: Օրինականացման դեպքերի և ընդգրկված ԱԵՏՏ-ների քանակը

Հ/հ	**Տիպային դեպքեր**	**Դեպքերի քանակ***	**ԱԵՏՏ-ների քանակ**	**Մեկնաբանություն**
Ա	**ՀՀ-ից դուրս**	**234**	**143**	Դեպքերի և ԱԵՏՏ-ների քանակները տարբերվում են, քանի որ միևնույն ԱԵՏՏ-ն ընդգրկված է միաժամանակ մի քանի դեպքերում
Ա1	ՀՀ-ից դուրս, որոնք ապահովել են անհրաժեշտ փաստաթղթեր	70	58	4 դեպքերում առկա է անհամապատասխանություն անձնագրերում և

Հ/h	Տիպային դեպքեր	Դեպքերի քանակ*	ԱԵՏՏ-ների քանակ	Մեկնաբանություն
				սեփականության իրավունքի վկայականներում նշված անունների միջև
Ա2	Բացակա անձնագրեր	161	82	
Ա3	Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն	2	2	
Ա4	Կալանավայր ՌԴ-ում	1	1	ԱԵԱ-ն հասանելի չէ
Բ	**Անձնագրային խնդիր**	**87**		
Բ1	Վավերականության ժամկետը ավարտված անձնագրեր	87	72	Մեկ ԱԵԱ-ն գտնվում է բանակում:
Գ	**Ժառանգության խնդիր**	**106**		26 ԱԵԱ-ների դեպքում բացակայում են մահվան վկայականները
Դ	**Կադաստրի վկայականի հետ կապված խնդիրներ**	**125**		
Դ1	Նոր գրանցված հողամասեր	3	3	
Դ2	Գույքի գրանցման վկայականի և կադաստրային քարտեզների միջև ծածկագրերի անհամապատասխանություն	2	2	
Դ3	Ծածկագրերի տվյալները ներառված են մեկ այլ ծածկագրով հողի տվյալներում	13	13	
Դ4	Գույքի գրանցման վկայականում և կադաստրային քարտեզում հողի մակերեսների տարբերություն	20	20	
Դ5	Անձնագրերում և ույքի գրանցման վկայականում անունների տարբերություն	87		
Ե	**Ծանրաբեռնված գույքեր**	**6**		
Ե1	ԴԱՀԿ-ով դրված արգելանք	6	6	
Զ	**Ոչ բնակելի ինքնակամ շինությունների օրինականացում**	13	9	
Զ1	Համայնքային հողի վրա առկա ինքնակամ բնակելի շինություն (չբնակեցված)	1	1	
Զ2	Մասնավոր հողերի վրա առկա ինքնակամ հանրային գույքեր	2	2	
Զ3	Մասնավոր հողերի վրա առկա	10	6	Օժանդակ շինություն,

Հ/h	**Տիպային դեպքեր**	**Դեպքերի քանակ***	**ԱԵՏՏ-ների քանակ**	**Մեկնաբանություն**
	ինքնակամ ոչ-բնակելի շինություններ			պարիսպ, հարթակ, լողավազան
Է	**Այլ դեպքեր**	**12**		
Է1	ԱԵԱ քրեակատարողական հաստատությունում	1	1	
Է2	Ծերանոցում բնակվող ԱԵԱ	1	1	
Է3	ԱԵԱ, որի բնակության հասցեն անհայտ է	10	7	
** Դեպքերի քանակը ներկայացված է առանց կրկնահաշվարկի, այսինքն այն դեպքերը/հողերը/, որոնք ունեն միաժամանակ մի քանի օրինականացման կամ ուղղման խնդիր, ներկայացվել են խնդիրների միայն այն խմբում, որն առավել խնդրահարույց է տվյալ դեպքի համար:*				

163. Օրինականացման և ուղղման դեպքերը կիրականացվեն Ծրագրի բյուջեի միջոցներով, բացառությամբ ինքնակամ շինության օրինականացումը: Այնուամենայնիվ, բոլոր նկարագրված օրինականացման և ուղղման դեպքերը կարող են հասցեագրվել ԾԻԿ/ԻԹ կողմից միայն այն դեպքում, եթե ԱԵԱ-ները համաձայն են նախաձեռնելու այն ընթացակարգերը, որոնք նկարագրված են վերևում: Տիպային դեպքերի և ընդգրկված ԱԵՏՏ-ների ցանկը ներկայացված է **Հավելված 8-ում**:

7. ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԳԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԴԵՊՔՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

164. Հիմք ընդունելով S2 ՀՕՏԾ իրականացման նախորդ փորձը՝ մշակվել են ընթացակարգեր ՀՕՏԾ իրականացման ընթացքում չնախատեսված փոփոխությունները հասցեագրելու համար: Նույն ընթացակարգը կկիրառվեն, եթե Տրանշ 3 ՀՕՏԾ իրականացման ընթացքում ի հայտ գան ազդեցությունների/փոխհատուցման կամ այլ բնորոշ փոփոխություններ: Չնախատեսված փոփոխությունները կարող են կապված լինեն կադաստրային քարտեզների/տվյալների ստուգման, մանրամասն նախագծի վերանայման հետ և այլն: Նման փոփոխությունների արդյունքում կարող են փոխվել ազդեցության ենթակա հողերի բնութագրիչները (ինչպիսիք են նպատակային նշանակությունը, թեքությունը, քարքարոտությունը, մակերեսը), ազդեցության ենթակա հողերի թիվը (որոշ հողեր կարող են դուրս գալ կամ ներառվել օտարվող տարածքում):

165. ՀՕՏԾ իրականացման ընթացքում սույն ՀՕՏԾ-ով սահմանված ազդեցությունների դեպքում ԾԻԿ-ը կնախաձեռնի հետևյալ հիմնական միջոցառումներն ու քայլերը.

ա) <u>Եթե փոխվում է ազդեցության ենթակա հողի մակերեսը.</u>

- Փոխհատուցման արժեքը կվերահաշվարկվի տվյալ հողի համար ՀՕՏԾ-ով սահմանված (Գնահատման հաշվետվությամբ) 1 քմ-ի համար միավոր արժեքի հիման վրա՝ բազմապատկելով այն նոր ճշգտրված մակերեսով, ասպիսով միավոր արժեքը չի փոխվի:
- Եթե ազդեցության ենթակա հողի վրա առկա են արձանագրված բարելավումներ (մշակաբույսեր, ծառեր և այլն), ապա դրանք պետք է վերահաշվարկվեն՝ հաշվի առնելով ճշգրտված նոր մակերեսը և ՀՕՏԾ-ով սահմանված միավոր արժեքները:

- Կպատրաստվի նոր քարտեզ (հատակագիծ) սահմանելու համար հողի նոր ճշգրտված ազդեցության ենթակա հատվածը:

բ) Եթե բացի հողի մակերեսից, փոխվում են մյուս փաստացի բնութագրիչները (ինչպիսիք են նպատակային նշանակությունը, թեքությունը և քարքարոտությունը), որի արդյունքում կարող է փոխվել հողի փոխարինման արժեքը:

- Այսպիսի դեպքերում կիրականացվի նոր գնահատում՝ հիմք ընդունելով ՀՕՏԾ պատրաստման ժամանակահատվածի (2012-2013թթ.) համար վաճառի տվյալները: Գնահատումը կիրականցի ՀՀ գնահատման ստանդարտի և Ծրագրի ՀՕՏԾ սկզբունքների համաձայն:

գ) Եթե իրականացման ընթացքում բացահայտվել են նոր հողեր: Այս դեպքում կձեռնարկվի բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման փոփոխություն նոր հողերի ընդգրման նպատակով, և կիրականացվեն բոլոր համապատասխան ընթացակարգերը, որոնք սահմանված են «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով, մասնավորապես.

- Նոր ԱԵԱ-ների համար կիրականացվեն հանրային լսումներ (ներառյալ գերակա հանրային շահի որոշման վերաբերյալ ծանուցումը)
- Նոր հողերի համար կձեռնարկվեն ՄՉՀ-ներ/մարդահամար և ՍՏՀ
- Հիմք ընդունելով չափագրումը՝ կպատրաստվեն համապատասխան քարտեզներ (հատակագծեր)
- Կպատրաստվեն նկարագրության արձանագրություններ, որոնք կստորագրվեն ԱԵԱ-ների կողմից
- Կիրականացվի ակտիվների գնահատում՝ համաձայն ՀՕՏԾ-ով հաստատված Գնահատման մեթոդաբանության
- Օտարման պայմանագրի նախագծերը կծանուցվեն ԱԵԱ-ներին և կբանակցվեն պայմանագիրը ստորագրելու համար, հակառակ դեպքում ԾԻԿ-ը կնախաձեռնի դատական կարգով օտարման գործընթաց:

դ) Եթե ի հայտ կգան այլ չնախատեսված խնդիրներ/փոփոխություններ, որոնց հետևանքով կփոխվեն ազդեցությունները/փոխհատուցումը, ապա նշված դեպքերի համար կմշակվեն համապատասխան մեխանզմներ, որոնք կհամաձայնեցվեն ԵՆԲ-ի հետ: Բոլոր չնախատեսված փոփոխութունները կստուգվեն և կարձանագրվեն արտաքին մոնիթորինգ իրականացնող կազմակերպության կողմից Համապատասխանության հաշվետվություններով:

166. ՀՕՏԾ իրականացման ընթացքում կադաստրային ճշգրտումների, նախագծային փոփոխությունների/լուծումների կամ այլ չնախատեսված պատճառների հետևանքով ի հայտ եկած բոլոր փոփոխութունների (եթե այդպիսիք լինեն) համար, կնախաձեռնվեն հետևյալ գործողությունները. ա) այդպիսի դեպքերի համար կմաշկվեն համապատասխան մեխանիզմներ/ընթացակարգեր, որոնք կներկայացվեն ԵԱՀ-ներում, Բնապահպանության և Սոցիալական մոնիտորինգի կիսամյակային հաշվետվությունների (ԲՍՄԿՀ), իչպես նաև Համապատասխանության հաշվետվություններում, բ) Կպատրաստվի ՀՕՏԾ-ի լրացում՝ միայն այն դեպքերում, երբ կպահանջվի լրացուցիչ բյուջեի հատկացում:

8. ԳՆԱՀԱՏՈՒՄ ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ

167. Համապատասխանության վերանայումը կձեռնարկվի ՀՕՏԾ-ի իրականացմանը զուգահեռ, իսկ

Համապատասխանության հաշվետվությունները կպատրաստվեն ԱՄԳ-ի կողմից՝ յուրաքանչյուր ենթահատվածում ՀՕՏԾ-ի իրականացման ավարտից անմիջապես հետո: Իրականացմանը հաջորդող գնահատումը կկատարվի ՀՕՏԾ-ի իրականացման ամբողջական ավարտից մեկ տարի հետո:

9. ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

168. ՀՕՏԾ-ի վերջնականացման և իրականացման մանրամասն նախնական ժամանակացույցը ներկայացված է ստորև զետեղված **Աղյուսակ Թ3** –ում:

Աղյուսակ Թ 3. ՀՕՏԾ-ի իրականացման ժամանակացույց

Գործողության No.	Գործողության անվանում	Սկզբի ամսաթիվ	Ավարտի ամսաթիվ
1	**Նախնական ՀՕՏԾ-ի պատրաստում և հաստատում**	Սեպտեմբեր, 2012	Հոկտեմբեր, 2012
2	**Վերջնական ՀՕՏԾ-ի պատրաստում**	Հոկտեմբեր 2013	Օգոստոս 15, 2015
2.1	*Մանրամասն նախագծի վերջնականացում*	Հոկտեմբեր 2013	Հուլիս 25, 2014
2.2	*Արտաքին մոնիթորիգի գործակալության վարձում*	Նոյեմբեր 13, 2014	Հոկտեմբեր-նոյեմբեր, 2015
2.3	*Բողոքների լուծման մեխանիզմի հաստատում*	Հոկտեմբեր, 2012	Օգոստոս, 2016
2.4	*Հանրային լսումների անցկացում*	Փետրվար 19, 2014	Եռամսյակ 3, 2016
2.5	*ՄՉՀ՝ հիմնված մանրամասն նախագծի վրա*	Ապրիլ 2014	Դեկտեմբեր 2014
2.6	*Մարդահամար և սոցիալ-տնտեսական հետազոտություն*	Մարտ 2014	Նոյեմբեր 2014
2.7	*Արժեքների վերանայում՝ միավոր արժեքների թարմացման հիման վրա*	Դեկտեմբեր 2014	Դեկտեմբեր 2014
2.8	*ԱԵԱ-ների հետ նկարագրության արձանագրությունների սփորագրում*	Դեկտեմբեր 2014	Փետրվար 2015
2.9	*Նկարագրության արձանագրությունների ծանուցում ԱԵԱ-ներին*	Հունիս 4, 2015	Հունիս 4, 2015
2.10	*ՀՕՏԾ վերջնականացում*	Փետրվար 2015	Հունիս 2015
2.11	*ՏԿՆ-ի, ԱՋԲ-ի կողմից վերանայում*	Հունիս 2015	Հուլիս 2015
2.12	*ՏԿՆ հաստատում*	Հունիս 2015	Օգոստոս 2015
2.13	*ԵՆԲ-ի կողմից վերանայում և հաստատում*	Օգոստոս 2015	Սեպտեմբեր 2015
2.14	*ՀՀ կառավարության հաստատում (ներառյալ Բյուջեի հաստատումը)*	Սեպտեմբեր 2015	Նոյեմբեր 2015
2.15	*ՀՕՏԾ հրապարակում ԵՆԲ, ՏԿՆ և ՀՀՃՄԾ վեբկայքերում*	Նոյեմբեր 2015	Դեկտեմբեր 2015
2.16	*Հայերեն լեզվով ՀՕՏԾ տեղեկատվական ձեռնարկի տրամադրում բոլոր ԱԵԱ-ներին*	Դեկտեմբեր 2015	Մայիս 2016
2.17	*ՀՕՏԾ ֆինանսական միջոցների հատկացում*	Նոյեմբեր 2015	Դեկտեմբեր 2015
3	**ՀՕՏԾ իրականացում**		
3.1	*ՀՕՏԾ իրականացման ԻԽ ներգրավում և վերապատրաստում**	Նոյեմբեր 2015	Նոյեմբեր 2015
3.2	*ՀՕՏԾ իրականացման մանրամասն Գործողությունների Պլան և ժամանակացույց*	Նոյեմբեր 2015	Դեկտեմբեր 2015

Գործողության No.	Գործողության անվանում	Սկզբի ամսաթիվ	Ավարտի ամսաթիվ
3.3	*Օտարման պայմանագրերի նախագծերի ծանուցում, Փոխհատուցումների/օժանդակությունների համար բանկային հաշվեհամարների բացում*	Դեկտեմբեր 2015	Մայիս 2016
3.4	*Օտարման պայմանագրերի և համաձայնագրերի սփորագրում*	Դեկտեմբեր 2015	Հուլիս-Օգոստոս 2016
3.5.	*Հողի, շինությունների, մշակաբույսերի, ծառերի փոխհատուցումների վճարում ԱԵԱ-ներին այլ օժանդակություն/վերականգնում*	Դեկտեմբեր 2015	Հուլիս-Օգոստոս 2016
3.6	*Դատական կարգով օտարման ընթացակարգերի նախաձեռնում. փոխհատուցման հանձնում դատարանի դեպոզիտ հաշվին, դատական հայցերի ներկայացման նախաձեռնում*	Մայիս, 2016	Սեպտեմբեր-Հոկտեմբեր 2016
3.7	*ՀՕՏԾ իրականացման արտաքին մոնիթորինգ Համապատասխանության Հաշվետվությունների (ՀՄՀ) միջոցով (առանց դատական դեպքերի ավարտման)՝ ըստ ՀՕՏԾ իրականացման սահմանված ենթահատվածների*	Ապրիլ 2016- 1ին ՀՄՀ Հունիս 2016–2րդ ՀՄՀ Օգոստոս 2016–3րդ ՀՄՀ	Հունիս 2016- 1ին ՀՄՀ Օգոստոս 2016– 2րդ ՀՄՀ Հոկտեմբեր 2016- 3րդ ՀՄՀ
3.8	*Շինարարական պայմանագրի սփորագրում*	≈ Եռամսյակ 1, 2016	≈ Եռամսյակ 1, 2016
3.9	*Շինարարական աշխատանքների մեկնարկի ծանուցում (հիմք ընդունելով հաստատված Համապատասխանության Հաշվետվությունը)*	Հունիս 2016**	Դեկտեմբեր 2016
4	**Ետ-ՀՕՏԾ գնահատում**	Հոկտեմբեր, 2017	Դեկտեմբեր, 2017
5	**Շարունակական գործողություններ**		
5.1	*Եռամսյակային առաջընթացի հաշվետվություններ և Բնապահպանական և Սոցիալական մոնիփորինգի կիսամյակային հաշվետվություններ (ԲՍՄԿՀ)*		

** ՀՕՏԾ իրականացման ԻԽ ներգրավվումը և վերապատրաստումը կիրականացվի ԱՋԲ կողմից ֆինանսավորվող Թալին-Լանջիկ հատվածի ՀՕՏԾ բյուջեի ներքո:*

*** Դատական գործերի անավարտվածության դեպքում նշված ժամկետը կարող է հետաձգվել մոտ 2 ամսով:*

Ժ. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵ և ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ

169. Ծրագրի տարաբնակեցման ծախսերը ներառում են ՀՕՏԾ իրականացմանն ուղղված փոխհատուցման, վերականգնման օժանդակության և հարակից ծախսերը: Հարակից ծախսերը, որոնք ներառում են վարչական ծախսերը, հանդիսանում են տարաբնակեցման ընդհանուր բյուջեի մաս: Չնախատեսված ծախսերը (ընդհանուր ծախսերի 15%) ևս նախատեսվել են՝ հաշվի առնելով գնահատված հաշվարկների հնարավոր փոփոխությունները: Եթե որևէ չնախատեսված ծախսեր պահանջվեն, կառավարությունը կապահովի լրացուցիչ միջոցների ժամանակին հատկացումը: ՀՕՏ ծախսերի հաշվարկման համակարգի որոշ առանձնահատկություններ ներկայացված են ստորև.

1)Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխհատուցում իրենց փոխարինման արժեքով,

2)Շենքերի և շինությունների փոխհատուցում՝ փոխարինման արժեքով,

3)Բերքի փոխհատուցում,

4)Օժանդակություն խիստ ազդեցության ենթակա տնային տնտեսություններին,

5)Վերաբնակեցման և տեղափոխման ծախսերի օժանդակություն,

6)Օժանդակություն խոցելի խմբերի կենսապահովման վերականգնման համար,

7)Գրանցման ծախսեր (ներառյալ նոտարական և պետական գրանցման ծառայությունների վճարներ և պետական տուրք, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի հարկերի հատուցումներ),

8)ՀՕՏԾ իրականացման ծախսեր (Իրականացման ծառայություններ, օրինականացման ծախսեր, դատական ծախսեր՝ եթե առկա է, ԲԼՄ ծախսեր՝ եթե առկա է, ներքին և արտաքին մոնիտորինգ): Ընդ որում, արտաքին մոնիտորինգը ֆինանսավորվելու է վարկի միջոցներից, ուստի ներառված չէ ՀՕՏԾ բյուջեում:

2. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

2.1 Հողի փոխհատուցում

170. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի փոխհատուցումը կատարվում է անկախ որակավորված գնահատողի կողմից իրականացված գնահատման հիման վրա, կիրառելով **Հավելված 4**-ով նախատեսված Գնահատման մեթոդաբանությամբ սահմանված փոխարինման արժեքի հաշվարկման բանաձևը: Փոխհատուցումը կատարվում է փոխարինման արժեքով գումարած 15%՝ շուկայական արժեքի և գործարքային ծախսերի կամ կադաստրային արժեքի հիման վրա (որն ավելի բարձր է):

171. Հողերի փոխհատուցման արժեքը սահմանված է Ժ1 Աղյուսակով՝ ըստ հողերի տեսակների: Ձեռքբերվող հողերի ընդհանուր արժեքը կազմում է 216,914,982.4 ՀՀ դրամ՝ 1,551,668.47 մ^2 հողի համար: Մասնավոր սեփականություն հանդիսացող հողամասերի սեփականատերերին տրվող փոխհատուցումը կազմում է 119,940,391.12ՀՀ դրամ՝ 339,463.48 մ^2 հողի համար: Պետական սեփականություն հանդիսացող հողերի համար փոխհատուցում չի նախատեսվում:

172. Աղյուսակ Ժ 1-ը մանրամասնում է հողերի փոխհատուցման միավոր արժեքներն ըստ տեսակի և ազդակիր համայնքների:

Աղյուսակ Ժ 1. Ազդեցության ենթակա հողերի փոխհատուցման արժեքներն ըստ տեսակի և ազդակիր համայնքի

Համայնք	Ազդեցության ենթակա հող (քմ)	Միավոր արժեք (ՀՀԴ/ քմ)	Արժեք (ՀՀԴ)	15% Օժանդակություն (ՀՀԴ)	Ընդհանուր փոխհատուցում (ՀՀԴ)
Մանավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողեր					
Մարալիկ	18,792.89	122.81	2,307,954.82	346,193.22	2,654,148.04
Ազատան	72,931.46	222.93	16,258,610.38	2,438,791.56	18,697,401.93
Բենիամին	14,796.23	211.42	3,128,218.95	469,232.84	3,597,451.79
Լանջիկ	10,941.98	101.75	1,113,346.47	167,001.97	1,280,348.43
Լուսակերտ	15,587.28	119.38	1,860,809.49	279,121.42	2,139,930.91
Հայրենյաց	25,811.26	101.56	2,621,391.57	393,208.73	3,014,600.30
Հոռոմ	49,745.24	101.42	5,045,162.24	756,774.34	5,801,936.58
Ձորակապ	70,067.88	72.34	5,068,710.44	760,306.57	5,829,017.01
Սառնաղբյուր	1,674.17	105	175,787.85	26,368.18	202,156.03
Ընդհանուր	280,348.39		37,579,992.19	5,636,998.83	43,216,991.02
Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակավայրերի և առևտրային նշանակության հողեր					
Մարալիկ	12,411.26	1,248.10	15,490,493.61	2,323,574.04	17,814,067.65
Ազատան	9,695.22	1,427.23	13,837,308.84	2,075,596.33	15,912,905.17
Բենիամին	7,708.73	1,447.05	11,154,917.75	1,673,237.66	12,828,155.41
Լանջիկ	0	0	0.00	0.00	0.00
Լուսակերտ	3,138.38	1,102.00	3,458,494.76	518,774.21	3,977,268.97
Հայրենյաց	0	0	0.00	0.00	0.00
Հոռոմ	815.79	1,210.00	987,105.90	148,065.89	1,135,171.79
Ձորակապ	25,345.71	859.62	21,787,679.23	3,268,151.88	25,055,831.11
Սառնաղբյուր	0	0	0.00	0.00	0.00
Ընդհանուր	59,115.09		66,716,000.08	10,007,400.01	76,723,400.10
Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողեր					
Մարալիկ	37,018.78	55.72	2,062,686.42	309,402.96	2,372,089.38
Ազատան	138,137.12	106.37	14,693,645.45	2,204,046.82	16,897,692.27
Բենիամին	145,049.88	68.81	9,980,882.24	1,497,132.34	11,478,014.58
Լանջիկ	35,343.55	58.34	2,061,942.71	309,291.41	2,371,234.11
Լուսակերտ	330,231.73	44.54	14,708,521.25	2,206,278.19	16,914,799.44
Հայրենյաց	109,041.73	53.67	5,852,269.65	877,840.45	6,730,110.10
Հոռոմ	68,100.12	71.58	4,874,606.59	731,190.99	5,605,797.58
Ձորակապ	224,326.62	32.45	7,279,398.82	1,091,909.82	8,371,308.64

Համայնք	Ազդեցության ենթակա հող (քմ)	Միավոր արժեք (ՀՀԴ/ քմ)	Արժեք (ՀՀԴ)	15% Օժանդակություն (ՀՀԴ)	Ընդհանուր փոխհատուցում (ՀՀԴ)
Սառնաղբյուր	18,682.95	57.62	1,076,511.58	161,476.74	1,237,988.32
Ընդհանուր	1,105,932.48		62,590,464.71	9,388,569.72	71,979,034.42
Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի և առևտրային նշանակության հողեր					
Մարալիկ	31,320.23	128.13	4,013,061.07	601,959.16	4,615,020.23
Ազատան	16,681.48	547.1	9,126,437.71	1,368,965.66	10,495,403.36
Բենիամին	5,280.21	85.93	453,728.45	68,059.27	521,787.71
Լանջիկ	0	0	0.00	0.00	0.00
Լուսակերտ	10,424.55	744.68	7,762,953.89	1,164,443.08	8,927,396.98
Հայրենյաց	0	0	0.00	0.00	0.00
Հոռոմ	290.39	72	20,908.08	3,136.21	24,044.29
Ձորակապ	8,247.24	43.43	358,177.63	53,726.64	411,904.28
Սառնաղբյուր	0	0	0.00	0.00	0.00
Ընդհանուր	72,244.10		21,735,266.83	3,260,290.02	24,995,556.85
Պետական սեփականություն հանդիսացող հողեր					
Մարալիկ	0				
Ազատան	14,553.72				
Բենիամին	2,937.62				
Լանջիկ	0				
Լուսակերտ	46.83				
Հայրենյաց	3,755.02				
Հոռոմ	5,847.28				
Ձորակապ	6,887.94				
Սառնաղբյուր	0.00				
Ընդհանուր	34,028.41				
Ընդհանուր					
Մասնավոր	339,463.48		104,295,992.28	15,644,398.84	119,940,391.12
Համայնքային	1,178,176.58		84,325,731.55	12,648,859.73	96,974,591.28
Պետական	34,028.41		0	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ	**1,551,668.47**		**188,621,723.83**	**28,293,258.57**	**216,914,982.40**

2.2 Վարձակալության փոխհատուցումը

173. Ծրագրի արդյունքում ազդեցության են ենթակա 15 համայնքային և պետական հողերի 18 վարձակալներ: 15 հողերից 14-ը համայնքային սեփականության հողեր են, իսկ 1-ը՝ պետական: Ինչ վերաբերում է վարձակալության ժամկետին, ապա հողերից մեկի վարձակալության իրավունքը 15 տարուց պակաս է, 13 հողերի վարձակալության իրավունքը 25 տարուց պակաս է, և մեկ հող ունի 25 տարուց ավել վարձակալության իրավունք: Նշված ԱԵՏՏ-ների ՀՕՏՇ-ով սահմանված փոխհատուցման իրավունքներին համապատասխան հաշվարկված փոխհատուցումը սահմանված է Աղյուսակ Ժ 2-ում:

Աղյուսակ Ժ2. Վարձակալված հողերի փոխհատուցումը

Հողի տեսակը / **Վարձակալության տեսակը**	**Հողամասը**		**Միավոր արժեք**	**Ընդհանուր արժեք**	**Օժանդակություն 15%**	**Վարձակալության փոխհատուցում**
	No.	**Ազդեցության ենթակա մասը քառ.մետրով**	**ՀՀԴ/քմ**	**ՀՀԴ**	**ՀՀԴ**	**ՀՀԴ**
< 15 տարի (14%)						
Գյուղատնտեսական նշանակության հողամաս	1	1,273.06	103	131,125.00	19,669.00	21,111.00
< 25 տարի (20%)						
Գյուղատնտեսական նշանակության հողամաս	13*	45,788.66	83.54	3,825,185.00	573,778.00	879,793.00
>25 տարի (25%)						
Գյուղատնտեսական նշանակության հողամաս	1	506.97	26.75	13,561.00	2,034.00	3,899.00
Ընդհանուր	**15**	**47,568.69**	**213.29**	**3,969,871.00**	**595,481.00**	**904,803.00**
*13 հողամասեր վարձակալվում են 16 տնային տնտեսությունների կողմից: Դրանցից երեք տնային տնտեսություններ վարձակալում են միևնույն հողամասը, որոնց փոխհատուցումը կազմում է համապատասխանաբար 4952.00, 32929.00 և 52900.00 ՀՀ դրամ: Այս երեք ԱԵՏՏ-ների փոխհատուցումները արդեն իսկ ներառված են վարձակալված հողամասերի փոխհատուցման բյուջեում:						

174. Ի լրումն վարձակալների, Ծրագրի շրջանակներում ազդեցության են ենթակա նաև համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության յոթ հողամասերի վեց հողօգտագործողներ (իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵՏՏ): Համաձայն ՀՕՏՇ իրավունքների մատրիցայի՝ այս խմբի ԱԵՏՏ-ներն իրավասու են ստանալու փոխհատուցում հողամասի վրա կատարված բարելավումների համար: Այս խմբի համար նախատեսված փոխհատուցումների արժեքը ներառված է մշակաբույսերի համար նախատեսված փոխհատուցումների գլխում:

2.3 Շենքերի, շինությունների փոխհատուցումը

175. Կառույցների (շենք, շինությունների) փոխհատուցումը հիմնված է որակավորված գնահատողի կողմից կատարված գնահատման վրա: Բնակելի շենքերի և շինությունների համար տրվում է դրամական փոխհատուցում փոխարինման արժեքին հավելյալ 15% գումարի չափով, անկախ շինության կամ տան իրավական կարգավիճակից և դրա նկատմամբ ԱԵԱ-ի գրանցված իրավունքներից: Ոչ բնակելի ինքնակամ կառույցները փոխհատուցվում են նույն հիմունքներով՝ միայն դրանց օրինականացումից և իրավունքների պետական գրանցումից հետո: Ընդ որում, փոխարինման արժեքը գնահատվում է շինության տեսակի, նյութերի արժեքի, աշխատանքի, տրանսպորտային/ շինարարական այլ ծախսերի հիման վրա, առանց ամորտիզացիոն կամ գործարքային ծախսերի մասհանումների: Մասնակի ազդեցության դեպքում, եթե շինության սեփականատերը չի ցանկանում տեղափոխել այն, փոխհատուցումը տրվում է միայն ազդեցության ենթակա մասի և վերանորոգման համար:

176. Շենք, շինությունների և կառույցների փոխհատուցմանը գնահատված ընդհանուր արժեքը կազմում է 278,107,409.00 ՀՀ դրամ: Փոխհատուցման արժեքը ներառում է շինությունների փոխարինման արժեքը (241,832,530.00 ՀՀ դրամ) գումարած 15%-ը (36,274,879.00 ՀՀ դրամ): Ազդեցության ենթակա շինությունների շարքում են բնակելի և հասարակական կառույցներ (հյուրանոց, ռեստորան): Մասնավորապես, Ծրագրի արդյունքում ազդեցության կենթարկվեն երեք բնակելի շնություններ: Ազդեցության ենթակա շինությունների փոխհատուցման մանրամասները տե՛ս Աղյուսակ Ժ3-ում:

Աղյուսակ Ժ3. Շինությունների և կառույցների փոխհատուցումը.

Տեսակ	Ազդեցության ենթակա շինություն		Միավոր արժեք (քմ)	Արժեք (ՀՀԴ)	15% Օժանդակություն (ՀՀԴ)	Ընդհանուր փոխհատուցում (ՀՀԴ)
	No.	քմ				
Բնակելի տուն/կառույց	3	363.88	320,295.12	116,548,988.00	17,482,348.00	134,031,336.00
Քարե պարիսպ	5	56.26	61,388.14	3,453,697.00	518,055.00	3,971,752.00
Ավտոսպասարկման կենտրոն	1	131	127,214.69	16,665,124.00	2,499,768.00	19,164,892.00
Օժանդակ կառույց	1	1.6	126,643.13	202,629.00	30,395.00	233,024.00
Սանհանգույց	1	5.74	44,877.18	257,595.00	38,639.00	296,234.00
Գազալցակայան (ձեռնարկ. գործ. ժամանակավոր դադարեցում)	1	20.61	148,478.36	3,060,139.00	459,020.00	3,519,159.00
Ռեստորան	1	645.92	67,674.24	43,712,145.00	6,556,821.00	50,268,966.00
Բետոնե պատ	1	20.68	109,023.31	2,254,602.00	338,190.00	2,592,792.00
Հասարակական	2	170.27	151,376.44	25,774,866.00	3,866,230.00	29,641,096.00
Հյուրանոց	1	309.52	93,247.09	28,861,840.00	4,329,276.00	33,191,116.00

Տեսակ	Ազդեցության ենթակա շինություն		Միավոր արժեք (քմ)	Արժեք (ՀՀԴ)	15% Օժանդակություն (ՀՀԴ)	Ընդհանուր փոխհատուցում (ՀՀԴ)
	No.	քմ				
Բետոնե պլատֆորմ (լքված)	2	134.2	6,595.59	885,128.00	132,770.00	1,017,898.00
Ջրավազան շատրվանով	1	2.79	55,834.05	155,777.00	23,367.00	179,144.00
Ընդհանուր	**20**	**1862.47**		**241,832,530.00**	**36,274,879.00**	**278,107,409.00**

2.4 Մշակաբույսերի փոխհատուցումը

177. Մշակաբույսերի կորստի համար դրամական փոխհատուցում կտրամադրվի բոլոր ԱԵՏՏ-ներին՝ ականկալվող բերքի համախառն արժեքով: Փոխհատուցումը սահմանվում է նախորդ երեք տարիների մշակաբույսերի միջին եկամտաբերության ցուցանիշների և մշակաբույսերի ընթացիկ շուկայական փոխարժեքի հիման վրա: Մշակաբույսերի միջին եկամտաբերությունը յուրաքանչյուր համայնքում տարբեր է, ինչը հիմք է ընդունվել ընդհանուր մշակաբույսի կորստի և վճարվելիք փոխհատուցման գումարի գնահատման ընթացքում: Ազդեցության ենթակա տարածքի (334,151.96 քմ) համար մշակաբույսերի ընդհանուր փոխհատուցումը կազմում է 72,787,385.33 ՀՀԴ: Մանրամասները տե՛ս Աղյուսակ Ժ 4-ում:

Աղյուսակ Ժ4. Մշակաբույսերի փոխհատուցում

Համայնք / Բերքի տեսականի	Ազդեցության ենթակա տարածք	Մշակաբույս (Կգ/քմ)	Ընդհանուր կորուստ	Շուկայական արժեք	Փոխհատուցումը (ՀՀ դրամ)
Մարալիկ					
Ցորեն	12,041.91	0.36	4,274.88	159.5	681,843.05
Գարի	2,290.35	0.35	808.49	163.1	131,865.30
Կորնգան	12,859.95	0.37	4,758.18	447.0	2,126,907.13
Կարտոֆիլ	8,958.76	2.67	23,919.89	159.0	3,803,262.38
Խոտ	103.04	0.36	37.20	60.0	2,231.85
Ընդհանուր	***36,254.01***		***33,798.64***		***6,746,109.71***
Ազատան					
Ցորեն	26,065.19	0.49	12,771.94	159.50	2,037,124.92
Գարի	8,220.57	0.46	3,756.80	163.10	612,734.16
Առվույտ	1,531.86	0.34	513.17	68.90	35,357.63
Կարտոֆիլ	44,347.80	2.75	121,956.45	159.00	19,391,075.55
Ընդհանուր	***80,165.42***		***138,998.37***		***22,076,292.26***
Բենիամին					
Ցորեն	5,139.74	0.37	1,901.70	159.50	303,321.76
Կորնգան	1,152.61	0.40	461.04	447.00	206,086.67

Համայնք / Բերքի տեսականի	Ազդեցության ենթակա տարածք	Մշակաբույս (Կգ/քմ)	Ընդհանուր կորուստ	Շուկայական արժեք	Փոխհատուցումը (ՀՀ դրամ)
Առվույտ	3,180.37	0.65	2,067.24	68.90	142,432.87
Կարտոֆիլ	12,281.83	2.06	25,300.57	159.00	4,022,790.60
Ընդհանուր	***21,754.55***		***29,730.56***		***4,674,631.89***
Լանջիկ					
Ցորեն	3,183.34	0.28	891.34	159.50	142,167.96
Գարի	6,595.38	0.24	1,582.89	163.10	258,169.55
Կորնգան	2,436.32	0.44	1,071.98	447.00	479,175.42
Ընդհանուր	***12,215.04***		***3,546.21***		***879,512.94***
Լուսակերտ					
Ցորեն	7,443.10	0.25	1,860.78	159.50	296,793.61
Գարի	5,070.96	0.22	1,115.61	163.10	181,956.19
Կորնգան	575.47	0.40	230.19	447.00	102,894.04
Կարտոֆիլ	18,974.82	2.50	47,437.05	159.00	7,542,490.95
Ընդհանուր	***32,064.35***		***50,643.62***		***8,124,134.79***
Հայրենյաց					
Ցորեն	16,087.00	0.40	6,434.80	159.50	1,026,350.60
Գարի	5,785.58	0.30	1,735.67	163.10	283,088.43
Կորնգան	3,732.79	0.40	1,493.12	447.00	667,422.85
Խոտ	205,89	0.30	61.77	60.00	3,706.02
Ընդհանուր	***25,811.26***		***9,725.36***		***1,980,567.90***
Հոռոմ					
Ցորեն	26,880.05	0.30	8,064.02	159.50	1,286,210.39
Գարի	20,011.86	0.25	5,002.97	163.10	815,983.59
Կորնգան	2,166.98	0.40	866.79	447.00	387,456.02
Խոտ	686.35	0.30	205.91	60.00	12,354.30
Ընդհանուր	***49,745.24***		***14,139.68***		***2,502,004.31***
Ձորակապ					
Ցորեն	23,872.43	0.55	13,129.84	159.50	2,094,208.92
Գարի	1,613.80	0.35	564.83	163.10	92,123.77
Կորնգան	9,404.38	0.55	5,172.41	447.00	2,312,066.82
Առվույտ	6,595.43	0.50	3,297.72	68.90	227,212.56
Կարտոֆիլ	32,981.89	4.00	131,927.56	159.00	20,976,482.04
Ընդհանուր	***74,467.93***		***154,092.35***		***25,702,094.12***
Սառնաղբյուր					
Ցորեն	245.30	0.40	98.12	159.50	15,650.14
Գարի	957.00	0.35	334.95	163.10	54,630.35

Համայնք / Բերքի տեսականի	Ազդեցության ենթակա տարածք	Մշակաբույս (Կգ/քմ)	Ընդհանուր կորուստ	Շուկայական արժեք	Փոխհատուցումը (ՀՀ դրամ)
Կորնգան	131.99	0.40	52.80	447.00	23,599.81
Խոտ	339.88	0.40	135.95	60.00	8,157.12
Ընդհանուր	***1,674.17***		***621.82***		***102,037.42***
Ընդհանուր	**334,151.97**		**435,296.60**		**72,787,385.33**

2.5 Ծառերի փոխհատուցումը

Պտղատու ծառերի փոխհատուցում

178. Պտղատու ծառերը գնահատվում են ըստ իրենց տեսակի և տարիքային խմբի, այն է՝ նորատունկ, դեռ-ոչ բերքատու և բերքատու: Նորատունկ ծառերի արժեքը հաշվարկվում է շուկայում նմանատիպ տնկիների գների հիման վրա: Հասուն դեռ-ոչ բերքատու ծառերի արժեքը հաշվարկվում է՝ հիմնվելով վերականգնողական արժեքի վրա, որը հանդիսանում է տնկիի արժեքը ՝ գումարած ներդրումները (ջուր և պարարտանյութեր) այն տարիների համար, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ծառը հասնի բերքատվության տարիքին: Բերքատու ծառերի արժեքը հաշվարկվում է՝ հիմնվելով կորցրած եկամտի վերականգնողական արժեքի վրա, որը հաշվարկվում է 1 տարվա եկամտի շուկայական զուտ եկամուտը բազմապատկելով այն տարիների թվով, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ծառը հասնի լիարժեք բերքատվության տարիքի: Պտղատու ծառերի փոխհատոցումը ներկայացված է **Աղյուսակ Ժ5-ում**: Պտղատու ծառերի ընդհանուր փոխհատուցումը կազմում է 624,400.00 ՀՀ դրամ:

Աղյուսակ Ժ5: Պտղատու ծառերի փոխհատուցումը

Պտղատու ծառի տեսակ	Նորատունկ			Բերքատու						Ընդհանուր պտղատու ծառերի արժեք (ՀՀ դրամ)
	Քանակ	Միավոր արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր(ՀՀ դրամ)	Քանակ	Բերքատվություն (1 կգ/ծառ)	Շուկայական արժեք (1 կգ)	Բերքատու դառնալու տարիքների տևողություն	Միավոր արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր(ՀՀ դրամ)	
Բալ	0	0	0	12	30	200	5	30,000.00	360,000.00	360,000.00
Խնձոր	30	1,500.00	45,000.00	1	40	200	5	40,000.00	40,000.00	85,000.00
Կեռաս	10	1,500.00	15,000.00	0	-	-	-	-	0	15,000.00
Սալոր	0	0	0	1	70	120	6	50,400.00	50,400.00	50,400.00
Տանձ	21	1,500.00	31,500.00	1	80	180	5	72,000.00	72,000.00	103,500.00
Ծիրան	7	1,500.00	10,500.00	0	-	-	-	-	0	10,500.00

Ընդհանուր	**68**		**102,000.00**	**15**					**522,400.00**	**624,400.00**

Փայտանյութ տվող ծառերի փոխհատուցում

179. Փայտյանյութ տվող ծառերի գնահատման ժամանակ օգտագործվում են հետևյալ տվյալները՝ ծառատեսակ, ծառի պարագիծը սմ-ով՝ չափված գետնից 1.3մ բարձրությամբ՝ կեղևի հետ միասին և վերամշակման ենթակա բնի երկարությունը (բարձրությունը) մետրով: Փայտանյութ տվող ծառերի փոխհատուցման արժեքի հաշվարկման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝ փայտանյութ տվող ծառերի շուկայական արժեքը= (1խմ շինափայտի շուկայական արժեքը **X** շինափայտի ծավալը + խմ վառելափայտի շուկայական արժեքը **X** վառելափայտի ծավալը) - մինչև վաճառատեղ հասցնելը կատարված համախառն ծախսերը: Ընդ որում, փայտանութ տվող ծառերի բաժանումը միջին և խոշոր խմբերի կրում է զուտ նկարագրողաման/տեղեկատվական բնույթ, փայտանյութ տվող ծառի տարիքը չի ազդում ծառի արժեքի վրա, քանի որ փայտանյութ տվող ծառերի արժեքը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով շինփայտի ծավալը և դրա 1 խմ-ի շուկայական արժեքը:
180. Փայտանյութ տվող ծառերի փոխհատուցումը կազմում է 110,500.00 ՀՀ դրամ միջին աճի ծառերի համար և 508,300.00 ՀՀ դրամ՝ հասուն աճի ծառերի համար՝ ընդամենը կազմելով 618800.00 ՀՀ դրամ, ինչպես ներկայացված է Աղյուսակ Ժ6-ում:

Աղյուսակ Ժ6: Փայտանյութ տվող ծառերի փոխհատուցումը

Փայտանյութ տվող ծառի տեսակ	**Միջին**			**Խոշոր**			Ընդհանուր փայտանյութ տվող ծառերի արժեք (ՀՀ դրամ)
	Քանակ	Միավոր արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր (ՀՀ դրամ)	Քանակ	Միավոր արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր (ՀՀ դրամ)	
Հացենի	5	22,100.00	110,500.00	19	22,100.00	419,900.00	530,400.00
Ուռենի	0		0	4	22,100.00	88,400.00	88,400.00
Բարդի	0		0	0		0	0
Ընդհանուր	**5**		**110,500.00**	**23**		**508,300.00**	**618,800.00**

Դեկորատիվ ծառերի փոխհատուցում

181. Դեկորատիվ ծառերի փոխհատուցումը կազմում 1,410,000.00 ՀՀ դրամ: Փոխհատուցման զգալի մասը կազմում է եղևնիների համար տրվող փոխհատոցումը: Աղյուսակ Ժ7-ը ներկայացնում է միավոր արժեքները և ընդհանուր փոխհատոցումը, որը պետք է տրամադրվի այս կորուստների համար:

Աղյուսակ Ժ7: Դեկորատիվ ծառերի փոխհատուցումը

Դեկորատիվ ծառի տեսակ	**Քանակ**	**Միավոր արժեք (ՀՀ դրամ)**	**Ընդհանուր(ՀՀ դրամ)**
Եղևնի	6	233,333.33	1,400,000.00
Թույա	1	10,000.00	10,000.00
Ընդհանուր	**7**		**1,410,000.00**

2.6 Փոխհատոցում ձեռնարկատիրական գործունեության և եկամտի կորստի համար

Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում

182. Հարկային հայտարարագրով ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցման դիմաց փոխահատուցման միավոր արժեքը հաշվարկվում է հիմք ընդունելով 1 տարվա զուտ եկամուտը: Գնահատատումը իրականացվել է ձեռնարկատիրական գործունեության սեփականատերերի հետ խորհրդակցությունների միջոցով: Երեք ձեռնարկատիրական գործունեության դադարեցման դիմաց առավելագույն հնարավոր ընդհանուր փոխհատուցումը կազմում է 18.834.082,0 ՀՀ դրամ:

Աղյուսակ Ժ8: Ձեռնարկատիրական գործունեության դադարեցման դիմաց փոխահատուցումը

Ձեռնարկատիրական գործունեությունը	Փոխհատուցում՝ հաշվարկված տարեկան զուտ եկամտի հիման վրա (ՀՀ դրամ)	Պետական գրանցման լիցենզիայի վճար ՀՀ դրամ)	Ընդհանուր փոխհատուցում ՀՀ դրամ)	Ընդհանուր փոխհատուցում՝ հաշվարկված հնարավոր առավելագույն 12 ամիսների համար ՀՀ դրամ)
Մշտական ազդեցություն հարկային հայտարարագրով				
2. Գնահատման նպատակն է գնահատել/հաշվարկել փոխհատուցման գումարը յուրաքանչյուր ԱԵԱ/ԱԵՏՏ-ի համար փոխարինման արժեքով. փոխհատուցում ազդեցության ենթակա հողի, շինության, մշակաբույսերի, ծառերի և այլ բարելավումների, ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեության և աշխատողների, ՀՕՏՇ-ով սահմանված բոլոր կիրառելի օժանդակությունների, ինչպես նաև օտարման կապակցությամբ առաջացող վարչական ծախսերի: ԱԶԲ ԱՄՔ համաձայն՝ փոխարինման արժեքի գնահատումը հիմնված է հետևյալ բաղադրիչների վրա՝ (ա) – գույքի համարժեք փոխհատուցում, գնահատված շուկայական իրական արժեքով, (բ) օտարման գործընթացի հետ կապված ծախսեր, (գ) հաշվարկված տոկոսներ, (դ) տեղափոխման և այլ վերականգնման ծախսեր, (ե) կիրառելի այլ վճարներ և հատուցումները, եթե այդպիսիք կան: Գնահատման այս մեթոդը կիրառելիս կառույցների և ակտիվների ամորտիզացիան հաշվի չի առնվում: Փոխարինման արժեքը հաշվարկվում է օտարվող հողի, շենք, շինությունների և այլ ակտիվների համար:

3. **Առանձնահատկություններ.**
    1. Ազդեցության ենթարկված պետական հողերը չեն գնահատվում:
    2. Ազդեցության ենթարկված համայնքային հողերի դեպքում նկարագրվում և գնահատվում են միայն այդ հողերի ազդեցության ենթակա հատվածները:
    3. Ֆիզիկական անձանց չպատկանող գազատարերը, ջրատարերը, էլեկտրահաղորդալարերը և այլ կոմունիկացիաները չեն գնահատվում:
    4. Ճանապարհի ընկած հատվածում, ճանապարհի պաշտպանիչ գոտու ծառերը չեն գնահատվում (Տրանշ 3 (Թալին–Գյումրի) ճանապարհահատվածի ՇՄԱԳ հաշվետվությամբ ճանապարհի երկայնքով համայնքային հողերում առկա պաշպանական նշանակություն ունեցող ծառերի հատման դեպքում նախատեսված է միջոցառում՝ վերատնկել 1/10 հարաբերակցությամբ):
    5. Իրավունքի գրանցման վկայականի առկայության դեպքում ազդեցության ենթարկված հողամասի ընդհանուր մակերեսն ընդունվում է վկայականում նշված մակերեսը:

6. Իրավունքի գրանցման վկայականի բացակայության դեպքում, որպես ազդեցության ենթարկված հողամասի ընդհանուր մակերես, ընդունվում է կադաստրային քարտեզում առկա մակերեսը:
7. Այգիների գնահատման ժամանակ հողամասը գնահատվում է որպես վարելահող և գումարվում է հողամասի վրա առկա ծառերի արժեքը:
8. Ազդեցության ենթարկված անձիք կփոխհատուցվեն հողամասերի ընթացիկ շուկայական արժեքով (եթե կադաստրային արժեքն ավելի բարձր է՝ ապա կադաստրային արժեք)՝ գումարած 15% օժանդակություն:

II. ՀՈՂԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

4. Անշարժ գույքի և հողամասերի գնահատումը իրականացվում է հիմք ընդունելով Անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման ՀՀ ազգային ստանդարտը, որը համապատասխանում է միջազգային գնահատման ստանդարտներին: Անշարժ գույքի գնահատման դասական մեթոդներն են

ա) համեմատական մեթոդ. **Համեմատական մեթոդն** իրենից ներկայացնում է գնահատման եղանակ, համաձայն որի անշարժ գույքի արժեքը որոշվում է այն համեմատելով համանման և համադրելի անշարժ գույքի օբյեկտների հետ:

բ) ծախսային մեթոդ. **Ծախսային մեթոդն** իրենից ներկայացնում է գնահատման եղանակ, համաձայն որի անշարժ գույքի արժեքը որոշվում է որպես առանց բարելավումների հողամասի արժեքի և տվյալ հողամասի վրա առկա կառույցների վերարտադրման կամ փոխարինման ծախսերի հանրագումար՝ նվազեցված կուտակված մաշվածության չափով:

գ) եկամտային մեթոդ. **Եկամտային մեթոդն** իրենից ներկայացնում է գնահատման եղանակ, համաձայն որի անշարժ գույքի արժեքը որոշվում է՝ հիմնվելով նրա եկամուտ բերելու կարողության վրա:

5. Ծախսային մեթոդի կիրառելիությունն անհնար է, քանի որ հողամասը հանդիսանում է բնական ռեսուրս, որը չի կարելի ստեղծել կամ կառուցել: Եկամտային մեթոդը կիրառելի չէ, ինչը պայմանավորված է մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ վարձակալության գործարքների ոչ արժանահավատությամբ: Բացի այդ ՀՀ տարածքում նման հողամասերի ըստ իրենց նպատակային նշանակության օգտագործման ցածր արդյունավետությունը պատճառ է հանդիսանում բերքատվության վատ ցուցանիշների, որը պայմանավորված է հողամասերի մակերեսների փոքրությամբ, և այն մշակելու համար օգտագործվող գյուղատնտեսական տեխնիկայի անարդյունավետությամբ: Արդյունքում ավելանում է տարեկան գործառնական ծախսերը:
6. Շուկայական արժեքի գնահատումը կկատարվի համեմատական մեթոդով: Այս մեթոդը կիրառվում է գնահատվող հողամասերին նման այլ հողամասերի առքուվաճառքի գործարքների վերաբերյալ արժանահավատ շուկայական տեղեկատվության բավարար (առնվազն երեք միավոր) քանակության առկայության դեպքում: Որպես համադրելի հողամասեր կարող են օգտագործվել ինչպես բաց մրցակցային շուկայում վաճառված, այնպես էլ ազատ շուկայում հրապարակայնորեն վաճառահանված հողամասերը: Գնահատվող տարածքում, շուկայի ցածր ակտիվության պատճառով, օգտագործվելու են նախկինում կատարված ու գրանցված համեմատական տվյալները:
7. **Գնահատման ընթացակարգ**.

1) Գնահատվող հողամասերը համեմատվելու են նվազագույնը երեք համեմատական տվյալների հետ:

2) Համեմատության ընթացքում կատարվել են ճշգրտումներ (ուղղում, նույնականացում), ըստ անշարժ գույքի շուկայական արժեքի վրա ազդող գործոնների:

Ճշգրտման (ուղղման,նույնականացման) գործակիցները ձևավորվում են՝ հիմք ընդունելով.

- 2012-2014թթ. ԱԳԿՊԿ կողմից հրապարակվող "Անշարժ գույքի շուկայի վերլուծություն" տեղեկատուն,
- անկախ գնահատողների կողմից անշարժ գույքի շուկայի ուսումնասիրության և վերլուծության արդյունքները:

8. **Ճշգրտման գործակիցների կիրառումը կկատարվի՝ համապատասխանեցնելով նորմատիվային տվյալների հարաբերություններին.**

1) Ճշգրտումն ըստ շուկայի վիճակի, վաճառքի պայմանների և ժամանակի՝

- Գործակիցը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար շուկայի վերլուծության արդյունքում, հիմքը ԱԳԿՊԿ-ի կողմից հրապարակվող "Անշարժ գույքի շուկայի վերլուծություն" www.cadastre.am ինտերնետային կայք:

2) Բնակավայրերի,արդյունաբերության և այլ նշանակության հողերի համար.

ա) Գույքային իրավունքներն (այդ թվում՝ կառուցապատման) ու սահմանափակումները (այդ թվում՝ իրավունքների և օգտագործման նկատմամբ),
բ) նպատակային և գործառնական նշանակությունը,
գ) կառուցապատման չափորոշիչները և սահմանափակումները, ենթակառուցվածքների առկայությունը և հնարավորությունը,
դ) հողամասի չափերը (մակերես, լայնություն, երկարություն, երկրաչափական կառուցվածք, ճակատային մաս),
ե) տեղադրությունը, դիրքը, թեքությունը,
զ) տրանսպորտային հանգույցների առկայությունը,
է) բնակավայրերի, արդյունաբերության և այլ նշանակության հողերի արժեքի վրա ազդող այլ գործոններ:
հիմքը՝ Հայաստանի ազգային ստանդարտ ՀՍՏ 252-2012 , 6.2.2 կետ

3) Գյուղատնտեսական նշանակության հողերի համար.

ա) Գույքային իրավունքներն ու սահմանափակումները (այդ թվում՝ իրավունքների և օգտագործման նկատմամբ),
բ) հողատեսքը, ոռոգման ջրի առկայությունը
գ) հողամասի չափերը (մակերես, լայնություն, երկարություն, երկրաչափական կառուցվածք, ճակատային մաս),
դ) տեղադրությունը, դիրքը, թեքությունը,քարքարոտությունը
ե) տրանսպորտային հանգույցների առկայությունը,
զ) բազմամյա տնկարկների առկայությունը,
է) գյուղատնտեսական նշանակության հողերի արժեքի վրա ազդող այլ գործոններ:
Հիմքը՝ Հայաստանի ազգային ստանդարտ ՀՍՏ 252-2012, 6.2.3 կետ

Ծանոթություն. 2-րդ գլխի ա) կետը՝ Համաձայն պատվերի պահանջի՝ գնահատվող գույքի նկատմամբ, անկախ գույքի իրավական կարգավիճակից, դիտարկվում է սեփականության իրավունքի լրիվ փաթեթի առկայությունը (տնօրինում, տիրապետում, օգտագործում):

բ), գ), դ), ե), զ) կետերը՝ շուկայական տեղեկատվության,շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների և վաճառահանված տվյալների ուսումնասիրության) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա:

է) կետը՝(ինժեներական ապահովվածությունը, շուկայական տեղակայումը) շուկայական տեղեկատվության, շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների և վաճառահանված տվյալների ուսումնասիրության) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա:

3-րդ գլխի ա) կետը՝ Համաձայն պատվերի պահանջի՝ գնահատվող գույքի նկատմամբ, անկախ գույքի իրավական կարգավիճակից, դիտարկվում է սեփականության իրավունքի լրիվ փաթեթի առկայությունը (տնօրինում, տիրապետում, օգտագործում):

բ) կետը՝ ՀՀ գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային արժեքները 1997թ.տվյալներով և 1997թ.Կառավարության N237 որոշման հիման վրա:

գ) կետը՝ Քանի որ համեմատական տվյալների և գնահատվող հողամասերի մակերեսները համեմատելի և համադրելի են, ուստի մակերեսների չափերի ճշգրտման (ուղղման) գործակից չի կիրառվել:

դ), ե) կետերը՝ շուկայական տեղեկատվության, շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների և վաճառահանված տվյալների ուսումնասիրության) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա:

զ) կետը՝ չի կիրառվում քանի որ գնահատվող հողամասերում բացակայում են բազմամյա տնկարկները:

է) կետը՝(շուկայական տեղակայումը) շուկայական տեղեկատվության, շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների և վաճառահանված տվյալների ուսումնասիրության) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա:

Հողամասի իրավունքի գրանցման վկայականում նշված նպատակային ու գործառնական նշանակության և փաստացի օգտագործման միջև եղած տարբերության դեպքում՝ գնահատման ժամանակ հաշվի է առնվում այն տարբերակը, որի դեպքում հողակտորի արժեքն առավելագույնն է:

9. Փաստացի գնահատում

Յուրաքանչյուր գնահատվող հողամաս համեմատվում է վաճառված 3 նմանատիպ հողամասերի հետ. կատարվում է ուսումնասիրություն ճշտելու համար մակերեսը, առանձնահատկությունները, որակը և գնահատման գործոնները: Այնուհետև հողամասը գնահատվում է՝ համաձայն ստորև նշված բանաձևի:

$$P_{plot} = \frac{1}{3} \times S_{plot} \times \sum_{i=1}^{3} \frac{P^i_{comp}}{S^i_{comp.surf}} \times \prod_{j=1}^{10} (1 + K^i_j)$$

Որտեղ՝

P_{plot}- Հողամասի արժեքը

S_{plot}- Ազդեցության ենթարկված տարածքի մակերեսը

i -համեմատական հողամասի հերթական համարը

j -ուղղման գործակցի հերթական համարը

P^i_{comp} - i-երորդ համեմատական հողամասի վաճառքի գինը

$S^i_{comp.surf}$ – i-երրորդ համեմատական հողամասի մակերեսը

K^i_j- ՈՒղղումներն ըստ շուկայի վիճակի, վաճառքի պայմանների և ժամանակի; Շուկայական ուղղումն ըստ տեղակայման; ըստ այլ գնագոյացման հանգամանքների (տրանսպորտային հանգույցների , ենթակառուցվածքներ առկայություն և այլն) ; ըստ նպատակային ,

գործառնական նշանակության կամ հողատեսքի; ըստ թեքության աստիճանի; ըստ քարքարոտության; ըստ ոռոգման ջրի առկայության; ըստ դիրքի՝ գլխավոր ճանապարհի նկատմամբ ; ըստ ինժեներական ապահովվածության (բնակավայրերի նշանակության հողամասերի); ըստ ճակատային մասի:

Փոխհատուցման արժեքը (+15%) կհաշվարկվի ըստ ստորև ներկայացված բանաձևի.

$$P_{compensation} = P_{plot} + P_{plot}*15/100$$

Հողի գնահատման նմուշային հաշվարկը ներկայացված է աղյուսակ 1-ում:

III. ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԿԱՄ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

10. Ելնելով Ծրագրի պահանջներից, շենք/շինությունների համար կհաշվարկվի վերարտադրման կամ փոխարինման ծախսերը: Ելնելով անշարժ գույքի գնահատվող արժեքի տեսակից և գործառույթից (օգտագործման նպատակից)՝ շենք-շինությունների վերարտադրման կամ փոխարինման ծախսերը (ոչ շուկայական արժեք) հաշվարկվում է գնահատման ծախսային մեթոդով (հաշվի չառնելով ֆիզիկական, գործառնական (ֆունկցիոնալ) և տնտեսական մաշվածությունները):
11. **Շենք/շինությունների գնահատման ընթացակարգ.**
    1) Շենքերի/կառույցների նկարագրություն՝ հիմնվելով չափագրման և գնահատման դիտարկման տվյալների վրա: Սա օգնում է պարզել գնահատվող շենքի մակերեսը/ծավալը, տեսակը և պայմանները:
    2) Շենքի/կառույցի վերարտադրման կամ փոխարինման ծախսերի հաշվարկում՝ հիմնվելով գնահատման ենթակա շենքի/կառույցի նկարագրության վրա:

12. **Գնահատման ընթացքում կիրառվող պարամետրեր**

Վերարտադրման կամ փոխարինման ծախսերի հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ պարամետրերը՝

- գույքի տեսակը
- օգտագործման նպատակը
- կոնստրուկտիվ նյութերի տարրերի տեսակը
- հարկայնության նյութերի տարրերի տեսակը
- ինժեներական ապահովվածությունը

Հարդարման ժամանակ օգտագործված շինանյութերի որակի տարբերությունը՝ ըստ ՇԱԽՑ-ի (ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թ. 03 ապրիլի N 35 –Ն հրամանի ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների եվ շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածու) ավարտվածության աստիճանը՝ տվյալ օբյեկտի կառուցման /ավարտման/ կամ վերակառուցման արժեքի համապատասխան հաշվարկը ըստ ՇԱԽՑ-ի նորմաների:

13. **Փոխարինման արժեքի որոշումը**

<u>Վերարտադրման ծախսերը</u> գնահատման ամսաթվի դրությամբ, շուկայական գներով այն ծախսերի հաշվարկն է, որոնք անհրաժեշտ են նույնատիպ նոր շենքի /շինության/ ստեղծման համար՝ օգտագործելով գնահատվող շենքի /շինության/ կառուցման համար օգտագործված նյութերը և տեխնոլոգիաները, ներառյալ ձեռնարկատիրական (կառուցապատողի) շահույթը

Փոխարինման ծախսերը գնահատման ամսաթվի դրությամբ, շուկայական գներով այն ծախսերի հաշվարկն է, որոնք անհրաժեշտ են գնահատվող շենքին /շինությանը/ համարժեք օգտակարությամբ նոր շենքի /շինության/ (ժամանակակից պահանջներին համապատասխանող փոխարինիչի) կառուցման համար՝ ներառյալ ձեռնարկատիրական (կառուցապատողի) շահույթը:
Անշարժ գույքի գնահատման նպատակով շենքերի և շինությունների վերարտադրման (կամ փոխարինման) ծախսերը հաշվարկվում են որպես ուղղակի և անուղղակի ծախսերի (վերադիր ծախսերի՝Քաղաքաշինության Նախարարության 16.06.2008թ. N41-Ն հրամանի), ձեռնարկատիրական (կառուցապատողի) շահույթի և հարկերի հանրագումար:
Ձեռնարկատիրական շահույթի մեծությունը որոշվում է շուկայական տեղեկատվության վերլուծության հիման վրա:
Գնահատողը պետք է ուսումնասիրի և հաշվարկի առկա շինությունների չափման 1 միավորի (1քառ.մ, 1խոր.մ) վերարտադրման կամ փոխարինման ծախսերը, որի հիման վրա կկատարվի շենք-շինությունների վերարտադրման կամ փոխարինման արժեքի հաշվարկը: Փոխհատուցման արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$C_{\text{փոխհատուցում}} = C_{\text{փոխարինում}} + C_{\text{փոխարինում}}*15/100$$

Շենքի/շինության համար փոխարինման արժեքի նմուշային հաշվարկը ներկայացված է Աղյուսակ 2 -ում:

IV. ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

14. Մշակաբույսերի փոխհատուցման արժեքի որոշման համար հիմք են հանդիսանում յուրաքանչյուր համայնքի համար միջին բերքատվության մասին գյուղատնտեսության նախարարությունից, մարզպետարանից ստացված տվյալները և այդ մշակաբույսերի միջին շուկայական արժեքի վերաբերյալ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (www.armstat.am) տվյալները: Մշակաբույսերից ստացված եկամուտի գնահատման համար կիրառվել է հետևյալ բանաձևը՝

$$V_{crop.} = \sum_{i=1}^{m} S_i * A_i * V_{1kg}$$

Որտեղ:
$V_{crop.}$ – մշակաբույսերից ստացված եկամուտն է
S_i –i-րդ ցանքատարածության մակերեսն է
A_i –i-րդ մշակաբույսի բերքատվությունն է (կգ/մ^2)
$V_{1kg.}$ - i-րդ մշակաբույսի 1կգ արժեքն է
Աղյուսակ 1. Մշակաբույսերի հաշվարկի նմուշ
Մշակաբույսերի արժեքի հաշվարկի նմուշը ներկայացված է Աղյուսակ 3-ում:

V. ԲԵՐՔԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

15. Բերքատու ծառերը գնահատվում են ըստ Ծառատեսակի և 3 տարիքային խմբի՝
    1. Նորատունկ
    2. Դեռ ոչ բերքատու (միջին)
    3. Բերքատու
16. **Նորատունկ** ծառերի արժեքը հաշվարկվում է շուկայում վաճառահանված նմանատիպ տնկիների գների վերլուծության հիման վրա:

17. **Դեռ ոչ բերքատու** ծառերի արժեքը հաշվարկվում է՝ հիմնվելով վերականգնողական արժեքի վրա, որը հանդիսանում է տնկիի արժեքը ՝ գումարած ներդրումները (ջուր և պարարտանյութեր)այն տարիների համար, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ծառը հասնի բերքատվության տարիքին:
18. **Բերքատու ծառերի** գնահատումը կատարվում է հետևյալ բանաձևով.

Գնահատվել են հիմնվելով ծառից կորցված եկամուտից՝ հետևյալ բանաձևի համաձայն՝

$$V_{fruit.} = \sum_{i=1}^{m} Q_i * A_i * T_i * V_{1kg}$$

Որտեղ՝

V_{fruit}– պտղատու ծառերի արժեքն է

Q_i –i-րդ տեսակի պտղատու ծառերի քանակն է

A_i – i-–րդ տեսակի պտղատու ծառերի արտադրողականությունն է (կգ/ծառ)

T_i – i-րդ տեսակի ծառերի համար պտղատու դառնալու համար անհրաժեշտ տարիների քանակն է (տարիների քանակ)

V_{1kg} - 1 կգ արժեքն է i-րդ տեսակի համար

Բերքատվությունը հաշվարկվում է մարզպետարանների կողմից տրամադրված 2013թ. բերքատվության հիման վրա:

Միավորի արժեքը հաշվարկվում է www.armstat.am (Ազգային վիճակագրական ծառտայության) ինտերնետային կայքից:

Բերքատու ծառերից կորստի հաշվարկի նմուշը ներկայացված է Աղյուսակ 4 -ում:

VI. ՓԱՅՏԱՆՅՈՒԹ ՏՎՈՂ ԾԱՌԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

19. Փայտյանյութ տվող ծառերի գնահատման ժամանակ օգտագործվում են հետևյալ տվյալները՝
    1. Ծառատեսակ
    2. Ծառի պարագիծը սմ-ով՝ չափված գետնից 1.3մ բարձրությամբ՝ կեղևի հետ միասին
    3. Վերամշակման ենթակա բնի երկարությունը (բարձրությունը) մետրով

Փայտանյութ տվող ծառերի համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$Ծ_{փա} = Ծ_{շա} \times Ծ_{շծ} + Ծ_{վա} \times Ծ_{վծ} - Ծ$$

Որտեղ՝

$Ծ_{փա}$ – ն՝ փայտանյութ տվող ծառերի շուկայական արժեքը,

$Ծ_{շա}$ – ն՝ 1խմ շինափայտի շուկայական արժեքը,

$Ծ_{շծ}$ – ն՝ շինափայտի ծավալը,

$Ծ_{վա}$- ն՝ 1 խմ վառելափայտի շուկայական արժեքը,

$Ծ_{վծ}$ – ն՝ վառելափայտի ծավալը,

Ծ – ն՝ մինչև վաճառատեղ հասցնելը կատարված համախառն ծախսերը:

Թափոնները հատման մնացորդների և կեղևի ծավալի գումարն են և կազմում են ծառի բնի և կեղևի ընդհանուր ծավալի 10%-ը:

Փայտանյութ տվող ծառերի հաշվարկի նմուշը ներկայացված է Աղյուսակ 5 -ում:

VII. ԴԵԿՈՐԱՏԻՎ ԾԱՌԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

20. Դեկորատիվ ծառերի արժեքը հաշվարկվում է շուկայում վաճառահանված նմանատիպ ծառերի գների վերլուծության հիման վրա: Դեկորատիվ ծառերի հաշվարկի նմուշը ներկայացված է Աղյուսակ 6-ում:

VIII. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

21. Տրանսպորտային ծախսերի հաշվարկը կատարվելու է շուկայի ուսումնասիրություններից ստացված արդյունքների հիման վրա: Հատուկ սարքավորումների տեղափոխման համար կկատարվի տեղափոխման ծախսերի անհատական հաշվարկ:
22. 1 ուղերթը (1.5-2 տոննա բեռի տեղափոխման կարողությամբ բեռնատար մեքենայով) նախատեսված է մինչև 50 քառ.մ մակերեսով տարածքում առկա տնտեսական և կենցաղային գույքերի տեղափոխման համար, որը ներառում է բանվորի աշխատավարձը:

IX. ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ (ԱՌԱՆՑ ՇԵՆՔ/ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ և ԾԱՌԵՐԻ) ԳՆԱՀԱՏՈՒՄ

23. Հողի վրա առկա բարելավումների (առանց շենք/շինությունների, մշակաբույսերի և ծառերի) հաշվարկը նույնպես իրականացվել է փոխարինման արժեքով:

X. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ և ԴՐԱՆՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ/ԿՈՐՍՏԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

24. Ձեռնարկատիրական գործունեության համար փոխհատուցման հաշվարկը կիրականացվի ՀՕՏԾ-ին համապատասխան, որը որոշում է ձեռնարկատիրական գործունեության վրա մշտական և ժամանակավոր ազդեցությունների համար փոխհատուցման գնահատման սկզբունքները: Գնահատումը կատարվում է գործող կարգի համաձայն, որը նախատեսում է ընկերությունների զուտ եկամուտի որոշում, հարկային մարմիններին ներկայացված նախորդ տարվա հաշվետվությունների հիման վրա:
    Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների և աշխատակիցների վերաբերյալ տվյալները տրամադրվում են պատվիրատուի կողմից:

XI. ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

25. Յուրաքանչյուր գույքի օտարման ժամանակ հաշվարկվում են հետևյալ ծախսերը.
    1. Նոտարի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված ծախսերը, որը ներառում է նոտարի կողմից տրամադրվող վճարովի ծառայությունները և նոտարական գործողությունների համար նախատեսված պետական տուրքերը,
    2. Անշարժ գույքի միավորի մասնատման ժամանակ պետական գրանցման ծառայությունների համար գանձվող վճարները և պետական գրանցման համար անհրաժեշտ պետական տուրքերը,
    3. Ձեռք բերողի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը:
    4. Փոխհատուցման արդյունքում առաջացող հնարավոր հարկերը:

Հաշվարկի ժամանակ հաշվի է առնվում մասնատվող և օտարվող հողամասերի քանակը: Համայնքային հողամասերի համար հաշվարկվում են միայն Ձեռք բերողի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը

Աղյուսակ 1
1 Հողի հաշվարկի նմուշ

08-027-0103-0003				
Համեմատության էլեմենտը	**Չափման միավորը**	**Համեմատական հողակտոր N1**	**Համեմատական հողակտոր N2**	**Համեմատական հողակտոր N3**
Տվյալների ծագման աղբյուրը		'ԱԳԿՊԿ' Տեղեկատվական Կենտրոն	'ԱԳԿՊԿ' Տեղեկատվական Կենտրոն	'ԱԳԿՊԿ' Տեղեկատվական Կենտրոն
Ժամկետները		02.2012թ.	01.2013թ.	06.2013թ.
Վաճառքի գինը	ՀՀ դրամ	2,500,000	400,000	100,000
Ընդհանուր մակերեսը	քառ.մ	10000	4690	1100
1 քմ արժեքը	ՀՀ դրամ	250	85	91
Ուղղումը ըստ շուկայի վիճակի, վաճառքի պայմանների և ժամանակի	%	6.8%	18.1%	12.5%
Գործակիցը որոշվել է տվյալ ժամանակահատվածի համար շուկայի վերլուծության արդյունքում, հիմքը ԱԳԿՊԿ-ի կողմից հրապարակվող "Անշարժ գույքի շուկայի վերլուծություն" www.cadastre.am ինտերնետային կայք,տոկոսաչափը որոշվել է հետևյալ բանաձևով՝ $\left(\frac{U_{հնկց}}{U_{հնկվ}}\right) \times U_{հվ}$ (որտեղ $U_{հնկց}$ - ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կողմից կատարված վերլուծությունների՝ հողամասի շուկայական միջին արժեքն է գնահատման ամսաթվի դրությամբ, $U_{հնկվ}$- ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կողմից կատարված վերլուծությունների՝ հողամասի շուկայական միջին արժեքն է վաճառված համեմատական տվյալի ամսաթվի դրությամբ, $U_{հվ}$ - հողամասի վաճառքի գինն է				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	267	101	102
Տեղակայումը		գ.Ազատան	գ.Լուսակերտ	գ.Հոռոմ
Շուկայական ուղղումը ըստ տեղակայման	%	-10%	25%	25%
(շուկայական տեղակայումը) շուկայական տեղեկատվության, շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների,վաճառահանված տվյալների ուսումնասիրության,ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կողմից կատարված վերլուծությունների) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա,որը մեր կողմից կատարված Տրանշ -3 տարածաշրջաններում կարող է կազմել մինչև 35%: Տվյալ գնահատման մեջ ընդունվել է 10-25 %:				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	240	126	128
Ուղղումը ըստ այլ գնագոյացման հանգամանքների (տրասպորտային հանգույցների և ենթակառուցվածքների առկայությունը)	%	0%	0%	0%

շուկայական տեղեկատվության,շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների և վաճառահանված տվյալների ուսումնասիրության) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա, որը մեր կողմից կատարված Տրանշ -3 տարածաշրջաններում կարող է կազմել մինչև 20%: Տվյալ գնահատման մեջ ընդունվել է 0 %:				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	240	126	128
Նպատակային, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը		գյուղատնտեսական , վարելահող	գյուղատնտեսական , վարելահող	գյուղատնտեսական , վարելահող
Ուղղումը ըստ Նպատակային, գործառնական նշանակության կամ հողատեսքի	%	-30%	-30%	-30%
ՀՀ գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային արժեքները 1997թ.տվյալներով և 1997թ.Կառավարության N237 որոշման վերլուծության հիման վրա միջինը կազմում է 29.8-30.2% (Տոկոսաչափը որոշվել է հետևյալ բանաձևով՝ $\left(\frac{Ա_{վ/կա}}{Ա_{կա}}\right)$, որտեղ $Ա_{վ/կա}$ – անջրդի վարելահողի կադաստրային արժեքն է, $Ա_{կա}$ – արոտավայրի կադաստրային արժեքն է:), իսկ գնահատողի վերլուծական փորձի հիման վրա, կազմում է 30%:				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	168	88	89
Թեքության աստիճանը		հարթ	հարթ	հարթ
Ուղղումը ըստ թեքության աստիճանի	%	-10%	-10%	-10%
շուկայական տեղեկատվության,շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների և վաճառահանված տվյալների ուսումնասիրության) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա (առկա են հարթ,թույլ ,միջին և ուժեղ թեքություններ),որը կազմել է մինչև 30%,քայլը 10%:Տվյալ գնահատման մեջ ընդունվել է 10%:				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	151	79	81
Քարքարոտությունը		քարազուրկ	քարազուրկ	քարազուրկ
Ուղղումը ըստ քարքարոտության	%	-20%	-20%	-20%
շուկայական տեղեկատվության,շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների և վաճառահանված տվյալների ուսումնասիրության) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա (առկա են քարազուրկ,թույլ ,միջին և ուժեղ քարքարոտույուններ), որը կազմել է մինչև 50%, քայլը 20,20,10%:Տվյալ գնահատման մեջ ընդունվել է 20%:				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	121	63	64
Ոռոգման ջրի առկայությունը		ջրովի	անջրդի	անջրդի
Ուղղումը ըստ ոռոգման ջրի	%	-30%	0%	0%
ՀՀ գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային արժեքները 1997թ.տվյալներով և 1997թ.Կառավարության N237 որոշման վերլուծության հիման վրա միջինը կազմում է 30-60%,				

(Տոկոսաչափը որոշվել է հետևյալ բանաձևով՝ $\left(\frac{Ա_{վ'ք}}{Ա_{վ'կ}}\right)$, որտեղ $Ա_{վք}$ – ջրովի վարելահողի կադաստրային արժեքն է, $Ա_{վկ}$ – անջրդի վարելահողի կադաստրային արժեքն է:) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա, որը մեր կողմից կատարված Տրանշ -3 տարածաշրջաններում կազմում է 30-40% ,տվյալ գնահատման մեջ ընդունվել է 30%:				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	85	63	64
Դիրքը գլխավոր ճանապարհի նկատմամբ		3-րդ գիծ	2-րդ գիծ	2-րդ գիծ
Ուղղում ըստ գլխավոր ճանապարհի նկատմամբ դիրքի	%	10%	5%	5%
շուկայական տեղեկատվության,շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների և վաճառահանված տվյալների ուսումնասիրության) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա (առկա են 1-ին, 2-րդ ,3-րդ և ավելի դիրքեր), որը կազմել է մինչև 10%, քայլը 5%: Տվյալ գնահատման մեջ ընդունվել է 5-10%:				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	93	67	68
1 քմ հաշվարկային արժեքը	ՀՀ դրամ	76		

1 քառ. մ արժեքը 15% հավելումով, ՀՀ դրամ	87.40
Ընդհանուր հողամասի մակերեսը, քառ. մ	943.75
Ընդհանուր հողամասի մակերեսի արժեքը, ՀՀ դրամ	82,484
Ազդեցության գոտում ընկած հատվածի մակերեսը, քառ. մ	943.75
Ազդեցության գոտում ընկած հատվածի արժեքը, ՀՀ դրամ	82,484

Աղյուսակ 2 Շենքի/շինության փոխարինման արժեքի հաշվարկի նմուշ

08-004-0056-0004

Շինության ծածկագիրը/հերթական համարը	001
Անվանումը	բնակելի տուն
Ներքին մակերեսը (քառ.մ)	140.42
Սեփականության վկայական կամ չափագրման արդյունք	
Արտաքին մակերեսը (քառ.մ)	154.40
Սեփականության վկայական կամ չափագրման արդյունք	
Բարձրությունը (մետր)	3.00
Սեփականության վկայական կամ չափագրման արդյունք	

Ծավալը (խոր.մ)	463.20
բացարձակ մեծություն (արտաքին մակերես x բարձրություն)	
Ըստ ՇԱԽՑ-ի 1 քառ. մ վերարտադրման կամ փոխարինման ծախսերը, (ՇԱԽՑ 2009, I հատոր, I բաժին,տող 27)	205,120
Տարադրամի փոխարժեքի գործակիցը	1.494
ՇԱԽՑ 2009, ընդհանուր դրույթներ 5-րդ կետ (Ը/305)	
Գույքի ավարտվածության աստիճանի ուղղիչ գործակիցը	1.00
ՇԱԽՑ 2009, ընդհանուր դրույթներ 7-րդ կետ	
Գործակիցն ըստ հարդարման նյութերի որակի	1.00
գնահատողի վերլուծական փորձի հիման վրա	
Ուղղակի վերարտադրման կամ փոխարինման ծախսերը	43,031,608
բացարձակ մեծություն (ներքին մակերես x ՇԱԽՑ x տարադրամի գործակից x գույքի ավարտվածության գործակից x հարդարման նյութերի գործակից)	
Վերադիր ծախսերը	13.3%
Քաղաքաշինության Նախարարության 16.06.2008թ. N41-Ն հրաման	
Ձեռնարկատիրական շահույթը	10%
Շուկայական տեղեկատվության վերլուծության հիման վրա	
ԱԱՀ	20%
ՇԱԽՑ 2009, ընդհանուր դրույթներ 3-րդ կետ, 16,06,2008թ. թիվ 41-Ն հրամանի 12-րդ բաժին, ՀՀ օրենքը ավելացված արժեքի հարկի մասին	
Վերարտադրման կամ փոխարինման ծախսերը	64,356,352
բացարձակ մեծություն (ուղղակի վերարտադրման կամ փոխարինման ծախսեր x վերադիր ծախսեր x ձեռնարկատիրական շահույթ x ԱԱՀ)	
Վերարտադրման կամ փոխարինման ծախսերը 15% հավելումով	74,009,804

Աղյուսակ 3 Մշակաբույսերի արժեքի հաշվարկի նմուշ

Անվանում	Հողի ազդեցության ենթակա հատվածի վրա ածող մշակաբույսի մակերեսը /քմ/	Հողի ընդհանուր մակերեսի վրա ածող մշակաբույսի մակերեսը /քմ/	Բերքատվությունը (կգ/մ2)	Բերքի շուկայական գինը (դրամ/կգ)	Եկամտի կորուստ ոռոգելիության ենթակա հողամասից (<< դրամ)	Եկամտի կորուստ ընդհանուր հողամասից (<< դրամ)
ցորեն	1273.06	1,273.06	0.28	159.5	56,855	56,855

Աղյուսակ 4 Բերքատու ծառերից կորստի հաշվարկի նմուշ

Բերքատու ծառեր																
հ/հ	Տեսակ	Օտարվող հողամասում տնկիներ /հատ/	Ընդհանուր հողամասում տնկիներ /հատ/	Միավորի արժեք /ՀՀ դրամ/	Օտարվող հողամասում ոչ հասուն բերքատու /հատ/	Ընդհանուր հողամասում ոչ հասուն բերքատու /հատ/	Բերքատվություն /կգ/	1կգ արժեք /ՀՀ դրամ/	Ծառի միջին տարիքը	Օտարվող հողամասում հասուն բերքատու /հատ/	Ընդհանուր հողամասում հասուն բերքատու /հատ/	Բերքատվություն /կգ/	1կգ ար-ժեք /ՀՀ դրամ/	Ծառի միջին տարիքը	Օտարվող մակերեսից արժեքը (ՀՀ դրամ)	Ընդհանուր մակերեսից արժեքը (ՀՀ դրամ)
1	Խնձոր			0				0			2	60	250	5	0	150,000
2	Բալ			0		11	30	200	3						0	198,000
3	Ընդամենը														0	348,000

Աղյուսակ 5 Փայտանյութ տվող ծառերի հաշվարկի նմուշ

Փայտանյութ տվող ծառերի հաշվարկ (C<41սմ և վերամշակման ենթակա բնի բարձր. <1.0մետրից և այն փայտանյութերը.որոնք պիտանի չեն որպես շինափայտ)														
Անվանում	Հատ		D-տրամագիծ սմ-ով	h-բնի բարձրություն՝ մետր	V-ծավալը	Թափոնի ծավալը	Սաղոլոթի ծավալը	Գնահատման ենթակա ծավալը		1 խ.մ վառելափի. արժեք (ՀՀ դրամ)	Համախառն ծախսեր (ՀՀ դրամ)		Ընդամենը (ՀՀ դրամ)	
	Ընդհանուր հողամասում	Ազդեցության ենթակա հողամասում						Ընդհանուր հողամասում	Ազդեցության ենթակա հողամասում		Ընդհանուր հողամասում	Ազդեցության ենթակա հողամասում	Ընդհանուր հողամասում	Ազդեցության ենթակա հողամասում
Ուռենի	4	4	0.54	10	2.29	0.23	0.34	9.61	9.61	22100	7691	7691	204779	204779

Աղյուսակ 6 Դեկորատիվ ծառերի հաշվարկի նմուշ

Դեկորատիվ ծառեր												
հ/հ	**Տեսակ**	**Օտարվող հողամասում տնկիներ /հատ/**	**Ընդհանուր հողամասում տնկիներ /հատ/**	**Միավորի արժեք /ՀՀ դրամ/**	**Օտարվող հողամասում միջին տարիք /հատ/**	**Ընդհանուր հողամասում միջին տարիք /հատ/**	**Միավորի արժեք /ՀՀ դրամ/**	**Օտարվող հողամասում 10-ից ավելի տարի /հատ/**	**Ընդհանուր հողամասում 10-ից ավելի տարի /հատ/**	**Միավորի արժեք /ՀՀ դրամ/**	**Օտարվող մակերեսից արժեքը (ՀՀ դրամ)**	**Ընդհանուր մակերեսից արժեքը (ՀՀ դրամ)**
1	Թույա			0			0	0	2	100,000	0	200,000

ՀԱՎԵԼՎԱԾ 5. «ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ» ՏՐԱՆՇ 3 ՀՕՏԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Լանջիկ-Գյումրի հատված)

Տրանշ 3–ի ԵՆԲ կողմից ֆինանսավորվող հատվածի (Լանջիկ-Գյումրի) ազդեցության ենթակա համայնքների հանրային լսումները անցկացվել են 2014թ. փետրվարի 19-ից մինչև 2014թ. հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում: Հանրային լսումներին մասնակցած «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումայի ծրագրի» ներկայացուցիչների և այլն խորհրդատուների վերաբերյալ մանրամասները ներկայացված են ստորև ներկայացված աղյուսակում: ԾԻԿ-ի Սոցիալական զարգացման և վերաբնակեցման մասնագետը և Ազգային Սոցիալական զարգացման և վերաբնակեցման խորհրդատուն ընդհանուր Ծրագրի շրջանակում համայնքին ներկայացրեցին Ծրագիրը և լսումների նպատակը: Այլ փորձագետները մասնակցում էին խորհրդակցությանը այն դեպքերում, երբ հարցեր էին առաջանում կապված իրենց համապատասխան ոլորտի հետ:

Հանդիպումների բոլոր մասնակիցներին բաժանվեցին տեղեկատվական թերթիկներ, որոնք մանրամասնում են Ծրագրի իրականացման փուլերը, շահագրգիռ կողմերի իրավունքներն ու պարտականությունները, փոխհատուցման հաշվարկման մեթոդները, հաճախ տրվող հարցերը և բողոքների լուծման մեխանիզմը: Շահագիրգիռ կողմերը նաև տեղեկացվեցին, որ ճանապարհի մանրամասն նախագիծն արդեն պատրաստ է և օտարման ու փոխհատուցման փուլերի ավարտից հետո կմեկնարկեն շինարարական աշխատանքները: Այնուամենայնիվ, ինչպես նախատեսված է ԱՋԲ ԱՔՀ-ով, շինարարական աշխատանքները չեն կարող մեկնարկել, քանի դեռ ազդեցության ենթարկված անձինք չեն փոխհատուցվել (հողի սեփականատերեր, վարձակալներ, օգտագործողներ):

Մասնակիցներ	**Համանյքը և հանդիպման ամսաթիվը**								
	Լանջիկ 20.02.2014	Ջորակապ 20.02.2014	Սառնաղբյուր 19.02.2014	Մարալիկ 22.05.2014	Հայրենյաց 21.05.2014	Հոռոմ 21.05.2014	Լուսակերտ 22.05.2014	Բոնիամին 21.05.2014	Ազատան 31.10.2014
Սոնա Պողոսյան - Սոցիալական ազդեցության և վերաբնակեցման մասնագետ, «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ	√	√	√	√	√	√	√	√	√
Զարուհի Հայրապետյան - Տրանշ 3–ի ՀՕՏԾ մշակման սոցիալական ազդեցության և վերաբնակեցման ազգային խորհրդատու, «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ	√	√	√	√	√		√	√	
Արթուր Երիցյան - ճանապարհների և կամուրջների մասնագետ, «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային	√	√	√	√		√	√	√	

ԾԻԿ» ՊՈԱԿ									
Գևորգ Ավագյան - Տրանշ 3–ի ՀՕՏԾ մշակման խորհրդատու կազմակերպության (“Գնահատող-ների միություն” ՓԲԸ) նախագահ, որակավորված գնահատող	√	√	√	√	√	√	√	√	√
Անահիտ Նազարյան - Մարդահամարի/ՍՏՀ-ի համակարգող, Տրանշ 3–ի ՀՕՏԾ մշակման խորհրդատու կազմակերպություն (“Գնահատող-ների միություն” ՓԲԸ)	√								
Դավիթ Խուդավերդյան - Չափագրման մասնա-գետ Տրանշ 3–ի ՀՕՏԾ մշակման խորհրդատու կազմակերպություն (Գնահատողների միություն ՓԲԸ)	√								
Նելլի Հովսեփյան – Բողոքների և վեճերի կառավարման մասնագետ (իրավաբան), ԾԻԿ									√

Հանրային հանդիպման օրակարգը

Հանդիպման հիմնական նպատակն էր Ծրագրի հետ կապված տեղեկատվությունը ներկայացնել համայնքներին, հատկապես ազդեցության ենթակա տնային տնտեսություններին՝ պարզաբանելով հողերի օտարման անհրաժեշտությունը, օտարման գործընթացը, պահանջվող փաստաթղթերը, փոխհատուցման սկզբունքները, փոխհատուցման վճարման գործընթացը, ազդեցության ենթակա անձանց իրավունքներն ու պարտականությունները, բողոքների լուծման մեխանիզմը և այլն: Ընդհանուր առմամբ, լսումների ժամանակ ներկայացվել են հետևյալ հիմնական հարցերը, որի ընթացքում թիմը պատասխանել է շահագրգիռ կողմերի մի շարք հարցերին: Յուրաքանչյուր համայնքում տրված հատուկ հարցերը և դրանց պատասխանները առանձին կերպով ներկայացված են սույն հավելվածում: Համայնքում քննարկված հիմնական հարցերը հետևյալն են.

1. **Օտարման և տարաբնակեցման գործընթացի փուլերը**
    - **Մանրամասն չափագրման հետազոտություն** – Նպատակն է բացահայտել այն հողակտորները, որոնք ենթակա են օտարման: Բացահայտված օտարման ենթակա հողակտորների նկատմամբ կառավարությունը հանրային գերակա շահ ճանաչելու մասին որոշում կընդունի և ազդեցության ենթակա տնային տնեսություններին կուղարկվեն համապատասխան ծանուցումներ:
    - Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների **մարդահամարի և սոցիալ տնտեսական հետազոտության** նպատակն է վեր հանել տնային տնտեսություններին վերաբերվող մանրամասները, պարզելու համար նրանց սոցիալ-տնտեսական իրավիճակը: Արդյունքում կձևավորվի այն ելակետը, որի հիման վրա ՀՕՏԾ-ի իրականացման ընթացքում և դրա ավարտից հետո մշտադիտարկում և գնահատում կիրականացվի:
    - **Նկարագրության արձանագրությունը և կարևորությունը** - Այն օրենքով նախատեսված մի փաստաթուղթ է, որտեղ նշված են այն բոլոր կորուստները, որոնք տնային տնտեսությունները կրելու են օտարման արդյունքում: Այսինքն այս փաստաթղթով ֆիքսվում է օտարման ենթակա գույքը: Այլ խոսքերով ասած, օտարվող գույքը նշվում է

այդ փաստաթղթում: Այն պաշտոնական փաստաթուղթն է, որը քաղաքացիները հետագայում կարող են օգտագործել դատական գործընթացներում և այլն, և որում նրանք կկարողանան գծագրերով հստակ տեսնել, թե իրենց հողակտորի որ հատվածն է օտարման ենթակա: Լինելու են 3 տիպի արձանագրություններ՝ հողի, շինության և բիզնեսի: ԾԻԿ-ի ներկայացուցիչները կայցելեն համայնքի բնակիչներին և կներկայացնի արձանագրությունները՝ ստորագրման համար: Ստորագրելուց առաջ նախ պետք է մանրամասն ուսումնասիրել արձանագրության մեջ նշված տեղեկատվությունը՝ համոզվելու համար, որ այն համապատասխանում է իրականությանը: Արձանագրության ստորագրումը քաղաքացու կողմից նշանակում է, որ նա համաձայն է դրանում բերված գույքի նկարագրության հետ: Արձանագրությունում սխալի հայտնաբերման դեպքում՝ քաղաքացին իրավունք ունի հրաժարվել այն ստորագրել: Նման դեպքում նա կստանա մեկ այլ փաստաթուղթ, որում պետք է նշի ստրագրելուց հրաժարվելու պատճառը, որից հետո ԾԻԿ-ը կստուգի մատնանշված սխալը և կուղղի այն՝ քաղաքացուն ստորագրման համար տրամադրելով արձանագրության ճշտված տարբերակը: Ազդեցության ենթարկված քաղաքացին իրեն ներկայացված արձանագրությունում առկա սխալը ուղղելու համար, ինչպես նաև այլ բողոքներ ունենալու դեպքում, արձանագրությունը ստնալուց հետո 15 օրվա ընթացքում կարող է դիմել դատարան Եթե 15 օրյա ժամկետում քաղաքացին բողոքով դատարան չի դիմում, ապա դա նշանակում է, որ քաղաքացին ծանոթացել է և համաձայն է արձանագրության մեջ նշված տեղեկատվության հետ:

- **Պայմանագրի նախագիծ** - Արձանագրությունների ստորագրման ավարտից հետո սկսվում է օտարման ենթակա գույքի գնահատման գործընթացը: Արձանագրությունների և գնահատման արդյունքների հիման վրա կստեղծվի օտարման պայմանագրի նախագիծը, որտեղ քաղաքացիները կկարողանան տեսնել փոխհատուցման չափը: ԱԵԱ-ին տրամադրված պայմանագրում նշված կլինի փոխհատուցման չափը, որին կից կլինի նաև ուղեկցող նամակ, որտեղ մանրամասն նշված կլինի պայմանագրի պայմաններն ու ժամկետները: Անհրաժեշտ է, որ նախնական պայմանագրում ԱԵԱ-ն ստուգի, թե անձնական և թե օտարվող գույքի հետ կապված տվյալները: Նախնական պայմանագրի հիման վրա վերջնական պայմանագիր կպատրաստվի, որը պետք է ԱԵԱ-ի կողմից ստորագրվի նախնական պայմանագիրը նրան ծանուցելուց հետո 90 օրվա ընթացքում:
- **Ժառանգության հետ կապված խնդիրներ** – Գույքի ձեռք բերման գործընթացում կարող են լինել ժառանգության հետ կապված խնդիրներ: Ժառանգության հետ կապված խնդիրները ի հայտ են գալիս, երբ 1) սեփականատերը կամ համասեփականատերը մահացած է և ժառանգությունը չձևակերպված չէ, և 2) սեփականատերը կամ համասեփականատերը բացակայում է երկրից: Այն դեպքերում, երբ սեփականատերը կամ համասափականատերերից մեկը կամ մի քանիսը մահացել են և չկա ձևակերպված ժառանգություն, պայմանագրի կնքումը դառնում է անհնարին, մինչև որ չձևակերպվի ժառանգությունը և չստացվի նոր սեփականության վկայական՝ նոր սեփականատերերի անուններով: Այն դեպքում, երբ սեփականատերը կամ համասեփականատերը ապրում է արտասահմանում, անհրաժեշտ է ունենալ լիազորագիր՝ բոլոր գործողությունները սեփականատիրոջ/համասեփականատիրոջ անունից կատարելու համար: Լիազորագիրը կարող է տրվել ցանկացած վստահելի անձի: Եթե մի քանի համասեփականատերեր են գտնվում արտերկրում, ապա նրանք կարող են տրամադրել միայն մեկ լիազորագիր՝ բոլորով այն ստորագրելով: Լիազորագրի օրինակելի ձևը հայերեն և ռուսերեն լեզուներով կտրամադրվի ԱԵԱ-ներին: Կարևոր է որպեսզի օրինակ Ռուսաստանում ռուսերեն լեզվով տրամադրված լիազորագրերը հայերեն թարգմանվեն և նոտարի կողմից հաստատվեն Հայաստանում և ոչ թե Ռուսաստանում: Լիազորագրի բացակայության դեպում, եթե նույնիսկ

սեփականատերերը համաձայն են գույքի օտարման պայմանների հետ, օտարման գործընթացն անհնարին կլինի և ԾԻԿ-ը ստիպված կլինի այն իրականացնել դատական կարգով: Այս պարագայում փոխհատուցման արժեքը դրվում է դեպոզիտային հաշվում և մնում է այնտեղ այնքան ժամանակ, մինչ սեփականատերերը կարողանան լուծել իրենց փաստաթղթային խնդիրները, սակայն այս ընթացքում հողերի օտարման և ճանապարհի շինարարության գործընթացը չի կանգնում: Սեփականատերերը կկարողանան դատարանում վիճարկել օտարման արժեքը, սակայն ոչ օտարման փաստը՝ քանի որ այն իրականացվում է գերակա հանրային շահի մասին օրենքի շրջանակներում:

2. Փոխհատուցման սկզբունքներն ու մոտեցումները

Ծրագրի շրջանակներում պատրաստվել է «Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակ» (ՀՕՏՇ), հաստատված կառավարության որոշմամբ, որը սահմանում է փոխհատուցման իրականացման մոտեցումները: Այս որոշումը, որը հաստատվել է նաև Ասիական Զարգացման Բանկի կողմից, մշակվել է մեր օրենքների և Ասիական բանկի սկզբունքների համադրության հիման վրա: Գնահատումն իրականացվում է որակավորված մասնագետների և կազմակերպության կողմից: Գնահատման գործընթացը դեռ չի սկսվել: Այն կսկսվի արձանագրությունների ստորագրումից հետո, երբ հստակ լինեն օտարման ենթակա գույքի նկարագրությունները:

Փոխհատուցման մեխանիզմները

3. <u>**Անշարժ գույք, մշակաբույսեր և ծառեր.**</u> *Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի* պարագայում **սեփականատերերը**, այսինքն այն անձինք ում անունները ֆիքսված են սեփականության վկայականում, կստանան փոխհատուցում հողի շուկայական կամ կադաստրային արժեքի (որը որ ավելի բարձր լինի) չափով, գումարած 15%: Սովորաբար շուկայական արժեքն ավելի բարձր է, քան կադաստրային արժեքը: Շուկայական արժեքը որոշվում է նախորդ 1 կամ 2 տարիների ընթացքում տվյալ համայնքում կատարված գործարքների արժեքների հիման վրա. վաճառված հողակտորները համեմատվում են օտարվող հողակտորի հետ, և նմանատիպ հողակտորների արժեքների հիման վրա որոշվում է գինը: Եթե տվյալ համայնքում չկան գրանցված գործարքներ, ապա վերցվում են հարակից համայնքի գործարքների տվյալները: Միևնույն համայնքում տարբեր հողակտորներ կարող են տարբեր գներ ունենալ. գինը կախված է հողի տեսակից, օրինակ վարելահող, արոտավայր, պտղատու այգի և այլն, կախված է հողի թեքությունից, առաջին կամ երկրորդ գծում լինելուց, քարքարոտության աստիճանից և այլն: Այս պատճառով էլ չկա սահմանված մեկ ընդհանուր գին ծրագրի կամ համայնքի համար: Փոխհատուցման արժեքի հաշվարկը նույնն է և գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար:
   - Եթե կան հողի **վարձակալներ,** այսինքն վարձակալության պայմանագրով հողի նկատմամբ իրավունք ունեցող և կադաստրի համապատասխան վկայական ունեցող անձինք, վարձակալը ևս ստանալու է փոխհատուցում: Այս դեպքում վարձակալը ստանալու է գնահատված <շուկայական արժեք գումարած 15%> փոխհատուցման գումարից որոշակի մասնաբաժին՝ կախված վարձակալության պայմանագրի ժամկետից: Եթե վարձակալության պայմանագրի ավարտին մնացել է մինչև մեկ տարի ժամկետ, ապա վարձակալի փոխհատուցումը կկազմի ընդհանուր փոխհատուցման արժեքի 5%-ը, մինչև 15 տարի ժամկետի դեպքում՝ 14%-ը, մինչև 25 տարվա դեպքում՝ 20%-ը, և 25 կամ ավելի տարիների պարագայում՝ 25%-ը:
   - **Օրինականացման ենթակա սեփականատերեր.** այս խմբի մեջ մտնում են այն անձինք, ովքեր հողահատկացման ժամանակ ստացել են հողակտոր, սակայն չեն ձևակերպել դրա

նկատմամբ իրենց սեփականության իրավունքը և չունեն կադաստրի վկայական: Միայն սեփականության իրավունքը գրանցելուց և կադաստրի վկայական ստանալուց հետո այս անձինք կկարողանան փոխհատուցում ստանալ, որը կհաշվարկվի և վճարվի ինչպես սեփականատերերի պարագայում:

4. **<u>Շենքեր և շինություններ.</u>** Մոտեցումները տարբեր են բնակելի և ոչ բնակելի շինությունների համար: Բնակելի շինությունների պարագայում, անկախ շինության կարգավիճակից՝ գրանցված լինելուց կամ չլինելուց, սեփականատերը, որպես փոխհատուցում, պետք է ստանա փոխարինման արժեք գումարած 15%: Փոխարինման արժեքը որոշելու համար հաշվարկվում է, թե որքան գումար է անհրաժեշտ, որպեսզի քաղաքացին կարողանա նույնատիպ նոր շինություն կառուցել: Հաշվարկի մեջ ներառվում են շինանյութի գինը, աշխատուժի գինը, նախագծման գինը և այլն: Սակայն շինության ամորտիզացիան չի նվազեցվում փոխհատուցման արժեքից: Անկախ փոխհատուցումից, սեփականատերն իրավունք ունի նաև, օտարման պայմանագրի կնքումից հետո, որոշակի ժամկետում, հին շինության վրայից հանել և իր հետ տանել հնարավոր բոլոր տեսակի նյութերը, շինանյութը: Փոխհատուցման արժեքի հաշվարկը բնակելի և ոչ բնակելի շինությունների համար նույնն է: Սակայն ի տարբերություն բնակելի շինությունների, ապօրինի ոչ բնակելի շինությունները չեն փոխհատուցվում: Նման շինությունների առկայության դեպքում սեփականատերը պետք է սկսի դրանց օրինականացման գործընթացը, որպեսզի կարողանա փոխհատուցում ստանալ: Օրինականացումը պետք է իրականացվի որոշակի ժամկետում, որից հետո օրինականացված շինությունների համար փոխհատուցում չի տրվի: Այս խնդրով աջակցության համար սեփականատերերը կարող են դիմել նաև ՊՈԱԿ-ին:
5. **<u>Վերաբնակեցվողները</u>**, այսինքն՝ այն ԱԵԱ-ները, որոնք պետք է տեղափոխվեն իրենց բնակության վայրից (ներառյալ վարձակալները), ստանալու են վերաբնակեցման նպաստ, որը կծածկի գույքի տեղափոխման բոլոր ծախսերը, և մեկ ամսվա կենսաապահովման ծախս: Բոլոր ԱԵԱ-ները, ովքեր ձեռք բերվող հողակտորի վրա (շինության մեջ) ունեն շարժական գույք, որը պետք է տեղափոխվի, անկախ իրենց իրավական կարգավիճակից, կստանան դրամական աջակցություն, որպեսզի ծածկեն տրանսպորտային ծախսերը:

6. **<u>Փոխհատուցում մշակաբույսերի համար</u>**. Այս պարագայում նախատեսվում է ընթացիկ շուկայական գներով կանխիկ փոխհատուցում՝ մեկ տարվա համար ակնկալվող բերքի համախառն արժեքի հաշվարկով: Մշակաբույսերի համար փոխհատուցումը վճարվում է ինչպես սեփականատերերին, այնպես էլ վարձակալներին՝ հիմք ընդունելով նրանց կողմից համաձայնեցված մասնաբաժինները:Օտարվող հողակտորի վրա առկա մշակաբույսերի քանակն ու տեսակը նկարագրված է լինելու արձանագրություններում:

7. **<u>Փոխհատուցում ծառերի համար.</u>** Ծառերի կորուստը տարբեր մեխանիզմով է հաշվարկվում տարբեր ծառերի համար. առանձնացվում են 3 տեսակի ծառեր՝ պտղատու, դեկորատիվ և փայտանյութ տվող ծառեր: Պտղատու ծառերը իրենց հերթին բաժանվում են տնկիների, դեռ ոչ բերքատու ծառերի և բերքատու ծառերի: Դեկորատիվ ծառերը գնահատվելու են ըստ իրենց շուկայական արժեքի: Փայտանյութ տվող ծառերը գնահատվում են ըստ փայտանյութի ծավալի, որը հաշվարկվում է ըստ կոնկրետ մեթոդաբանության:

8. **<u>Բիզնեսի փոխհատուցումը.</u>** Կա բիզնեսի վրա ազդեցության երկու տարբերակ՝ մշտական և ժամանակավոր: Մշտականի պարագայում գույքն ամբողջությամբ օտարվում է և այլև չկա հնարավորություն նույն բիզնեսով զբաղվելու: Ժամանակավորի պարագայում բիզնեսը կարող է մնալ իր գործունեության տեղում, բայց կարող է ժամանակավորապես խախտվել կամ ընդհատվել: Ժամանակավոր ազդեցության դեպքում հաշվարկվում են ազդեցության ամիսները.

թե քանի ամիս է հարկավոր, որպեսզի բիզնեսը նորից սկսի աշխատել: Մշտական բիզնեսի պարագայում, եթե այն օրինական է և ունի հարկային հայտարարագրեր, ապա հաշվարկվում է նախորդ 1 տարվա ընթացքում ստացված եկամուտը՝ ըստ հարկային հայտարարագրերի, և փոխհատուցվում է այդ եկամտի չափով: Հարկային հայտարարագրերի բացակայության դեպքում, մշտական կորուստները կփոխհատուցվեն նվազագույն աշխատավարձի տեսներկուապատիկի չափով: Հարկային հայտարարագրերի բացակայության դեպքում, ժամանակավոր կորուստները կփոխհատուցվեն հիմք ընդունելով նվազագույն աշխատավարձի չափը՝ բազմապատկելով այն բիզնեսի ընդհաման ամիսների թվով, այն չի կարող գերազանցել մեկ տարին: Պետական գրանցման և լիցենզիաների հետ կապված վճարները ևս կփոխհատուցվեն, եթե այդպիսիք կան: Գրանցված բիզնեսի աշխատողներն ու աշխատակիցները, ովքեր, նախքան բիզնեսի դադարեցումը, աշխատել են նվազագույնը երկու ամիս, կանխիկ փոխհատուցում կստանան 6 ամսվա համար՝ հիմք ընդունելով աշխատողի վերջին մեկ տարվա կտրվածքով միջին ամսեկան աշխատավարձը: Աշխատանքի ժամանակավոր կորուստը ևս կփոխհատուցվի նույն կերպ՝ հիմք ընդունելով բիզնեսի ժամանակավոր դադարեցման ամիսների թիվը, բայց ոչ ավելի քան 6 ամիսը:

9. <u>Լրացուցիչ օժանդակություններ.</u>

Որոշ դեպքերի համար ծրագիրը նախատեսում է նաև լրացուցիչ նպաստներ:

- **Օժանդակություն խիստ ազդեցության դեպքում** տրվում է մեծ գյուղատնտեսական եկամուտ (հողակտոր) կորցնելու պարագայում, երբ օտարվող հատվածից ստացվող եկամուտը կազմում է տնտեսության ընդհանուր եկամտի 10%-ից ավելին: Այս դեպքում հաշվարկվում և վճարվում է է օտարվող հատվածից ակընկալվող մեկ տարվա բերքը, որը վճարվում է լրացուցիչ, անկախ ծառերի և մշակաբույսերի համար տրվող փոխհատուցումից: Տնային տնտեսություններին, որոնք տեղափոխվում են բնակելի տներից, վճարվում է նպաստ նվազագույն աշխատավարձի վեցապատիկի չափով:
- Բնակելի տներից տեղափոխվող ընտանիքները կստանան նաև **վերաբնակեցման նպաստ**, որը ներառում է ընտանիքի մեկ ամսվա կենսապահովման ծախսերը և տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտային ծախսերը:
- **Խոցելի տնային տնեսությունները** ևս լրացուցիչ նպաստ կստանան մինիմալ աշխատավարձի վեցապատիկի չափով: Խոցելի են համարվում 3 տիպի տնային տնեսություններ, որոնցից առաջինը աղքատ տնային տնտեսություններ են, որոնք Փարոս համակարգի նպաստառու են հանդիսանում, միայնակ կանանց կողմից ղեկավարվող տնային տնեսությունները, միայնակ թոշակառուների և հաշմանդամների կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները:

Հարցեր և պատասխաններ – Լանջիկ

Հարց	**Պատասխան**
Որքա՞ն ժամանակ կտևի ողջ գործընթացը:	Դա մեծապես կախված է նաև համայնքի բնակիչներից: Որքան լավ ստացվի մեր համագործակցությունը, որքան շուտ կարողանաք լուծել փաստաթղթային խնդիրները, այնքան ավելի արագ կգնա արձանագրությունների ստորագրման գործընթացը, որից հետո կսկսվի գնահատման գործընթացը և դրանից մոտավորապես 1-1.5 ամիս հետո արդեն կսկսենք նախնական պայմանագրերի ուղարկումը համայնքի բնակիչներին, որից հետո 90 օրվա ընթացքում պետք է կնքվի վերջնական օտարման պայմանագիրը:

Հարց	Պատասխան
Արդյո՞ք հնարավոր չէ հողային փոխհատուցում ստանալ՝ դրամականի փոխարեն:	Ծրագիրը հողային փոխհատուցում չի նախատեսում: Նախորդ ծրագրերի փորձը ցույց է տալիս, որ մեծամասամբ գերադասում են դրամական փոխհատուցում ստանալ:
Ունեմ ժառանգությամբ ստացված հող, որի ձևակերպման համար դատարանը գումար է պահանջում: Արդյո՞ք այդ ծախսը կփոխհատուցվի:	Ցավոք պետությունը չի կարող փոխհատուցել ձեր նախկին չձևակերպած փաստաթղթերի համար կատարած վճարումները: Այն վճարում է կոնկրետ օրտարման գործարքից բխող փոլոր ծախսերի համար:
Արդյո՞ք սեփականության իրավունքը ավտոմատ փոխանցվում է ժառան-գին՝ սեփականատիրոջ մահվան դեպքում:	Ոչ, դա ավտոմատ տեղի չի ունենում, անհրաժեշտ է որոշակի ձևակերպում նորտակարան հաստատմամբ և գրանցում կադաստրում:
Եթե գոյություն ունի կտակ, սակայն կտակողը դեռ ողջ է, ու՞մ կողմից պետք է ստորագրվի արձանագրու-թյունը:	Եթե սեփականատերը ողջ է, ապա անկախ կտակի առկայությունից գործարքը կնքվում է սեփականատիրոջ հետ:
Հողի սեփականատերեր ենք հանդիսանում ես և հայրս: Հայրս գտնվում է արտերկրում: Արդյո՞ք ես կարող եմ կատարել գործարքը՝ որպես համասեփականատեր:	Ոչ: Համասեփականատերերը ունեն հավասար իրավունքներ և անհրաժեշտ է նրանցից յուրաքանչյուրի կամ նրանց լիազոր անձանց ներկայությունը: Մենք գյուղապետարանում կթողնենք լիազորագրերի օրինակելի ձևեր հայերեն և ռուսերեն լեզուներով, որպեսզի կարողանաք դրանցից օգտվելով ճիշտ ձևակերպել ձեզ անհրաժեշտ լիազորագիրը:
Ե՞րբ կիմանանք, թե մեր հողի կոնկրետ որ հատվածն է օտարվում:	Երբ ստանաք արձանագրությունները, դրանց կցված կլինեն նաև գծագրեր, որոնցում հստակ կտեսնեք օտարվող հատվածը:
Արդյո՞ք կարող ենք հողը ցանել, թե անիմաստ է:	Մենք չենք կարող ասել ցանեք, թե ոչ, դա դուք պետք է որոշեք: Սակայն, եթե տեղազննության պահին ցանքը կատարված լինի, ապա կհաշվարկվի փոխհատուցում նաև դրա համար:
Հողը ժառանգել ենք, բայց ժառանգությունը չենք ձևակերպել: Ամուսինս էլ արտերկրում է և հիմա չենք կարող ձևակերպել: Ի՞նչ կարող ենք անել այս դեպքում:	Ձեր ամուսինը կարող է ձեզ լիազորագիր ուղարկել, որով դուք կիրականացնեք ժառանգության գրանցման գործընթացը: Եթե մինչ պայմանագրի ստորագրման վերջնաժամկետը դուք չկարողանաք այդ խնդիրը լուծել, ապա հողը կօտարվի դատական կարգով:
Ունեմ բենզալցակայան, որը 2006թ-ից չի գործում. դիմում եմ գրել և ժամանակավորապես դադարեցրել եմ գործունեությունը: Ի՞նչ փոխհատուցում եմ ստանալու դրա համար:	Չգործող բիզնեսի դեպքում կստանաք միայն գույքային փոխհատուցում, քանի որ բիզնես որպես այդպիսին այժմ չկա: Շարժական գույքի դեպքում կփոխհատուցվի դրա փոխհատուցման արժեքը, իսկ օրինական շինության դեպքում՝ նաև դրա փոխարինման արժեքը:

Հարցեր և պատասխաններ – Սառնաղբյուր

Հարց	Պատասխան
Կան ընտանիքներ, որտեղ համասեփականատերերից երեքը արտերկրում են և լիազորագրի	Այս պահին դեռ կարիք չկա լիազորագրի խնդրով զբաղվել: Ճիշտ կլինի սպասել այն փուլին, երբ կստանաք նախնական պայմանագրերը և արդեն հստակ կիմանաք, թե որքան է

ձևակերպումը շատ մեծ գումար է պահանջում, մինչդեռ մենք չգիտենք, թե մեզ ինչ փոխհատուցում է առաջարկվելու օտարվող հողի դիմաց:	կազմելու ձեր փոխհատուցման գումարը:
Իսկ ի՞նչ պիտի անեմ, եթե պարզեմ, որ ինձ համար անիմաստ է լիազորագրի ձևակերպումը, քանի որ փոխհատուցման գումարը չափազանց փոքր է:	Այդ դեպքում ԾԻԿ-ը ստիպված կլինի հողն օտարել դատական կարգով՝ դատարանի վճռի հիման վրա, և փոխհատուցման գումարն այս դեպում կդրվի դատարանի դեպոզիտ հաշվին:
Արդյո՞ք սա նշանակում է, որ իմ հողը կարող է օտարվել առանց իմ համաձայնության:	Այս ծրագրի շրջանակներում հողն օտարվում է գերակա հանրային շահի մասին օրենքի շրջանակներում և օտարման հանգամանքը չի կարող վիճարկվել: Բայց փոխհատուցման գումարի վերաբերյալ անհամաձայնության կամ փաստաթղթային խնդիրների առկայության դեպքում, օտարված գույքի դիմաց փոխհատուցումը կդրվի դատարանի դեպոզիտային հաշվին և կմնա այնտեղ այնքան ժամանակ, մինչև սեփականատերերը կարողանան լուծել իրենց խնդիրները:
Արդյո՞ք օտարման պայմանագրերը պետք է նոտարական հաստատում ստանան և ո՞վ է հոգալու այդ ծախսերը:	Ծրագրից բխող բոլոր ծախսերը, այդ թվում պայմանագրերի նոտարական հաստատման և կադաստրային նոր վկայականի ստացման ծախսերը, հոգում է պետությունը:
Իսկ ինչպե՞ս են օտարվելու համայնքային հողերը:	Համայնքային հողերի օստարումն իրականացվելու է նույն սկզբունքով, ինչ մասնավոր սեփականություն հանդիսացող հողակտորները:
Համայնքի ղեկավար. Ինչ պե՞տք է արվի, երբ հողի օտարումից հետո գյուղացին էլ մուտք չունենա դեպի իր հող, քանի որ մուտքը եղել է օտարված հատվածից: Ինձ նախկինում բերել են նախագիծը և ես չեմ ստորագրել այն, քանի որ երկու մուտքի խնդիր է առաջանում՝ անասունների և գյուղ. տեխնիկայի: Նույն խնդրի առաջ են կանգնած նաև Լանջիկ և Ձորակապ համայնքները: Նախագծողները պետք է նախապես գային, մեզ հետ քննարկեին, ոչ թե թղթի վրա ճանապարհի գիծ գծեին՝ առանց օրինակ դեպի իր հող գյուղացու մուտքի մասին մտածելու:	Եթե համայնքի մեծամասնությունը նման խնդիր ունի, ապա ճիշտ կլինի, որպեսզի համայնքի ներկայացուցիչը այցելի ԾԻԿ գրասենյակ և ինժեների հետ քննարկի այդ խնդիրը:
Ի՞նչ է լինելու այն դեպքում, եթե սեփականատերը երկրից բացակայում է և իր հողն	Այդ դեպքում հողը կօտարվի դատական կարգով և փոխհատուցման գումարը կպահվի դատարանի դեպոզիտ հաշվին, մինչ սեփականատիրոջ կամ նրա լիազոր անձի

օտարվում է առանց իր ներկայության, որից հետո վերադառնում է և համաձայն չէ օտարման գնի հետ:	ներկայանալը: Սեփականատերը դեռ երկար ժամանակ կարող է դատարանում վիճարկել օտարման գինն ու փոխհատուցման չափը, սակայն չի կարող վիճարկել օտարման փաստը:
Կարո՞ղ են մեզ այլ հող առաջարկել՝ մեր օտարվող հողի դիմաց:	Ծրագիրը չի նախատեսում հողային փոխհատուցում: Փորձը ցույց է տալիս, որ մարդիկ գերադասում են դրամական փոխհատուցում ստանալ:
Եթե իմ հողի կեսը օտարվի, մյուս կեսն արդեն անիմաստ կլինի մշակել: Հնավո՞ր է արդյոք, որ հողն օտարվի ամբողջությամբ:	Գերակա հանրային շահի մասին օրենքը թույլ է տալիս ձեզ պահանջել, որպեսզի ձեր հողն օտարվի ամբողջությամբ, սակայն սրա համար կա ժամկետային սահմանափակում: Ձեր այս իրավունքը կարող եք իրացնել գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման կայացումից հետո երկու ամսվա ընթացքում: Որոշան հաստատումից հետո ազդեցության ենթակա բոլոր անձանց կուղարկվի համապատասխան ծանուցում, որտեղ ֆիքսված կլինի նաև ամսաթիվը, մինչև երբ դուք կարող եք գրավոր դիմում ներկայացնել՝ հողն ամբողջությամբ օտարելու պահանջով:
Տունը մեր համայնքում արժե 50,000 դոլար, իսկ օրինակ հարևան Լանջիկում՝ 5,000 դոլար: Փոխհատուցումը ի՞նչ գնով է հաշվարկվելու:	Շինության դեպքում հաշվարկվում է փոխհատուցման արժեք: Ձեր տունը կարող է հողից սարքված լինել, բայց այսօր հողից տներ չեն կառուցում, և փոխհատուցուման գումարը որոշելիս հաշվարկվելու է, թե ինչ կարժենա ժամանակակից նյութերով, նույն չափի, նույնանման տան կառուցումը: Փորձը ցույց է տալիս, որ շինության փոխարինման արժեքը դրա շուկայական գնից մոտ 30%-ով ավելի է լինում:
Արդյո՞ք օտարվող հողերը միայն ճանապարհի կառուցման համար են: Եվ արդյո՞ք պետությունը ինձ թույլ կտա իմ մնացած հողի վրա շինություն կառուցել:	Այո: Մնացած հողը շարունակելու է մնալ ձեր սեփականությունը և կարող եք կառուցապատում իրականացնել օրենքով սահմանված կարգով:
Ես մեկ տարի առաջ հող եմ գնել մի մարդուց, ով վաղուց գյուղում չէր ապրում ու իրեն այդ հողը պետք չէր և շատ էժան վաճառեց: Կադաստրում գործարքը գրանցելիս էլ ավելի ցածր գին գրանցեցին: Արդյո՞ք սա ազդեցություն է ունենալու շուկայական արժեքը որոշելիս:	Հողի շուկայական գինը որոշելիս հաշվի չեն առնվում նախկինում գրանցված ամենաբարձր և ամենացածր գնով իրականացված գործարքները, այլ վերծվում է ամենահաճախ կրկնվող՝ միջին գինը: Հաշվի են առնվում նաև բազմաթիվ այլ գործոններ, և հողակտորները համեմատվում եմ միմյանց հետ բազմաթիվ չափորոշիչներով:
Ես վաղուց մշակում եմ իմ հողին կից համայնքային հողը: Ի՞նչ փոխհատուցում է տրվելու դրա համար: Կարո՞ղ եմ հիմա սեփականաշնորհել այդ հողը:	Փոխհատուցում կստանաք միայն ձեր կատարած բարելավումների համար, բայց ոչ հողի համար: Սեփականաշնորհման հարցը պետք է քննարկեք համայնքի հետ:
Կտրվի արդյո՞ք փոխհատուցում այն դեպում, երբ ես ուղղակի խոտ եմ քաղել համայնքային հողից:	Եթե խոտը դուք չեք ցանել, ներդրում չեք կատարել, ապա փոխհատուցում չի տրվի:

Կարո՞ղ եմ այս ընթացքում հողս վաճառել կամ նվիրատվություն ձևակերպել:	Կարող եք: Այս դեպքում լավ կլինի ԾԻԿ-ի կողմից տրամադրած բոլոր տեղեկատվական և պաշտոնական փաստաթղթերը տրամադրեք նոր սեփականատիրոջը, քանի որ այս դեպքում փոխհատուցում ստացողը կլինի նա:

Հարցեր և պատասխաններ – Մարալիկ

Հարց	Պատասխան
Ասացիք, որ շուկայական արժեք եք վճարում, բոլորս գիտենք, որ ճանապարհամերձ հողերը շատ ավելի թանկ են, քան մնացածը: Այնքա՞ն գումար կտաք, որ եթե ուզենանք ճանապարհի հարևանությամբ նմանատիպ հող գնել, կարողնանք գնել:	Գնահատման մոտեցումը հետևյալն է. օտարվող հողակտորը համեմատվում է մոտակա տարածքում վաճառված երեք հողակտորների հետ մի քանի չափանիշներով, ինչպիսիք են օրինակ հողի թեքությունը, ճանապարհին մոտիկ կամ հեռու լինելը, ջրովի կամ անջրդի լինելը, քարքարոտությունը և այլն: Հաշվի են առնվելու վերջին 3 տարիների ընթացքում կատարված գործարքները: Յուրաքանչյուր հողի համար առանձին հաշվարկ է կատարվելու:
Ոչ գյուղատնտեսական հող է՝ ճանապարհին մոտ, որ վրա ես շինություն եմ կառուցել: Արդյո՞ք ինձ փոխհատուցում տրվելու է դրա դիմաց:	Դուք ստանալու եք շուկայական արժեքով փոխհատուցում և կարող եք հասարակական այլ հող գնել, կրկին առաջին գիծ, քանի որ ձեզ տրվելու 115% փոխհատուցում, և այդ հողի վրա նոր շինություն կառուցել:
Կվճարվի արդյո՞ք փոխհատուցումը մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը:	Ըստ վարկի պայմանների, շինարարությունը չի կարող սկսվել, քանի դեռ փոխհատուցման գումարները չեն վճարվել ազդեցության ենթարկված SS-ներին: Այնուամենայնիվ, այս պայմանը չի կիրառվում իրավական դեպքերի վրա: Արտաքին մոնիտորինգի գործակալություն կվարձակալվի վերահսկելու համար ՀՕՏԾ իրականացման ողջ գործընթացը, որի հետ կապված այն համապատասխան հաշվետվություն կներկայացնի ԾԻԿ-ին:
Կան հողեր, որոնք ունեն հողհատկացման հիմք, բայց վկայական չունեն, կադաստրը վկայական չի տալիս՝ ասլեով, որ իրավունք չունեն վկայական տալու այս պահի դրությամբ: Ի՞նչ պետք է անել այս դեպքում:	Այլ համայնքներում հանդիպել ենք նման դեպքերի, երբ մարդիկ ունեցել են հողհատկացման հիմք և գնացել, հանել են վկայական առանց որևէ խնդրի: Կադաստրը իրավունք չունի մերժելու, եթե ունեք հողհատկացման հիմք և չկա այլ խնդիր: Դիմեք, թող կադաստրը գրավոր մերժում տա, մերժման թուղթը մեզ ներկայացրեք, մենք կուսումնասիրենք մերժման հիմքը, և եթե որևէ խնդիր չկա, մեր մանագետները ձեզ կօգնեն վկայական ստանալու հարցում:
Համայնքային հողերի համար վկայականներ ունենալու անհրաժեշտություն կա՞, թե՝ ոչ:	Համայնքային կամ պետական հողերի վարձակալները պետք է օրինականացվեն և փոխհատուցվեն որպես լիարժեք սեփականատերեր կամ նրանց կտրվեն վարձակալական նոր պայմանագրեր: Եթե դա հնարավոր չէ, ապա վարձակալները փոխհատուցումը կստանան շուկայական կամ կադասրային արժեքով (որն ավելի բարձր է), գումարած 15%: Փոխհատուցումը կտարամադրվի վարձակալության մնացած տարիների երկարության համամասնությամբ. մինչև 1 տարի՝

	հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%:
Կարող ենք իմանալ գործընթացի սկսման, պայմանագրի կնքման ժամկետները, որպեսզի կարողանանք կողմնորշվել, թե՞ երբ մեկնենք արտերկիր:	Գործընթացը սկսվում է հաջորդ շաբաթվանից, խոսքը գնում է սոցիալական հետազոտությունների և փասթաթղթերի հավաքագրման փուլի մասին: Որևէ կոնկրետ ժամկետ դժվար է ասել, քանի որ տարբեր փուլեր կան, կանխատեսլը, թե որն որքան կտևի, բարդ է, բայց նախնական պայմանգրի կնքումը հոկտեմբերից շուտ չի իրականացվի: Փաստաթղթային խնդիրների լուծումից հետո կսկսվի արձանագրությունների ստորագրման գործընթացը, որից հետո կսկսվի գնահատման գործընթացը և դրանից մոտավորապես 1-1.5 ամիս հետո արդեն կսկսենք նախնական պայմանագրերի ուղարկումը համայնքի բնակիչներին, որից հետո 90 օրվա ընթացքում պետք է կնքվի վերջնական օտարման պայմանագիրը:
Սեփականատերերից ոմանք գտնվում են արտերկրում, ի՞նչ պետք է անել:	Անհրաժեշտ է սեփականատերերից յուրաքանչյուրի կամ նրանց լիազոր անձանց ներկայությունը: Մենք գյուղապետարանում կթողնենք լիազորագրերի օրինակելի ձևեր հայերեն և ռուսերեն լեզուներով, որպեսզի կարողանաք դրանք ուղարկել արտերկրում գտվող սեփականատերերին, նրանք էլ իրենց հերթին՝ դրանցից օգտվելով, ճիշտ կձևակերպեն ձեզ անհրաժեշտ լիազորագիրը: Ցանկալի է, որպեսզի լիազորագիրը տրամադրվի երկար ժամկետով՝ 3 տարով, որպեսզի այն ուժի մեջ լինի օտարման գործընթացի ողջ ընթացքում:
Եթե սեփականատերերից մեկը մահացել է, ի՞նչ պետք արվի:	Եթե սեփականատերը, կամ համասեփականատերերից մեկը կամ նրանցից մի քանիսը մահացել են, և չկա ձևակերպված ժառանգություն, ապա պայմանագրի ստորագրումը դառնում է անհնար, քանի դեռ ժառանգությունը չի ձևակերպվել: Անհրաժեշտ է նոր սեփականատերերի անուններով նոր սեփականության վկայականի առկայություն: Ժառանգության ձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը վճարվում է սեփականատիրոջ կողմից:
Եթե օտարման ժամանակ հողի վրա մշակաբույս չկա, քանի որ արդեն բերքը հավաքվել է, եկամուտը ստացվել է, ինչպե՞ս է հաշվարկվում փոխհատուցումը:	Եթե այդ պահին հողը օտարում ենք, իսկ դուք արդեն եկամուտը ստացել եք, ստացվում է դուք բերքի կորուստ չունեք: Ուսումնասիրության օրվա պահի դրությամբ է ֆիքսվում մշակաբույսը, ոչ թե պայմանագրի կնքման օրվա դրությամբ, և փոխհատուցվում է այդ պահի դրությամբ ֆիքսված կորուստի տեսակը: Մշակաբույսերի փոխհատուցումը կազմում է մեկ տարվա բերքի գումարը:
Բիզնեսում չգրանցված կամ գրանցված աշխատողները ինչպե՞ս են ճշտվում:	Բիզնեսում գրանցված աշխատողների տվյալները ստացվում են հարկային հայտարարագրից:

Հարցեր և պատասխաններ – Ազատան

Հարց	Պատասխան
Ինչպե՞ս է շուկայական արժեքը հաշվարկվում:	Շուկայական գինը հաշվարկելիս, օտարման ենթակա հողը համեմատվում է նախորդ 1-2 տարիներին մոտակայքում վաճառված առնվազն երեք նմանատիպ հողերի հետ: Համեմատման ժամանակ ճշտման գործակիցների հիման վրա իրականացվում են մի շարք ճշտումներ, որոնք ազդում են շուկայական գնի վրա: Հետևյալ գործոնները ևս հաշվի կառնվեն շուկայական արժեքը հաշվարկելիս. հողի տեսակը, հարթությունը, հողի չափսերը (մակերեսը, լայնությունը, երկարությունը, կառուցվածքը, ճակատը), տեղադրությունը, դիրքը, ճանապարհային հանգույցների առկայությունը, ոռոգման առկայությունը, քարքարոտությունը, բազմամյա տնկարկների առկայությունը, կադաստրային և փաստացի նշանակությունը և այլ գործոններ, որոնք ազդում են գյուղատնտեսական հողերի արժեքի վրա:
Պայմանագիրը կնքվում է անհատի և պետության միջև, թե՞ անհատի և կազմակերպության միջև:	Պայմանագիրը կնքվում է ՊՈԱԿ-ի անունից, որը ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության կողմից լիազորված մարմին է: Պայմանագիրը ստորագրվում է ՊՈԱԿ-ի և սեփականատիրոջ և վավերացվում է նոտարի կողմից:
Ինչու՞ ես պիտի ծախսեմ ասենք 500000 դրամ ժառանգություն ստանալու համար, որպեսզի կարողանամ ստանալ հողիս գումարը, որը կարող է ընդամենը 100000 դրամ կազմի: Թող պետությունը ապահովի մարդու ժառանգության անվճար ընդունումը:	Ծրագիրը չի նախատեսում մարդկանց փաստաթղթերի հետ կապված ծախսերի փոխհատուցում: Մենք գիտենք, որ կա նմանատիպ խնդիր, քանի որ հնարավոր է օտարվող մասը լինի չափազանց փոքր և, համապատասխանաբար, փոխհատուցվող գումարն էլ լինի չնչին, իսկ մարդը չի կարող այդքան գումար ծախսել փաստաթղթային հարցերում, բայց ծրագիրն ինքն էլ չի կարող բոլորի համար այդ ամենը փակել: Ամեն դեպքում մենք նման առաջարկ անելու ենք կառավարությանը, որ գոնե ինչ-որ խմբերի դեպքում, ինչ-որ մինիմալ հողերի դեպքում ծախսերը փակի: Չենք կարող ասել՝ արդյո՞ք հաստատ կընդունվի, թե ոչ, բայց քանի որ մենք գիտենք, որ նման խնդիր գոյություն ունի՝ մեր փորձից, մարդկանց կարծիքներից, հանդիպումներից ելնելով, ապա մենք նման առաջարկ անելու ենք կառավարությանը:
Ե՞րբ եք պարզելու, թե մեր հողամասի որ մասն է հատկապես օտարվելու:	Երբ ստանաք արձանագրությունները, ապա դրանց կցված կլինեն քարտեզներ, որոնցում նշված կլինեն հողի օտարվող մասերը:
Կարո՞ղ են մեզ այլ հող առաջարկել՝ մեր օտարվող հողի դիմաց:	Ծրագիրը չի նախատեսում հողային փոխհատուցում: Փորձը ցույց է տալիս, որ մարդիկ գերադասում են դրամական փոխհատուցում ստանալ:
Ե՞րբ կարող ենք գնային ինֆորմացիա ստանալ:	Արձանագրությունների ստորագրման փուլից հետո սկսվում է գույքի գնահատման փուլը, որի ավարտից հետո սեփականատերերին կներկայացվի գույքի օտարման նախնական պայմանագիրը, որը ստեղծվելու է արձանագրության և գնահատման հիման վրա: Այս փաստաթուղթը ևս պաշտոնապես կծանուցվի և

	սեփականատերերը կծանոթանան իրենց հողի և մնացած կորուստների համար առաջարկվող արժեքներին:

Հարցեր և պատասխաններ – Ձորակապ

Հարց	Պատասխան
Կարո՞ղ են մեզ այլ հող առաջարկել՝ մեր օտարվող հողի դիմաց:	Ծրագիրը չի նախատեսում հողային փոխհատուցում: Փորձը ցույց է տալիս, որ մարդիկ գերադասում են դրամական փոխհատուցում ստանալ:
Օտարման գործընթացն ընդգրկում է հողի չափերի մեջ փոփոխություններ, ինչն էլ նոր վկայականի անհրաժեշտություն է առաջացնում: Ո՞վ է կրելու նոր վկայականի ձեռք բերման հետ կապված ծախսերը:	Օտարման գործընթացի հետ կապված բոլոր ծախսերը կրում է ծրագիրը, ներառյալ նոտարական, վկայականները ստանալու ծախսերը և այլն:
Ստացվում է, որ ծրագիրը կարող է ստիպված լինել օտարել նաև հողեր, որոնք ճանապարհի շինարարության համար անհրաժեշտ չեն: Ի՞նչ են լինելու այդ հողերը:	Ծրագիրը հողերը ձեռք կբերի՝ հիմք ընդունելով ճանապարհի վերջնական նախագիծը: Լրացուցիչ ոչ մի հող ձեռք չի բերվելի:
Մի փոքր առևտրի կրպակը համարվում է բիզնես, իսկ հողը, որը բազմանդամ ընտանիքի միակ ապրուստի միջոցն է, բիզնես չի համարվում և փոխհատուցվում է միայն 1 տարվա բերքի արժեքի չափով:	Ենթադրվում է, որ դուք այդ տարվա բերքը կարող եք կորցնել, չկարողանալով հավաքել այն, և այդ պատճառով էլ դրա համար փոխհատուցում է վճարվում: Իսկ հենց հողի համար վճարվող 115% փոխհատուցումը, ենթադրվում է, որ ձեզ հնարավորություն է տալու ձեռք բերել նույնանման մեկ այլ հողակտոր:
Ինչպե՞ս է հաշվարկվում բերքատվությունը:	Փոխհատուցման գումարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր համայնքի համար միջին տարեկան բերքատվությունը, որը տրամադրում է ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունը, և այդ մշակաբույսերի միջին շուկայական արժեքների վերաբերյալ տեղեկատվությունը, որը տրամադրում է ՀՀ Վիճակագրության ազգային ծառայությունը:
Ինչու՞ հողի մշակումը բիզնես չի համարվում:	Փոխհատուցման սկզբունքն ամեն դեպքում նույնն է. հողի մշակման դեպքում փոխհատուցվում է մեկ տարվա բերքի արժեքը, բիզնեսի դեպքում էլ փոխհատուցման գումարը հավասար է վերջին 1 տարվա հայտարարագրված եկամտին:
Ունեմ գրանցված բիզնես՝ հյուրանոց և ռեստորան, որն ազդեցության գոտում է ընկնում, բայց կադաստրի վկայական չունեմ: Ի՞նչ պետք է արվի այս դեպքում:	Ձեզ մեկ շաբաթվա ընթացքում կտրամադրվի համապատասխան փաստաթուղթ, որտեղ կլրացնեք ձեր բիզնեսին վերաբերող տվյալները, և դրա հիման վրա կհաշվարկվի բիզնեսի փոխհատուցումը: Իսկ ինչ վերաբերվում է շինություններին, ապա պետք է դրանք գրանցել և անպայման ստանալ սեփականության վկայական: Գնահատման փուլում կիրականացվի նաև ձեր շինությունների գնահատումը, սակայն դուք չեք կարողանա ստանալ փոխհատուցման գումարը, մինչ փաստաթղթային խնդիրների լուծումը:
Ի՞նչ պետք է արվի, եթե	Կա 90-օրյա ժամկետ, որի ընթացքում պետք է կնքվի օտարման

համասեփականատերը Ռուսաստանում է և չունի անձնագիր, չի կարող ուղարկել լիազորագիր:	պայմանագիրը կամ սկսվի մեկ այլ գործընթաց: Պայմանագիրը կարող է չկնքվել երկու պատճառով. սեփականատիրոջ անհամաձայնության դեպքում և նրա կողմից անհարաժեշտ փաստաթղթերի չներկայացման դեպքում: Եթե հնարավոր չէ ոչ համասեփականատիրոջ ներկայությունը և ոչ էլ լիազորագրի տրամադրումը, ապա այս դեպքում ԾԻԿ-ը ստիպված է օտարումն իրականացնել դատական կարգով:
Հողը պատկանում էր իմ մահացած հորը և համապատասխան ժառանգությունը չի ձևակերպվել: Կարո՞ղ եմ պայմանագիրը ես ստորագրել:	Դուք չեք կարող ստորագրել պայմանագիրը, քանի դեռ չեք ձևակերպել ժառանգությունը: Կամ էլ հողը կարող է օտարվել իրավական կարգով, և այդ դեպքում, փոխհատուցման արժեքը ի պահ կտրվի դատարանին: Սեփականատերը կարող է դատարանից ստանալ փոխհատուցումը, եթե կատարի անհրաժեշտ փաստաթղթային պահանջները.
Կարո՞ղ եմ ես իմ հողը նվիրաբերել ԾԻԿ-ին:	Ոչ, նման մեխանիզմներ գոյություն չունեն և դուք չեք կարող ձեր հողը նվիրաբերել ԾԻԿ-ին:

Հարցեր և պատասխաններ – Հոռոմ

Հարց	Պատասխան
Եթե հողի վրա դնում ենք տնակ և բնակվում ենք, փոխհատուցվում է տնակը, թե՞ ոչ:	Շինություն որպես այդպիսին համարվում է միայն հողին ամրակցված անշարժ գույքը, որը և փոխհատուցվում է: Ձեր ասած տնակը շարժական գույք է, այդ դեպքում մենք հաշվում ենք միայն տեղափոխման ծախս, որոնց համար ծրագիրը փոխհատուցում է:
Արդյո՞ք ընտանիքի եկամուտների և նրանց անդամների հետ կապված սոցիալական հարցումները կազդեն փոխհատուցման վրա:	Ընտանիքի անդամներին վերաբերվող մանրամասները կապված չեն փոխհատուցման գումարի հետ: Ձեր կողմից տրամադրվող մանրամասները կօգնեն ծրագրին բացահայտելու սոցիալապես խոցելի SS-ներին: Այն SS-ները, որոնք կհամարվեն խոցելի, ծրագրի շրջանակներում լրացուցիչ նպաստ կստանան:
Հարցումներից եթե պարզվում է, որ մարդը սոցիալապես անապահով խավում է գտնվում, բայց Փարոսից չի օգտվում, դա ի՞նչ-որ ձևով կարող միջամտել Փարոս ծրագրում ներառվելու համար, հնարավոր է նման տարբերակ լինի: Եվ եթե ընատնիքը Փարոս ստանում է, հնարավո՞ր է նրա հետ սոցհարցում անցկացնելուց հետո, նրա վիճակը պարզելուց հետո, նրան զրկեն Փարոսից:	Եթե բոլորը մասնակցել են, բոլոր տվյալները ճիշտ տրվել են, մենք դուրս ենք բերում այն խումբը, որը որ, ըստ մեզ, սոցիալապես խոցելի է: Այդ ցանկը մենք ուղարկում ենք սոցապ նախարարություն, ասելով, որ մեր ծրագրի կողմից պարզել ենք, որ այս-այս մարդիկ այդ խավի մեջ են: Բայց քանի որ սոցապ նախարությունն ունի հաշվարկման իր սխեմաները, այսինքն՝ մենք գնահատում ենք մեր չափանիշներով, նրանք՝ իրենց, ապա մենք իրենց ենք տրամադրում մեր կողմից հաշվարկված տվյալները, որպեսզի նրանք լրացուցիչ ուսումնասիրություն իրականացնեն, քանի որ մեր տեսակետից նրանք սոցիալապես անապահով են: Եվ եթե այդ մարդիկ համապատասխանում են սոցապ նախարարության չափանիշներին, ապա նրանք ընդգրկվում են այդ ցանկում: Փարոսից մարդկանց զրկելը հնարվոր չէ:
Դուք ասացիք, որ օտարման նախագիծը պատրաստ չէ, ես	Նախագիծը պատրաստ է, բայց վերջնական հաստատման փուլում է գտնվում: Մենք ընդհանուր ենք խոսում, բայց

չգիտեմ իմ հողի օտարման գոտու մասին, ինչպե՞ս եմ կողմնորոշվելու, եթե դուք արդեն փողից, պայմանագրից եք խոսում:	բնականաբար դուք իմանալու եք այդ մասին, երբ արձանագրությունները ձեզ ուղարկվեն, որտեղ երևալու է ձեր հողը և նրա օտարվող մասը: Արձանագրությանը կցված է լինելու ձեր հողի հատակագիծը, որտեղ նշված է լինելու այն կտորը, որը որ օտարման ենթանակա է: Դուք դա հստակ տեսնելու եք:
Իսկ եթե ցանկանում ենք հող, ոչ թե՝ փող:	Ծրագիրը չի նախատեսում հողային փոխհատուցում: Փորձը ցույց է տալիս, որ մարդիկ գերադասում են դրամական փոխհատուցում ստանալ: Մեր փորձը նախկին ծրագրերում՝ Աշտարակ-Թալին հատվածում, ցույց է տալիս, որ այնտեղ մեծամասնությունը փողին համաձայն է եղել, հողային փոխհատուցում 900 հոգուց 2-ն են ուզել:
Արդյո՞ք բացակա սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ գումարները, որոնք ի պահ են հանձնվում դատարանում, ունեն այն ստանալու ժամանակային սահմանափակում:	Ներկայումս ձեր հարցի հստակ չենք կարող պատասխանել, բայց ենթադրում ենք, որ որոշակի ժամկետ կլինի: Մենք կճշտենք այս հարցը և ավելի հստակ ձեզ կպատասխանենք:
Եթե սեփականատերերից մեկը մահացած է և մահվան վկայականը կա, մյուսը ՀՀ-ից բացակայում է, բայց կարող է փաստաթղթերը կամ լիազորագիր ուղարկել, օրինակ իմ անունով, այդ դեպքում ինչպե՞ս պետք ընթանա գործընթացը:	Ցանկացած բացակայող սեփականատեր կամ համասեփակա-նատեր կարող է ուղարկել լիազորագիր սահմանված կարգով, որի օրինակը մենք կթողենք համայնքում: Լիազորագիրը պետք է վավերացվի նոտարի կողմից՝ Հայաստանում: ՈՒմ որ կլիազորի սեփականատերը, նա էլ իր անունից կկարողանա հանդես գալ, բոլոր գործարքները կատարել, գումարը ստանալ: Մահացած սեփականատիրոջ պարագայում անհրաժեշտ է ժառանգությունը ճանաչել:
Արդյո՞ք կառավարությունը կրում է այս գործընթացի կադաստրային և նոտարական ծախսերը:	Այո, այդ բոլոր ծախսերը կփոխհատուցվեն, բացառությամբ այն ծախսերի, որոնք կապված են ժառանգության ձևակերպման և լիազորագրերի հետ: Ծրագիրը կարող է ձեզ միայն իրավական խորհրդատվություն և աջակցություն տրամադրել: Եթե ինչ-որ մեկը նշված դեպքերի առումով ունի նոտարի հետ կապված հարցեր կամ որոշակի ոչ ֆինանսական խնդիրներ, մեր իրավաբանները պատրաստ են օգնել ձեզ:
Ունենք գազալցակայան, հնարավորություն կա՞ որևէ մոտակա տեղ բիզնեսի տեղափոխություն անել:	Հողային փոխհատուցում չի նախատեսվում, միայն կանխիկ, մնում է ստանաք գումարը և ինքներդ գնեք, վերականգնեք բիզնեսը:
Մեր բիզնեսը լիցենզավորված է, իմացել ենք, որ հնարավորություն կա տեղափոխելու, եթե մենք գտնենք հարմար հողամաս, մեզ թույլ կտան այդտեղ կառուցել: Բիզնեսի տեղափոխություն կարո՞ղ ենք անել նման դեպքում:	Որ ասում ենք բիզնեսի տեղափախություն, մենք նկատի չունենք, որ ձեր լիցենզիան անվավեր ենք համարելու, ձեր լիցենզան դրանից չի կորում: Դուք փոխհատուցում եք ստանում կորցրած բիզնեսի համար և կարող եք տեղափոխել ձեր բիզնեսը, իր լիցենզիայի հետ մեկտեղ, մեկ այլ վայր, քանի որ այն իր ուժը չի կորցնում:

Սկզբից դուք ասացիք, որ աշխատողներին փոխհատուցում են տրվում 1 տարվա աշխատավարձի չափով, իսկ հետո կես տարվա:	Այստեղ առկա է 2 դեպք. հիմնական ազդեցություն և ժամանակավոր ազդեցություն: Մշտական ազդեցության դեպքում փոխհատուցումը հաշվարկվում է վեց ամիսների համար, իսկ ժամանակավոր ազդեցության դեպքում՝ այն ամիսների թվով, որի ընթացքում բիզնեսն ընդհատվել է, բայց այն չի կարող գերազանցել վեց ամիսը:
Կարող է պատահել այնպես, որ մեր գազալցակայանը չընկնի այդ հատվածում, որն որ քանդվելու է, բայց լինի այն մասում, որտեղ ինքն իրավունք չունենա գործել, քանի որ պիտի ճանապարհից ինչ-որ հեռավորության վրա լինի, որ թույլ տրվի աշխատել:	Ծրագրի տրամաբանությունը կայանում է նրանում, որ այն Ա կարգի ճանապարհ է և նման կարգի ճանապարհները թույլ չեն տալիս ուղիղ մուտք դեպի մայրուղի, ոնց որ հիմա է՝ ցանկացած մեկը կարող է ցանկացած տեղից մտնել, դուրս գալ, անցնել: Ճանապարհի կառուցումից հետո նման հնարավորություն չի լինի, լինելու են հստակ որոշված շրջանցիկ տեղեր, որտեղ դա թույլ է տրվելու անել: Միաժամանակ նախագիծն այնպես է կառուցված, որ բոլոր հողերը, շինությունները ունեան այլընտրանքային մուտք, որ մարդիկ ինչ-որ ձևով կարողանան մոտենալ իրենց հողերին: Երբ կոնկրետ նախագիծը նայենք և տեսնենք, որ ձեր հողը չի օտարվում, այդ դեպքում ձեր դեպքը առանձին կուսումնասիրվի, ամեն դեպքը յուրահատուկ է: Ձեզ ընդհանուր սկզբունք ենք ասում, սկզբունքն այն է, որ պետք է այլընտրանքային մուտք լինի դեպի ձեր հող ոչ ուղիղ ճանապարհից:
Ինժեներները կհանդիպե՞ն յուրաքանչյուր հողակտորի սեփականատիրոջ հետ, որպեսզի պարզեն, թե հողի չափը, տեսակը:	Ամեն մի հողակտորի տիրոջը ներկայացվելու է անհատական արձանագրություն, որտեղ երևալու է հենց իր հողի օտարումը:
Համայնքի ղեկավար – Անցումների տեղերի հետ կապված, ես նշել եմ այնպիսի տեղեր, որ մեզ հարմար լինի, քանի որ տեղեր կան, որտեղով մենք պիտի անասուններ անցկացնենք, անհարմար է, ես գծագրի վրա նշել եմ ավելի հարմար տեղեր:	Քանի որ ինքը՝ ճանապարհը, Ա կարգի ճանապարհ է և միջազգային ստանադարտներով ունի իր նորմերը, մեր ցանկությունից կախված՝ չենք կարող ցանկացած տեղ անցում դնել: Ամեն դեպքը պետք է առանձին նայել, արդյո՞ք ձեր համայնքի դեպքում այդ անցումը հնարավոր է դնել ձեր ուզած տեղը, եթե նման տեխնիկական հնարավորուն լինի, ապա այն կիրականացվի:

Հարցեր և պատասխաններ – Բենիամին

Հարց	Պատասխան
Արդյո՞ք նախատեսվում է օտարվող ջրովի հողին համարժեք փոխհատու-ցում ստանալ հողի տեսքով: Կարո՞ղ է համայնքին պատկանող պահուս-տային հողը նման նպատակի համար ծառայել: Տվյալ պահին գումարը կստանանք, կծախսենք, բայց եթե մեզ հող տային, այն կմնար մեր ընտանիքի	Ծրագիրը հողային փոխհատուցում չի նախատեսում, քանի որ դա բարդ գործընթաց է: Բայց եթե դուք նման ցանկություն ունեք, կարող եք դրա մասին հայտնել, մենք կարող ենք դա մեզ մոտ նշել, որպեսզի հետագայում հասկանանք՝ մարդկանց քանի տոկոսն է հող ուզում, քանիսը՝ գումարը: Մեր փորձը նախկին ծրագրերում՝ Աշտարակ-Թալին հատվածում, ցույց է տալիս, որ այնտեղ մեծամասնությունը փողին է համաձայն եղել:

հետ և կլիներ մեր եկամուտի աղբյուրը:	
Նախկինում գյուղապետարանի որոշմամբ տրված հողի ծածկագիրը չի համապատասխանում այժմյան կադաստրային ծածկագրին, ինչի պատճառով չեմ կարողանում վկայա-կան հանել, չնայած այն փաստին, որ արդեն 10 տարի այդ հողերը մշակում եմ: Հողը կտակվել է ինձ:	Այս դեպքում դուք պետք է դիմեք դատարան: Դատարանը ձեզ կտրամադրի փաստաթուղթ, որ դուք 10 տարի օգտագործում եք հողը, վճարում եք հարկերը, և այդ դեպքում, դատարանը կպարտադրի կադաստրին ձեզ տալ սեփականության վկայական: Բայց առաջին հերթին պետք է ժառանգությունն ընդունեք և հետո նոր, արդեն, զբաղվեք այս խդիրներով:
Ինչպե՞ս է հողի շուկայական արժեքը հաշվարկվում:	Շուկայական գինը հաշվարկելիս, օտարման ենթակա հողը համեմատվում է նախորդ 1-2 տարիներին մոտակայքում վաճառված առնվազն երեք նմանատիպ հողերի հետ: Համեմատման ժամանակ ճշտման գործակիցների հիման վրա իրականացվում են մի շարք ճշտումներ, որոնք ազդում են շուկայական գնի վրա: Հետևյալ գործոնները ևս հաշվի կառնվեն շուկայական արժեքը հաշվարկելիս. հողի տեսակը, հարթությունը, հողի չափսերը (մակերեսը, լայնությունը, երկարությունը, կառուցվածքը, ճակատը), տեղադրությունը, դիրքը, ճանապարհային հանգույցների առկայությունը, ոռոգման առկայությունը, քարքարոտությունը, բազմամյա տնկարկների առկայությունը, կադաստրային և փաստացի նշանակությունը և այլ գործոններ, որոնք ազդում են գյուղատնտեսական հողերի արժեքի վրա:

Հարցեր և պատասխաններ – Լուսակերտ

Հարց	Պատասխան
Վարձակալության կամ համայնքային հողերի դեպքում ո՞վ է ստանում փոխհատուցման գումարը:	Համայնքային կամ պետական հողերի վարձակալները պետք է օրիկանացվեն և փոխհատուցվեն որպես լիարժեք սեփականատերեր կամ նրանց կտրվեն վարձակալական նոր պայմանագրեր: Եթե դա հնարավոր չէ, ապա վարձակալները փոխհատուցումը կստանան շուկայական կամ կադասրային արժեքով (որն ավելի բարձր է), գումարած 15%: Փոխհատուցումը կտարամադրվի վարձակալության մնացած տարիների երկարության համամասնությամբ. մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%:
Հողի ջրովի կամ անջրդի լինելը հաշվի առնվու՞մ է փոխհատուցման ժամանակ:	Գնահատման ժամանակ հաշվի են առնվում հողի թեքությունը, քարքարոտությունը, ճանապարհին մոտիկ կամ հեռու լինելը, ջրովի կամ անջրդի լինելը և այլն:
Մեր տարածքում ջրովի հողեր են, և	Հանրային բոլոր կոմունիկացիաները, որոնք ծրագրի կողմից

ջրատարերը ընկնում են ուղիղ ճանապարհի տակ, ինչպե՞ս պետք է դա արվի:	կենթարկվեն ազդեցության, կվերականգնվեն ու կբերվեն իրենց նախկին վիճակին: Կոմունիկացիաների վերականգնումը կիրականացվի այնպես, որպեսզի ազդեցությունը լինի նվազագույնը: Այսինքն՝ մինչև նորը չի պատրաստվում, հինը չի քանդվում:
Եթե շինարարության արդյունքում օտարման տարածքից դուրս որևէ բերք վնասվի, դա որևէ ձև փոխհատուցվու՞մ է:	Շինարարը ծրագրի տարածքից դուրս ցանկացած գույքին կամ բերքին հասցրած վնասի համար պարտավոր է փոխհատուցում վճարել, ինչն ամրագրված է նաև իր պայմանագրում: Փոխհատուցումն իրականացվելու բոլոր այն սկզբունքներով, ինչը որ ներկայացված է ՀՕՏՇ-ում:
Սեփականության վկայականում նշված են մեծ թվով սեփականա-տերեր, որոնց մի մասը արտա-սահմանում է, ՌԴ-ում է կամ էլ բնակության վայրն անհայտ է: Կարո՞ղ են այն սեփականատե-րերը, որոնք գտնվում են Հայաստանում, ստանան փոխհատուցումը:	Համասեփականատերերն ունեն հավասար իրավունքներ և նրանցից յուրաքանչյուրի կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչների ներկայությունը պարտադիր է: Անհայտ բացակայող անձանց մասով պետք է լինի դատարանի վճիռ, որի դեպքում, սեփականատերերի փոխարեն նշվում է գույքի կառավարիչը, ում հետ էլ հետագա բոլոր գործարքները կատարվում են: Եթե դուք ունեք նման փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ սեփականատերերն անհայտ են և դուք կարող եք այդ փաստաթղթերը մեզ հանձնել, ապա մեր իրավաբանները կուսումնասիրեն այդ փաստաթղթերը և, ըստ այդմ էլ, կուղղորդեն ձեր հետագա գործողությունները:
Հողի սեփականատերերից մեկը՝ հայրս, մահացել է, հիմա նորից պետք է վկայական հանե՞նք:	Պետք է իրականացվի ժառանգության ճանաչման գործընթաց նոտարական կարգով՝ ձևակերպվի ժառանգությունը և ստացվի նոր սեփականության վկայական:
Արդյո՞ք հնարավոր չէ հողային փոխհատուցում նույն չափով՝ դրամականի փոխարեն:	Ծրագիրը հողային փոխհատուցում չի նախատեսում:

Հարցեր և պատասխաններ – Հայրենյաց

Հարց	Պատասխան
Եղբորս հողը սեփականաշնորհված է և իր անունով է, բայց ինքը մահացել է, հիմա իր տղան ուզում է ժառանգել, բայց ինքը ներկա պահին այստեղ չէ, և ասել են 6 ամսից հետո նոր պիտի ժառանգությունը հաստատվի: Եթե նա եկավ հաստատեց, գնաց, էտ դեպքում իր ճանապարհածախսի քանի՞ տոկոսը կկազմի այդ գումարը:	Նա կարող է գալու փոխարեն ուղարկել համապատասխան լիազորագիր այնտեղից, եթե նա այստեղ ունի վստահելի մարդ, և այդ մարդն իր փոխարեն ամբողջ ժառանգության գործընթացը կբացի, կտանի կգրանցի, ոչ մի խնդիր չկա: Պարտադիր չէ մարդը ներկա լինի, լիազորագրի իմաստը հենց նրանում է, որ ինչ-որ չափով այդ ծախսերը նվազեցվեն: Եթե ինչ-որ խնդիր կարող է ծագել նոտարի հետ, գործընթացի հետ, ապա ՇԻԿ-ը պատրաստ է իրավաբան տրամադրել, ով կօգնի խորհրդակցությամբ:
Երբվանի՞ց է սկսվելու գործընթացը, որպեսզի իմանանք՝ երբ վարենք, ցանենք, տեսնենք՝ ինչ տարածք է ընկնում ազդեցության տակ:	Առաջիկայում՝ 1-2 ամսվա ընթացքում, կսկվեն դաշտային աշխատանքները: Բուն շինարարությունը այս տարի չի իրականացվի, մյուս տարվա մասին ստույգ ոչինչ չենք կարող ասել, քանի որ դա կախված է օտարման գործընթացի

Իմանանք՝ ինչ գործունեություն է պետք իրականացնել, որովհետև կարող է 3 տարով ձգձգվում է գործընթացը: Ինչքա՞ն է կազմելու հողի 1քմ արժեքը:	ավարտից, իսկ գործընթացը նոր ենք սկսում: Հողի նկարագրության արձանագրությունը, որը ձեզ են ներկայացնելու ստորագրման համար, կցված կունենա նաև չափագրման հատակագիծ, որտեղ կերևա, թե ընդհանուր հողակտորը, և թե օտարվող հատվածը: Երբ արձանագրության նախագիծը ստուգվի և ստորագրվի ԱԵՏՏ-ի կողմից, մեկ ու կես ամսվա մեջ նախնական պայմանագիրը կպատրաստվի և կուղարկվի ԱԵՏՏ-ներին: ԱԵՏՏ-ները պետք է ստորագրեն վերջնական պայմանագիրը 90 օրվա ընթացքում՝ արձանագրությունները նրանց տրամադրելու օրվանից հետո: Հողի շուկայական գինն որոշելու համար վերլուծվում են վերջին 1-2 տարվա ընթացքում համայնքում իրականացված առք ու վաճառքի գործարքները և մի քանի չափանիշներով համեմատելով օտարման ենթակա հողի հետ՝ որոշվում է օտարվող հողի շուկայական արժեքը: Այդ պատճառով էլ հնարավոր չէ որոշել մեկ ընդհանուր գին ողջ համայնքի համար, և յուրաքանչյուր հողակտոր գնահատվելու է առանձին: Հողի շուկայական արժեքը որոշելու համար ազդեցության ենթարկված հողակտորը կհամեմատվի նվազագույնը երեք համեմատական հողակտորների հետ, որոնք վաճառվել ոչ վաղ անցյալում, իսկ տեղեկատվության բացակայության դեպքում՝ վերջին 1-2 տարում: Համեմատության ընթացքում որոշակի ճշտումներ կիրականացվեն՝ համաձայն անշարժ գույքի շուկայական արժեքի վրա ազդող գործոնները հաշվի առնող ճշտման գործակիցների: Հետևյալ գործոնները կարող են հաշվի առնվել անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելիս. օրինակ հողի թեքությունը, քարքարոտությունը, ոռոգման հնարավորությունը կամ դրա բացակայությունը, հողի առաջին կամ երկրորդ գծում լինելը և այլն:
Ճանապարհի քարտեզն արդեն գոյությու՞ն ունի:	Մենք թողել ենք քարտեզի պատճենը ձեր գյուղապետարանում: Ճանապարհի վերջնական նախագիծն այս պահին ճշտվում է: Երբ այն պատրաստ կլինի, մեկ օրինակ կտրամադրվի գյուղապետարանին: Հարցերի դեպքում, խնդրում ենք քննարկել այն մեր ինժեներների հետ:
Արդյո՞ք ընդհանուր վարելահողերը կամ դրանց մի մասը կարող են օգտագործվել շինարարության իրականացման գործընթացի ժամանակ:	Գերակա հանրային շահի մասին օրենքի համաձայն, դուք կարող եք օտարել ձեր գույքն ամբողջությամբ: Դրա համար անհրաժեշտ է, որ դուք 60 օրվա ընթացքում համապատասխան խնդրանքով գրավոր կերպով դիմեք ԾԻԿ-ին: Այնուամենայնիվ, եթե որևէ մեկը սկզբում որոշի, որ ուզում է ամբողջությամբ օտարել իր գույքը, այնուհետև փոխի իր մտադրությունը և ուզենա օտարել միայն ազդեցության ենթակա մասը, ապա նա կարող է օտարել միայն ազդեցության ենթակա մասը:
Կարո՞ղ են մեզ այլ հող առաջարկել՝	Ծրագիրը չի նախատեսում հողային փոխհատուցում: Փորձը

մեր օտարվող հողի դիմաց:	ցույց է տալիս, որ մարդիկ գերադասում են դրամական փոխհատուցում ստանալ:
Առաջին չափագրման ժամանակ այս հողը իմ անունով է եղել, երկրորդի ժամանակ ես ներկա չեմ եղել և մեզ նամակ է եկել, որտեղ նշված է զոքանչի անունը:	Հանրային գերակա շահի մասին ծանուցելու ժամանակ նախնական տեղեկատվությունն էր հասանելի միայն, որն էլ ուղարկվել է ձեզ: Ինչպես արդեն ասվեց, քանի որ արդեն ունենք գրեթե պատրաստ նախագիծ, առաջնորդվում ենք կադաստրային փասթաթղթերում առկա անուններով: Այսինքն՝ պաշտոնական փաստաթղթերից վեր ենք հանել սեփականատերերի անունները, որպեսզի վերջնականացնենք ազդեցության ենթարկվածների ցուցակները:

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ- ԾՐԱԳԻՐ 3

Լանջիկ-Գյումրի հատված (27.4կմ)

ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Հունիս 2015

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանը (ՀՀ կառավարություն) Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) ֆինանսավորմամբ իրականացնում է "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք" ներդրումային ծրագրի (Ծրագիր) Տրանշ 3-ը: Տրանշ 3-ի ծրագրի առարկան Մ1 մայրուղու Լանջիկից մինչև Գյումրի 27.4 կմ երկարությամբ ճանապարհահատվածի (կմ 90+200 - կմ 117+670) վերակառուցումն է երկու երևթեկելի գոտիով մայրուղու: Ծրագրի Իրականացնող

կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (ՏԿՆ) Իրականացնող գործակալությունը (ԻԳ):

Ծրագիրն առաջացնում է էական հողի օտարում և վերաբնակեցում (ՀՕՏ) ազդեցության ենթարկելով տնային տնտեսությունների ՀՀ Շիրակի մարզի հետևյալ համայնքներում՝ Լանջիկ, Ձորակապ, Մարալիկ, Հայրենյաց, հոռոմ, Լուսակերտ, Բենիամին, Սառնաղբյուր և Ազատան:

Ինչպես որ պահանջվում է նման դեպքերում ԱԶԲ և ԵՆԲ Ծրագրի նախապատրաստման ընթացակարգերով, ՏԿՆ-ն պատրաստել է Ծրագրի շրջանակներում Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակ (ՀՕՏՇ) և Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիր (ՀՕՏԾ)՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) Անվտանգության մեխանզիմների քաղաքականության (ԱՔՀ 2009) և ԵՆԲ Բնապահպանական և Սոցիալական ստանդարտների և սկզբունքների հայտարարագրի պահանջները: ՀՕՏՇ-ն սահմանում է փոխհատուցման քաղաքականությունը և Հողերի օտարման և տարաբնակեցման (ՀՕՏ) իրականացման մեխանիզմները և լրացնում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) համապատասխան օրենքների և կարգավորումների և ԱԶԲ-ի ԱՔՀ 2009 և ԵՆԲ հայտարարագրի պահանջների միջև բացթողումները:

ՀՕՏԾ-ն ներկայացնում է ՀՕՏ գործողությունների պլանը՝ ներկայացնելով Ծրագրի բոլոր ազդեցությունները և ազդեցության ենթակա կողմերը, գնահատելով ՀՕՏ փոխհատուցման արժեքները և ծախսերը և սահմանելով ՀՕՏ իրականացման ընթացակարգերը, ժամանակացույցերն ու մեխանիզմները:

ՀՕՏ-ի հետ առնչվող առաջադրանքների իրականացումը ԱԶԲ-ի և ԵՆԲ-ի զուգահեռ ֆինանսավորման շրջանակներում պայմանավորված է հետևյալով ՝ ա) Յուրաքանչյուր Զուգահեռ Ֆինանսավորող կողմը կհամապատասխանի ԱԶԲ-ի ԱՄՔ-ին, որպես Երաշխիքների քաղաքականություն, որը կկիրառվի Ենթածրագրերի համար; բ) Երկու Զուգահեռ Ֆինանսավորող կողմերն էլ ընդունում են իրենց պարտավորությունը պատրաստելու թարմացված ՀՕՏԾ-ներ և հաստատելու Համապատասխանության հաշվետվությունները ՀՕՏԾ-ների իրականացումից հետո; և գ) ԵՆԲ-ն պատասխանատու կլինի վերանայելու համար երաշխիքների պահանջները կապված միայն ԵՆԲ ենթածրագրերի համար:

Ինչպես ՀՕՏՇ-ն, այնպես էլ ՀՕՏԾ-ն հաստատվել են ՀՀ կառավարության կողմից (տե՛ս Որոշումներ թիվ… և թիվ….): Հիմք ընդունելով ԱԶԲ-ի Անվտանգության մեխանզիմների քաղաքականության (ԱՔՀ 2009) պահանջները՝ դրանց հայերեն և անգլերեն տարբերակները հրապարակվել են ՏԿՆ և ԵՆԲ կայքէջերում: Ձեռնարկը ամփոփում է ՀՕՏԾ-ի և ՀՕՏԾ-ի հիմնական կետերը և այն պետք է բաժանվի յուրաքանչյուր SS-ի/անձի, որն ազդեցության է ենթարկվում Ծրագրի կողմից՝ նրա անմիջական տեղեկացվածությունն ապահովելու նպատակով:

26. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մանրամասն նախագծի հիման վրա ազդեցության ենթակա անձանց Մարդահամարի հետազոտությունը և Մանրամասն Չափագրման Հետազոտությունը (ՄՉՀ) վերջնականացվել է 2014թ. նոյեմբերից մինչև դեկտեմբեր ընկած ամիսներին: Ծրագիրը ազդեցության է ենթարկում 1,243,054.6մ^2 հող ինը համայնքներում, որը տարաբաժանվում է 666 հողերի: Դրանք ներառում են.

- 354 (314,669.03 մ^2) մասնավոր հողեր,
- 297 (893,693.85 մ^2) համայնքային հողեր,
- 24 (34,691.76 մ^2)պետական հողեր

Օգտագործման տեսաակետից, ազդեցության ենթակա հողերը տարաբաժանվում են հետևյալների.

- 39 plots (27,621.76 մ^2) բնակելի2, հասարակական և այլ հողեր են
- 306 (287,047.27 մ^2) մասնավոր գյուղատնտեսական հողեր են
- 141 (649,261.29 մ^2) համայնքային սեփականության գյուղատնտեսական հողեր են
- 156 (244,432.56 մ^2) համայնքային սեփականության բնակելի, հասարակական և այլ հողեր են

Ընդհանուր առմամբ կտեղահանվեն թվով 26 շինություններ՝ 2496.49մ^2 մակերեսով, որը կհանգեցնի մեկ տնային տնտեսության և երեք ձեռնարկատիրական գործունեության վերաբնակեցմանը: Ընդհանուր առմամբ, վարելահողերի և բնակելի հողերի օտարման արդյունքում ազդեցության կենթարկվեն 334,151.95 քմ մշակաբույսեր (ցորեն՝ 120,958.05 մ^2, գարի՝ 50,545.5 մ^2, կորնգան՝ 32,460.49 մ^2, առվույտ՝ 11,307.66 մ^2 և կարտոֆիլ՝ 117,545.1 մ^2): Ծրագիրը ազդեցության կենթարկի նաև 83 պտղատու ծառեր, 28 փայտանյութ տվող ծառեր և 7 դեկորատիվ ծառեր:

Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները (ԱԵՏՏ) 530 են (2677 անձիք): Սա ներառում է 449 ԱԵՏՏ-ներ, որոնք ազդեցության են ենթարկվում մասնավոր սեփականության գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողի կորստի պատճառով, 58 ԱԵՏՏ-ներ, որոնք ազդեցության են ենթարկվում մասնավոր սեփականության բնակելի/հասարաակական/այլ հողերի կորստի պատճառով, 17 վարձակալ ԱԵՏՏ-ներ համայնքային և 1 վարձակալ ԱԵՏՏ պետական սեփականության հողերի վրա: Ի լրումն, առկա են նաև 6 չձևակերպված օգտագործողներով ԱԵՏՏ-ներ համայնքային հողերի վրա:
Ծրագրի արդյունքում կվերաբնակեցվի 1 ԱԵՏՏ և երեք առևտրային միավորներ: Երկու ձեռնարկատիրական գործունեութան ժամանակավոր դադարեցման արդյունքում ազդեցության կենթարկվեն 12 վարձու աշխատողներ:
Խոցելի ԱԵՏՏ-ները 93-ն են, որոնք ներառում են աղքատ ԱԵՏՏ-ներին, որոնք ճանաչված են ՀՀ կառավարության կողմից, կամ կանանց, կենսաթոշակառուների կամ հաշմանդամների կողմից ղեկավարվող տնային տնեսություններին: Խիստ ազդեցության ենթակա տնային տնտեսութունները 273-ն են (ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են մշակվող/եկամտաբեր հողի 10%-ից ավելին):

ՀՕՏԾ իրականացման հաշվարկված ընդհանուր արժեքը, ներառյալ փոխհատուցումները, օժանդակությունները, վարչական ծախսերը և չնախատեսված ծախսերը, կազմում է **875.918.889,65 ՀՀ դրամ** կամ **1.848.086,10 ԱՄՆ դոլար:**

27. ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ծրագրի կողմից ազդեցության ենթակա ակտիվների փոխհատուցումը կարգավորվում է համապատասխան ՀՀ օրենքներով և կանոնակարգերով, ԱՋԲ-ի ԱՔՀ 2009 և ԵՆԲ Հայտարարագրի պահանջներով, ինչպես նաև ՀՕՏԾ-ի և ՀՕՏԾ-ի դրույթներով:

ՀՀ Օրենսդրություն և կարգավորումներ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (2005) պաշտպանվում է սեփականության իրավունքը: Այն նաև սահմանում է, որ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Հողի օտարման և փոխհատուցման խնդիրները քննարկվում են ՀՀ հողային օրենսգրքի (1998) 102, 104 և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածներում, ինչպես նաև

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում,որն ընդունվել է 2006թ. նոյեմբերի 27-ին:
Սեփականությունը կարող է օտարվել՝ ՏԿՆ-ի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ կամ նրա ներկայացուցիչների միջև կնքվող պայմանագրի համաձայն՝ հաշվի առնելով շուկայական արժեքը և վնասները, ներառյալ դրա հետևանքով առաջացած վնասները: Սեփականությունը օտարվում է պայմանագրի և համաձայնագրի համաձայն՝ օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվող համարժեք փոխհատուցմամբ: «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը
Անշարժ գույքի և անշարժ գույքի նկատմաբ իրավունքների գնահատումը իրականացվել է որակավորված գնահաողի կողմից՝ համաձայն «Անշարժ գույքի գնահատման մասին ՀՀ օրենքով» սահմանված ընթացակարգերի, հաստատված 2005թ. հոկտեմբերի 4-ին:

ԱԶԲ-ի և ԵՆԲ Ոչ կամավոր վերաբնակեցման անվտանգության երաշխիքները: ԱԶԲ/ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող ՀՕՏ-ը հետևում է հետևյալ սկզբունքներին.

- Հողի օտարումից և ոչ կամավոր տարաբնակեցման այլ հետևանքներից պետք է հնարավորինս խուսափել կամ դրանք հասցնել նվազագույնի,
- ԱԵԱ-ին պետք է աջակցություն ցուցաբերվի, որպեսզի նրանք բարելավեն կամ առնվազն վերականգնեն ծրագրից առաջ ունեցած կենսամակարդակը,
- Պետք է ապահովել ԱԵԱ-ին փոխհատուցման իրավունքների վերաբերյալ խորհրդատվություն և տարաբնակեցման վերաբերյալ տեղեկությունների տրամադրում,
- Խոցելի և խիստ ազդեցության ենթարկված անձանց պետք է ցուցաբերել հատուկ աջակցություն,
- Օտարվող հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունք չունեցող ԱԵԱ-ները (օրինակ՝ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները, ազդեցության ենթակա գույքն ինքնակամ կամ առանց իրավաբանական ձևակերպման փաստացի օգտագործող անձինք կամ էլ այն ԱԵԱ, որոնց հաշվառման վերաբերյալ տվյալներ առկա չեն) պետք է հողի դիմաց փոխհատուցման փոխարեն ստանան օժանդակություն՝ ապրուստի միջոցները, տեղափոխման տրանսպորտային ծախսերը հոգալու համար, այսինքն՝ հողից բացի այլ կորուստների դիմաց լիարժեք փոխհատուցում և օժանդակություն,
- Այն ԱԵԱ-ները, ում կարգավիճակը կարելի է օրինականացնել կամ իրավունքները վերականգնել, պետք է օրինական կարգավիճակ ստանան, և նրանց կորուստները պետք է ամբողջությամբ փոխհատուցվեն,
- Պետք է տրամադրվի իրավունքը, եկամուտը, ապրուստի միջոցը օրինական կարգով վերականգնելու հնարավորություն,
- ՀՕՏԾ-ն և դրան վերաբերող փաստաթղթերը պետք է ԱԵԱ-ին տրամադրվեն հայերեն լեզվով,
- Փոխհատուցման վճարումը և տարաբնակեցման աջակցությունը պետք է ամբողջությամբ տրամադրվեն և վերականգնողական միջոցառումները պետք է ամբողջությամբ իրականացվեն նախքան կապալառու կողմից շինարարության համար նախատեսված հողամասերի (շինհրապարակի) մուտքի իրավունքի տրամադրումը և նախքան շինարարական աշխատանքները ֆիզիկապես սկսելը,
- Պետք է սահմանվեն բողոքների քննարկման համապատասխան մեխանիզմներ, որոնցով կլուծվեն ԱԵԱ-ների բողոքները, եթե այդպիսիք լինեն:

Հայաստանյան Օրենսդրության ու կարգավորումների և ԱԶԲ-ի ԱՔՀ 2009-ի և ԵՆԲ Հայտարարագրի

միջև տարբերությունները հասցեագրվել են պաշտոնապես հաստատված ՀՕՏՇ-ում, որը ներկայացնում է սույն Ծրագրի համար փոխհատուցման և իրավասությունների վերաբերյալ դրույթները:[3]

ՀՕՏՇ- Համաձայն ՀՕՏՇ-ի՝ բոլոր ազդեցության ենթակա անձիք, որոնք կորցնում են հողեր, ակտիվնեև և եկամուտ, որոնք ամրակցված են հողին (շինություններ, ծառեր, մշակաբույսեր, այլ բարեավումներ, բիզնես և աշխատանք) ենթակա են փոխհատուցման և/կամ վերականգնման: ԱՋԲ-ի ԱՔՀ 2009-ի ներքո, իրավական կարգավիճակի բացակայությունը չի սահմանափակում ԱԵԱ-ի՝ փոխհատուցման, կամ առնվազն վերականգնում ստանալու իրավունքը: Իրավական կարգավիչակ ստանալու ենթակա ԱԵՏՏ-ները պետք է օրինականացվեն և փոխհատուցվեն ինչպես իրավական կարգավիճակ ունեցող ԱԵՏՏ-ները: Իրավական կարգավիճակ չունեցող ԱԵՏՏ-ները չեն փոխհատուցվի, սակայն կստանան հիմնական վերականգնման օժանդակություններ:

Ցանկացած ԱԵԱ, ով բնակություն կհաստատի կամ նոր բարելավումներ կկատարի ազդեցության տարածքներում Սահմանափակումների օրվանից հետո, փոխհատուցման համար իրավունք չի ստանա: Այնուամենայնիվ, նրանց պետք է նախօրոք ծանուցում ուղարկել՝ խնդրելով նախքան ծրագրի իրականացումը ազատել տարածքները և քանդել կառույցները: Տվյալ Ծրագրի համար կասեցման ամսաթիվը 2015թ. հունիսի 4-ն է: Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է Ծրագր շրջանակներում կորուստների տեսակները և փոխհատուցում/օժանդակություններ ստանալու իրավունքները:

Աղյուսակ 1: Իրավունքների սխեմա

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
1. Հողի կորուստ	ԱԵԱ-ներ, որոնք կորցնում են իրենց սեփականությունը հանդիսացող հողամասը կամ դրա մի մասը՝ անկախ ազդեցության չափից	Սեփականատեր	Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով՝ գնահատված շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15%՝ կամ փոխանակում ԱԵԱ համար ընդունելի մեկ այլ համարժեք հողով:
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ	Օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ ՝ ԱԵԱ-ները կարող են ձեռքբերել սեփականության իրավունք կամ իրականացնել առկա իրավունքների պետական գրանցումը և փոխատուցվել որպես սեփականատեր:
		Վարձակալ (համայնքից, պետությունից)	Օրենսդրությամբ սահմանված դեպքերում վարձակալը կարող է ձեռքբերել սեփականության իրավունք և փոխհատուցվել որպես սեփականատեր կամ նրան՝ հողի սեփականատիրոջ (վարձատուի) համաձայնությամբ, կարող է տրվել նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
			հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա վարձակալված հողի «շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%»-ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ի չափով, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14% -ի չափով, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%- ի չափով, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%- ի չափով:
		Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողի վարձակալ Այլ գույքային իրավունք (սերվիտուտի, կառուցապատման, գրավի, հիփոթեքի, օգտագործման) ունեցողներ, բացառությամբ վարձակալների	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի կանխիկ փոխհատուցում Հողամասի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին, բացառությամբ վարձակալների, փոխհատուցումը տրվում է ազդակիր հողամասի դիմաց տրվող փոխհատուցման գումարից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
		Իրավական գրանցման կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ	Այս ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում միայն հողի վրա կատարված բարելավումների դիմաց, սույն ՀՕՏՇ-ով սահմանված կարգով:
2. Բնակելի շենքեր, շինություննե րի կորուստ		Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ կառույցի նկատմամբ իրավունքների առկայությունից (ներառյալ՝ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա և ոչ ենթակա ԱԵԱ)	Բնակելի շենքի, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցում փոխարինման արժեքի գումարած 15%-ի չափով, առանց ամորտիզացիոն մասնահատումների և գործարքային ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար այն դեպքում, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
			նաև շինության վերանորոգման ծախսերը:
		Վերաբնակեցվող վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:
3. Ոչ բնակելի շենքերի, շինություննե րի կորուստ	ԱԵԱ-երին սեփականության իրավունքով պատկանող և պետական գրանցում ստացած շենք, շինություններ	Սեփականատեր	Շենք, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման տրամադրում փոխարինման արժեք գումարած 15%-ի չափով: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասհանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը, շահագործումը և օտարումը օրենսդրորեն հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:
	Ինքնակամ կառույցներ (բացառությամբ բնակելի կամ փաստացի բնակեցված շինությունների)	Ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ	Փոխհատուցումը կիրականացվի շենք, շինության սեփականատիրոջը տրամադրվող փոխհատուցման սկզբունքով՝ միայն ինքնակամ կառույցի օրինականացման և դրա նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման դեպքում:
		Վերաբնակեցվող վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:
4. Հանրային գույքի կորուստ	Համայնքային կամ պետական գույք	Համայնք/պետություն	Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի, անշարժ գույքի փոխհատուցում կամ պետական, համայնքային ազդակիր կառույցների կամ այլ գույքիվերակառուցում և նրանց գործառույթների վերականգնում՝ համայնքի, պետության իրավասու մարմնի համաձայնությամբ:
5. Մշակաբույսի կորուստ	Ազդեցության ենթակա մշակաբույսեր	Բարելավումներ կատարած բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի	Մշակաբույսի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից	
6. Ծառերի և ստացվող բերքի կորուստ	Ազդեցության ենթակա ծառեր և ստացվող բերք	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից	Դրամական փոխհատուցում՝ հաշվարկված ծառի արժեքի շուկայական գներով՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:
7. Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում	Ձեռնարկատիրական գործունեություն ազդակիր հողում	Բոլոր ԱԵԱ-ները՝ անկախ հարկային հայտարարագրի ներկայացումից	1. **Ձեռնարկատիրական գործունեության (հարկային հայտարարագրերով)՝** ա) մշտական ազդեցության դեպքում՝ միանվագ փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով, բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ զուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Պետական գրանցման կամ լիցենզիայի վճարները նույնպես կփոխհատուցվեն, եթե այդպիսիք առկա են: 2) **Ձեռնարկատիրական գործունեության (հայտարարագրի բացակայության դեպքում)՝** ա) մշտական ազդեցության դեպքում՝ վերականգնման օժանդակություն նվազագույն ամսական աշխատավարձի չափով՝ 1 տարվա համար: բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ վերականգնման օժանդակության տրամադրում, հիմնված նվազագույն աշխատավարձի չափի վրա՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամսիների հաշվարկով մինչև առավելագույնը 1 տարի:
8. Աշխատանքի կորուստ	Աշխատանքի մշտական կորուստ կամ հարկադիր պարապուրդ (ոչ	Ազդակիր կազմակերպությունում կամ ԱՁ-ում աշխատանքային պայմանագրի	Փոխհատուցման տրամադրում՝ ա) մշտական ազդեցության դեպքում՝ վեց ամսվա միջին աշխատավարձի չափով բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ մինչև

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
	աշխատողի մեղքով)	հիման վրա աշխատող անձինք	վեց ամիս միջին աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամսիների հաշվարկով:
9. Օժանդակություն խիստ ազդեցություններ դեպքում	Գյուղատնտեսական նշանակության հողի 10 և ավելի տոկոսի կորուստ և վերաբնակեցում	Խիստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	ա) գյուղատնտեսական նշանակության հողի 10 և ավելի տոկոսի կորստի դեպքում փոխհատուցում՝ազդեցության ենթակա հատվածում առկա 1 տարվա բերքի չափով: բ) վերականգնման օժանդակություն՝ վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներին՝ վեց ամսվա նվազագույն աշխատավարձի չափով:
10. Վերաբնակեցման օժանդակություն	Օժանդակություն տեղափոխման նպատակով տրանսպորտային ծախսերը և ապրուստի միջոցները հոգալու համար	Վերաբնակեցվող բոլոր ԱԵՏՏ-ներ, ներառյալ վարձակալները	Դրամական օժանդակության տրամադրում՝ տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտային ծախսերը և մեկ ամսվա կենսապահովման ծախսերը հոգալու համար:
		Ազդեցության ենթակա հողի և շինության վրա շարժական գույք ունեցող բոլոր ԱԵԱ-ները, որոնք ենթակա են տարաբնակեցման՝ անկախ ազդակիր գույքի նկատմամբ առկա իրավունքներից	Դրամական միջոցների հատկացում՝ տրանսպորտային ծախսերը հոգալու համար:
11. Օժանդակություն խոցելի անձանց/ԱԵՏՏ -ներին		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող, կանանց, տարեց կամ հաշմանդամ անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	Դրամական օժանդակության տրամադրում՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով: Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնայնություն տալ:
12. Ժամանակավոր		Ժամանակավոր ազդեցություն կրող բոլոր անձիք և	Վնասների փոխհատուցում կտրամադրվի ժամանակավոր ազդեցության ենթակա դեպքերում փոխարինման արժեքով և սույն

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
ազդեցություն		տնային տնտեսութունները	ՀՕՏՇ-ով սահմանված փոխհատուցման իրավունքներին համապատասխան:
13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն		Փոխհատուցման իրավունքներ ունեցող ԱԵԱ/ԱԵՏՏ-ներ	Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿՆ կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը կամ օժանդակության տրամադրումը, ըստ ՀՕՏՇ դրույթների:
14. Բարելավումների փոխհատուցում	Այլ բարելավումներ, որոնք ներառված չեն իրավունքների սույն աղյուսակում, սակայն առկա են ազդակիր հողամասի վրա (բացառությամբ՝ շարժական գույքի	Բարելավում կատարած ԱԵԱ-ներ	Փոխհատուցման տրամադրում՝ փոխարինման արժեքի չափով:

28. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱԳՐՈՒՄ

Բողոքների լուծման մեխանիզմ (ԲԼՄ) է հաստատվել, որպեսզի ԱԵԱ-ն հնարավորություն ունենա բողոքարկելու ցանկացած անախորժ որոշում, գործելակերպ կամ գործունեություն, որն առաջանում է հողի կամ այլ ակտիվների փոխհատուցման արդյունքում: Բողոքների լուծման մեխանիզմում ներգրավված կլինեն մի շարք կողմեր՝ ԾԻԿ-ը, Բողոքների քննման խումբը (ԲՔԽ) և ՏԿՆ-ն: Ջանքեր կգործադրվեն Բողոքների քննման խմբի (ԲՔԽ) աջակցությամբ և բոլոր շահառուների ներգրավմամբ: Երկու մուտքային կետերի միջոցով ազդեցության ենթակա համայնքների ձայնը լսելի կդառնա, ինչպես նաև դրանք կապահովեն ԲԼՄ-ի հասանելիությունը ԱԵԱ-ների համար: Դրանք են՝

- Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) գրասենյակները,
- Բողոքի առանցքային անձը (ԲԱԱ):

Ծրագրում հաստավել են բողոքների լուծման հետյալ մեխանիզմը.

- **Քայլ 1**. Ազդեցության ենթակա Աեա-ն կամ ԱԵՏՏ-ն կարող է իր բողոքը ներկայացնել ԲԱԱ-ի կամ ՏԻՄ-ի միջոցով: ԲԱԱ-ն կլինի ԾԻԿ/ԻԽ-ի ներկայացուցիչը: ԱԵԱ-ն կամ նրա ներկայացուցիչը պետք է ներկայացնմի բողոքը գրավոր: Ե՛վ ՏԻՄ գրասենյակները, և՛ ԲԱԱ-ն պատասխանատու կլինեն բողոքները/ պահանջները/ հայցերը հավաքագրելու և պահանջվող համապատասխան փաստաթղթերի հետ միասին ԾԻԿ-ին հասցեագրելու համար՝ դրանք ստանալուց հետո առավելագույնը 5 օրվա ընթացքում: Այնուամենայնիվ, վերոնշյալ

մուտքային կետերը չեն սահմանափակում քաղաքացու իրավունքը՝ իրենց բողոքները/ պահանջները/ հայցերը անմիջապես ԾԻԿ-ին և/կամ ՏԿՆ-ին ուղղելու համար:

- **Քայլ 2.** ԲԱԱ-ի կամ ՏԻՄ-ի կողմից հասցեագրված Բողոքները/ պահանջները/ հայցերը պետք է գրանցվեն և դրանց իրավասությունը պետք է ստուգվի ԾԻԿ բողոքի առացքային կետի կողմից: Հավաքագրած հիմնական տեղեկատվության և պարզաբանումների հիման վրա ԾԻԿ-ը կմշակի ժամանակի վրա հիմնված գործողությունների պլան՝ բողոքը լուծելու համար: Բողոքը դիտարկելուց հետո և/կամ բողոքի լուծման Գործողությունների պլանը իրականացնելուց հետո ԾԻԿ-ը ԱԵԱ-ին կուղարկի արդյունքների վերաբերյալ գրավոր պատասխան 30-օրյա ժամկետում:
- **Քայլ 3.** Եթե ԱԵԱ-ն բավարարված չէ ԾԻԿ-ի պատասխանով, ապա ԲՔԽ-ն ԱԵԱ-ի պահանջով կամ, խմբային բողոքների դեպքում, ԾԻԿ-ի նախաձեռնությամբ կարող է դիտարկել դեպքը: Բողոքը հասցեագրելու համար ԲՔԽ-ն կունանա հետևյալ անդամները: ԲՔԽ-ն, որպես բողոքը հասցեագրման կողմ, անհրաժեշտության դեպքում կարող է հավաքագրել լրացուցիչ տեղեկատվությունը, հանդիպել բողոքող կողմի հետ հետագա պարզաբանումների ստանալու համար, կատարել այցելություն տեղամաս և ներգարվել մասնագետների ,եթե անհրաժեշտ է: ԲՔԽ-ն ԱԵԱ-ին կուղարկի արդյունքների վերաբերյալ գրավոր պատասխան այն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում:

Անդամներ	**Զբաղեցրած պաշտոնը**
(a) ԾԻԿ-ի ներկայացուցիչ (ՏՀԽ/ԻԽ)	նախագահ
(b) Համապատասխան դեպքում ՏԻՄ-ի ներկայացուցիչը	անդամ
(c) Համապատասխան դեպքում հավաստագրված տեխնիկական փորձագետ	անդամ
(d) Համապատասխան դեպքում Խորհրդատուի/Կապալառուի ներկայացուցիչը	անդամ
(e) ԱԵԱ-ի ներկայացուցիչը	անդամ
(f) Անկախ կողմ (օրինակ՝ ՀԿ)	դիտորդ

- **Քայլ 4.** Եթե ԲՔԽ-ի որոշման հիման վրա ԾԻԿ-ի արձագանքը ԱԵԱ-ին չի բավարարում, ապա ԱԵԱ-ն կարող է բողոքը ներկայացնել ՏԿՆ-ին: ՏԿՆ-ն ԱԵԱ-ին կուղարկի արդյունքների վերաբերյալ գրավոր պատասխան այն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում:ՏԿՆ-ի պատասխանը կհամապատասխանի ՀՕՏԾ դրույթներին:

Եթե բողոքի լուծման համակարգը չի բավարարում ԱԵԱ-ի պահանջը, ապա ԱԵԱ-ն կարող է հետամուտ լինել իր բողոքին՝ գործընթացի ցանկացած փուլում գործը հանձնելով համապատասխան ընդհանուր իրավասության դատարան:

Կոնտակտային տվյալներ

Եթե Դուք ունեք հարցեր կամ Ձեզ հարկավոր է խորհրդատվություն, խնդրում ենք դիմել ՀՀՃՄՆԾ ԾԻԿ և ԵՆԲ ներկայացուցիչներին

Ներդրումային ծրագիր, Ծրագրի իրականացման կազմակերպություն
Իրավական, արտաքին ազդեցության և վերաբնակացման թիմ
Պուշկին 58
0010, Երևան, Հայաստան
+ 374 60 506870
www.mtc.am , www.northsouth.am

98-100, Կոնրադ Ադենաուերի պուրակ,
L-2950 Լյուքսեմբուրգ
(+352) 43 79 1
www.eib.org

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

I ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ասիական Զարգացման Բանկը (ԱԶԲ) համաձայնել է տրամադրել ՀՀ կառավարությանը 500 մլն. ԱՄՆ դոլար բազմափուլային ֆինանսական գործիք (ԲՖԳ) Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորման համար: Տրանշ 3-ի սկզբունքային նպատակն է գոյություն ունեցող Մ1՝ -Թալին-Գյումրի մայրուղու երկայանքով ապահովել 4 երթևեկելի ուղիով միջազգային ստանդարտներին համապատասխան 46.1 կմ երկարությամբ ճանապարհ: Ասիական Զարգացման Բանկը (ԱԶԲ) կֆինանսավորի Տրանշ 3-ի մի հատվածը, որը ներառում է Թալին-Լանջիկ 18.7կմ հատվածի (կմ 71+500- կմ 90+200) վերակառուցումն ու տեխնիկական հսկողությունը: Լանջիկ - Գյումրի 27.4կմ հատվածի (կմ 90+200 – կմ117+670) վերակառուցումն ու տեխնիկական հսկողությունը ֆինանսավորվում է Եվրոպական Ներդրումային Բանկը (ԵՆԲ) կողմից: Երկու հատվածներն էլ պահանջում են հողերի օտարում: Այս կապակցությամբ, Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածների համար պատրաստվել են Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրեր (ՀՕՏԾ-ներ)՝ հետևելով ԲՖԳ –ի վերանայված Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակի (ՀՕՏՇ) 4 և ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի (SPS 2009) պահանջներին և հիմք ընդունելով ճանապարհի մանրամասն նախագիծը:
Համաձայն միջազգային առաջադեմ փորձի՝ բավականաչափ նշանակություն է տրվել նվազեցնելու բացասական ազդեցությունը համայնքներում հողի օտարման, հնագիտական վայրերի և այլ կարևոր կառույցների վրա: ՀՕՏԾ-ները ապահովում են Տրանշ 3 Ծրագրի ազդեցությունների և արժեքների գնահատումը և մանրամասն գործողությունների պլանը Ծրագրի արդյունքում ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) և տնային տնտեսություններին (ԱԵՏՏ) ՀՕՏ վերականգնողական միջոցառումների և փոխհատուցումների փոխանցման համար: Հիմք ընդունելով հողերի օտարման և տարաբնակեցման (ՀՕՏ) գնահատումը, Ծրագիրը մշտական կօտարի ընդհանուր թվով 1014 հողամասեր (որոնցից՝ 348-ը Թալին-Լանջիկ հատվածում (218 մասնավոր հողեր, 335 ԱԵՏՏ-ներ)) և 666-ը Լանջիկ-Գյումրի հատվածում (308 մասնավոր հողեր, 532 ԱԵՏՏ-ներ)), ընդհանուր առմամբ ազդեցության ենթարկելով 867 ԱԵՏՏ-ների 1195 ԱԵԱ-ների 11 համայնքներում:

2. Այս Տեխնիկական առաջադրանքը վերաբերում է ինչպես Թալին-Լանջիկ, այնպես էլ Լանջիկ-Գյումրի հատվածների ՀՕՏԾ-ների իրականացմանը և կցված է դրանց որպես հավելված:

3. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը (ՏԿՆ) հանդիսանում է Ծրագրի գործադիր մարմինը (ԳՄ), իսկ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ-ը (ԾԻԿ)՝ Ծրագրի Իրականացնող գործակալությունը (ԻԳ): ԾԻԿ-ը հիմնել է Իրավական և արտաքին ազդեցության համակարգող թիմ՝ կազմված 5 մասնագետներից. իրավական և արտաքին ազդեցության ղեկավար, արտաքին ազդեցության և վերաբնակեցման համակարգող, սոցիալական զարգացման և վերաբնակեցման մասնագետ, բնապահպանության և հնագիտության մասնագետ, գլխավոր իրավախորհրդատու, բողոքների և վեճերի կառավարման մասնագետ և 2 խորհրդատուներ՝ դաշտային աշխատանքների ազգային համակարգող, ՀՕՏ իրավական մասնագետ (այսուհետ՝ Սոցիալական և տարաբնակեցման հարցերը համակարգող աշխատակազմ-ՍՏՀԱ): ՀՕՏԾ իրականացնող կազմակերպությունը (այսուհետ՝ ԻԿԿ) ՍՏՀԱ ներքո պատասխանատու կլինի ՀՕՏԾ-ների ամբողջական

իրականացման համար:

II ՆՊԱՏԱԿՆԵՐ

4. ՀՕՏԾ-ների իրականացման համար ԻԿ նպատակները հետևյալն են.

1)Ապահովել Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածների ՀՕՏԾ-ների ամբողջական իրականացումը, ներառյալ դատական կարգով օտարման փուլը՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների;

2)Ապահովել ՀՕՏԾ-ների ներքո սահմանված Օրինականացման/ուղղման և վերականգնման պլանների լիարժեք իրականացումը;

3)Ապահովել ԱԵԱ-ների և նրանց բիզնեսների սահուն տեղափոխումը;

4)Աջակցել ՍՏՀԱ-ԾԻԿ-ին նախաձեռնելու հանրային իրազեկման արշավներ ազդեցության ենթակա համայնքներում՝ Տարաբնակեցման քաղաքականությանը և իրավունքների փաթեթներին ծանոթացնելու նպատակով;

5)ԱԵԱ/ԱԵՏՏ-ներին տրամադրել խորհրդատվություն և գիտելիքներ՝ ՀՕՏԾ ներքո իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ;

6)Ապահովել ԱԵԱ/ԱԵՏՏ-ների կողմից՝ ՀՕՏԾ ներքո իրենց իրավունքների լիարժեք իրականացմանը: Այնտեղ, որտեղ կան տարբերակներ, ԻԿ-ն պետք է ԱԵԱ/ԱԵՏՏ-ներին տրամադրի խորհրդատվություն յուրաքանչյուր տարբերակի հարակից օգուտների/նպաստների վերաբերյալ և կապել ԱԵԱ-ներին համապատասխան զբաղվածության, ինքնազբաղվածության, վերապատրաստման և այլ ծրագրերին (ինչպես սահմանված է ՀՕՏԾ-ներքո); 7)Աջակցել ԱԵԱ-ին իրենց բողոքները/խնդիրները ՀՕՏԾ ներքո հաստատված Բողոքների լուծման մեխանիզմի (ԲԼՄ) միջոցով կարգավորելու համար և հետամուտ լինելու իրենց բողոքների լուծմանը համապատասխան միջոցով;

8)Ապահովել անհրաժեշտ տեղեկատվության/տվյալների հասանելիությունը Արտաքին մոնիթորինգի գործակալության (ԱՄԳ) համար՝ ՀՕՏԾ իրականացման Համապատասխանության հաշվետվության պատրաստման համար և ապահովել բոլոր ճշգրտող միջոցառումների պատշաճ իրականացնումը (եթե այդպիսիքն լինեն), որոնք կսահմանավեն ԱՄԳ կողմից: III **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿ**

5. ԻԿ-ն կգործի որպես կապող օղակ ԾԻԿ և ԱԵԱ-ների միջև և պատասխանատու կլինի ՀՕՏԾ-ների ամբողջական իրականացման համար (ներառյալ դատական կարգով օտարումը) վերաբնակեցման և վերականգնման գործընթացներում ԱԵԱ-ներին աջակցություն ցուցաբերելու համար և կերաշխավորի օրինականականացման և եկամուտների վերականգնման պլանների պատճաշ և արդյունավետ իրականացումը:

6. Իր նշանակումից անմիջապես հետո ԻԿ պետք է պատրաստի Նախնական հաշվետվություն՝ ներառյալ Մանրամասն գործողութունների պլանը (ՄԳՊ), որտեղ նկարագրված կլինեն յուրաքանչյուր ՀՕՏԾ ենթահատվածի իրականացման փուլի (այդ թվում և օրինականացման պլանի) համար կիրառվող բոլոր մեթոդաբանությունները, գործողություններն ու ժամանակացույցերը ՝ ԾԻԿ-ի հետ խորհրդակվությունների հիման վրա:

7. ՀՕՏԾ իրականացման ընթացքում ԻԿ-ն պետք է ղեկավարվի «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ

կառավարության 16.09.2010թ. թիվ 1274-Ն որոշման (ՀՕՏՇ), ԱԶԲ Անվտանգության քաղաքականության փաստաթղթի (SPS 2009), Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածների ՀՕՏԾ-ները հաստատող ՀՀ կառավարության համապատասխան որոշումների, ինչպես նաև առնչվող այլ իրավական ակտերի պահանջներով:

8. ՀՕՏԾ իրականացման ընթացքում ԻԿ-ն պետք է փոխհամաձայնեցված կերպով համագործակցի ԾԻԿ երկու խորհրդատուների հետ՝ապահովելով ամենօրյա հաշվետվողականություն: Ազգային դաշտային աշխատանքների համակարգողը (ԾԻԿ խորհրդատու) հանդես կգա որպես ԻԿ գործոնեության կառավարման և հաշվետվողականության առանցքային անձը, իսկ նա իր հերթին հաշվետվու կլինի ԾԻԿ Արտաքին ազդեցության և վերաբնակեցման համակարգողին:
9. Բացի ՀՕՏԾ-ների իրականացումից, ԻԿ-ն նաև պետք է ապահովի լրացուցիչ օտարումների պլանի (ՀՕՏԾԼ) և փոփոխությունների գործողությունների պլանի (ՓԳՊ) իրականացում:
10. ՀՕՏԾ-ների իրականացման յուրաքանչյուր փուլում ԻԿ հիմնական պարտականությունները ներկայացված են ստորև:

IV ՀՕՏԾ իրականացման փուլ

1. ԱԵԱ-ների ծանուցում և խորհրդատվության տրամադրում

(i) Պատշաճ իրազեկում համայնքների ղեկավարներին և ազդեցության ենթակա այլ անձանց (այսուհետ՝ԱԵԱ)՝ ՀՕՏԾ մեկնարկի և իրականացման փուլերի, ընթացակարգերի վերաբերյալ՝ ներառյալ ՀՕՏԾ տեղեկատվական ձեռնարկի, այլ տեղեկատվական նյութերի տրամադրումը:

(ii) Օտարման պայմանագրերի և համաձայնագրերի, ուղեկցող նամակների պատրաստում, յուրաքանչյուր ԱԵԱ-ին դրանց ծանուցման գործընթացի կազմակերպում և իրականացում՝ համաձայն Օրենքի և ՀՀ օրենսդրության պահանջների և ժամկետների:

(iii) Օտարվող սեփականության օտարման պայմանագրերի և համաձայնագրերի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի հստակեցում և հավաքագրում՝ յուրաքանչյուր հողամասի և այլ անշարժ գույքի համար, ինչպես նաև ԱԵԱ-ների կողմից դրանց ձեռքբերման և տրամադրման գործընթացի վերաբերյալ խորհրդատվություն և աջակցություն:

(iv) Օտարման գործընթացում ԱԵԱ-ներին տրվող ծանուցման գործընթացի իրականացում և համակարգում, այդ թվում՝ տվյալների և առընչվող փաստաթղթերի հաշվառում և փաստաթղթավորում:

C.1.2 Տվյալների հավաքագրում, թարմացում և տվյալների բազայի կառավարում

Տվյալների հավաքագրում, թարմացում

(i) ԱԵԱ-ների վերաբերյալ ՀՕՏԾ-ով սահմանված անհրաժեշտ տվյալների, հավաքագրում և թարմացում: Այս առաջադրանքը ներառում է նաև աջակցությունը ԱԵԱ-ներին՝ թերի կամ սխալ փաստաթղթերի ուղղման, վերականգնման կամ փոփոխման ուղղությամբ: Տեղեկատվության թարմացումը ենթադրում է հանդիպումներ յուրաքանչյուր ԱԵԱ-ի հետ առանձին, որի ընթացքում անհրաժեշտ է թարմացնել ՀՕՏԾ շրջանակներում հավաքագրված տեղեկատվությունը՝ բոլոր համասեփականատերերի, ժառանգորդների և օտարման պայմանագրերի կնքումն օրենքով նախատեսված կարգով իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմանների մասերով (օրինակ՝ բոլոր համասեփականատերերի

համաձայնություն և ներկայություն, անհրաժեշտ փաստաթղթերի առկայություն և վավերականություն, բացակայող փաստաթղթերի ցանկ և այլն): ՀՕՏԾ պատրաստման ընթացքում ԱԵԱ-ներից հավաքագրվել են օտարման գործընթացի համար անհրաժեշտ և հասանելի հետևյալ փաստաթղթերը՝ իրավունքի պետական գրանցման վկայականների, անձնագրերի, մահվան վկայականների, ժառանգության վկայագրերի, լիազորագրերի և այլ հարակից փաստաթղթերի պատճենները, համայնքներից ստացված տեղեկանքների բնօրինակները, որոնք տեղադրվել են յուրաքանչյուր օտարման ենթակա հողամասի համար կազմված թղթապանակի մեջ: Թղթապանակների մեջ են տեղադրվել նաև գնահատման և վերականգնման օժանդակությունների հաշվարկի հաշվետվությունները, բաժանման և օտարման համար անհրաժեշտ՝ ԱԳԿ ՊԿ ներկայացվող չափագրման փաթեթները: Թղթապանակների վրա նշվել է յուրաքանչյուր փաստաթղթի առկայությունը:

(ii) Թարմացված տեղեկատվության մուտքագրում տեղեկատվական բազայում՝ հետագայում իրականացվող աշխատանքները և թարմացումները համակարգված կերպով իրականացնելու նպատակով:

(iii) Թարմացված տեղեկատվության հիման վրա յուրաքանչյուր ԱԵԱ-ի համար առանձին փաթեթի նախապատրաստում՝ օտարմանն ուղղված կադաստրային և նոտարական համապատասխան գործողություններ իրականացնելու համար, մասնավորապես. Նշված փաթեթը նախնական պետք է կազմած լինի հետևյալից՝ օտարման պայմանագրի և համաձայնագրի նախագծեր, օտարվող գույքի իրավունքի պետական գրանցման վկայական, այդ թվում՝ այլ գույքային իրավունք ունեցող անձանց վկայականներ, բոլոր սեփականատերերի կամ նրանց լիազոր անձանց անձնագրեր, բացակայող ԱԵԱ-ների կողմից նոտարական վավերացմամբ լիազորագրեր (հայերեն թարգմանությամբ), օտարվող հատվածի կադաստրային բաժանման հատակագծեր ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ներկայացնելու համար (այսուհետ՝ ԱԳԿ ՊԿ) և յուրաքանչյուր դեպքի համար այլ անհրաժեշտ հարակից փաստաթղթեր:

Տվյալների բազայի կառավարում

ԻԿ կազմում ընդգրկված տվյալների բազայի մասնագետը/ծրագրավորողը (անհրաժեշտ մասնագիտական հմտությունների նկարագրությունը տես կից հավելվածում) պետք է իրականացնի.

(iv) ՀՕՏԾ առկա բազայի թարմացում և ծրագրային զարգացում (բազայի արխիվացման հնարավորություն, տարբեր մակարդակների մուտքերի ծրագրավորում, նոր փոփոխականների ներմուծում, նոր հաշվետվությունների և հարցումների ստացում և այլն)՝ ՀՕՏԾ իրականացման փուլում անհրաժեշտ տեղեկատվության ստացման, փաստաթղթերի ձևաչափերին համապատասխանող լրացուցիչ ծրագրային լուծումների պատրաստման նպատակով:

(v) ԱԵԱ-ների ծանուցման նամակների/նյութերի, օտարման պայմանագրերի/համաձայնագրերի ծրագրային ստացումը բազայում առկա տվյալների հիման վրա՝ԾԻԿ-ի կողմից նախապես սահմանված ձևաչափով:

(vi) ՀՕՏԾ իրականացման ընթացքի և արդյունքերի վերաբերյալ մոնիթորինգի ամփոփ տվյալների, քանակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության ապահովում ԾԻԿ և ԻԿ մասնագետների կողմից պահանջված ձևաչափով:

(vii) Դատական գործերի, դրանց ընթացքի, կասեցման, առկա խնդիրների և ավարտի (դատական ակտերի) վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում և թարմացում ՀՕՏԾ տվյալների բազայում, ինչպես նաև առաջընթացի հաշվետվությունների պատրաստում և ներկայացում ԾԻԿ-ին:

(viii) ՀՕՏԾ իրականացման յուրաքանչյուր փուլում հավաքագրված տեղեկատվության, իրականացված գործողությունների արդյունքների ամփոփում և մուտքագրում բազայում:

C.1.3 Պայմանագրի/համաձայնագրի ստորագրում (ներառյալ գրանցումը)

(i) <u>Մասնավոր սեփականություն հանդիսացող հողամասեր.</u> Միայն ազդեցության ենթակա մասի օտարման դեպքում կազմակերպել ԱԵԱ-ներին պատկանող անշարժ գույքի ընդհանուր միավորի կազմից օտարվող մասի սահմանված կարգով բաժանման, առանձնացման և ԱԳԿ ՊԿ կողմից դրանց պետական գրանցման գործընթացը (ներառյալ բոլոր համասեփականատերերից գույքի բաժանման համաձայնագրերի հավաքագրումը)՝ օժանդակելով մասնատման գործընթացից հետո կադաստրի տարածքային ստորաբաժանման գրասենյակների կողմից գրանցված գույքի չօտարվող հատվածների սեփականության վկայականների հաձնումը սեփականատերերին:

(ii) <u>Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասեր. Օժանդակել</u> օտարման ենթակա հատվածի պետական գրանցումը ԱԳԿ ՊԿ տարածքային ստորաբաժանման գրասենյակներում՝ նախապես ապահովելով համայնքի ղեկավարների կողմից հատակագծերի հաստատումը և պետական գրանցման համար անհրաժեշտ դիմումների և այլ հիմքերի տրամադրումը:

(iii) Կազմակերպել մասնավոր և համայնքային սեփականություն հանդիսացող_հողամասերի օտարման ենթակա հատվածի՝ ԱԳԿ ՊԿ կողմից «անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքների» տրամադրման դիմումների ներկայացումը և միասնական տեղեկանքների ստացումը ԱԳԿ ՊԿ տարածքային ստորաբաժանման գրասենյակներում:

(iv) Օտարվող սեփականության մասով տեղական և պետական բյուջեի նկատմամբ առկա ապառքների, կոմունալ և պարտադիր վճարների մասով առկա պարտքերի վերաբերյալ տեղեկատվության,իսկ օտարվող սեփականության մասով պարտքերի բացակայության դեպքում՝ համապատասխան տեղեկանքների ներկայացում ԾԻԿ-ին: ԱԵԱ-ների կողմից վճարմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացում՝ համագործակցելով համապատասխան համայնքների և այլ իրավասուների հետ:

(v) Կազմակերպել ԱԵԱ-ների համար բանկային հաշվեհամարների բացման գործընթացը՝ ապահովելով ԱԵԱ-ներից անհրաժեշտ տվյալների ստացումը կամ փոխանցումը:

(vi) Օտարման պայմանագրերի/համաձայնագրերի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի հանձնումը համապատասխան նոտարական գրասենյակներին՝

պայմանագրերի/համաձայնագրերի վավերացման կապակցությամբ նոտարական գործողություններ իրականացնելու համար:

(vii) Օտարման պայմանագրերի/համաձայնագրերի կնքման բուն գործընթացի կազմակերպումը ԱԵԱ-ների հետ (նոտարական գրասենյակում կամ դրանից դուրս):

(viii) Կնքված պայմանագրերից և համաձայնագրերից բխող փոխհատուցումները Ձեռքբերողի կողմից ԱԵԱ-ներին տրամադրելու նպատակով՝ վճարման հայտերի ներկայացումը ԾԻԿ-ին՝ կնքված օտարման պայմանագրերի և համաձայնագրի հիման վրա: Այս առաջադրանքը ներառում է նաև կնքված պայմանագրերի/համաձայնագրերի մեկական օրինակի հանձնումը ԾԻԿ-ին:

(ix) Օտարման պայմանագրերի կնքումից հետո դրանց պետական գրանցման գործընթացի իրականացումը և ՀՀ անունով իրավունքի պետական գրանցման վկայականների (կից հատակագծերով) ստացումը և հանձնումը ՊՈԱԿ-ին՝ պատշաճ փաստաթղթավորմամբ:

C.1.4 Օրինականացման և ուղղման պլան

ՀՕՏԾ "Օրինականացման Պլանով" հաստատված գործընթացների կազմակերպում և իրականացում յուրաքանչյուր օրինականացման ենթակա դեպքերի համար, այդ թվում.

(i) ժառանգության իրավունքի կարգավորման խնդիրներ պարունակող հողամասերի դեպքում աջակցություն ժառանգներին՝ժառանգության բացման, ժառանգության իրավունքի վկայագրերի ստացման և դրանց պետական գրանցման հարցերի կազմակերպման և իրականացման գործում:

(ii) Լիազորագրերի անհրաժեշտության դեպքում կապի հաստատում արտերկրում գտնվող սեփականատերերի հետ, լիազորագրերի ընդունելի ձևերի մշակում և փոխանցում ԱԵԱ-ներին, լիազորագրերը Հայաստան ուղարկելու հարցում աջակցություն, աջակցություն լիազորագրերի թարգմանության կազմակերպման հարցում և այլն:

(iii) Աջակցություն ԱԵԱ-ներին անձնագրերի վավերականության ժամկետների երկարացման նոր անձնագրերի ստացման, ուղղումների կատարման (եթե առկա է) հարցերում:

(iv) ԱԵԱ-ների՝ օտարման պայմանգրի կնքման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների, տառասխալների ուղղման և ճշգրտման գործընթացի կազմակերպում՝ համայնքի ղեկավարից, ՔԿԱԳ, կամ արխիվներից ստացված տեղեկանքների հիման վրա:

(v) Աջակցություն ԱԵԱ-ներին այլ անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման, ուղղման և վերականգնման հարցում՝ տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվություն, այդ թվում իրավական:

(vi) ՀՕՏԾ "Օրինականացման Պլանով"-ով հաստատված օրինականացման և ճշգրտման դեպքերից բացի ԱԵԱ-ների իրազեկման և տվյալների թարմացման փուլում ի հայտ եկած խնդրահարույց դեպքերի տարանջատում և դասակարգում, հնարավոր լուծման գործողությունների պլանի մշակում՝ խնդրահարույց դեպքի ուսումնասիրման, դրա լուծման, անհրաժեշտ փաստաթղթերի կազմման, ԱԵԱ-ներին խորհրդատվության ու աջակցության ցուցաբերման և որպես արդյունք՝ օտարման պայմանագրերի կնքման նպատակով:

Խնդրահարույց դեպքերի ներկայացում ԾԻԿ-ին՝ հնարավոր լուծման մեխանիզմների քննարկման և համաձայնեցման նպատակով:

(vii) Օտարման պայմանագրի կնքման առկա իրավական խոչընդոտների վերացմանն ուղղված ցանկացած օրինական գործողությունների իրականացում, որը համապատասխանում է ՀՕՏՇ-ին, սույն ՀՕՏԾ-ին և Ծրագրի նպատակներին:

(viii) ԻԿ-ն պետք է բավարար ջանքեր գործադրի դատական կարգով օտարման դեպքերը նվազագույնի հասցնելու ուղղությամբ: Որտեղ, որ հնարավոր է ՝ պետք է խուսափել օտարման նշված եղանակից, առաջնահերթությունը տալով սեփականությունը պայմանագրային հիմունքներով օտարելուն՝ հաջող բանակցություններ և անհրաժեշտ վերականգնողական միջոցառումներ իրականացնելու միջոցով:

C.1.Բողոքների լուծում

ՀՕՏԾ իրականացման ընթացքում, ԻԿ-ն համայնքի ղեկավարների աջակցությամբ յուրաքանչյուր համայնքում ապահովում է Բողոքների լուծման մեխանիզմի ներդնումը: Բողոքների լուծման մեխանիզմի կառուցվածքը և ընթացակարգերը սահմանվել են S 3 ՀՕՏՇ-ով: ԱԵԱ-ների բողոքների ընդունումը և հաշվառումը կիրականացվի երկու հիմնական մուտքագրող կետերի միջոցով, որը կապահովվեն ՏԻՄ-ում նշանակված համապատասխան անձը կամ Բողոքի առանցքային անձը (Grievance focal person): Բողոքի առանցքային անձը կլինի ԻԿ համապատախան ներկայացուցիչը: Բողոքների լուծման մեխանիզմի շրջանակերում ԻԿ-ն պետք է իրականացնի հետևյալ գործառույթները.

1)Տվյալմապատախան ներկայացուցիչը: Բողոքների լուծման մեխանիզմի շրջանակերում ԻԿ-ն պետք է իրականացնի հետևյալ գործառույթները.ած համապատասխան անձը կա

2)Բողոքների թղթային և էլեկետրոնային տարբերակների պատշաճ փաստաթղթավորում և փոխանցում ԾԻԿ-ին՝ աջակցելով ԾԻԿ-ին դրանց քննարկման և լուծման ողջ գործընթացում:

3)Աջակցություն ԾԻԿ-ին՝ Բողոքների քննման խմբի (ԲՔԽ) նիստերի կազմակերպման ու իրականացման գործընթացում:

4)ԲՔԽ նիստերին որպես անդամ կամ մասնագետ ներգրավում (ըստ անհրաժեշտության)

5)Աջակցություն ԱԵԱ-ներին՝ իրենց բողոքները ՀՕՏԾ-ով սահմանված բողոքների լուծման մեխանիզմի միջոցով լուծելու գործընթացում:

C.1.6 Ճշգրտող միջոցառումների իրականացում

ԻԿ-ն պետք է ապահովի ՀՕՏ բոլոր ճշգրտող միջոցառումների պլան(ներ)ի իրականացումը (correction action plan), որոնք կբացահայտվեն և կսահմանվեն Արտաքին մոնիթորինգի գործակալության (ԱՄԳ) ՀՕՏԾ Համապատասխանության հաշվետվություններով:

ԻԿ-ն պատասխանատվություն է կրում իր հաշվին ԾԻԿ կողմից պահանջվող ժամկետներում ուղղելու այն սխալները, որոնց համար նա է պատասխանատու է և որոնք հայտնաբերվել են ՀՕՏԾ իրականացման ծառայությունների ավարտից հետո:

C.2 Դատական կարգով օտարման փուլ

Սեփականության օտարման պայմանագիր չկնքելու դեպքում, ԻԿ-ն Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պետք է նախաձեռնի փոխհատուցման գումարը դեպոզիտ դնելու միջոցով և դատական կարգով սեփականությունն օտարելու գործընթացը՝ պահպանելով Օրենքով սահմանված ընթացակարգերի պահանջները, մասնավորապես.

C2.1 Սեփականության օտարում փոխհատուցման գումարը դեպոզիտ դնելով.

1) Օտարման կապակցությամբ ԱԵԱ-ին տրամադրվող փոխհատուցման գումարը դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին հանձնելու գործընթացի իրականացում (նկատի ունենալով, որ փոխհատուցման գումարը նոտարի դեպոզիտ հաշվին հանձնելու դեպքում նախատեսված է վճար՝ դեպոզիտ հանձնված գումարի 0.5-1 տոկոսի չափով, ուստի առավել նպատակահարմար է փոխհատուցման գումարը հանձնել դատարանի դեպոզիտ հաշվին):

2)Փոխհատուցման գումարը դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին հանձնելու վերաբերյալ յուրաքանչյուր ԱԵԱ-ին պատշաճ ծանուցման և ուղեցույցի տրամադրում,

3)Փոխհատուցման գումարը դեպոզիտ հաշվից ԱԵԱ-ների կողմից ստանալու գործընթացի ապահովում,

C2.2 Սեփականության օտարում դատական կարգով.

1)Օրենքով սահմանված ժամկետում դեպոզիտ հաշվից փոխհատուցման գումարը ԱԵԱ կողմից չստանալու դեպքում, յուրաքանչյուր սեփականության օտարման վերաբերյալ հայցի ներկայացում դատարան:

(i) Որպես հայցվորի (և/կամ պատասխանողի) ներկայացուցիչ դատական գործերին մասնակցություն դատական բոլոր ատյաններում, իրականացնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ և 42-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները ողջ ծավալով:

(ii) Դատական ակտերի ստացում և դրանց հանձնում ԾԻԿ-ին:

(iii) Օրենքով սահմանված կարգով օրինական ուժ ստացած դատական ակտերին համապատասխան՝ ԱԵԱ-ների փոխհատուցման գումարի ստացման և օտարվող (չօտարվող) հատվածների նկատմամբ գույքային իրավունքի պետական գրանցման ապահովում:

(iv) Հայաստանի Հանրապետության և ԱԵԱ-ների անունով (հողամասի բաժանման դեպքում) գրանցված հողամասերի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականների ստացում և հանձնում ըստ պատկանելիության՝ ԾԻԿ-ին և ԱԵԱ-ին:

(v) Օտարված սեփականության հանձնման-ընդունման կազմակերպում:

(vi) Սեփականության օտարման հետ կապված սեփականատիրոջ համար հարկային պարտավորություններ առաջացանալու մասին տեղեկացնում են համապատասխան ԱԵԱ-ներին, և կազմակերպում են վերջիններիս կողմից հարկերի հաշվարկի տրամադրումը ԾԻԿ-ին:

(vii) Դատական գործընթացների ընթացքի, կասեցման, խնդիրների և ավարտի մասին տեղեկատվության թարմացում ՀՕՏԾ բազայում, ինչպես նաև առաջընթացի մասին հաշվետվությունների պատրաստում և հանձնում ԾԻԿ-ին:

C.3 ՀՕՏ լրացուցիչ օտարումների և ՀՕՏԾ փոփոխությունների պլանի իրականացում

11. ՀՕՏԾ պատրաստման ավարտական փուլում (ըստ նախագծողի պարզաբանումների)՝ ճշգրտվել է, որ ՀՕՏԾ-ում ներառված որոշ հողամասերի օտարման մակերեսներ կարող են փոփոխվել: Նշված փոփոխությունների արդյունքում փոփոխության ենթակա կլինեն տվյալ հողամասերի համար պատրաստված նկարագրության արձանագրությունները՝ համապատասխան ազդեցություններով (կառույցներ, մշակաբույսեր, ծառեր և բարելավումներ), գույքի բաժանման հատակագծերը, ինչպես նաև հաշվարկված փոխհատուցման արժեքները: Նշված փոփոխությունների արդյունքում հողամասերի համար պետք է իրականացվի համապատասխան փոփոխությունների գործողությունների պլան (այսուհետ՝ ՓԳՊ)՝ մինչև տվյալ հողամասերի տեղակայման համայնքներում ՀՕՏԾ իրականացման մեկնակը: ՓԳՊ-ը ներառում է մոտ 70-80 հողամասեր:
12. Միաժամանակ, S3 նախագծային փաստաթղթերի ներկայացման նպատակով իրականացված հանրային հանդիպման շրջանակներում ազդեցության ենթակա համայնքների կողմից ներկայացված նախագծային առաջարկների հիման վրա ԾԻԿ կողմից նախաձեռնվել և իրականացվել են S3 նախագծային փոփոխություններ, որի արդյունքում առաջացել է լրացուցիչ հողամասերի օտարման անհրաժեշտություն: Նշված հողամասերի համար պետք է իրականացվի ՀՕՏԾ շրջանակներում նախատեսված բոլոր միջոցառումները՝ հողամասերի չափագրում և տեղազննում, նկարագրության արձանագրությունների կազմում ստորագրում, ԱԵԱ-ների մարդահամար (ներառյալ՝ ԱԵԱ-ների փաստաթղթերի հավաքագրումը) և սոցիալ-տնտեսական հարցում, գնահատում և օժանդակությունների հաշվարկում, բոլոր հավաքագրված տվյալների մուտքագրում բազայում: Վերոնշյալ միջոցառումները կիրականցվեն ՀՕՏԾ լրացուցիչ օտարումների պլանի մշակման և իրականացման շրջանակներում (այսուհետ՝ ՀՕՏԾԼ): ՀՕՏԾԼ-ն ներառում է մոտ 170-220 հողամասեր:
13. Ստորև ներկայացված են ՓԳՊ և ՀՕՏԾԼ իրականացման շրջանակներում անհրաժեշտ հիմնական գործառույթների բնութագիրը և ակնկալվող արդյունքները, որոնք պետք է ապահովվեն ԻԿ կողմից:

C.3.1 Չափագրում և տեղազննում

Հ/հ	Առաջադրանքի նկարագրություն	Կիրառման շրջանակ
1	Իրականացնել փոփոխված մակերեսներով հողամասերի և այլ անշարժ գույքի վերաչափագրումը՝ ապահովելով օտարման արդյունքում բաժանվող անշարժ գույքի մասերից յուրաքանչյուր մասի բաժանման փոփոխված հատակագիծը՝ փոխված օտարվող մակերեսի համար (օրենսդրությամբ սահմանված ձևաչափով)՝ հիմք ընդունելով կադաստրային քարտեզի վրա տեղադրված նախագիծը (տրամադրվում է ԾԻԿ-ի կողմից): Պատրաստել նկարագրության արձանագրությանը կցվող հողամասի ընդհանուր փոփոխված հատակագիծը՝ հատակագծի վրա օտարվող մասի նշումով, որտեղ պետք է ներկայացվեն Տրանշ 3 ճանապարհի ողջ երկարությամբ նույնականացված հողերի փաստացի (օտարվող հողեր) սահմանները և Տրանշ 3-ի ճանապարհի առանցքը: Հատակագծերում ներառել սեփականատիրոջ, գույքային իրավունքներ ունեցողների, օգտագործողի, փաստացի տիրապետողի անուն ազգանուն(ներ)ը և գոյություն ունեցող ճանապարհը/կամ Հյուսիս-	ՓԳՊ

	հարավի պայմանանշանը: Հատագծերը պետք է տրամադրվեն ԾԻԿ-ին թվային PDF և AutoCad ձևաչափերով սկավառակի վրա և թղթային տարբերակներով:	
2	ԾԻԿ-ին պետք է տրամադրվեն նաև անշարժ գույքի ամբողջ միավորի համար հատակագծեր այն դեպքերում, երբ նշված հողամասի համար չի իրականացվել առաջին պետական գրանցում, ինչպես նաև վերագրանցման կամ կադաստրային ուղղման ենթակա դեպքերի համար՝ օրենսդրությամբ սահմանված ձևաչափով: Վարձակալության իրավունքով ծանրաբեռնված հողերի դեպքում պետք է տրամադրվի առանձին հատակագիծ, որի վրա պետք է երևա օտարվող մասի հետ վարձակալված մասի համադրությունը, ինչպես նաև բաժանման հատակագիծ՝ ընդհանուր վարձակալված և դրանից օտարվող մասերի համար: Հատակագծերը պետք է տրամադրվեն ԾԻԿ-ին թվային PDF և AutoCad ձևաչափերով սկավառակի վրա և թղթային տարբերակներով:	ՓԳՊ ՀՕՏԾԼ
3	Չափագրել ազդեցության ենթակա հողամասերը և դրա արդյունքներով պատրաստել օտարման արդյունքում բաժանվող անշարժ գույքի մասերից յուրաքանչյուր մասի բաժանման հատակագիծ օրենսդրությամբ սահմանված ձևաչափով՝ հիմք ընդունելով կադաստրային քարտեզի վրա տեղադրված նախագիծը (տրամադրվում է ԾԻԿ-ի կողմից): Չափագրման արդյունքներով պատրաստել նկարագրության արձանագրությանը կցվող հողամասի ընդհանուր հատակագիծը՝ հատակագծի վրա օտարվող մասի նշումով, հատակագծի վրա օտարվող մասի Տրանշ 3 ճանապարհի ողջ երկարությամբ նույնականացված հողերի փաստացի (օտարվող հողեր) սահմանները և Տրանշ 3-ի ճանապարհի առանցքը, ինչպես նաև օտարվող և վարձակալված մասի համադրությունը: Հատակագծերը պետք է տրամադրվեն ԾԻԿ-ին թվային PDF և AutoCad ձևաչափերով սկավառակի վրա և թղթային տարբերակներով:	ՀՕՏԾԼ
4	Չափագրումը և տեղազննումն իրականացնել ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) ներկայությամբ, իսկ ԱԵԱ-ների ներկայությունն ապահովելու անհնարինության դեպքում՝ՏԻՄ-երի ներկայացուցիչների մասնակցությամբ: Չափագրման արդյունքները վերլուծել կադաստրային քարտեզի, կադաստրի կողմից տրամադրված տեղեկատվության և իրավունքի պետական գրանցման վկայականի հետ համեմատության և համադրման սկզբունքով: Ի հայտ եկած և դուրսբերված խնդիրները և անհամապատասխանություններն առանձին հաշվետվությամբ ներկայացնել ԾԻԿ-ին՝ առաջարկվող լուծումներով: Ապահովել հողամասերի հատակագծերի հաստատումը համայնքների ղեկավարների կողմից՝ համայնքային հողամասերի, ինչպես նաև գրանցման և վերագրանցման ենթակա հողամասերի համար:	ՀՕՏԾԼ
5	ԾԻԿ-ին տրամադրված հատակագծերը կհամարվեն վերջնական և կընդունվեն ԾԻԿ-ի կողմից, երբ դրանք կստանան պետական գրանցում և դրանց վերաբերյալ կտրամադրվեն ՀՀ անունով իրավունքի պետական գրանցման համապատասխան վկայականները: ԱԳԿ ՊԿ կողմից գույքի բաժանման կամ գրանցման մերժման/կասեցման դեպքերում ԻԿ-ն պարտավոր է վերանայել, և տրամադրել հատակագծի ճշտված/ուղղված տարբերակը՝ միաժամանակ ապահովելով փոփոխությունների արդյունքում ԱԵԱ-ի վերանայված փոխհատուցման փաթեթի	ՓԳՊ ՀՕՏԾԼ

	տրամադրումը (ներառյալ՝ ճշտումների կատարումը նկարագրության արձանագրություններում, գնահատման հաշվետվություններում և տվյալների բազայում), առանց լրացուցիչ վճարման կամ այլ ծախսերի փոխհատուցման: Նշված հատակագծերը ներկայացվելու են նաև դատարան՝ դատական կարգով օտարումների դեպքերում: ԻԿ-ն պատասխանատու է չափագրման տվյալների ճշգրտության և հավաստիության համար, մինչև դատարանի վճռի հիման վրա օտարված գույքի պետական գրանցումը:	
6	Ազդեցության ենթակա գույքի տեղազննության արդյունքում արձանագրել առկա գույքը, բարելավումները և այլ կորուստները (շինություն, մշակաբույս, ծառեր և այլն), ինչպես ամբողջ հողամասի, այնպես էլ ազդեցության ենթակա մասի համար՝օտարվող գույքի նկարագրության արձանագրությունը կազմելու նպատակով:	ՀՕՏԾԼ
7	Ներկայացնել Ճանապարհի քարտեզը՝ իրականացված չափագրման արդյունքների տեղադրմամբ, որտեղ նշված է հողամասի ծածկագիրը, սեփականատերը և շինության առկայությունը: Քարտեզին կից ներկայացնել բոլոր չափագրված հողերի ցանկը՝ յուրաքանչյուր հողի սկզբի և ավարտի պիկետներով (ԿՄ-ով), ինչպես նաև հողերի՝ ճանապարհի աջ և ձախ կողմերի տեղադրության մասին նշումով: ՀՕՏԾ իրականացման ընթացքում (յուրաքանչյուր ենթահատվածի համար հաշվետվության տրամարդման շրջանակներում) թարմացնել քարտեզը՝ նշելով նաև իրականացման արդյունքները (օտարված, չօտարված):	ՓԳՊ ՀՕՏԾԼ

C.3.2 Նկարագրության արձանագրությունների կազմում և ստորագրում

Հ/հ	Առաջադրանքի նկարագրություն	Կիրառման շրջանակ
1	Իրականացնել ՀՕՏԾ պատրաստման շրջանակներում արդեն կազմված նկարագրության արձանագրությունների փոփոխությունը՝ փոփոխված օտարվող մակերեսի և ազդեցությունների (շինություն, մշակաբույս, ծառեր և այլն) ներառմամբ՝ ապահովելով դրանց վերաստորագրումը ԱԵԱ-ների կողմից:	ՓԳՊ
2	Պատրաստել օտարվող գույքի նկարագրության արձանագրությունը՝ չափագրմանև ազդեցության ենթակա գույքի տեղազննության արդյունքում արձանագրված կորուստների ներառմամբ (նկարագրության արձանագրությունը հաստատված է ՀՀ կառավարության թիվ 1275-Ն որոշմամբ, հաստատված 16.09.2010թ.):	ՀՕՏԾԼ
3	ՀՀ կառավարության կողմից հաստատված արձանագրությունների կազմման և ստորագրման կարգի պահանջներին համապատասխան՝ կազմակերպել Սեփականության նկարագրության արձանագրությունների ստորագրումը՝ բոլոր ԱԵԱ-ների հետ, ներառյալ՝ սեփականատերեր, տեղական ինքնակառավարման մարմիններ, վարձակալներ, չձևակերպված օգտագործողներ և այլն:	ՓԳՊ ՀՕՏԾԼ
4	ԾԻԿ-ին վերադարձնել ԱԵԱ-ների կողմից չստորագրված արձանագրությունները հստակ պարզաբանումներով՝ կից ներկայացնելով չստորագրման մասին կազմված ակտերը (ակտի ձևերը կտրամադրվեն ԾԻԿ-ի կողմից):	ՓԳՊ ՀՕՏԾԼ
5	Անճշտությունների առկայության դեպքում ճշտել/ուղղել և փոփոխված արձանագրությունները ներկայացնել ԱԵԱ-ների վերաստորագրմանը:	ՓԳՊ ՀՕՏԾԼ
6.	Ապահովել արձանագրությունների տրամադրումը ԱԵԱ-ներին:	ՓԳՊ ՀՕՏԾԼ

C.3.3 Գնահատում/հաշվարկ և վերահաշվարկ

Հ/հ	Առաջադրանքի նկարագրություն	Կիրառման շրջանակ
1	Իրականացնել ՀՕՏՇ պատրաստման շրջանակներում արդեն գնահատված և հաշվարկված փոխհատուցման արժեքների վերահաշվարկ՝ պահպանելով տվյալ հողամասի համար կազմված գնահատման հաշվետվությամբ ամրագրված միավոր արժեքները և հաշվետվությունների ձևաչափերը: Վերոհիշյալի արդյունքներով կազմել վերահաշվարկման հաշվետվություն՝ առկա հաշվետվություններին որպես հավելված կցելու համար՝ ձևաչափը նախապես համաձայնեցնելով ԾԻԿ-ի հետ:	ՓԳՊ
2	Հաշվարկել փոխհատուցման արժեքը յուրաքանչյուր հողի և ԱԵԱ-ի համար՝ հիմք ընդունելով ՀՕՏՇ սկզբունքները և ՀՕՏՇ «Գնահատման մեթոդաբանության» պահանջները, մասնավորապես. • Գնահատման հաշվետվություն ազդեցության ենթակա սեփականության /հող, շինություն, մշակաբույսեր, ծառեր և այլ բարելավումներ/ համար, • Փոխհատուցման հաշվարկ ձեռնարկատիրական գործունեության և ազդեցության ենթակա աշխատողների համար, • Տեղափոխման ենթակա գույքի տրանսպորտային ծախսերի հաշվարկ, • Ձեռքբերողի (Հայաստանի Հանրապետության) կողմից իրականացվող օտարման գործընթացի հետ կապված կադաստրային և նոտարական ծախսերի հաշվարկ, ՀՕՏՇ ներքո կիրառելի օժանդակությունների հաշվարկ:	ՀՕՏԾԼ
3	Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից ելնելով ապահովել փոխհատուցման գումարի հաշվարկը, որը պետք է կատարված լինի այն դեպոզիտ հանձնելուց ոչ շուտ, քան մեկ շաբաթվա առաջվա դրությամբ: Վերոհիշյալի արդյունքներով կազմել Հաշվարկման հաշվետվություն՝ ըստ անհրաժեշտության դատարան ներկայացնելու նպատակով:	ՓԳՊ ՀՕՏԾԼ

C.3.4 Մարդահամար, Սոցիալ-տնտեսական հետազոտություն (փաստաթղթերի հավաքագրում)

Հ/հ	Առաջադրանքի նկարագրություն	Կիրառման շրջանակ
1	Իրականացնել ԱԵԱ-ների 100%-ի մարդահամար՝ ԾԻԿ կողմից տրամադրված հարցաթերթի հիման վրա: ԾԻԿ-ին տրամադրել հարցման չենթարկված ԱԵԱ-ների ցանկ՝ նշված պատճառներով: Ապահովել հետազոտության արդյունքների մուտքագրումը ՀՕՏԾ ընդհանուր բազայում:	ՀՕՏԾԼ
2	Իրականացնել սոցիալ-տնտեսական հետազոտություն ԱԵԱ-ի 25%-ի հետ՝ ԾԻԿ կողմից տրամադրված հարցաթերթի հիման վրա: ԾԻԿ-ին տրամադրել հարցման չենթարկված ԱԵԱ-ների ցանկ՝ նշված պատճառներով: Ապահովել հետազոտության արդյունքների կրկնակի մուտքագրումը SPSS բազայի ձևաչափում և համապատասխան հաշվարկային աղյուսակների պատրաստումը՝ ԾԻԿ-ի կողմից տրամադրված ձևաչափերով:	ՀՕՏԾԼ
3	Օտարման գործընթացում պահանջվող փաստաթղթերի պատճենների հավաքագրում և	ՀՕՏԾԼ

	էլեկտրոնային տարբերակների տրամադրում՝ ըստ յուրաքանչյուր ծածկագրի, ինչպես նաև ամփոփ տեղեկատվություն, որը կարտացոլի փաստաթղթերի առկայության կարգավիճակը:	
4	Ազդեցության ենթակա բոլոր հողամասերի համար առանձին թղթապանակների պատրաստում, որտեղ կհավաքվեն իրականացված բոլոր աշխատանքների արդյունքները (չափագրման հատակագծեր, նկարագրության արձանագրություններ, փաստաթղթեր, գնահատման/հաշվարկման հաշվետվություններ)՝ ՀՕՏԾ շրջանակներում արդեն պատրաստված փաթեթների օրինակով:	ՀՕՏԾԼ

14. Չափագրման, տեղազննության, մարդահամարի և փաստաթղթերի վերլուծության արդյունքում պետք է դուրս բերվեն/դասակարգվեն օրինականացման և կադաստրային ուղղման/վերագրանցման դեպքերը՝ յուրաքանչյուրի համար կիրառելի ընթացակարգերի նկարագրությամբ և իրականացման ժամանակացույցով՝ հիմք ընդունելով ՀՕՏԾ Օրինականացման պլանով սահմանված ընթացակարգերը:
15. ՓԳՊ շրջանակներում փոփոխված/թարմացված տվյալները պետք է մուտքագրվեն ՀՕՏԾ MYSQL բազա՝ արխիվացման հնարավորությամբ: ՀՕՏԾԼ շրջանակներում հավաքագրված ամբողջ տվյալները (չափագրում, տեղազննություն, գնահատում, մարդահամար, փաստաթղթեր և այլ հարակց տվյալներ) պետք է մուտքագրվեն Excel բազա՝ բազայի մասնագետի սահմանված ձևաչափով և այնուհետև փոխարկվեն (convert) ՀՕՏԾ ընդհանուր MYSQL բազա:

C.3.5 Ստուգման գործողությունների իրականացում (եթե անհրաժեշտ է)

ՀՕՏԾ իրականացման ընթացքում ստացված բողոքների քննման ընթացքում ԾԻԿ պահանջով ԻԿ-ն պետք է իրականացնի ՀՕՏԾ տվյալների գրասենյակային և/կամ դաշտային ստուգման և ճշգրտման միջոցառումներ (ներառյալ լրացուցիչ չափագրում, տեղազննություն, գնահատում և այլն, եթե պահանջվում է)՝ ԾԻԿ-ին տրամադրելով համապատասխան մասնագիտական եզրակացություն:

C.4 Օտարված հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն

ԻԿ-ն կաջակցի ԾԻԿ-ին իրականացնելու ձեռքբերված Հողամասերի նպատակային նշանակության փոփոխության գործընթացը, ապահովելով համապատասխան քարտեզագրումը (կամ չափագրումը), որտեղ որ պահանջվում է:

C.5 Այլ հարակից գործողություններ

ՀՕՏԾ իրականացման գործընթացի առանձնահատկությունները հաշվի առնելով, ԻԿ-ն իր գործառույթները պետք է դիտարկի որպես մեկ ամբողջական ծրագրի իրականացում և ցուցաբերի բավարար ճկունություն ընթացքում առաջացող խնդիրներին լուծումներ առաջադրելու վերաբերյալ, որոնք եթե նույնիսկ բառացիորեն ներառված չեն լինի սույն ՏԱ-ում, սակայն արդարացիորեն կբխեն Խորհրդատուի հիմնական գործառույթների և պարտականությունների կատարումից:
ԻԿ գործունեությանը վերաբերող Պայմանագրի պայմաններն ու դրույթները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

D. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ և ԹԻՄԻ ԿԱԶՄԸ

Տվյալ ՏԱ-ով նախատեսված առաջադրանքների կատարման նպատակով ԻԿ-ն պետք է ներգրավի երկու թիմեր. հիմնական թիմը պատասխանատու կլինի ՀՕՏԾ-ների ամբողջական իրականացման համար, իսկ 2-րդ թիմը՝ ՓԳՊ և ՀՕՏԾԼ պլաններով նախատեսված աշխատանքների: Պահանջվող մասնագետների և փորձագետների մանրամասն նկարագրությունը ներկայացված են բաժին D1 և D2-ում:

D.1 ՀՕՏԾ իրականացման հիմնական թիմ

16. ԻԿ հիմնական մասնագետները պետք է ունենան մասնագիտական փորձ հողերի օտարման օրենսդրության և իրականացման (նախորդող փորձը առավելություն է) ոլորտում, կենսամակարդակի և եկամուտների ստեղծման և վերապատրաստման, սոցիալ-տնտեսական հետազոտությունների, վերաբնակեցման և կենսաապահովման վերականգնման, շահագիրգիռ կողմերի և համայնքային մասնակցության, համայնքային և գենդերային զարգացման ոլորտներում: ԻԿ մասնագետները կաշխատեն դաշտում՝ Թիմի ղեկավարի վերահսկման ներքո:

17. ԻԿ-ն պետք է ներգրավի մասնագիտական թիմ՝ կազմված փորձառու մասնագետներից, որոնք կիրականացնեն սույն առաջադրանքը: Թիմը պետք է ներառի առնվազն հետևյալ հիմնական մասնագետներին.

(i) <u>Թիմի ղեկավար:</u> Նա պետք է ունենա բակալավրի աստիճան հասարակագիտության, տնտեսագիտության, վիճակագրության, ֆինանսների, իրավաբանության կամ հարակից ոլորտներում՝ նախընտրելի է 8 տարվա համապատասխան փորձով բազմաֆունկցիոնալ թիմի կառավարման և համակարգման ոլորտում: Նա պետք է կառավարի թիմը և պատասխանատու լինի ընդհանուր առաջադրանքների կատարման համար, ունենա առնվազն 3 տարվա փորձ հողերի օտարմանը և տարաբնակեցմանը (ՀՕՏ) վերաբերվող աշխատանքներում: Թիմի ղեկավարը պետք է ունենա լավ աշխատանքային գիտելիքներ ՀՀ-ում հողերի օտարման ոլորտի վերաբերյալ, ներառյալ ՀՕՏԾ-ների պատրաստման և իրականացման ինստիտուտները, և ծանոթ լինի ԱԶԲ «Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը» (ADB SPS 2009): Պահանջվում է անգլերենի գրավոր և խոսակցական իմացություն:

(ii) <u>Սոցիոլոգ/սոցիալական զարգացման և վերաբնակեցման մասնագետ:</u> Նա պետք է ունենա բակալավրի աստիճան սոցիոլոգիայում կամ այլ կիրառական հասարակագիտության ոլորտում՝ նախընտրելի է 5 տարվա համապատասխան փորձով: Սոցիալական զարգացման և վերաբնակեցման մասնագետները պետք է ունենան լավ աշխատանքային գիտելիքներ ՀՀ-ում հողերի օտարման ոլորտում, ներառյալ ՀՕՏԾ-ների պատրաստման և իրականացման ինստիտուտները և ծանոթ լինեն ԱԶԲ «Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը» (ADB SPS 2009):

(iii) <u>Տվյալների բազայի կառավարման մասնագետ/ծրագրավորող:</u> Նա պետք է ունենա բակալավրի աստիճան մաթեմատիկայի, վիճակագրության, հասարակագիտության կամ այլ հարակից ոլորտներում՝ նախընտրելի է 5 տարվա համապատասխան փորձով: Պահանջվում է Excell, MYSQL և Access ծրագրերի հետ աշխատանքի որակավորում և փորձ: Նա պատասխանատու կլինի ՀՕՏԾ տվյալների բազայի կառավարման և ծրագրային զարգացման աշխատանքների համար:


(iv) Իրավաբաններ/փաստաբաններ: Նա պետք է ունենա բակալավրի աստիճան իրավաբանության ոլորտում՝ նախընտրելի է 5 տարվա համապատասխան փորձով: Պահանջվում է փաստաբանական փորձ: Նա պետք է պատասխանատու լինի ՀՕՏԾ իրականացման ընթացքում ինստիտուցիոնալ, իրավական խնդիրների և դատական գործընթացների վարման համար: Իրավաբանները պետք է ունենան լավ աշխատանքային գիտելիքներ ՀՀ-ում հողերի օտարման ոլորտի վերաբերյալ, ներառյալ ՀՕՏԾ-ների պատրաստման և իրականացման ինստիտուտները և ծանոթ լինեն ԱԶԲ «Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը» (ADB SPS 2009):

18. Իրականացման Խորհրդատուի մասնագիտական թիմի (այսուհետ՝ Իրականացման Թիմ-ԻԹ) կառուցվածքը ենթադրում է հետևյալ կազմը.

1. ԻԹ Ղեկավար
2. Համակարգող
3. Իրավախորհրդատու/փաստաբաններ
4. Իրավաբան- դաշտային աշխատանքներ իրականացնող մասնագետներ
5. Սոցիոլոգ/սոցիալական զարգացման մասնագետ/դաշտային աշխատանքներ իրականացնող մասնագետներ
6. Տվյալների բազայի մասնագետ/ծրագրավորող: Ընդ որում եթե տվյալների բազայի մասնագետը չի կարողանում իրականացնել պահանջվող ծրագրավորողի գործառույթներ, ապա, ըստ անհրաժեշտության, ծրագրավորող կարող է վարձվել ժամանակավոր: Ամեն դեպքում չլինելով իրականացնող թիմի մշտական անդամ, տվյալների բազայի կառավարման մասնագետը պետք է ամբողջ աշխատանքային օրով հասանելի լինի իրականացման թիմի կազմում:

19. ԻԿ աշխատանքների արդյունավետության և ճկունության ապահովման նկատառումներից ելնելով՝ ԻԿ-ն պարտավոր է ապահովել մի քանի աշխատանքային խմբերի միաժամանակյա գործունեություն դաշտում՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ: Դաշտային աշխատանքների ծավալը համամասնորեն կբաշխվի աշխատանքային խմբերի միջև:
20. ԻԹ ղեկավարը կառավարում է գործընթացը երկու համակարգողների և տվյալների բազայի մասնագետի միջոցով: Միաժամանակ, ԻԹ ղեկավարի գործունեությունը համաձայնեցվում/համակարգվում է ԾԻԿ խորհրդատուի կողմից:
21. Աշխատակազմի կառուցվածքը/մոդելը կարող է վերանայվել դաշտային աշխատանքների պահանջների հիման վրա՝ ԾԻԿ-ի հետ նախնական համաձայնեցմամբ:
22. Նշված առաջադրանքի կատարման համար ԻԿ-ն պետք է օգտագործի իր գրասենյակը, տրանսպորտը և սարքավորումները:
23. ԻԹ կառուցվածքը ներկայացված է ստորև: ԻԹ յուրաքանչյուր անդամի գործառույթների մանրամասն նկարագրությունը ներկայացված է «ԻԿ մասնագետների հիմնական գործառույթները և մանրամասն հրահանգները» հավելվածում, որը հանդիսանում է տվյալ ՏԱ անբաժանելի մասը:

Իրականացման թիմի կառուցվածք



D.2 ՓԳՊ և ՀՕՏԾԼ աշխատանքների իրականացման թիմ

24. ՓԳՊ և ՀՕՏԾԼ իրականացումը ենթադրում է հետևյալ հիմնական մասնագետների ներգրավումը՝

- Որակավորված չափագրող
- Որակավորված գնահատող
- Անշարժ գույքի տեղազննող
- Փորձառու գյուղատնտես
- Սոցիոլոգ/Սոցիալական զարգացման մասնագետ
- Հարցազրուցավարներ (մարդահամարի և սոցիալ-տնտեսական հարցման անցկացման համար)

25. Աշխատանքների իրականացման պահանջներից ելնելով ԻԿ կողմից կարող են ներգրավվել նաև այլ մասնագետներ:

E. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

26. ԻԿ-ն պետք է ներկայացնի Նախնական հաշվետվություն, ներառյալ Մանրամասն Գործողությունների Պլանը (ՄԳՊ), որտեղ նկարագրված կլինեն յուրաքանչյուր ՀՕՏԾ ենթահատվածի իրականացման փուլի (այդ թվում և օրինականացման պլանի) համար կիրառվող բոլոր մեթոդաբանությունները, գործողություններն ու ժամանակացույցերը, աշխատուժի տեղակայումը, ինչպես նաև ներկայացվելիք բոլոր հաշվետությունների ուրվագծերը (outline): Նախնական հաշվետվությունը պետք է ներկայացվի ԻԿ նշանակման ամսաթվից հետո 15-օրյա ժամկետում: ՄԳՊ-ն պետք է մշակվի՝ ԾԻԿ-ի հետ նախապես իրականացման խորհրդատվությունների հիման վրա:
27. ԻԿ-ն պետք է ներկայացնի Շաբաթական հաշվետվություններ իրականացված աշխատանքների ընթացի և հաջորդ շաբաթվա համար պլանավորվող աշխատանքների վերաբերյալ: Ամսական հաշվետվությունները պետք է ներառեն ՀՕՏԾ իրականացման ընթացքի վերաբերյալ տվյալներ՝ ԾԻԿ-ի կողմից պահանջվող ձևաչափով, ինչպես նաև այլ առաջընթացի հաշվետվություններ՝ ԾԻԿ պահանջով (եթե այդպիսիք լինեն):
28. Յուրաքանչյուր ՀՕՏԾ իրականացման ենթահատվածի համար պահանջվում են ՀՕՏԾ իրականացման Ավարտական հաշվետվություններ, որտեղ ներկայացված կլինեն ՀՕՏԾ իրականացման կարգավիճակը, ՀՕՏԾ ներքո սահմանված և փաստացի իրականացման տվյալների համեմատական աղյուսակները, օրինականացման գործողությունները և ճշգրտող միջոցառումները, դատական օտարման դեպքերը և ամփոփումը (ՀՕՏԾ իրականացման 6 ենթահատվածները պետք է սահմանվեն Նախնական հաշվետվությամբ՝ ԾԻԿ-ի հետ նախապես ձեռքբերված համաձայնության հիման վրա):
29. Վերջնական Ավարտական հաշվետվությունը պետք է ներառի Ծրագրի նախապատմությունը, ՀՕՏԾ իրականացման և դատական գործընթացների կարգավիճակը, ՀՕՏԾ ներքո սահմանված և փաստացի իրականացման տվյալների համեմատական աղյուսակները, աշխատանքների և արդյունքների ամփոփումը և քաղված դասերը:
30. ԻԿ-ն անմիջականորեն հաշվետվու է ԾԻԿ-ին և պետք է իրականացնի աշխատանքները ԾԻԿ-ՍՏՀԱ մասնագետների և խորհրդատվուների հետ սերտ համագործակցությամբ: ԻԿ-ն պետք է ներկայացնի հաշվետվությունները հայերենով, և միայն յուրաքանչյուր ենթահատվածի համար ՀՕՏԾ իրականացման Ավարտական հաշվետվությունները և Վերջնական Ավարտական հաշվետվությունը պետք է ներկայացվեն նաև անգլերենով: Բոլոր արդյունքները պետք է ներկայացվեն էլեկտրոնային և 2 թղթային օրինակով՝ համապատասխան ուղեկցող նամակով:
31. Գրավոր և լուսանկարային փաստաթղթերը, տեղեկանքերը, ՀՀ անունով գրանցված սեփականության վկայականները և հատակագծերը, ինչպես նաև այլ հարակից նյութերը պետք է պատճաշ փաստաթղթավորվեն և հանձնվեն ԾԻԿ-ին՝ ապահովելով նաև յուրաքանչյուրի մեկական պատճեն:

F. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՎԱԼ

ՀՕՏԾ	Ազդեցության ենթակա համայնքներ	ՀՕՏԽ իրականացման ենթահատվածներ*	Ազդեցության ենթակա հողերի քանակ**	Ազդեցության ենթակա անձանց քանակ **	ՀՕՏԾ իրականացման մեկնարկի նախնական

					ժամետ*
Թալին-Լանջիկ հատվածի ՀՕՏԾ (ԱԶԲ կողմից ֆինասնավորվող հատված)	Թալին, Մաստարա, Ակունք, Լանջիկ, Սառնաղբյուր	պետք է բաժանվի 2 ենթահատվածների	348 (218 մասնավոր հողեր, 335 ԱԵՏՏ)	845	Սեպտեմբեր 2015
Լանջիկ-Գյումրի հատվածի ՀՕՏԾ (ԵՆԲ կողմից ֆինասնավորվող հատված)	Լանջիկ, Սառնաղբյուր, Ձորակապ, Մարալիկ, Հայրենյաց, Հոռոմ, Բոնիամին, Ազատան	պետք է բաժանվի 4 ենթահատվածների	666 (308 մասնավոր հողեր, 532 ԱԵՏՏ)	1386	Հոկտեմբեր 2015
* Ենթահատվածների բաժանումը կարող է վերասահմանվել հիման վրա՝ առաջարկվող մանրամասն գործողությունների պլանի հիման վրա՝ ԾԻԿ-ի հետ համաձայնեցված կարգով: ** Ազդեցության ենթակա հողերի և անձանց վերջնական քանակը կարող է փոխվել օրինականացման և ուղղման միջոցառումների իրականացման արդյունքնում: *** Մեկնարկի վերջնական ամսաթիվը սահմանվում է ՀՕՏԾ-ները հաստատող համապատասխան կառավարության որոշումներով:					

G. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

32. Նախատեսվում է, որ ՀՕՏԾ-ների իրականացման համար ԻԿ գործունեությունը կպահանջի 18 ամիս: Այնուամենայնիվ, սա կարող է փոփոխվել՝ փաստացի գործունեության արդյունքում: ՀՕՏԾ-նորի իրականացման մեկնարկի/ավարտի և հաշվետվությունների մանրամասն ժամանակացույցերը յուրաքանչյուր ենթահատվածի համար պետք է մշակվեն և ներառվեն Նախնական հաշվետվության մեջ՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված ընդհանուր ժամանակացույցը:

Ներկայացվող արդյունքի/հաշվետվության անվանումը	**2015**			**2016**				**2017**			
	2	**Q3**	**Q4**	**Q1**	**Q2**	**Q3**	**Q4**	**Q1**	**Q2**	**Q3**	**Q4**
A. Նախնական հաշվետվություն		X									
B. Թալին-Լանջիկ հատվածի ՀՕՏԾ (ԱԶԲ հատված)											
1-ին ենթահատվածում ՀՕՏԾ իրականացման Ավարտական հաշվետվություն					X						

2-րդ ենթահատվածում ՀՕՏԾ իրականացման Ավարտական հաշվետվություն						X					
C. Լանջիկ-Գյումրի հատվածի ՀՕՏԾ (ԵՆԲ հատված)											
3-րդ ենթահատվածում ՀՕՏԾ իրականացման Ավարտական հաշվետվություն						X					
4-րդ ենթահատվածում ՀՕՏԾ իրականացման Ավարտական հաշվետվություն							X				
5-րդ ենթահատվածում ՀՕՏԾ իրականացման Ավարտական հաշվետվություն							X				
6-րդ ենթահատվածում ՀՕՏԾ իրականացման Ավարտական հաշվետվություն								X			
D. Վերջնական Ավարտական հաշվետվություն									X		
E. Շաբաթական և ամսական առաջընթացի հաշվետվություններ	*շարունակական առաջադրանք*										

ՀԱՎԵԼՎԱԾ. ԻԿ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

Ըստ սահմանված կառուցվածքի, ԻԿ հիմնական թիմի (իրականացման թիմ-ԻԹ) յուրաքանչյուր անդամ, ՀՕՏԾ-ների իրականացման գործընթացում պետք է, չսափմանափակվելով նշվածով, ապահովի հետևյալ գործառույթների իրականացումը.

<u>ԻԹ ղեկավարը</u>

i. Համակարգում է ամբողջ թիմի գործունեությունը,
ii. Համակարգողների միջոցով իրականացնում է ԻԹ անդամների միջև աշխատանքի բաժանումը,
iii. ՇԻԿ -ի հետ համաձայնեցված կարգով պլանավորում և վերահսկում է ՀՕՏԾ ողջ գործընթացը,
iv. ԻԿ կողմից ապահովում է ԻԿ և ՇԻԿ փոխգործակցությունը, գործընթացին ներգրավված տարբեր պետական, համայնքային և այլ մարմինների հետ համագործացությունը, ըստ անհրաժեշտության կազմակերպում է քննարկումներ և հանդիպումներ, ՇԻԿ-ի հանձնարարությամբ հանդես է գալիս իր անունից նշված մարմինների հետ հարաբերություններում:
v. Շաբաթական կտրվածքով ՇԻԿ-ին է ներկայացնում ամփոփ հաշվետվություն՝ ՀՕՏԾ աշխատանքների առաջընթացի վերաբերյալ, ընթացիկ ամփոփ տվյալներ, տեղեկանքներ և տեղեկություններ, իրականացված կադաստրային և նոտարական գործարքների ցանկերը՝ համապատասխան ծախսերով, բարձրացնում և քննարկում է ՀՕՏԾ իրականացման ընթացքում

հանդիպող խոչընդոտները և խնդրահարույց դեպքերը և դրանց լուծման հնարավոր մեխանիզմները,

vi. Որոշակի խմբաքանակներով (շաբաթական), հանձնման-ընդունման ակտերով ԾԻԿ-ին է հանձնում ԱԵԱ-ների հետ կնքված օտարման պայմանագրերն և լրացուցիչ փոխհատուցման համաձայնագրերը,

vii. Որոշակի խմբաքանակներով (ամսական), հանձնման-ընդունման ակտերով ԾԻԿ-ին է հանձնում օտարման պայմանագրերի հիման վրա գրանցված հողերի նոր սեփականության վկայականները ՀՀ անունով,

viii. ԻԿ անունից ԾԻԿ-ին ներկայացնում է ՏԱ-ով սահմանված ընթացիկ և փուլային հաշվետվություններ:

<u>Համագործակցողներ</u>

ix. Համակարգում են իրականացնող դաշտային թիմերի գործունեությունը:

x. Իրականացնում են դաշտային թիմերի անդամների միջև աշխատանքի բաժանումը:

xi. Յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտին ԻԹ ղեկավարին են ներկայացնում ամփոփ տեղեկություն՝ ՀՕՏԾ աշխատանքների ընթացքի վերաբերյալ, ընթացիկ ամփոփ տվյալներ, տեղեկանքներ և տեղեկություններ, իրականացված կադաստրային և նոտարական գործարքների ցանկերը՝ համապատասխան ծախսերով, վերհանում և քննարկում է ՀՕՏԾ իրականացման ընթացքում հանդիպող խոչընդոտները և խնդրահարույց դեպքերը և դրանց լուծման հնարավոր մեխանիզմները:

xii. Համակարգում են դաշտից հավաքված տվյալների, իրականացված գործողությունների ընթացքի/կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության հանձնումը տեղեկատվական բազայի մասնագետին՝ ՀՕՏԾ բազայում մուտքագրման ու մշակման համար՝ նախապես համաձայնեցված ձևաչափով:

xiii. Համակարգում են դաշտային աշխատանքներ իրականացնող թիմի և տվյալների բազայի մասնագետի միջև փոխանակվող տվյալների ամփոփումը և վերստուգումը:

xiv. Աջակցում են ԻԹ ղեկավարին իրականացնող թիմի կողմից ԾԻԿ-ին ներկայացվող հաշվետվությունների կազմմանը:

<u>Իրավախորհրդատու/ Փաստաբան</u>

xv. Իրականացնում են յուրաքանչյուր դատական գործի վարման համար հայցի նախապատրաստումը:

xvi. ՀՕՏԾ շրջանակներում ներկայացնում է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի շահերը և դրանց պաշտպանության նպատակով իրականացում է փաստաբանական գործունեություն՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, ներառյալ՝

(i) որպես ԾԻԿ-ի ներկայացուցիչ դատարաններում հանդես է գալ որպես հայցվոր և/կամ պատասխանող (որտեղ անհրաժեշտ է),

(ii) իրականացնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ և 42-րդ հոդվածներում թվարկված լիազորություններն ամբողջ ծավալով և կատարել

դատավարական բոլոր գործողություններն, այդ թվում՝ ա)ստորագրել և ներկայացնել դիմումներ, հայցադիմումներ, բ) կնքել հաշտության համաձայնություն, գ) բողոքարկել դատական ակտը, ներկայացնել վերաքննիչ բողոքներ, վերաքննիչ բողոքների պատասխաններ, ներկայացնել վճռաբեկ բողոքներ և վճռաբեկ բողոքների պատասխաններ, դ) ինչպես նաև կատարել անհրաժեշտ այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են ՀՕՏԾ պատշաճ իրականացման համար:

xvii. Կազմակերպել յուրաքանչյուր դատական գործի վարման համար լրացուցիչ փաստաթղթերի (ապացույցների) ձեռքբերումը, կազմումը և այլն:

xviii. Դատական գործերի քննության ընթացքում միջոցներ են ձեռնարկում գործի վարույթը հնարավորիս սեղմ ժամկետում ավարտելու ուղղությամբ:

xix. Ապահովում են վճիռների կատարումն և վճիռներից բխող գույքային իրավունքների պետական գրացումը:

xx. Իրականացնում են դատական հայցերի վարման շրջանակներում այլ անհրաժեշտ գործառույթներ:

xxi. ԻԹ ղեկավարին են ներկայացնում քանակական և նկարագրողական հաշվետվություններ՝ աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

<u>Իրավաբաններ-դաշտային աշխատանքներ իրականացնող մասնագետներ</u>

i. Ապահովում են ԱԵԱ-ներին պատշաճ իրավական խորհրդատվությունը ՀՕՏԾ ներքո իրենց իրավունքների, փոխհատուցումների ստացման և այլ իրավական հարցերի վերաբերյալ,

ii. Օգնում են ԱԵԱ-ներին առկա խնդիրները Բողոքների լուծման մեխանիզմի միջոցով կարգավորելու համար՝ ՀՕՏԾ Բողոքների լուծման մեխանիզմով սահմանված կարգով,

iii. Աջակցում և կազմակերպում են ԱԵԱ-ների օրինականացման (legalization), թերի փաստաթղթերի կարգավորման, կադաստրային ուղղումների գործընթացները,

iv. Իրականացնում են օտարման պայմանագրերի կնքման նպատակով անհրաժեշտ համագործակցությունը ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանումների և նոտարական գրասենյակների հետ,

v. Կազմակերպում և իրականացնում են օտարվող պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը ԱԵԱ-ների հետ, ապահովում են դրանց նոտարական կարգով վավերացումը,

vi. Աջակցում են ԱԵԱ-ներին փոխահատուցում ստանալու հարցում (ներառյալ վերականգնման օժանդակությունները),

vii. Հողերի մասնատման և միասնական տեղեկանքների ստացման հետ կապված խնդիրների դեպքում (կադաստրի կողմից դիմումների կասեցում, դադարեցում և այլն), իրականացնում են խնդիրների ուսումնասիրությունը ԾԻԿ-ի և անհրաժեշտ այլ շահագրգիռ կողմերի հետ,

viii. ,

ix. Իրականացնում են օտարման պայմանագրերի, համաձայնագրերի կնքմանը, օտարվող սեփականության նկատմամբ իրավունքների պետական գրանցմանն ուղղված ցանկացած իրավաբանական և այլ գործողություններ,

x. ապահովում են փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելու, գումարը ԱԵԱ-ների կողմից ստանալու, այդ թվում ԱԵԱ-ների համար հաշվեհամարների բացման գործընթացի ընթացքում առաջացած իրավական խնդիրների լուծումը,
xi. Աջակցում են փաստաբաններին դատական հայցերի կազմման, դատական հայցերի վարման գործընթացում,
xii. ԻԹ ղեկավարին են ներկայացնում քանակական և նկարագրողական հաշվետվություններ՝ աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

<u>Սոցիոլոգներ- դաշտային աշխատանքներ իրականացնող մասնագետները</u>

i. Ապահովում են ԱԵԱ-ների պատշաճ իրազեկման և ծանուցման գործընթացը, տարածում են ՀՕՏԾ շրջանակներում մշակված տեղեկատվական ձեռնարկներն ու նյութերը,
ii. Աջակցում են ԾԻԿ-ին նախաձեռնելու հանրային իրազեկման արշավներ ազդեցության ենթակա համայնքներին՝ վերաբնակեցման քաղաքականությանը և իրավունքների փաթեթներին տեղեկացնելու նպատակով,
iii. Իրականացնում են ԱԵԱ-ների վերաբերյալ տվյալների ամբողջական վերստուգումն ու թարմացումը բոլոր հողամասերի մասով՝ ԱԵԱ-ների հետ հանդիպումների միջոցով,
iv. Ապահովում են անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության ձեռքբերումը, ստացումը, հանձնումն ըստ պատկանելիության, դաշտից հավաքված տվյալների, իրականացված գործողությունների ընթացքի վերաբերյալ տվյալների հանձնումը բազայի մասնագետին՝ ՀՕՏԾ բազայում մուտքագրման ու մշակման համար,
v. Իրավաբանների հետ միասին օգնում են ԱԵԱ-ին առկա խնդիրները Բողոքների լուծման մեխանիզմի միջոցով կարգավորելու համար,
vi. Իրավաբանների հետ միասին իրականացնում են ՀՕՏԾ շրջանակներում օրինականացման, կադաստրային ուղղման գործընթացները՝ ապահովելով ԱԵԱ-ների պատճաշ իրազեկումն ու խորհրդատվությունը,
vii. Աջակցում են հողի սեփականատերերին ազդեցության ենթակա հողերի օտարվող մասերի սահմանված կարգով բաժանման և դրանց պետական գրանցման հարցերում, իրականացնում են նշված գործընթացի ընդհանուր կազմակերպումը, ինչպես նաև օտարվող անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքների և այլ անհրաժեշտ տեղեկատվության ստացման գործընթացը ԱԳԿ ՊԿ տարածքային ստորաբաժանման գրասենյակներում:
xiii. Հողերի մասնատման և միասնական տեղեկանքների ստացման հետ կապված խնդիրների դեպքում (կադաստրի կողմից դիմումների կասեցում, դադարեցում և այլն), իրականացնում են խնդիրների ուսումնասիրությունը ԾԻԿ-ի և անհրաժեշտ այլ շահագրգիռ կողմերի հետ,
viii. Աջակցում են ԱԵԱ-ներին օտարման պայմանագրերի/համաձայնագրերի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու, ճշգրտելու, կազմելու հարցում,
ix. Ապահովում են ԱԵԱ-ների փոխհատուցման ստացման գործընթացը:
x. Աջակցում են իրավաբաններին՝ ՀՕՏԾ շրջանակներում իրավունքի պետական գրանցման գործընթացը կազմակերպելու հարցում:

xi. ԻԹ ղեկավարին են ներկայացնում են քանակական և նկարագրողական հաշվետվություններ՝ աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

<u>Տեղեկատվության և բազաների պատասխանատու/ծրագրավորող</u>

xii. Կազմակերպում և իրականացնում է ՀՕՏԾ բազայի (MS SQL) շարունական ծրագրային զարգացումը՝ (բազայի արխիվացման հնարավորություն, տարբեր մակարդակների մուտքերի ծրագրավորում, նոր փոփոխականների ներմուծում, նոր հարցումների և հաշվետվությունների ստացում և այլն) ՀՕՏԾ իրականացման յուրաքանչյուր փուլի պահանջների համաձայն՝ ԾԻԿ մասնագետների հետ քննարկման և համաձայնեցման միջոցով,

xiii. Ապահովում է ՀՕՏԾ տվյալների բազայում առկա տեղեկատվության ստուգումը յուրաքանչյուր ԱԵԱ-ի համար կազմված թղթային հաշվետվությունների (նկարագրության արձանագրություն, գնահատման հավետվություն, հարակից փաստաթղթեր/ակտեր/տեղեկանքներ) փաթեթների տվյալների հետ՝ ապահովելով վերստուգված տվյալների, ինչպես նաև իրականացման գործընթացի տարբեր փուլերի ընթացքի վերաբերյալ տվյալների մուտքագրումն ու թարմացումը բազայում,

xiv. Ապահովում է ԱԵԱ-ների վերաբերյալ ՀՕՏԾ ներքո հավաքագրված տվյալների (օտարման պայմաններ, փոխհատուցման տվյալներ և այլն) տրամադրումը ԻԹ մյուս մասնագետներին՝ վերստուգելու, թարմացնելու և կիրառելու նպատակով,

xv. Ապահովում է հանրային իրազեկման արշավների համար նախատեսված տեղեկատվական նյութերի կազմումն ու ստացումը բազայում առկա տվյալների հիման վրա՝ նախապես ԾԻԿ-ի հետ համաձայնեցված ձևաչափով,

xvi. Ապահովում է ՀՕՏԾ իրականացման տարբեր փուլերում ԱԵԱ-ների ծանուցման նամակների/նյութերի, օտարման պայմանագրերի/համաձայնագրերի ծրագրային ստացումը բազայում առկա տվյալների հիման վրա՝ԾԻԿ-ի կողմից նախապես սահմանված ձևաչափով ,

xvii. ԻԹ մասնագետների, ԾԻԿ մասնագետների և խորհրդատուների պահանջով կազմում և տրամադրում է ԱԵԱ-ների տվյալների, ՀՕՏԾ իրականցման ընթացքի վերաբերյալ տեղեկատվական ամփոփ նյութեր, տվյալներ, մոնիթորինգի քանակական աղյուսակներ բազայի բազայում առկա տվյալների հիման վրա՝ԾԻԿ-ի կողմից սահմանված ձևաչափով,

xviii. Նախապես ԾԻԿ-ի հետ համաձայնեցնելով սահմանում և կազմակերպում է ՀՕՏԾ բազայի օգտագործման հնարավորության մակարդակները (user's access) ՀՕՏԾ իրականացման գործընթացում ներգրավված տարբեր մասնագետների/խորհրդատուների կողմից՝ ապահովելով նրանց պատշաճ ուսուցումը/վերապատրաստումը,

xix. ՀՕՏԾ իրականացման ավարտին ապահովում է ՀՕՏԾ իրականացման ընթացքի և արդյունքերի վերաբերյալ մոնիթորինգի ամփոփ տվյալների, քանակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության ստացումը, աջակցում է ԾԻԿ մասնագետներին և արտաքին մոնիթորինգի գործակալության մասնագետներին՝ ստանալ պահանջվող մոնիթորինգի տվյալները բազայի միջոցով,

xx. ԻԹ ղեկավարին ներկայացնում է սույն ՏԱ-ով սահմանված ընթացիկ քանակական հաշվետվություններ:

xxi. Ապահովում է բազայի Web-based օգտագործումը՝ ԾԻԿ ինֆորմացիոն տեխնոլոգիաների մասնագետի հետ համաձայնեցված կարգով,

xxii. ԾԻԿ-ին և ԻԹ ղեկավարին ներկայացնում է առաջարկներ տվյալների բազայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ այն ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԱՐՏԱՔԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՎԱՐԿ 2993 - ԹԱԼԻՆ ԵՎ ԼԱՆՋԻԿ-ԳՅՈՒՄՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

1. Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) համաձայնել է Հայաստանի կառավարությանը տրամադրել 180 մլն ԱՄՆ դոլար Բազմափուլ ֆինանսավորման գործիքը՝ Հյուսիս – Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը (Ծրագիր) ֆինանսավորելու համար: Հյուսիս – Հարավ ճանապարհային միջանցքը ձգվում է 556 կմ՝ սկիզբ առնելով Վրաստանին սահմանակից Բավրայից ու շարունակվելով դեպի Գյումրի, Աշտարակ, Երեւան, Գորիս եւ Կապան ու ավարտվում Իրանի հետ սահմանակից Մեղրիում: Բացառությամբ Մ-1 (Երեւան-Աշտարակ) եւ Մ-2 (Երեւան-Արարատ) հատվածների, որոնք չորս գոտիանոց մայրուղիներ են՝ ավտոճանապարհն ամբողջ երկայնքով երկգոտի է: Տրանշ 3՝ Թալին-Գյումրի, ներառում է առկա ավտոճանապարհի վերականգնում եւ լայնացում՝ երկու գոտի ունեցող ավտոճանապարհից վերածելով այն չորս գոտի ունեցող միջազգային չափանիշներին համապատասխան արագընթաց մայրուղու: Տրանսպորտի եւ կապի նախարարությունը (ՏԿՆ) հանդիսանում է ԲՖԳ-ի Իրականացնող կազմակերպություն (ԻԿ): Տրանշ 3-ի՝ Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) մասը ներառում է Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի վերականգնում եւ տեխնիկական վերահսկողություն: Լանջիկ-Գյումրի հատվածի վերականգնումը եւ տեխնիկական վերահսկողությունը ֆինանսավորվում է Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) կողմից տրամադրված վարկային միջոցներով: Սույն տեխնիկական առաջադրանքն առնչվում է ԱԶԲ ծրագրին (Թալին-Լանջիկ):

2. Տրանշ 3-ով նախատեսված շինարարական աշխատանքները պահանջում են էական հողերի օտարում եւ տարաբնակեցում (ՀՕՏ), որը կենթադրի 200 կամ ավելի ազդեցության ենթարկված անձինք (ԱԵԱ), ովքեր, համաձայն ԱԶԲ ուղեցույցների, կդասակարգվեն իբրեւ խիստ ազդեցության ենթակա եւ հետեւաբար կդասվեն «Ա Խմբին»: ՏԿՆ-ի կողմից պատրաստվել է Հողի օտարման եւ տարաբնակեցման շրջանակի (ՀՕՏՇ) լրամշակված տարբերակը: ՀՕՏՇ-ի վրա հիմնվելով՝ Տրանշ 3-ի համար մշակվել է Հողի օտարման եւ տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) նախագիծը: Հետեւելով ՀՕՏՇ-ի՝ սույն ԲՖԳ–ի համար վերանայված տարբերակին ու ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի (2009) պահանջներին եւ հիմք ընդունելով մանրամասն նախագիծը՝ 2 վերջնական ՀՕՏԾ-եր կպատրաստվեն Թալին-Լանջիկ եւ Լանջիկ-Գյումրի հատվածների համար:

3. ՀՕՏՇ-ը նախատեսում է հողի օտարման եւ տարաբնակեցման գործընթացի արտաքին մոնիթորինգի իրականացում Արտաքին մոնիթորինգի գործակալության (ԱՄԳ) կողմից ՀՕՏ նպատակների իրականացումը գնահատելու եւ մոնիթորինգի ու գնահատման ընթացքում հայտնաբերված ՀՕՏ խնդիրների (առկայության պարագայում) վերաբերյալ ԾԻԿ-ին խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

4. Այս առումով, ԻԿ-ը, համաձայն ԱԶԲ ուղենիշների, կներգրավի մոնիթորինգի եւ գնահատման ոլորտում մասնագիտացած փորձառու Ազգային խորհրդատվական հաստատություն կամ փորձառու Հասարակական կազմակերպություն:

Բ. ՆՊԱՏԱԿՆԵՐ

5. ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի եւ ՀՕՏՇ-ի պահանջ է հանդիսանում պարտադրված վերաբնակեցման առումով էական ազդեցություններ ենթադրող յուրաքանչյուր ՀՕՏԾ-ի իրականացմանը զուգահեռ արտաքին մոնիթորինգի ապահովումը: Արտաքին մոնիթորինգի հիմնական նպատակն է ստուգել ԾԻԿԿ-ի կողմից տրամադրված՝ մոնիթորինգին առնչվող տեղեկատվությունը եւ տրամադրել խորհրդատվություն, ինչպես նաեւ գնահատել ՀՕՏԾ-ի գործընթացների համապատասխանությունը, արդյունավետությունն ու ազդեցությունը եւ առաջարկել ցանկացած ուղղիչ միջոցառումներ՝ անհրաժեշտության դեպքում: ԱՄԳ-ը կդիտանցի ու կստուգի ՀՕՏԾ-ի իրականացումը՝ որոշելու համար՝ արդյոք հասել են հիմնական նպատակներին, հատկապես, բարեկեցության եւ կենսամակարդակի չափանիշները բարելավվել են կամ նվազագույնը վերականգնվել են, թե ոչ: Եթե ԱՄԳ-ն հայտնաբերի համապատասխանության հետ կապված էական խնդիրներ, ԾԻԿԿ-ը կմշակի Ճշգրտող միջոցառումների ծրագիր: ԱՄԳ-ի նպատակներն են՝

ա) ստուգել, որ տարաբնակեցումն իրականացվել է համաձայն հաստատված ՀՕՏՇ-ի եւ ՀՕՏԾ-երի,

բ) դիտանցել ու ստուգել ժամանակացույցերը եւ նպատակներին հասնելը, որոնք վերաբերում են հողի օտարման ու տարաբնակեցման գործողություններին,

գ) գնահատել՝ արդյոք ԱԵԱ-ները/ԱԵՏՏ-ները կարողացել են առնվազն վերականգնել իրենց բարեկեցությունը եւ կենսամակարդակը,

դ) վերանայել ծրագրի ազդեցությունները խոցելի խմբերի վրա եւ գնահատել ընդունված շտկող միջոցառումների արդյունավետությունը,

ե) գնահատել տարաբնակեցման համապատասխանությունը, արդյունավետությունը եւ ազդեցությունը քաղաքականության ու պրակտիկայի վրա եւ անհրաժեշտության դեպքում առաջարկել ցանկացած ուղղիչ միջոցառումներ:

ԱՄԳ աշխատանքների շրջանակում նաեւ կներառվեն շինհրապարակի պայմանների դիտարկումը, փոխհատուցումը, վճարումները եւ բողոքների բավարարման ընթացակարգերը եւ արդյունքները:

6. Համաձայն ՀՕՏՇ-ի եւ ՀՕՏԾ-երի՝ արտաքին մոնիթորինգի առջեւ դրված են երկու հիմնական խնդիրներ՝ ***կարճաժամկետ եւ երկարաժամկետ ուսումնասիրությունների իրականացում***: **Կարճաժամկետ ուսումնասիրության** նպատակը ՀՕՏԾ-երի իրականացման համապատասխանության վերաբերյալ ուսումնասիրության իրականացումն է եւ Թալին-Լանջիկ ու Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածներից յուրաքանչյուրի համար (ընդհանուր թվով 6 ենթահատվածներ) Համապատասխանության հաշվետվության պատրաստումը: Ի լրումն՝ վերջնական համապատասխանության հաշվետվությունը հանդիսանում է Տրանշ 3-ի շինարարական աշխատանքների մեկնարկման նախապայման: Համապատասխանաբար, զեկույցները պետք է պատրաստվեն բարձր որակով եւ ժամանակին՝ խուսափելու շինարարական աշխատանքների ցանկացած հետաձգումներից: Համապատասխանության հաշվետվությունում ընդգրկված են հետեւյալ կետերը՝

ա) ԱԵՏՏ եւ ԱԵԱ թվի ստուգում,

բ) Արձանագրություններում ներառված ազդեցությունների նկարագրությունների՝ իրական ազդեցություններին համապատասխանության ստուգում,

գ) Պայմանագրերում եւ համաձայնագրերում տեղ գտած միավոր փոխհատուցման չափի՝ ՀՕՏԾ-երի դրույթների հետ համապատասխանության ստուգում,
դ) Բոլոր ԱԵՏՏ-երին փոխհատուցում տրամադրելու փաստի եւ փոխհատուցված գումարի՝ պայմանագրերում եւ համաձայնագրերում նշված չափի հետ համապատասխանության ստուգում,
ե) Փոխհատուցման գործընթացի՝ ՀՕՏԾ դրույթներին եւ արդյունավետության չափորոշիչների համեմատ իրականացման/պլանավորման եղանակի գնահատում,
զ) Բողոքարկման գործերի ուսումնասիրություն, ներառյալ բողոքների լուծման՝ ՀՕՏԾ-երի դրույթների հետ համապատասխանության եւ ԱԵԱ-ների գոհունակության գնահատում,
է) Փոխհատուցումներից եւ ՀՕՏ ընթացակարգերից ԱԵԱ գոհունակության գնահատում,
ը) Դատական կարգով օտարման գործերի իրականացման եւ ավարտման գնահատում,
թ) Հանրային քննարկումների, տեղեկատվության տարածման եւ ԻԿ-ԱԵԱ հաղորդակցության իրականացման գնահատում,
ժ) Խիստ ազդեցության ենթարկված, խոցելի եւ վերաբնակեցված ԱԵԱ-ներին նպաստների տրամադրման գնահատում,
ի) Ինստիտուցիոնալ կարգավորումների եւ Ծրագրի կառավարման գնահատում,
լ) Առկայության դեպքում՝ բացակաների՝ նրանց թվի, բնակության վայրի (եթե հայտնի է) եւ այլ համապատասխան տեղեկատվության ուսումնասիրություն:

Համապատասխանության հաշվետվությունը կներառի նաեւ ՀՕՏԾ-երի պատշաճ կամ ոչ պատշաճ իրականացման վերջնական գնահատումը: Եթե ՀՕՏԾ-երի իրականացումը բավարար չէ, համապատասխանության ուսումնասիրությունը մանրամասն կներկայացնի անհրաժեշտ ճշգրտող միջոցառումները:

7. **Երկարաժամկետ ուսումնասիրությունը** պետք է իրականացվի ՀՕՏԾ-երի իրականացման ավարտից մեկ տարի անց՝ պարզելու՝ արդյոք ՀՕՏԾ-երի առջեւ դրված վերականգնման նպատակներն իրագործվել են, թե ոչ: Այս նպատակից ելնելով՝ ԱՄԳ-ը կիրականացնի ԱԵԱ-ների՝ մինչ ՀՕՏԾ սոցիալ-տնտեսական իրավիճակին առնչվող ելակետային ուսումնասիրություն՝ միտված վերջնական ազդեցության գնահատման համար չափանիշների տրամադրմանը, որի ընթացքում ԱԵԱ-ների նախածրագրային եւ հետծրագրային պայմանները կհամեմատվեն: Երկարաժամկետ մոնիթորինգի եւ գնահատման ընթացքում կուսումնասիրվեն հետեւյալ հատուկ նպատակները՝
   - Հետ-վերաբնակեցման շրջանում ԱԵԱ-ների սոցիալ-տնտեսական պայմանները
   - ԱԵԱ-ների տնտեսական եւ սոցիալական հենքի վերականգնման աստիճանը
   - Յուրաքանչյուր խմբին նպաստների՝ (փոխհատուցում եւ վերականգնողական միջոցառումներ) որակով եւ ժամանակին տրամադրման գնահատում, ինչպես են նպաստներն օգտագործվել եւ նրանց ազդեցությունը եւ համարժեքությունը ՀՕՏԾ-երի որոշարկված նպատակներին հասնելու առումով
   - ԱԵԱ-ների կենսամակարդակի եւ բարեկեցության փոփոխություն
   - Խորհրդատվության եւ վեճերի լուծման գործընթացների արդյունավետություն
   - Նպաստների երկարաժամկետ արդյունավետությունը, ազդեցությունը եւ շարունակականությունը
   - Հետագա ուղղիչ միջոցառումների անհրաժեշտություն եւ քաղված դասեր

Գ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐՋԱՆԱԿԸ

8. ԱՄԳ-ը ներգրավված կլինի ԻԿ-ի կողմից տարաբնակեցման միջոցառումների ընթացիկ մոնիթորինգի գործընթացում: ԱՄԳ-ի հիմնական հանձնարարությունները հետեյալն են՝

- Մշակել մոնիթորինգի հատուկ ցուցանիշներ՝ ՀՕՏԾ-երի մոնիթորինգի ու գնահատման շրջանակներին համապատասխան
- Դիտանցել հողի օտարման եւ տարաբնակեցման գործողությունների առաջընթացը՝ համեմատելով դրանք նախատեսվող կատարողականի ցուցանիշների հետ
- Ստուգել բողոքները դաշտում պատահական ստուգումների միջոցով՝ գնահատելու համար, արդյոք տարաբնակեցման նպատակներն ընդհանուր առմամբ պահպանված են, թե ոչ
- Որոշել տարաբնակեցման նպատակների եւ մոտեցումների ուժեղ ու թույլ կողմերը եւ իրականացման ռազմավարությունները
- Վերանայել եւ ստուգել Տրանշ 3-ի ՀՕՏԾ իրականացումն ընտրանքային հիմունքներով եւ պատրաստել հաշվետվություններ՝ ԻԿ-ի ու ԱՋԲ-ի հայտերի հիման վրա
- Գնահատել ԱԵԱ-ներին տրվող փոխհատուցման համապատասխանությունը, ինչպես նաեւ ծրագրում ներառված փոփոխություններով պայմանավորված բարեկեցության հնարավորություններն ու եկամուտները եւ ԱԵԱ/ԱԵՏՏ-ների կյանքի որակը
- Գնահատել ԱԵԱ-ների հետ խորհրդատվական գործընթացի համապատասխանությունը եւ արդյունավետությունը, մասնավորապես, որոնք վերաբերում են խոցելի խմբերին, ներառյալ՝ բողոքների ընթացակարգերի եւ դրանց իրավական բավարարման համապատասխանությունը եւ արդյունավետությունը, որոնք հասանելի են ազդառու կողմերին եւ այդ ամենի վերաբերյալ տեղեկատվության տարածումը:

Դ. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

9. ՀՕՏԾ-ի առաջընթացի մոնիթորինգն ու գնահատումը՝ համեմատելով այն նախատեսված իրականացման ցուցանիշների հետ, հիմնված կլինի առաջնային աղբյուրներից ստացված տվյալների վրա: ԱՄԳ-ը կօգտագործի դաշտային այցերը եւ հարցազրույցները՝ ԱԵԱ/ԱԵՏՏ-ների ընտրանքային ցանկի օգտագործմամբ: Տրանշ 3-ի ՀՕՏԾ-ի իրականացման եւ իրականացումից հետո գործունեության մոնիթորինգի եւ գնահատման համար առաջարկվում են օգտագործել հետեյալ մեթոդաբանությունները եւ մեթոդները՝

- Ծրագրի համապատասխան փաստաթղթերի ստուգում
- Տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություններ (դեմառդեմ հարցազրույցներ)
- Մասնակցային արագ գնահատում (թիրախային խմբեր, համայնքային հարցազրույցներ, զրուցային ազատ հարցազրույցներ, առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներ)

10. ԱՄԳ մոնիթորինգը բաժանվում է երկու փուլի՝ կարճաժամկետ եւ երկարաժամկետ մոնիթորինգ: Կարճաժամկետ մոնիթորինգ Համապատասխանության հաշվետվության միջոցով. կարճաժամկետ մոնիթորինգի համար ԱՄԳ-ն պետք է իրականացնի հետեյալը՝

- Ուսումնասիրել ԻԿ-ի կողմից պատրաստված Ներքին մոնիթորինգի հաշվետվությունները եւ այլ համապատասխան փաստաթղթեր (ՀՕՏԾ-եր, ՀՕՏՇ, նկարագրական արձանագրություններ, գնահատման զեկույցներ, պայմանագրեր եւ համաձայնագրեր, վճարման արձանագրություններ եւ ստացականներ, եւ այլն)՝ բոլոր ԱԵՏՏ-երին փոխհատուցումն ապահովելու նպատակով: ԱՄԳ-ը պետք է տեղում ուսումնասիրի եւ ստուգի ԻԿ-ի կողմից նախապատրաստած հաշվետվությունների արդյունքները;

Վերանայումը պետք է ներառի վճարման/փոխհատուցման արձանագրությունների պատահական ստուգումը:

- Վերանայել փոխհատուցման գործընթացի համապատասխանությունը՝ հաստատված ՀՕՏՇ-ում եւ ՀՕՏԾ-երում առկա սկզբունքների, ընթացակարգերի եւ մոտեցումների հետ: ԱՄԳ-ը պետք է ստուգի, թե արդյոք գնահատումը, խորհրդատվությունը, հրապարակումը, վճարումները եւ հարակից գործընթացները կատարվում են հաստատված ՀՕՏՇ-ի եւ ՀՕՏԾ-երի համաձայն:
- ՀՕՏԾ-երի Վերջնական համապատասխանության հաշվետվության նախապատրաստում (3 համապատասխանության զեկույցներ Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի համար եւ 3 համապատասխանության զեկույցներ Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի համար), որոնք ցույց կտան, թե որքանով է ՀՕՏԾ-երին հաջողվել իրականացնել իրենց նպատակները: Վերջնական համապատասխանության հաշվետվությունները պետք է օգտագործվեն որպես հիմք՝ Տրանշ 3-ի ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների մեկնարկման համար: Որպես Վերջնական համապատասխանության հաշվետվության մաս՝ ԱՄԳ-ն կիրականացնի ազդեցության ենթակա խոցելի այնպիսի խմբերի, ինչպիսիք են կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների, հաշմանդամների/տարեցների, աղքատության շեմից ցածր ընտանիքների կարգավիճակի գնահատում:

Այս փուլում կօգտագործվեն տվյալների հավաքագրման հետեւյալ մեթոդները/հետազոտությունները ՝

ա. Գրասենյակային վերանայում և ստուգում

- Պետք է ստուգվի Տրանշ 3-ի համար ԱԵԱ-ների փաթեթի նվազագույնը 30%-ի չափով ամբողջականության առկայությունն ԻԿ-ում
- Բոլոր վճարումների/փոխհատուցումների արձանագրությունները/ստացականները՝ երաշխավորելու, որ փոխհատուցում տրվել է բոլոր ԱԵՏՏ-երին
- ԱԵԱ-ների պայմանագրերի եւ համաձայնագրերի նվազագույնը 30%-ը՝ համեմատելով դրանք օգտագործված փոխհատուցման միավոր չափի, փոխհատուցված գումարի եւ այլ մանրամասների՝ հետ՝ ի համեմատ ՀՕՏԾ-երի

բ. Համապատասխանության ուսումնասիրության հետազոտություն (ՀՈւՀ)

- Հաստատել Ստուգման հետազոտության տեղեկատվությունը եւ ստացված տվյալները տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունների միջոցով
- Ապահովել փոխհատուցման՝ ՀՕՏԾ-երի նպաստների եւ միավոր չափերին համապատասխան տրամադրումը
- Գնահատել ԱԵԱ-ների՝ ՀՕՏԾ-երի նպաստներից եւ ընթացակարգերից գոհունակությունը

ՀՈւՀ-ը կիրականացվի՝ օգտագործելով դեմառդեմ հարցազրույցի մեթոդը: ՀՈւՀ ընտրանքը հիմնված կլինի ստուգման ուսումնասիրության արդյունքում ստուգված ԱԵԱ-ների մարդահամարի տվյալների վրա: Պատահական ընտրության սկզբունքով բազմաստիճան ընտրանքի կազմման կանոնները կօգտագործվեն ապահովելու համար վիճակագրական առումով ներկայացուցչական

ընտրանք: Խիստ ազդեցության ենթարկված, վերաբնակեցված եւ խոցելի ԱԵԱ-ները պետք է ներկայացված լինեն ընտրանքում:

գ. Մասնակցային արագ գնահատում (ՄԱԳ)

ՄԱԳ-ը քանակական գործիք է, որը շատ օգտակար է հասկանալու համար ՀՕՏ այնպիսի խնդիրների եւ ընթացակարգերի վերաբերյալ ԱԵԱ-ների մոտեցումները եւ ընկալումները, ինչպիսիք են կենսամակարդակի վերականգնումը, վեճերի լուծման մեխանիզմները, դատական կարգով օտարման ընթացակարգերը եւ այլն: Օգտակար է հասկանալ առանձին այնպիսի ԱԵԱ-ների խմբերի կարիքները, ինչպիսիք են տեղափոխված ԱԵԱ-ները, խոցելի, խիստ ազդեցության ենթարկվածները եւ վստահ լինելու՝ արդյոք նրանց կենսամակարդակը վերականգնվել կամ բարելավվել է, թե ոչ: Հիմնական տեղեկություն տվողի հետ հարցազրույցների եւ/կամ թիրախային խմբերի ձեւաչափով քննարկումների մեթոդները կարող են օգտագործվել ՄԱԳ ընթացքում: Նրանք կարող են ԱՄԳ-ին օգնել հասկանալու ՀՕՏԾ-երի իրականացման ընդհանուր գործընթացը, հիմնական ժամանակամիջոցը, ներգրավված ինստիտուտները եւ այդ գործընթացում ծագած խնդիրները:

Ի լրումն՝ հիմնական տեղեկություն տվողի հետ հարցազրույցները պետք է իրականացվեն բոլոր համապատասխան շահառուների հետ (ԻԿ անձնակազմ, տեղական իշխանության պաշտոնյաներ, համայնքի ղեկավարներ եւ այլն)՝ գնահատելու ՀՕՏԾ-երի իրականացման ինստիտուցիոնալ միջոցառումների նպատակահարմարությունը եւ գործընթացում ներգրավված յուրաքանչյուր կողմի արդյունավետությունը:

11. **Երկարաժամկետ մոնիթորինգ.** Երկարաժամկետ մոնիթորինգի նպատակն է գնահատել՝ արդյոք Տրանշ 3-ի ՀՕՏԾ-երի նպատակները իրագործվել են, թե ոչ: Այս նպատակով կիրականացվի ԱԵՏՏ-երի սոցիալ-տնտեսական պայմանների նախա/ետ-գնահատումներ: Նրանց թվում կլինի ելակետային հետազոտությունը, որով կիրականացվի ազդեցության գնահատում (այսուհետ՝ Ազդեցության գնահատում) մինչ ՀՕՏԾ իրականացման եւ հետ-իրականացման վերաբերյալ: Թիրախային խմբերի հետ քննարկումները, զրույցի բնույթ ունեցող եւ բաց հարցեր ընդգրկող հարցազրույցները եւ այլ որակական տվյալներ հավաքելու մեթոդները նույնպես կօգտագործվեն երկարաժամկետ մոնիթորինգի ժամանակ՝ լրացնելու քանակական ելակետային եւ ազդեցության հետազոտությունները:

ա. Ելակետային հետազոտություն. ԱՄԳ-ը կիրականացնի ընտրանքային ելակետային հետազոտություն ԻԿ-ին/ Տրանշ 3-ի համար Մանրամասն նախագծման խորհրդատուին հասանելի սոցիալ-տնտեսական ու մարդահամարի տվյալների վավերականությունը հաստատելուց հետո: Համոզվելու համար, որ տվյալները հավաքվել են նախնական ծրագրին համապատասխան եւ հասանելի են մոնիթորինգի համար՝ ելակետային հետազոտությունը պետք է իրականացվի նախքան ՀՕՏԾ-երի իրականացումը՝ որոշելու համար ԱԵՏՏ-ների կենսամակարդակի կարգավիճակը: Հետազոտությունը կիրականացվի ԱԵՏՏ անդամների հետ դեմառդեմ հարցազրույցների միջոցով՝ հիմնված հարցաշարերի վրա: Հարցաշարը պետք է մշակվի՝ անդրադառնալու հետեւյալ հարցերին՝

- ԱԵՏՏ-երի սոցիալ-ժողովրդագրական եւ սոցիալ-տնտեսական բնութագրերը
- ԱԵՏՏ-երի եկամուտը եւ ծախսերը
- Բնակարանային պայմանները

- Ծառայությունների հասանելիությունը
- Հողերի օգտագործում եւ գյուղատնտեսական գործունեություն
- Զբաղվածություն եւ բիզնես
- Կենսամակարդակի ապահովման ռազմավարություն եւ ակնկալիքներ

Ընտրանքային ելակետային հետազոտությունը կիրականացվի ԱԵՏՏ-երի ներկայացուցչական ընտրանքի միջոցով՝ հիմնված ըստ գենդերային, խոցելիության եւ ազդեցության աստիճանի տարանջատված մարդահամարի ցանկի վրա: Հետազոտությունը պետք է ներառի Տրանշ 3-ի ազդառու բոլոր համայնքները: Ելակետային եւ ազդեցության գնահատման հետազոտությունների նպատակով ընտրանքի կազմման ընթացակարգերը պետք է լինեն հետեւողական՝ ապահովելու համար ընտրանքների համադրելիությունը:.
Ելակետային հետազոտության իրականացման եւ արդյունքներին առնչվող տեղեկատվությունը կներկայացվի համապատասխան ՀՕՏԾ Ելակետային հետազոտության հաշվետվություններում եւ Ազդեցության գնահատման հաշվետվություններում:

բ. Ազդեցության գնահատում. ՀՕՏԾ-երի իրականացման ավարտից մոտ մեկ տարի հետո պետք է կատարվի ետ-իրականացման գնահատում՝ պարզելու, թե արդյոք ՀՕՏԾ-երի նպատակներն իրագործվել են, թե ոչ: Ետ-իրականացման ուսումնասիրությունը գնահատելու է հետեւյալը՝

- Վճարումների տրամադրման արդյունավետություն (փոխհատուցումներ եւ վերականգնման միջոցներ) եւ նրանց ազդեցությունն ԱԵԱ-երի կենսամակարդակի վրա: Գնահատումը կդիտարկի հնարավոր տարբերակված ազդեցությունները կամ օգուտները, որոնք տղամարդ կամ կին ԱԵԱ-երը կրել են տարաբնակեցման գործողությունների արդյունքում:
- ԱԵԱ-երի գոհունակության գնահատում՝ ակտիվների եւ իրավունքների, վճարումների ժամկետների, ֆինանսավորման առկայության եւ փոխհատուցման հիման վրա:
- ՀՕՏԾ-երի իրականացման արդյունավետություն՝ ապագայում ՀՕՏԾ-երի պլանավորման եւ իրականացման նպատակով դասեր քաղելու առումով:

Ի լրումն քանակական հետազոտությունների՝ (մինչ եւ ետ ՀՕՏԾ-եր)՝ որակական բաց հարցեր պարունակող անհատական եւ խմբակային հարցազրույցի մեթոդները եւս կօգտագործվեն երկարաժամկետ ուսումնասիրության ընթացքում: Ֆոկուս խմբերի հետ քննարկումները կիրականացվեն բոլոր համայնքներում՝ լրացնելու քանակական հետազոտության արդյունքները: Յուրաքանչյուր ֆոկուս խմբային քննարկումներին կմասնակցի 10 ԱԵԱ: Այն համայնքներում, որտեղ չեն լինի բավարար թվով ԱԵԱ-ներ ֆոկուս խմբի հարցազրույցների համար, անհատական որակական հարցազրույցներ կիրականացվեն: Ֆոկուս խմբերը կօգնեն գնահատել ԱԵԱ-ների արձագանքները եւ գոհունակությունը վճարումների, փոխհատուցումների, այլընտրանքային զարգացումների եւ տեղաբնակեցման ժամանակացույցի մասով:

Եթե հետազոտության արդյունքը ցույց տվեց, որ ՀՕՏԾ-երի նպատակները չեն իրագործվել, ԱՄԳ-ն ԱԵԱ-երին կառաջարկի համապատասխան լրացուցիչ աջակցություն:

Ե. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

12. ԱՄԳ-ն պետք է հաշվետու լինի ԻԿ-ին եւ սերտորեն համագործակցի ԻԿ-ի սոցիալական երաշխիքների մասնագետների հետ: ԻԿ-ը կդիտարկի մոնիթորինգային հաշվետվությունները եւ

կիսամյակային կտրվածքով կներկայացնի ԱԶԲ: Առաջադրանքն իրականացվելու է ընդհատումներով՝ հետեւելով Տրանշ 3-ում ՀՕՏԾ-երի նախապատրաստման եւ իրականացման առաջընթացին:

Զ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

13. Ակնկալվում է, որ ԱՄԳ-ն պատրաստելու եւ ԻԿ-ին տրամադրելու է հետեւյալ նյութերը՝

- Նախնական հաշվետվություն եւ մանրամասն Աշխատանքային պլան՝ ներառյալ բոլոր հետազոտությունների վերջնական մեթոդաբանությունը, նախագծի ձեւաչափերը (տարբեր արդյունքներին համապատասխան, ինչպիսիք են՝ հարցաթերթիկներ, ուղեցույցեր եւ այլն) եւ տարբեր հաշվետվությունների համար պլանների նախնական տարբերակներ (այդ թվում Ելակետային հետազոտության հաշվետվություն, ՀՕՏԾ-երի Վերջնական համապատասխանության հաշվետվություններ, Ազդեցության գնահատման հաշվետվություններ, Վերջնական հաշվետվություն) պայմանագրի կնքումից 1 ամիս հետո
- Ելակետային հետազոտության հաշվետվություն
- ՀՕՏԾ Համապատասխանության վեց հաշվետվություն
- Ազդեցության գնահատման երկու հաշվետվություն
- Հանձնարարության ավարտից հետո իրականացված գործողությունների մասին Վերջնական հաշվետվություն

14. Նյութերի հանձնման նախնական ժամանակացույցը ներկայացված է ստորեւ բերված աղյուսակում (Նյութերի հանձնման ժամանակացույցը կարող է փոփոխվել՝ Տրանշ 3-ի համար ՀՕՏԾ-երի նախապատրաստման եւ իրականացման առաջընթացից կախված):

Հաշվետվության անվանումը	2015			2016				2017	
	Q2	Q3	Q4	Q1	Q2	Q3	Q4	Q2	Q3
Նախնական հաշվետվություն եւ աշխատանքային պլան	X								
Ելակետային հետազոտության հաշվետվություն	X								
ՀՕՏԾ 1-ին համապատասխանության հաշվետվություն		X							
ՀՕՏԾ 2-րդ համապատասխանության հաշվետվություն		X							
ՀՕՏԾ 3-րդ համապատասխանության հաշվետվություն			X						
ՀՕՏԾ 4-րդ համապատասխանության հաշվետվություն			X						
ՀՕՏԾ 5-րդ համապատասխանության հաշվետվություն				X					
ՀՕՏԾ 6-րդ ՀՕՏԾ 6-րդ համապատասխանության հաշվետվություն					X				
Ազդեցության գնահատման երկու հաշվետվություններ								X	

Հաշվետվության անվանումը	2015			2016				2017	
	Q2	Q3	Q4	Q1	Q2	Q3	Q4	Q2	Q3
Վերջնական հաշվետվություն									X

15. ԱՄԳ-ն պետք է նյութերը ներկայացնի հայերեն եւ անգլերեն լեզուներով եւ 3 թղթային տարբերակով՝ ուղեկցող նամակով: Մոնիթորինգի հաշվետվության մի շարք ուղենիշներ ներառված են սույն Տեխնիկական առաջադրանքում:

Է. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԹԻՄԻ ԿԱԶՄԸ

16. Խորհրդատուն պետք է ունենա զարգացման ծրագրերի համար ՀՕՏԾ-երի արտաքին մոնիթորինգի փորձ: ԱԶԲ սոցիալական պաշտպանության քաղաքականությանը (2009) եւ ՀՕՏ-ին վերաբերող ՀՀ օրենքներին եւ կանոնակարգերին ծանոթ լինելը համարվում է առավելություն:
17. Խորհրդատուն պետք է ձեւավորի մասնագիտական թիմ՝ կազմված ընթացիկ հանձնարարությունն իրականացնելու համար իրավասու փորձագետներից: Թիմը պետք է բաղկացած լինի առնվազն հետեւյալ փորձագետներից՝
    - Թիմի ղեկավար/սոցիալական զարգացման մասնագետ (պարբերական զբաղվածությամբ, 6 մարդ-ամիս): Նա պետք է ունենա բակալավրի աստիճան հասարակագիտության, տնտեսագիտության, վիճակագրության, ֆինանսների կամ հարակից ոլորտներում նախընտրելի 8 տարվա համապատասխան փորձով: Նա պետք է ղեկավարի թիմը եւ պատասխանատու լինի բոլոր առաջադրանքների համար:
    - Մոնիթորինգի եւ գնահատման մասնագետ (պարբերական զբաղվածությամբ, 9 մարդ-ամիս): Նա պետք է ունենա բակալավրի աստիճան հասարակագիտության, մաթեմատիկայի, վիճակագրության, ֆինանսների կամ հարակից ոլորտներում նախընտրելի 5 տարվա համապատասխան փորձով: Նա պատասխանատու է լինելու 9, 11 կետերում նշված մոնիթորինգի եւ գնահատման աշխատանքների համար:
    - Սոցիոլոգ/տարաբնակեցման մասնագետ (պարբերական զբաղվածությամբ, 4.5 մարդ-ամիս): Նա պետք է ունենա բակալավրի աստիճան հասարակագիտության կամ կիրառական հասարակագիտության այլ ոլորտում նախընտրելի 5 տարվա համապատասխան փորձով: Նա պատասխանատու է լինելու 8–11 կետերում նշված աշխատանքների համար:
    - Տվյալների բազայի մենեջեր (պարբերական զբաղվածությամբ, 4.5 մարդ-ամիս): Նա պետք է ունենա բակալավրի աստիճան մաթեմատիկայի, վիճակագրության, հասարակագիտության կամ հարակից ոլորտներում նախընտրելի 5 տարվա համապատասխան փորձով: Նա պատասխանատու է լինելու տվյալների բազայի կառավարման համար:
    - Իրավաբան (պարբերական զբաղվածությամբ, 1.5 մարդ-ամիս): Նա պետք է ունենա բակալավրի աստիճան իրավագիտության ոլորտում նախընտրելի 5 տարվա համապատասխան փորձով: Նա պատասխանատու է լինելու ինստիտուցիոնալ եւ օրենսդրական հարցերի մասով, եթե դրանք բարձրացվեն:
18. Աշխատանքների համակարգման համար պատասխանատուն կլինի Խորհրդատուի կողմից նշանակված թիմի ղեկավարը, ով եւ կապահովի համապատասխան փորձագետների ներգրավումն ու սահմանված ժամկետում որակյալ արդյունքների արձանագրումը, ինչպես նաեւ Տրանշ 3-ի համար ԻԿ-ի հետ համագործակցությունը:
19. Խորհրդաատվական ծառայությունների համար հաշվարկված պահանջը կազմում է 25.5 մարդ-ամիս՝ 2015թ. ապրիլից մինչեւ 2017թ. օգոստոսի վերջը: Սույն հանձնարարության

իրականացման ընթացքում Խորհրդատուն պետք է օգտվի իր գրասենյակից, տրանսպորտային եւ տեխնիկական միջոցներից:

Ը. ՎՃԱՐՈՒՄ

20. Վճարման ժամանակացույցը հետեւյալն է՝

- Պայմանագրային արժեքի 15%-ը Խորհրդատուին կվճարվի Նախնական հաշվետվության եւ մանրամասն Աշխատանքային պլանի հաստատումից հետո;
- Պայմանագրային արժեքի 10%-ը Խորհրդատուին կվճարվի Ելակետային հետազոտության հաշվետվության հաստատումից հետո;
- Պայմանագրային արժեքի 10%-ը Խորհրդատուին կվճարվի ՀՕՏԾ ենթահատվածների վերջնական համապատասխանության յուրաքանչյուր հաշվետվության հաստատումից հետո (վեց հաշվետվություն, ընդհանուր՝ 60%);
- Պայմանագրային արժեքի 10%-ը Խորհրդատուին կվճարվի Ազդեցության գնահատման երկու հաշվետվությունների հաստատումից հետո;
- Պայմանագրային արժեքի 5 %-ը Խորհրդատուին կվճարվի հանձնարարության ավարտից հետո ներկայացվելիք իրականացված գործողությունների վերաբերյալ Վերջնական հաշվետվության հաստատումից հետո

21. Խորհրդատուի ֆինանսական առաջարկը պետք է ներառի ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

Մոնիթորինգի հաշվետվության մանրամասն ներկայացվածության եւ համապարփակության աստիճանը համահունչ է սոցիալական եւ բնապահպանական ազդեցությունների բարդությանը եւ կարեւորությանը: Երաշխիքների մոնիթորինգի հաշվետվությունը կարող է ընդգրկել հետեյալ տարրերը՝

ա) Մոնիթորինգի հաշվետվության հենքը/համատեքստը (ծրագրի վերաբերյալ համարժեք տեղեկատվություն, ներառյալ ծրագրի գործողությունների ֆիզիկական առաջընթացը, մոնիթորինգի հաշվետվության շրջանակը, հաշվետվության ժամանակամիջոցը եւ մոնիթորինգի պահանջներ, ներառյալ ներկայացման նախապես համաձայնեցված հաճախականությունը),
բ) Ծրագրի շրջանակի փոփոխություններ եւ երաշխիքների ճշգրտված միջոցներ, եթե կիրառելի են,
գ) Որակական եւ քանակական մոնիթորինգի տվյալներ,
դ) Մոնիթորինգի չափանիշներ/ցուցիչներ եւ մեթոդներ՝ հիմնված ԱԶԲ-ի հետ նախապես համաձայնեցված մոնիթորինգի պլանի/ծրագրի վրա,
ե) Մոնիթորինգի արդյունքները համեմատվում են նախկինում հաստատված չափորոշիչների եւ համապատասխանության կարգավիճակի հետ (օրինակ, պարտադրված տարաբնակեցման փոխհատուցման չափերը եւ ժամանակին վճարումները, պարտադրված տարաբնակեցման վերականգնողական միջոցառումների համարժեքությունը եւ ժամանակին իրականացումը (այդ թվում, բնակտարածքների վերանորոգում, տների վերակառուցում, կենսամիջոցների

ապահովում եւ վերապատրաստում), տարաբնակեցման քաղաքականության իրականացման բյուջե, կարողությունների զարգացման ժամանկին իրականացում եւ համարժեքություն եւ այլն),

զ) Մոնիթորինգի արդյունքներ՝ համեմատած երաշխիքների նպատակների կամ փաստաթղթավորված ցանկալի արդյունքների հետ (օրինակ, պարտադրված տարաբնակեցման ազդեցություններից խուսափելը կամ նվազագույնի հասցնելը, կենսակերպի վերականգնվելը կամ բարելավվելը եւ այլն);

է) Անհամապատասխանությունների կամ այլ լուրջ բացթողումների հայտնաբերման դեպքում կիրառել ճշգրտող միջոցառումների ծրագիր,

ը) Ազդեցության ենթարկված համայնքներին մոնիթորինգի տեղեկատվության տրամադրման փաստաթղթերը

թ) Առանցքային խնդիրների բացահայտում կամ ազդակիր մարդկանցից բողոքների կամ բարելավման առաջարկությունների ստացում,

ժ) Մոնիթորինգի փորձի/միտումների եւ շահառուների պատասխանի վրա հիմնված առաջարկված մոնիթորինգի ճշգրտման միջոցառումներ,

ի) Ըստ պահանջի տրամադրված կամ ճշգրտված տեղեկատվություն մոնիթորինգի ծրագրի/պլանի իրականացման համար փաստացի ինստիտուցիոնալ պայմանավորվածության մասին,

լ) Հաջորդ հաշվետվության եւ վճարման ժամկետի համար ուշադրությանը հրավիրված խնդիրներ:

ՀԱՎԵՎԱԾ 9. ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ և ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱԵՏՏ-ՆԵՐԻ ՑԱՆԿ

(Դեպքերը ներկայացված են առանց կրկնահաշվարկի (տե՛ս նաև աղյուսակ Թ3)

No	Ծածկագիր	Դեպքերի թիվը	ԱԵՏՏ-ների թիվը	Նշումներ
Ա. Գտնվում են երկրից դուրս				
1	08-003-0129-0001	1	1	Ռուսաստան
2	08-003-0129-0008	1	1	Ռուսաստան
3	08-003-0129-0009	1	1	աշխատանք արտերկրում
4	08-003-0129-0010	1	1	Ռուսաստան
5	08-003-0136-0007	1	1	Ռուսաստան
6	08-003-0136-0038	4	1	Ռուսաստան
7	08-003-0136-0040	3	1	աշխատանք արտերկրում
8	08-003-0136-0041	1	1	Ռուսաստան
9	08-003-0136-0046	1	1	Ռուսաստան
10	08-003-0136-0049	1	1	աշխատանք արտերկրում
11	08-003-0136-0050	1	1	աշխատանք արտերկրում
12	08-003-0136-0052	1	1	Ռուսաստան
13	08-003-0136-0056	2	1	Հունաստան
14	08-003-0136-0059	7	1	Ռուսաստան
15	08-004-0029-0003	1	1	Ռուսաստան
16	08-004-0056-0004	1	1	աշխատանք արտերկրում
17	08-004-0056-0005	1	1	աշխատանք արտերկրում
18	08-004-0057-0006	2	1	աշխատանք արտերկրում
19	08-004-0057-0008	1	1	աշխատանք արտերկրում
20	08-004-0674-0020	1	1	Ռուսաստան
21	08-004-0674-0022	4	1	Ռուսաստան
22	08-004-0674-0023	2	1	աշխատանք արտերկրում
23	08-004-0676-0003	2	1	աշխատանք արտերկրում
24	08-004-0676-0004	1	1	աշխատանք արտերկրում
25	08-004-0676-0005	3	1	աշխատանք արտերկրում
26	08-004-0679-0001	4	1	Ռուսաստան
27	08-004-0680-0002	1	1	աշխատանք արտերկրում
28	08-004-0680-0003	3	1	աշխատանք արտերկրում
29	08-004-0680-0005	2	1	աշխատանք արտերկրում
30	08-004-0680-0019	1	1	աշխատանք արտերկրում
31	08-004-0680-0020	1	1	Ֆրանսիա
32	08-004-0680-0021	2	1	Ռուսաստան
33	08-004-0700-0006	1	1	աշխատանք արտերկրում
34	08-004-0745-0002	1	1	աշխատանք արտերկրում
35	08-027-0004-0001	2	1	աշխատանք արտերկրում
36	08-027-0004-0005	1	1	Ռուսաստան

No	Ծածկագիր	Դեպքերի թիվը	ԱԵՏՏ-ների թիվը	Նշումներ
37	08-027-0004-0054	1	1	աշխատանք արտերկրում
38	08-027-0004-0055	1	1	Գերմանիա
39	08-027-0004-0056	1	1	աշխատանք արտերկրում
40	08-027-0004-0057	1	1	աշխատանք արտերկրում
41	08-027-0004-0072	2	1	Ռուսաստան
42	08-027-0110-0003	1	1	աշխատանք արտերկրում
43	08-027-0110-0004	3	1	աշխատանք արտերկրում
44	08-027-0110-0006	1	1	ՈՒկրաինա
45	08-027-0110-0009	1	1	աշխատանք արտերկրում
46	08-044-0106-0005	2	1	Ռուսաստան
47	08-044-0106-0017	2	1	Ռուսաստան
48	08-044-0106-0026	2	1	Ռուսաստան
49	08-048-0025-0009	1	1	Ռուսաստան
50	08-048-0025-0013	1	1	Ռուսաստան
51	08-048-0109-0142	1	1	ՈՒկրաինա
52	08-048-0109-0144	6	1	Ռուսաստան
53	08-048-0109-0168	1	1	ԼՂՀ
54	08-048-0109-0174	2	1	ՈՒկրաինա
55	08-048-0110-0007	1	1	Ռուսաստան
56	08-048-0115-0001	1	1	ՈՒկրաինա
57	08-062-0110-0002	5	1	Ռուսաստան
58	08-062-0110-0003	2	1	Ռուսաստան
59	08-062-0110-0007	1	1	Ռուսաստան
60	08-062-0110-0015	2	1	Ռուսաստան, աշխատանք արտերկրում
61	08-062-0110-0016	1	1	Ռուսաստան, աշխատանք արտերկրում
62	08-062-0110-0020	2	1	Ռուսաստան
63	08-062-0110-0021	2	1	Ռուսաստան, աշխատանք արտերկրում
64	08-062-0111-0007	4	1	Ռուսաստան
65	08-062-0116-0074	2	1	Ռուսաստան
66	08-062-0116-0076	1	1	Ռուսաստան, աշխատանք արտերկրում
67	08-062-0116-0116	5	1	Ռուսաստան
68	08-062-0119-0003	5	1	Ռուսաստան
69	08-067-0111-0006	2	1	Ռուսաստան
70	08-067-0111-0012	1	1	Ռուսաստան, աշխատանք արտերկրում
